

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ
ՆԱԽԱԼՍԱՐԱՆ

ՔՐԻՍՏԻՆԵ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

ԼԵԳԻՏԻՄ
ԱԿՆԿԱԼԻՔՆԵՐԻ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ
ՎԱՐՉԱԿԱՆ
ԻՐԱՎՈՒՆՔՈՒՄ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՔՐԻՍՏԻՆԵ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

ԼԵԳԻՏԻՄ ԱԿՆԿԱԼԻՔՆԵՐԻ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՎԱՐՉԱԿԱՆ
ԻՐԱՎՈՒՆՔՈՒՄ

(ՄԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ)

ԵՐԵՎԱՆ

ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

2026

ՀՏԴ 342.9

ԳՄԴ 67.401

Ա 296

*Հրապարակության է երաշխավորել
ԵՊՀ գիտական խորհուրդը:*

Ալեքսանյան Քրիստինե Սարգսի

Ա 296 Լեզվիտիմ ակնկալիքների պաշտպանությունը վարչական իրավունքում. Մենագրություն / Ք. Ս. Ալեքսանյան: - Եր., ԵՊՀ հրատ., 2026, 304 էջ:

Մենագրությունում ուսումնասիրվում է վարչական իրավունքի տեսության և պրակտիկայի արդիական ու գիտական բարդ հիմնախնդիրներից մեկը, որը ներառում է իրավաչափ կամ օրինական ակնկալիքների պաշտպանության սկզբունքի բովանդակությունը, իրավական բնույթը, կիրառման պայմաններն ու պաշտպանության մեխանիզմները: Առանձնահատուկ ուշադրություն է դարձվում ինչպես օրենսդրական կարգավորումների, այնպես էլ վարչարարական գործունեության արդյունքում ձևավորված լեզվիտիմ ակնկալիքների տարբերակմանը և դրանց պաշտպանության նյութական, ընթացակարգային և հատուցողական ձևերի բացահայտմանը:

Հետազոտության արդյունքները կարող են կիրառվել ինչպես իրավաստեղծ գործունեության կատարելագործման, այնպես էլ վարչական և դատական պրակտիկայի զարգացման նպատակներով:

ՀՏԴ 342.9

ԳՄԴ 67.401

ISBN 978-5-8084-2762-4

<https://doi.org/10.46991/YSUPH/9785808427624>

© ԵՊՀ հրատ., 2026

© Ալեքսանյան Ք., 2026

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն	6
ԳԼՈՒԽ 1. ԼԵԳԻՏԻՄ ԱԿՆԿԱԼԻՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍԿԶԲՈՒՆՔ	8
§1. Լեգիտիմ ակնկալիքների իրավական պաշտպանության հիմնավորումը վարչական իրավունքում	8
1.1. Վստահության տեսությունը.....	9
1.2. Օրենքի գերակայության տեսությունը	20
1.3. Խրախուսման տեսությունը	25
1.4. Անվտանգության տեսությունը	28
1.5. Պատասխանատվության տեսությունը.....	33
§2. Լեգիտիմ ակնկալիքների պաշտպանության շրջանակը	39
2.1. Ակնկալիքի լեգիտիմության բովանդակությունը. ողջամիտ ակնկալիք և լեգիտիմ ակնկալիք.....	39
2.2. Օրենսդրության և վարչարարության հիման վրա առաջացած լեգիտիմ ակնկալիքներ	43
2.3. Վարչարարության ձևերը, որոնք կարող են առաջացնել լեգիտիմ ակնկալիքներ	54
2.4. Լեգիտիմ ակնկալիքների ընթացակարգային, նյութական և հատուցողական պաշտպանությունը	59
§3. Օրենսդրության հիման վրա առաջացած լեգիտիմ ակնկալիքների պաշտպանությունը	63
3.1. Հետադարձ ուժի արգելքը վարչական իրավունքում	63
3.2. Իրական և ոչ իրական հետադարձություն	84
ԳԼՈՒԽ 2. ԻՐԱՎԱՉԱՓ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԻՄԱՆ ՎՐԱ ԱՌԱՋԱՑԱԾ ԼԵԳԻՏԻՄ ԱԿՆԿԱԼԻՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ	102

§1. Լեգիտիմ ակնկալիքների պաշտպանության հիմնախնդիրները իրավաչափ վարչական ակտերը վերացնելու դեպքում	102
1.1. Իրավաչափ բարենպաստ վարչական ակտերը վերացնելու արգելքի սկզբունքը	102
1.2. Իրավաչափ բարենպաստ վարչական ակտերն ուժը կորցրած ճանաչելը	115
§2. Վարչական մարմնի գործողությունների կամ պրակտիկայի հիման վրա առաջացած լեգիտիմ ակնկալիքների պաշտպանությունը	126
2.1. Գործողությունների հիման վրա առաջացած լեգիտիմ ակնկալիքների պաշտպանությունը	126
2.2. Լեգիտիմ ակնկալիքների պաշտպանությունը վարչական պրակտիկան կամ քաղաքականությունը փոփոխելու դեպքում	151
§3. Լեգիտիմ ակնկալիքների ընթացակարգային պաշտպանությունը	161
§4. Իրավաչափ վարչարարության հիման վրա առաջացած լեգիտիմ ակնկալիքների հատուցողական պաշտպանությունը	184
ԳԼՈՒԽ 3. ՈՉ ԻՐԱՎԱՉԱՓ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԻՄԱՆ ՎՐԱ ԱՌԱՋԱՑԱԾ ԼԵԳԻՏԻՄ ԱԿՆԿԱԼԻՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ	197
§1. Լեգիտիմ ակնկալիքների պաշտպանությունը ոչ իրավաչափ վարչական ակտերը վերացնելու դեպքում	197
1.1. Օրինական կառավարման և լեգիտիմ ակնկալիքների միջև մրցակցությունը	197
1.2. Ոչ իրավաչափ վարչական ակտերի ex nunc վերացումը	202

1.3. Ոչ իրավաչափ վարչական ակտերի <i>ex tunc</i> վերացումը.....	209
§2. Ոչ իրավաչափ գործողությունների հիման վրա առաջացած լեգիտիմ ակնկալիքների պաշտպանությունը.....	221
§3. Ոչ իրավաչափ վարչական ակտերի վերացման դեպքում լեգիտիմ ակնկալիքների հատուցողական պաշտպանություն.	229
3.1. Վարչական ակտերի անվավերությունը սահմանափակող մեխանիզմները վնասի հատուցման համարեքստում	229
3.2. Պարճառահեղանքային կապը, որոշակի վնասը և համարել մեղքը	246
SUMMERY.....	265
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....	266

Ներածություն

Լեզվիտիմ ակնկալիքների պաշտպանության ինստիտուտը ձևավորվել է իրավական պետության գաղափարաբանության շրջանակներում և տեսական հիմնավորում է ստացել մի շարք դոկտրինալ մոտեցումների, մասնավորապես՝ վստահության, օրենքի գերակայության, խրախուսման, իրավական անվտանգության և պատասխանատվության տեսությունների հիման վրա: Նշված տեսությունները տարբեր դիտանկյուններից հիմնավորում են վարչական մարմինների վարքագծի կանխատեսելիության ապահովման անհրաժեշտությունը և անհատների՝ պետական մարմինների գործողությունների նկատմամբ ակնկալիքների իրավական պաշտպանության պահանջը:

Սույն մենագրության նպատակն է համակարգային և համալիր վերլուծության ենթարկել լեզվիտիմ ակնկալիքների պաշտպանության սկզբունքի բովանդակությունը, դրա ծագման տեսական հիմքերը, կիրառության շրջանակները և մեխանիզմները վարչական իրավունքում: Հետազոտության ընթացքում առանձնահատուկ ուշադրություն է դարձվում ինչպես օրենսդրական կարգավորումների, այնպես էլ վարչարարական գործունեության արդյունքում ձևավորված լեզվիտիմ ակնկալիքների տարբերակմանը և դրանց պաշտպանության նյութական, ընթացակարգային և հատուցողական ձևերի բացահայտմանը:

Մենագրությունը կառուցված է երեք գլուխներից: Առաջին գլխում ուսումնասիրվում են լեզվիտիմ ակնկալիքների պաշտպանության տեսական հիմքերը և սահմանվում է դրա կիրառության շրջանակը՝ անդրադառնալով նաև օրենսդրության հիման վրա առաջացած ակնկալիքների պաշտպանությանը և հետադարձ ուժի արգելքի հիմնախնդիրներին: Երկրորդ գլխում վերլուծվում

են իրավաչափ վարչարարության հիման վրա առաջացած լեգիտիմ ակնկալիքների պաշտպանության առանձնահատկությունները՝ ներառյալ վարչական ակտերի վերացման, վարչական պրակտիկայի փոփոխության և ընթացակարգային պաշտպանության հարցերը: Երրորդ գլխում հետազոտվում են ոչ իրավաչափ վարչարարության պայմաններում ձևավորված լեգիտիմ ակնկալիքների պաշտպանության հիմնախնդիրները՝ հատուկ ուշադրություն դարձնելով օրինական կառավարման սկզբունքի և լեգիտիմ ակնկալիքների միջև հնարավոր մրցակցությանը, ինչպես նաև վնասի հատուցման իրավական հիմքերին և սահմաններին:

Աշխատության գիտական նորույթը պայմանավորված է վարչական իրավունքի համակարգում լեգիտիմ ակնկալիքների պաշտպանության ինստիտուտի բազմակողմանի վերլուծությամբ և դրա կիրառական նշանակության վերաբերմամբ: Հետազոտության արդյունքները կարող են կիրառվել ինչպես իրավաստեղծ գործունեության կատարելագործման, այնպես էլ վարչական և դատական պրակտիկայի զարգացման նպատակներով՝ նպաստելով իրավական պետության սկզբունքների առավել արդյունավետ իրագործմանը:

**ԳԼՈՒԽ 1. ԼԵԳԻՏԻՄ ԱԿՆԿԱԼԻՔԻ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ ՎԱՐՉԱԿԱՆ
ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍԿԶԲՈՒՆՔ**

**§1. Լեգիտիմ ակնկալիքների իրավական պաշտպանության
հիմնավորումը վարչական իրավունքում**

Վարչական իրավունքում անձի և հանրային իշխանության հարաբերությունները պայմանավորվում են ոչ միայն իրավական ակտերով, այլև վստահության, կանխատեսելիության և հետևողական վարչարարության պահանջներով: Անձինք պլանավորում են իրենց կյանքը՝ հիմք ընդունելով վարչական մարմնի ընդունած որոշումները, տված հավաստիացումները, ձևավորած պրակտիկան կամ առհասարակ այն վարքագիծը, որը տվյալ իրավիճակում ողջամտորեն կարող էր ընկալվել որպես որոշակի դիրքորոշման արտահայտություն: Սակայն վարչարարությունը անփոփոխ չէ. հանրային իշխանությունը կարող է բախվել նոր իրողությունների, փոփոխվող հասարակական պահանջների կամ քաղաքական առաջնահերթությունների, որոնք անհրաժեշտ են դարձնում նախկինում ձևավորված մոտեցումների վերանայումը: Հենց այս կետում էլ առաջանում է հիմնական հարցը՝ արդյոք և որքանով պետք է իրավունքը պաշտպանի այն ակնկալիքները, որոնք ձևավորվել են վարչարարության հիման վրա:

Լեգիտիմ ակնկալիքների սկզբունքը լուծում է այն հակադրությունը, որը գոյություն ունի վարչարարության հիման վրա ձևավորված ակնկալիքների պաշտպանության և վարչական մարմինների՝ փոփոխվող քաղաքական նպատակների իրականացման անհրաժեշտության միջև: Այս սկզբունքը ենթադրում է,

որ վարչարարության հիման վրա առաջացած ակնկալիքները կարող են ունենալ իրավական հետևանքներ: Կա՛մ վարչական մարմինը պետք է հարգի այդ ակնկալիքները, կա՛մ ներկայացնի ծանրակշիռ հիմնավորումներ, որոնց համաձայն՝ հանրային շահը պետք է գերակայի¹:

Պարագրաֆի նպատակն է հիմնավորել, թե ինչու պետք է վարչական իրավունքում պաշտպանվեն վարչարարության հիման վրա առաջացած լեգիտիմ ակնկալիքները: Ներկայացվելու են տեսական աղբյուրներում ձևավորված, լեգիտիմ ակնկալիքների պաշտպանությունը հիմնավորող հիմնական տեսությունները:

1.1. Վստահության տեսությունը

Լեգիտիմ ակնկալիքների իրավական պաշտպանության հիմնավորումը, որն ամենաազդեցիկն էր անգլո-եվրոպական գիտության մեջ, օգտագործում է ինքնավարությունը որպես հիմնական նախադրյալ²: Ինքնավարության վրա հիմնված երկու մոտեցում կա. համեմատաբար նեղ՝ «վստահության տեսությունը», որը անգլիական իրավունքում ակնկալիքները կապում է էստոպելի սկզբունքի հետ³, և ավելի լայն՝ «իրավունքի գերակայության տեսությունը», որն ակնկալիքները կապում է իրավական որոշակիության հասկացության հետ⁴:

¹ Տե՛ս **Robert Thomas**, *Legitimate Expectations and Proportionality in Administrative Law* (Hart Publishing 2000), էջ 41:

² Տե՛ս **Schönberg, Søren J.**, *Legitimate Expectations in Administrative Law* (Oxford, 2000), էջ 9:

³ Այս մոտեցումն առավել տարածված է անգլիական իրավունքում:

⁴ Տե՛ս **D. Wyatt and A. Dashwood**, *European Community Law*, 3rd edn. (London, 1992), էջ 91:

Վստահության տեսությունը պնդում է, որ լեգիտիմ ակնկալիքները պետք է պաշտպանված լինեն, հակառակ դեպքում վարչական մարմինը վնաս կպատճառի այն անհատներին, ովքեր ապավինում կամ վստահում են դրան⁵: Փաստարկը հետևյալն է. գոյություն ունի ուրիշներին կանխարգելիչ վնաս չպատճառելու ընդհանուր պարտավորություն, որն առաջին հերթին բխում է հասարակության մեջ մեր առավելագույն բարեկեցության կամ երջանկության մտահոգությունից: Այսինքն՝ սոցիալական մեխանիզմների օգտապաշտական վերլուծությունը ենթադրում է, որ կանխարգելիչ վնասը չպետք է հանդուրժվի⁶:

Ն. Մակքորմիկը պնդում է. «Եթե մարդու վարքագիծը դիտավորյալ կամ գիտակցաբար դրդում է մյուսին վստահելու իրեն՝ այն առումով, որ առաջինը հասկանում էր կամ պետք է հասկանար, որ մյուս կողմը ապավինելու է իրեն, նա պարտավոր է չհիասթափեցնել մյուս կողմի վստահությունը»⁷: Հեղինակը մշակեց այս սկզբունքը՝ որպես խոստումների և պայմանագրերի՝ բարոյապես պարտավորեցնող բնույթի բացատրություն:

Խոսելով հանրային իշխանության մարմինների վարքագծին վստահելու մասին՝ պետք է համաձայնել այն մոտեցման հետ, որ նրանք ունեն գրեթե եզակի կարողություն՝ մարդկանց դրդելու ենթարկվել իրենց ցուցումներին, նույնիսկ եթե նրանք չեն կարծում, որ իրավաբանորեն պարտավոր են դա անել, կամ կարծում

⁵ Տե՛ս, օրինակ, **R. Cranston**, 'Reviewing Judicial Review', in **G. Richardson and H. Genn** (eds.), *Administrative Law and Government Action* (Oxford, 1994), էջեր 45, 58, **R. Pagone**, 'Estoppel in Public Law: Theory, Fact and Fiction' (1984) UNSWLJ 267, էջեր 275-276:

⁶ Օգտապաշտության մասին առավել մանրամասն տե՛ս **J. S. Mill**, *On Liberty*, 1859 (London, 1993):

⁷ **N. MacCormick**, 'Voluntary Obligations and Normative Powers' (1972) *Proceedings of the Aristotelian Society*, Supplement 46, pp. 59, 67-68.

են, որ դա չի բխում իրենց շահերից⁸: Նույն կերպ՝ մասնավոր անձանց համեմատությամբ հանրային իշխանության մարմիններն ունեն ավելի մեծ կարողություն՝ ձևավորելու այնպիսի ակնկալիքներ, որոնց վստահելը ողջամիտ է⁹:

Ինչ վերաբերում է հենց վարչական իրավունքում վստահության պաշտպանության կարևորությանը, ապա, ինչպես նշում է Ս. Սքոնբերգը. «Վարչական իրավունքում վստահության սկզբունքը կարող է վերաձևակերպվել հետևյալ կերպ. վարչական մարմնի՝ հանրային շահերից բխող գործողություններ ձեռնարկելու ազատությունը սահմանափակված է այնքանով, որքանով վնաս չի պատճառում այլ անձանց: Եթե վարչական մարմինը դրդել է անձին՝ վստահել իր հայտարարություններին կամ վարքագծին՝ գիտակցելով, որ վստահությունն իրապես հնարավոր է, ապա պարտավոր է գործել այնպես, որ վստահությունը չվնասի անձին: Վարչական մարմինը պետք է արդարացնի իր վարքագծի հետ կապված սպասելիքները կամ գոնե փոխհատուցի տուժած անձին վստահության խախտման համար»¹⁰:

Հատկանշական է, որ Գերմանիայում օրինական ակնկալիքների պաշտպանությունը բխում է Vertrauensschutz սկզբունքից (բառացի՝ «վստահության պաշտպանություն»), որի նպատակն է խթանել վստահությունը հանրային որոշում կայացնողների նկատմամբ՝ պաշտպանություն տրամադրելով այն անձանց, ովքեր վստահել են նրանց վարքագծին¹¹:

⁸ Տե՛ս **G Weeks**, *Soft Law and Public Authorities: Remedies and Reform*, (Hart Publishing, Oxford, 2016), էջ 224, **G Weeks**, "What Can We Legitimately Expect from the State?" in **Matthew Groves and Greg Weeks** (eds), *Legitimate Expectations in the Common Law World* (Hart Publishing, 2016), էջ 148:

⁹ Տե՛ս նույն տեղում:

¹⁰ **Schönberg, Søren J.**, նշված աշխատ., էջ 10:

¹¹ Տե՛ս **Paul Reynolds**, 'Legitimate Expectations and the Protection of Trust in Public Officials' (2011) 2 *Public Law* 330, էջեր 340-341:

Լեգիտիմ ակնկալիքների պաշտպանությունը հիմնավորող վստահության տեսությունն ունի երկու կարևոր ասպեկտ: Նախ՝ այն մեծապես կարևորում է վարչական մարմնի նկատմամբ անձանց վստահության պաշտպանությունը: Երկրորդ՝ ամենակարևոր և թերևս ամենավիճելի ասպեկտն այն է, որ այս տեսությունը լեգիտիմ ակնկալիքների պաշտպանության պայման է համարում այդ վստահության արդյունքում անձի՝ վնաս կրելու հանգամանքը: Հետաքրքրական է, որ հենց այս մոտեցումն է նախատեսված նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքում, որը սահմանում է, որ վարչական ակտի հասցեատերը դրա գոյությանը վստահելու իրավունք ունի, եթե վարչական ակտի հիման վրա ստացածն արդեն իսկ օգտագործել կամ տնօրինել է, ինչպես նաև՝ եթե ակտի հիման վրա ստացածը վերադարձնելը վնաս կպատճառի վարչական ակտի հասցեատիրոջը:

Հատկանշական է, որ այս մոտեցումն առկա է նաև միջազգային վարչական իրավունքում¹²: Այսպես, Աշխատանքի միջազգային վարչական տրիբունալը (ILOAT), անդրադառնալով խոստման հիման վրա լեգիտիմ ակնկալիքների պաշտպանության համար կիրառվող կոնկրետ չափանիշներին, հստակեցրել է, որ լեգիտիմ ակնկալիքները կապաշտպանվեն, եթե խախտումը վնաս կպատճառի այն անձին, ով ապավինել է դրան: Այս չափանիշը ունի երկու ենթատարր. առաջինը՝ խոստում ստացողը վստահել է խոստմանը, և երկրորդը՝ այդ վստահության արդյունքում վնաս է կրել¹³:

¹² Ավելի մանրամասն տե՛ս **Boulanger-Bonnely, Jérémy and Otis, Louise**, The Protection of Legitimate Expectations in Global Administrative Law (December 16, 2019). in **George P. Politakis, Tomi Kohiyama & Thomas Lieby**, eds, ILO100 - Law for Social Justice (Geneva: International Labour Office, 2019) 395, հասանելի է՝ <https://ssrn.com/abstract=3525889>:

¹³ Տե՛ս ILOAT Judgment No."782 (1986), ILOAT Judgment No."121 (1968):

Այնուամենայնիվ, պետք է նկատի ունենալ, որ լեգիտիմ ակնկալիքի պաշտպանության այս տեսությունը իրավաբանական գրականության մեջ ենթարկվել է քննադատության վերը նշված երկրորդ ասպեկտի պատճառով¹⁴: Քննադատության առանցքում այն մոտեցումն է, որ վնաս պատճառելու հանգամանքը չի կարող լինել ակնկալիքը լեգիտիմ ճանաչելու պարտադիր նախապայման:

Այսպես, Ս. Սքոնբերգը նշում է, որ վստահության տեսությունը չափազանց նեղ է, քանի որ վնասը ակնկալիքները պաշտպանելու նախապայման չէ, և միշտ չէ, որ պետք է լինի: Ըստ հեղինակի՝ լեգիտիմ ակնկալիքների պաշտպանությունը պետք է հասանելի լինի նաև վստահության բացակայության դեպքում՝ անկախ նրանից, թե խոսքը նյութական կամ հատուցողական պաշտպանության մասին է: Վստահության բացակայության դեպքում կարող է պահանջվել նաև ընթացակարգային պաշտպանություն: Վարչական մարմինները չպետք է չիրաժարվեն ընդհանուր քաղաքականությունից, եթե դրա համար չկա քաղաքականության գերիշխող հիմնավորում¹⁵:

Ըստ Ջ. Ռազի՝ վստահությունը չպետք է այս սկզբունքի կիրառման նախապայման լինի¹⁶: Ավելին, վստահության պահանջը կարող է հանգեցնել նմանատիպ դեպքերի միջև չարդարացված տարբերությունների, քանի որ այն, թե անձը ապավինում է վարքագծին կամ ոչ, կարող է ամբողջովին պատահական լինել:

¹⁴ Տե՛ս **Schönberg, Søren J.**, նշված աշխատ., էջ 10, **Alexander Brown**, A Theory of Legitimate Expectations for Public Administration (Oxford: Oxford University Press, 2017), էջեր 24-25, **Ioannis Skandalis**, 'Balancing Employer and Employee Interests: Legitimate Expectations and Proportionality under the Acquired Rights Directive' (DPhil thesis, University of Oxford 2012), էջեր 231, 245, **P. Craig**, EU Administrative Law (Oxford: OUP 2018, 3rd edition), էջ 606:

¹⁵ Տե՛ս **Schönberg, Søren J.**, նշված աշխատ., էջ 10:

¹⁶ Տե՛ս **J. Raz**, 'Voluntary Obligations and Normative Powers' (1972), էջեր 79, 101:

Այս մոտեցումը հիմնավորելու համար հաճախ վկայակոչվում է անգլիական դատարանների կողմից քննարկված Հարգրիվսի գործը¹⁷:

Դիմումատուն այս գործով մեկն էր այն բազմաթիվ բանտարկյալներից, ով, Ներքին գործերի նախարարության գործող քաղաքականության համաձայն, իրավունք ուներ որոշակի պատիժ կրելուց հետո դիմելու արձակուրդի համար: Քաղաքականության փոփոխությունը մեծապես ազդել էր նրա կարգավիճակի վրա, և նրա ակնկալիքները խախտվել էին: Այս հիասթափությունը հետևանք էր գոյություն ունեցող քաղաքականության նկատմամբ նրա վստահության: Այնուամենայնիվ, արդարությունը ենթադրում է, որ բանտարկյալի սպասելիքները արժանի էին իրավական պաշտպանության՝ անկախ նրանից, որ, օրինակ, բանտարկյալներից մեկը, վստահելով դրան, գնել էր կինոյի տոմս իր առաջին հանգստյան օրերի համար¹⁸: Հարգրիվսում բանտարկյալն իսկապես «վստահել էր» քաղաքականությանը, քանի որ, չնայած քաղաքականությունը նրան չէր դրդել որևէ ֆիզիկական գործողություն ձեռնարկելու կամ գումար ծախսելու, նա որոշակի ծրագրեր է կազմել իր ապագա կյանքի համար և ակնհայտորեն անհամբեր սպասում էր իր ազատ արձակմանը:

Հայտնի վարչագետ, պրոֆեսոր Փոլ Դեյլին պնդում է, որ վստահությունը չպետք է լինի լեգիտիմ ակնկալիքի պաշտպանության անհրաժեշտ նախապայման, քանի որ դատական վերահսկողությունը կարող է նպաստել պատշաճ վարչարարությանը նույնիսկ այդ տարրի բացակայության դեպքում¹⁹: Նմանա-

¹⁷ *St'u R v Home Secretary, ex p Hargreaves* [1997] 1 WLR 906:

¹⁸ *St'u Schönberg, Søren J.*, նշված աշխատ., էջ 11:

¹⁹ *St'u Paul Daly*, *A Pluralist Account of Deference and Legitimate Expectations* (September 10, 2015), **Matthew Groves and Greg Weeks** eds, *Legitimate Expectations in the Common Law World*, Hart Publishing, 2016, Forthcoming,

պես, եվրոպական իրավունքի համատեքստում Ի. Սկանդալիսը նշում է, որ թեև վնաս առաջացրած վստահությունը (detrimental reliance) կարող է մեծացնել լեգիտիմ ակնկալիքի պաշտպանության հավանականությունը, այն պարտադիր նախապայման չէ²⁰: Ամերիկյան որոշ նահանգների դատական պրակտիկան ևս վկայում է, որ լեգիտիմ ակնկալիքի պաշտպանության համար վնաս առաջացրած վստահությունը պարտադիր պայման չէ²¹:

Անդրադառնալով միջազգային վարչական իրավունքի համատեքստում լեգիտիմ ակնկալիքների պաշտպանության վերաբերյալ միջազգային վարչական տրիբունալների շրջանում վստահության (reliance) համընդհանուր չափանիշին՝ առաջարկվել է, որ այն կիրառելի թեստից բացառելը գուցե նպաստեր միջազգային կազմակերպությունների կառավարման նկատմամբ ավելի մեծ վստահության ձևավորմանը²²:

Ինչ վերաբերում է ԵՄ Արդարադատության դատարանի դատական պրակտիկային, ապա դրանում առանձնացվել են երեք պայման, որոնց միաժամանակյա առկայությունը լեգիտիմ ակնկալիքների պաշտպանության սկզբունքի կիրառման հիմք է: Առաջին՝ վարչակազմը շահագրգիռ անձին պետք է տրամադրած լինի հստակ, անվերապահ և հետևողական հավաստիացումներ, որոնք բխում են իրավասու և վստահելի աղբյուրներից: Երկրորդ՝ այդ հավաստիացումները պետք է լինեն այնպիսին, որ հասցեատիրոջ մոտ ձևավորեն լեգիտիմ ակնկալիք: Երրորդ՝

հասցեի է՝ <https://ssrn.com/abstract=2658645> կամ <http://dx.doi.org/10.2139/ssrn.2658645>:

²⁰ Տե՛ս **Ioannis Skandalis**, նշված աշխատ., էջեր 231, 245:

²¹ Տե՛ս *Langdon v Saga Corp.*, 569 P.2d 524, 527 (Oklahoma CA 1977): Տե՛ս նաև՝ **Paul Berks**, ‘Social Change and Judicial Response: The Handbook Exception to Employment-At-Will’ (2000) 4 *Employee Rights and Employment Policy Journal* 231, էջ 269:

²² Տե՛ս **Boulanger-Bonnely, Jérémy and Otis, Louise**, նշված աշխատ., էջ 431:

տրված հավաստիացումները պետք է համապատասխանեն կիրառելի իրավական կանոններին²³: Այսպիսով, ԵՄ Արդարադատության դատարանը վստահության արդյունքում վնաս կրելը լեգիտիմ ակնկալիքների պաշտպանության նախադրյալ կամ պայման չի համարում:

Լիովին կիսում ենք իրավաբանական գրականությունում արտահայտված այն մտահոգությունը, որ վնասի պատճառումը լեգիտիմ ակնկալիքների պաշտպանության նախադրյալ լինել չի կարող, քանի որ այն չհիմնավորված ձևով սահմանափակում է դրա պաշտպանության շրջանակը: Սակայն կարծում ենք, որ խնդրի լուծումը ոչ թե լեգիտիմ ակնկալիքների պաշտպանության հիմնավորումից վստահության պայմանի բացառումն է, այլ դրա բովանդակության ընկալումը:

Գտնում ենք, որ վարչական իրավունքում լեգիտիմ ակնկալիքների պաշտպանության համատեքստում վստահությունը բացառապես պետք է մեկնաբանվի որպես հանրային իշխանության մարմինների ակտերի կամ գործողությունների **իրավաչափության նկատմամբ վստահություն**: Այսպես, ինչպես նշում է ԵՄ Արդարադատության դատարանը. «Թեև պետք է ընդունել, որ յուրաքանչյուր ԵՄ հաստատություն, որը պարզում է, որ իր ընդունած միջոցը ոչ իրավաչափ է, իրավունք ունի ողջամիտ ժամկետում հետագայի համար այն վերացնել, այդ իրավունքը կարող է սահմանափակվել ակտի հասցեատիրոջ լեգիտիմ ակնկալիքները հարգելու անհրաժեշտությամբ, եթե վերջինս **վստահել է** դրա իրավաչափությանը»²⁴:

²³ St' u Case T-67/18 Probelte v Commission [2019] ECLI:EU:T:2019:873:

²⁴ Case T-605/18 ZF v Commission [2020] ECLI:EU:T:2020:51, պարագրաֆ 148, Case 15/85 Consorzio Cooperative d'Abruzzo v Commission [1987] ECLI:EU:C:1987:111, պարագրաֆներ 12-17, Case C-248/89 Cargill v Commission [1991] ECLI:EU:C:1991:264, պարագրաֆ 20 և Case C-90/95 P de Compte v Parliament [1997] ECLI:EU:C:1997:198, պարագրաֆ 35:

Եվրոպայի խորհրդի «Վարչարարությունը և Դուք» ձեռնարկում՝ իրավական որոշակիության սկզբունքի մեկնաբանություններում, անդրադառնալով լեգիտիմ ակնկալիքների պաշտպանության անհրաժեշտությանը, կարևորվում է. «Բոլորը պետք է կարողանան դրսևորել իրենց **լեգիտիմ վստահությունը հանրային իշխանությունների հանդեպ**, որպեսզի կարողանան կարգավորել իրենց վարքագիծը՝ լիարժեքորեն իմանալով, թե ինչպես են հանրային իշխանությունները գործելու: Ընդհանրապես, հանրային իշխանությունները պետք է հետևողական լինեն իրենց որոշումներում և չպետք է գործեն պատահական կերպով: Բոլորը պետք է կարողանան **բարեխղճորեն վստահել** վարչական որոշումներին, որոնք ընդունվել են հանրային իշխանությունների կողմից, որոնց որոշումները և գործողությունները պետք է **միշտ հիմնված լինեն օրենքի վրա**, որը կարգավորում է տվյալ իրավիճակը»²⁵: Ընդ որում, նույն ձեռնարկում նշվում է, որ պաշտպանված լեգիտիմ ակնկալիք չի կարող լինել, **եթե անձը գիտեր կամ պետք էր ողջամտորեն իմանար, որ սկզբնական որոշումը իրավաչափ չէր**, կամ եթե անձը սկզբնական որոշման ընդունման նպատակով հանրային իշխանություններին տվել է սխալ կամ ոչ պատշաճ տեղեկատվություն²⁶:

Ուշագրավ է, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ՝ ՄԻԵԴ) ևս ճանաչում է հանրային իշխանության մարմինների այն որոշումների կամ գործողությունների հիման վրա լեգիտիմ ակնկալիքների գոյությունը, որոնք առերևույթ իրավաչափ են: Այսպես, **Lelas v. Croatia** գործում²⁷ ՄԻԵԴ-ն ըն-

²⁵ Council of Europe (2024). The administration and you - A handbook (3rd ed.): Principles of administrative law concerning relations between individuals and public authorities. Council of Europe Publishing, p. 20.

²⁶ Տե՛ս նույն տեղում:

²⁷ Տե՛ս ECtHR, Lelas v. Croatia, no. 55555/08, ECHR 2010-V, Judgment of 20 May 2010:

դունեց, որ դիմողը կարող էր **լեգիտիմորեն վստահել** հանրային պաշտոնատար անձանց այն հայտարարություններին, որոնք արտաքուստ ունեին դրա համար անհրաժեշտ լիազորություն: Ոչ իրավաչափ վարչական ակտերի հասցեատերերի լեգիտիմ ակնկալիքների պաշտպանության վերաբերյալ²⁸ վերջերս կայացրած որոշումներով ՄԻԵԴ-ը բազմիցս արձանագրել է. «Պատշաճ կառավարման սկզբունքը, որպես ընդհանուր կանոն, չպետք է խոչընդոտի իշխանություններին ուղղելու պատահական սխալները, նույնիսկ եթե դրանք բխում են սեփական անփութությունից: Սակայն «**հին սխալի» ուղղման անհրաժեշտությունը չպետք է անհամաչափ կերպով միջամտի նոր իրավունքին, որը անհատը ձեռք է բերել հանրային մարմնի գործողությունների լեգիտիմության նկատմամբ բարեխղճորեն վստահելու արդյունքում:** Այլ կերպ ասած՝ պետական մարմինները, որոնք չեն ապահովել կամ չեն պահպանել իրենց իսկ սահմանած ընթացակարգերը, չպետք է կարողանան օգտվել իրենց ոչ իրավաչափ վարքագծից կամ խուսափել իրենց պարտավորություններից: Պետական մարմնի թույլ տված ցանկացած սխալի դիսկը պետք է կրի պետությունը, և սխալները չպետք է շտկվեն շահագրգիռ անձանց հաշվին»²⁹:

Բացի այդ՝ պետք է կարևորել, որ քննարկվող սկզբունքի գործողության շրջանակը վաղուց արդեն չի սահմանափակվում կոնկրետ անձի կապակցությամբ կայացված որոշման կամ նրան տված խոստման հիման վրա առաջացած լեգիտիմ

²⁸ St'u նաև՝ ReNEUAL 2.0, The Pan-European General Principles on Legal Certainty and Protection of Legitimate Expectations in Administrative Matters, <https://renewal.eu/projects-and-publications/renewal-2-0?view=article&id=23&catid=2>:

²⁹ ECtHR, judgement Beinarovič and Others v Lithuania (70520/10, 21920/10, 41876/11) 12 June 2018, ECtHR, judgement Eka Mikeladze and Others v. Georgia (29385/11, 19372/12, 29533/13, and 73699/13) 25 November 2021.

ակնկալիքներով, այլ նաև ներառում է վարչական մարմնի քաղաքականության և պրակտիկայի հիման վրա առաջացած լեգիտիմ ակնկալիքները³⁰:

Եթե որոշումը կամ խոստումը ենթադրում է համեմատաբար ուղղակի հաղորդակցություն, որը ձևավորում է որոշակիորեն կոնկրետ բովանդակությամբ ակնկալիք, ապա քաղաքականությունը, հակառակը, պակաս ուղղակի բնույթ ունի: Այն, որպես կանոն, ուղղված չէ կոնկրետ անձի կամ սահմանափակ խմբի, որոնք վստահում են դրան, այլ հրապարակվում է ավելի լայն հանրության տեղեկատվության համար, և պարտադիր չէ, որ հատուկ կերպով ներկայացվի որևէ առանձին անձի ուշադրությանը: Քաղաքականությունը վերաբերում է այն հարցին, թե տվյալ պահին հանրային մարմինը ինչ է նախատեսում անել, այլ ոչ թե նրան, թե նրա գործողությունների ընթացքը ինչպես կազդի կոնկրետ անհատի վրա (ինչպես որոշման կամ խոստման դեպքում): Պրակտիկան ավելի քիչ որոշակի է. այն չի պարունակում մտադրության ակտիվ արտահայտություն, այլ, ըստ էության, արտահայտվում է այն եզրակացությամբ, որ նախկինում դրսևորված վարքագիծը կշարունակի պահպանվել նաև ապագայում³¹:

Թեև թե՛ քաղաքականության և թե՛ պրակտիկայի վստահության հիման վրա ձևավորված լեգիտիմ ակնկալիքների պաշտպանությունն արդեն հաստատված ճշմարտություն է, երկու դեպքում էլ վնաս պատճառելու մասին չի կարող խոսք լինել³²: Այս

³⁰ Տե՛ս, օրինակ, **F Ahmed and A Perry**, 'The Coherence of the Doctrine of Legitimate Expectations' (2014) 73 Cambridge Law Journal 61, 64-66:

³¹ Տե՛ս **G. Weeks**, նշված աշխատ., էջեր 148-149:

³² Ավելի մանրամասն տե՛ս **Daphne Barak-Erez**, 'The Doctrine of Legitimate Expectations and the Distinction between the Reliance and Expectation Interests', (2005), էջ 11, European Public Law, Issue 4, էջեր 583-601, <https://kluwerlawonline.com/journalarticle/European+Public+Law/11.4/EURO2005045>:

դեպքերում լեգիտիմ ակնկալիքները պաշտպանություն կստանան կանխատեսելիության, ձևական հավասարության և հետևողականության³³ պահանջների հիման վրա՝ անկախ նրանից՝ անձը վնաս կրել է, թե ոչ:

Ամփոփելով հետազոտությունը՝ գտնում ենք, որ վստահությունը լեգիտիմ ակնկալիքների պաշտպանության կարևորագույն նախադրյալ է: Այլ կերպ ասած՝ ակնկալիքի լեգիտիմության մասին կարող ենք խոսել միայն այն դեպքում, եթե անձը կարող էր բարեխղճորեն վստահել վարչական մարմնի գործողություններին կամ ակտերին: Ընդ որում, լեգիտիմ ակնկալիքների պաշտպանության համար վարչական մարմնի գործողություններին կամ ակտերին վստահության արդյունքում վնաս կրելը չպետք է լինի պարտադիր նախապայման: Ելակետը պետք է լինի այն, որ լեգիտիմ ակնկալիքների պաշտպանության համատեքստում վստահությունը բացառապես պետք է մեկնաբանվի որպես հանրային իշխանության մարմինների ակտերի կամ գործողությունների իրավաչափության նկատմամբ ապավինում:

1.2. Օրենքի գերակայության տեսությունը

Այս տեսության կողմնակիցները, որոնք ազդեցիկ են ինչպես Բրիտանիայում³⁴, այնպես էլ մայրցամաքային իրավական համակարգում³⁵ և ԵՄ-ում³⁶, օրինական ակնկալիքների սկզբուն-

³³ Լեգիտիմ ակնկալիքների պաշտպանության, հավասարության և հետևողականության մասին առավել մանրամասն տե՛ս **Elliott, M.** (2005). Legitimate Expectation, Consistency and Abuse of Power: the Rashid Case. Judicial Review, 10(4), 281–288, <https://doi.org/10.1080/10854681.2005.11426446>:

³⁴ Տե՛ս **P. P. Craig**, 'Substantive Legitimate Expectations and the Principles of Judicial Review', in **M. Andenas** (ed.), English Public Law and the Common Law of Europe (London, 1998), 23, էջեր 45–47:

³⁵ Մասնավորապես գերմանական իրավունքը շեշտադրում է **Rechtssicherheit**-ի (իրավական որոշակիության) և **Vertrauensschutz**-ի (վստահության պաշտպանության) միջև առկա կապը:

քը համարում են օրենքի գերակայության ասպեկտներից մեկը: Վստահության տեսության նման օրենքի գերակայության տեսությունը բխում է ինքնավարությունից³⁷: Որպեսզի անհատները ինքնավար լինեն, նրանք պետք է գոնե կարողանան նախապես պլանավորել և, հետևաբար, որոշակի աստիճանի վստահությամբ կանխատեսել իրենց գործողությունների հետևանքները³⁸: Այսպիսով, օրենքներն ու դրանք կիրառողների գործողությունները ենթարկվում են կանխատեսելիության և որոշակիության պահանջին³⁹:

Տնտեսական տեսանկյունից իրավական որոշակիությունը, ինչպես ցույց է տվել Մաքս Վեբերը, անհրաժեշտ պայման է կապիտալիստական տնտեսության մեջ ողջամիտ ձեռներեցության համար⁴⁰: Տնտեսական գործունեությունը, որը ինքնուրույն որոշումներ կայացնելու կարևոր ոլորտ է, կարող է իրականացվել միայն այն դեպքում, եթե տնտեսության մասնակիցները «կարող

³⁶ Տե՛ս **H. G. Schermers and D. Waelbroeck**, *Judicial Protection in the EC*, 5th edn. (Deventer, 1992), էջ 52, **T. Hartley**, *The Foundations of European Community Law*, 4th edn. (Oxford, 1998), էջեր 142-143; **T. Tridimas**, *The General Principles of EC Law* (Oxford, 1999), էջ 163:

³⁷ Տե՛ս **P. P. Craig**, 'Formal and Substantive Conceptions of the Rule of Law: An Analytical Framework' (1997) PL 467, էջ 481: Սա կիրառելի է նաև տվյալ տեսության ֆրանսիական **État de droit** և գերմանական **Rechtsstaat** հասկացությունների ընկալումների նկատմամբ: Տե՛ս **M. Troper**, 'Le concept d'État de droit', in M. Troper (ed.), *L'État de droit* (Caen, 1993), էջ 34:

³⁸ Տե՛ս **J. Raz**, նշված աշխատ., էջ 14:

³⁹ Տե՛ս *Black Clawson v Papierwerke AG* [1975] AC 591, 638: Այս հիմնարար պահանջը ընդունվում է թե՛ իրավունքի գերակայության ձևական, թե՛ առավել բովանդակային (նյութական) ընկալումների կողմնակիցների կողմից: Ձևական տեսություններում իրավական որոշակիության վերաբերյալ տե՛ս **H. W. R. Wade**, 'The Concept of Legal Certainty. A Preliminary Skirmish' (1940-1) MLR 183, էջեր 185-94:

⁴⁰ Տե՛ս **M. Weber**, *Économie et société*, vol. I (Paris, 1971), 15-350, *L'éthique protestant et l'esprit du capitalisme* (Paris, 1981), էջ 23: Տե՛ս նաև՝ **M. E. Streit**, 'Economic Order, Private Law and Public Policy' (1992) JITE:

են հույս դնել ինչ-որ բանի վրա»⁴¹: Արագ փոփոխվող և ավելի ու ավելի անորոշ աշխարհում օրենքն այն է, ինչի վրա տնտեսության մասնակիցները պետք է կարողանան մեծապես ապավինել⁴²:

Վարչական իրավունքում որոշակիության կարևորությունը մեծանում է հայեցողական լիազորությունների ընդլայնմանը զուգընթաց, որոնցով օժտված են վարչական մարմինները⁴³: Անհատների համար հեշտ չէ կանխատեսել, թե ինչպես են իրականացվելու հայեցողական լիազորությունները, քանի որ այդպիսի լիազորություններ վերապահող դրույթները լեզվաբանորեն անորոշ են, և ոչ պաշտոնական աշխատանքային կանոնները և այլ սահմանափակումները, որոնց մասին անհատները սովորաբար տեղյակ չեն, ազդում են դրանց իրականացման վրա⁴⁴: Վարքագիծը կարող է ակնկալիքներ ստեղծել դրանց իրականացման եղանակի կամ չափանիշների վերաբերյալ: Այսպիսով, այս սպասումները հարգելը ավելի կանխատեսելի է դարձնում հայեցողության դրսևորումը:

Սակայն իրավունքի գերակայության կարևորությունն այսօր քանով չի ավարտվում: Օրենքի գերակայության մի շարք ավելի մանրամասն պահանջներ, որոնք մշակվել են Ջոզեֆ Ռազի կողմից, բխում էին կանխատեսելիության և որոշակիության հիմնա-

⁴¹ E. Sharpston, 'Legitimate Expectations and Economic Reality' (1990) ELR 103, p. 106 և բաժին 4.B:

⁴² Տե՛ս U. Beck, Risk Society: Towards a New Modernity (London, 1992), A. Giddens, The Third Way (Cambridge, 1998):

⁴³ Տե՛ս D. J. Galligan, Discretionary Powers: A Legal Study of Official Discretion (Oxford, 1986), էջ 154, R. E. Goodin, 'Welfare, Rights and Discretion' (1986) OJLS 231, էջեր 244-245:

⁴⁴ Տե՛ս K. Hawkins, 'The Use of Legal Discretion: Perspectives From Law and Social Science', in K. Hawkins (ed.), The Uses of Discretion (Oxford, 1992), էջեր 11, 13, 38-44:

կան պահանջների⁴⁵: Այս պահանջները հետևանքներ են ունենում ինչպես օրենսդիրների, դատավորների, այնպես էլ վարչական մարմինների համար⁴⁶: Դրանցից երկուսը հատուկ նշանակություն ունեն:

Նախ՝ օրենքի գերակայությունը ենթադրում է ձևական հավասարություն⁴⁷: Այսինքն՝ նմանատիպ դեպքերը պետք է լուծվեն նույն ձևով՝ օրենքի ճիշտ և հետևողական կիրառման միջոցով: Առանց ձևական հավասարության՝ օրենքը դառնում է կամայական և, հետևաբար, անկանխատեսելի ու անորոշ⁴⁸: Երկրորդ՝ օրենքի գերակայությունը ենթադրում է օրենքի կայունության որոշակի աստիճան: Օրենքը պետք է ապահովի, որ վարչական գործողությունները հիմնված լինեն կարճաժամկետ կարիքների և ավելի երկարաժամկետ նկատառումների համադրության վրա⁴⁹: Անհատական պլանավորումը դառնում է դժվար կամ անհնար, եթե օրենսդրությունը և քաղաքականությունը փոխվում են շատ հաճախ և շատ կտրուկ: Ավելին, հաճախակի փոփոխությունները կարող են խաթարել անհատի իրավունքները՝ ստեղծելով անորոշություն այդ իրավունքների սահմանների վերաբերյալ⁵⁰:

Վարչական իրավունքի սկզբունքներով ակնկալիքների իրավական պաշտպանությունը օրենքի գերակայությանը բնո-

⁴⁵ Տե՛ս **J. Raz**, նշված աշխատ., և *Ethics in the Public Domain* (Oxford, 1995), էջեր 370-378:

⁴⁶ Տե՛ս **J. Raz**, նշված աշխատ., էջ 215:

⁴⁷ Տե՛ս **Wade**, նշված աշխատ., էջ 187, **A. V. Dicey**, *Introduction to the Study of the Law of the Constitution*, 10th edn. (London, 1959), էջ 193; **Rawls**, նշված աշխատ., էջ 237:

⁴⁸ Տե՛ս **Raz**, նշված աշխատ., էջ 219, **Jowell**, նշված աշխատ., էջ 76, **T. A. O. Endicott**, 'The Impossibility of the Rule of Law' (1999) OJLS 1, էջ 3:

⁴⁹ Տե՛ս **Raz**, նշված աշխատ., էջեր 214-15, **J. Carbonnier**, *Flexible Droit*, 7th edn. (Paris, 1992), էջեր 165-170:

⁵⁰ Տե՛ս **Rawls**, նշված աշխատ., էջ 235, **J. Carbonnier**, նշված աշխատ., էջ 173:

րոշ կանխատեսելիության, ձևական հավասարության և կայունության պահանջների արտահայտման միջոց է: Լեզգիտիմ ակնկալիքների տեսությունը, որը հիմնված է օրենքի գերակայության վրա, ավելի ընդգրկուն է, քան վստահության տեսությունը: Այն բացատրում է, թե ինչու են ակնկալիքները պաշտպանվում և պետք է պաշտպանվեն, եթե վստահության արդյունքում անձին որևէ «իրական» վնաս չի պատճառվել. հարգել մարդկանց ինքնավարությունը և ապահովել հավասար վերաբերմունք⁵¹:

Տեսությունը նաև հիմնավորում է վստահության մեկնաբանության վերաբերյալ մեր վերը նշած եզրահանգումը. լեզգիտիմ ակնկալիքների ենթակա են պաշտպանության, քանի որ օրենքի գերակայությունը հանրային իշխանությունից պահանջում է հանրային շահերն իրականացնելիս միշտ գործել օրենքի շրջանակներում՝ իրավաչափորեն:

Ամփոփելով կարող ենք նշել, որ օրենքի գերակայության տեսությունը վարչական իրավունքում լեզգիտիմ ակնկալիքների պաշտպանության հիմնավորման հարցում ունի երկակի նշանակություն: Նախ՝ այս տեսության համատեքստում վնաս առաջացրած վստահությունը լեզգիտիմ ակնկալիքների պաշտպանության նախապայման չէ: Երկրորդ՝ կարևորելով իրավական որոշակիությունը, վարչարարության կանխատեսելիությունն ու հետևողականությունը՝ այս տեսությունը հիմնավորում է վարչական մարմնի քաղաքականության և պրակտիկայի հիման վրա առաջացող լեզգիտիմ ակնկալիքների պաշտպանությունը:

⁵¹ Տե՛ս **Raz**, նշված աշխատ., էջ 222:

1.3. Խրախուսման տեսությունը

Խրախուսման սկզբունքի համաձայն՝ վարչական դատարանները պետք է խրախուսեն համապատասխան վարչական մարմիններին՝ մեղմելու վնասը կամ տրամադրելու հատուցում այն անձանց օգտին, որոնց մոտ իրենք ձևավորել են ակնկալիքներ և հետագայում խաթարել են այդ ակնկալիքները: Այս խրախուսումը պետք է իրականացվի այնպես, որ դատարանները հստակ ազդանշան ուղարկեն. եթե նման մեղմացում կամ հատուցում չկատարվեն, ապա դատարանները ավելի մեծ հավանականությամբ ակնկալիքները կճանաչեն լեգիտիմ և կտրամադրեն նյութական պաշտպանություն, այսինքն՝ կպարտավորեցնեն վարչական մարմիններին հարգել և իրականացնել այդ ակնկալիքները⁵²:

Այս մոտեցման պրակտիկ կիրառման օրինակ կարելի է գտնել անգլիական **Coughlan** գործում՝ Լորդ Վուլֆի հետևյալ մեջբերման մեջ. «Դատարանի խնդիրը [...] այդուհետ սահմանափակվում է այն հարցի քննությամբ, թե արդյոք քաղաքականության կիրառումը այն անհատի նկատմամբ, ում մոտ ձևավորվել էր ակնկալիք, իշխանության արդարացի իրականացում է: Շատ դեպքերում իրավասու մարմինը արդեն իսկ անդրադարձել է այս հարցին և սահմանել համապատասխան բացառություններ [...] կամ որոշում է կայացրել վճարել փոխհատուցում այն դեպքերում, երբ դրամական հատուցումը բավարար է: Սակայն այն դեպքերում, երբ նման հատուցում չի տրամադրվել, դատարանի խնդիրն է որոշել, թե արդյոք անհատի ակնկալիքի խախտման արդյունքում առաջացած հիասթափությունը այնքան

⁵² Տե՛ս **Alexander Brown**, նշված աշխատ., էջ 44:

անարդար է, որ կարող է որակվել որպես իրավասու մարմնի իշխանության չարաշահում»⁵³:

Գլխավոր Լորդ Սիդլին **F & I Services Ltd v Customs and Excise**⁵⁴ գործով հետևյալ կերպ է բացատրում իրավական պաշտպանության միջոցների վերաբերյալ որոշումների էությունը. «Կարևորն այն է [...], որ նման հատուցումը վնասների նախնական հատուցում չէ. այն գործնական միջոց է՝ վերացնելու այն անարդարությունը, որը հակառակ դեպքում կպատճառեր քաղաքականության փոփոխությունը: Նման պարագայում վերջնարդյունքում ակտը դատական կարգով վիճարկելի չարաշահում չի լինի»⁵⁵:

Իրականում անգլիական վարչական դատարանները միակը չեն, որոնք իրենց գնահատումների շրջանակում լեգիտիմ ակնկալիքի խախտված լինել-չլինելու հարցը գնահատելիս հաշվի են առնում վարչական մարմինների կողմից դրամական հատուցման փաստը: Նոր Զելանդիան ևս նման օրինակ է⁵⁶: Սա էապես տարբերվում է այն դեպքերից, երբ դատարանները որոշում են կայացնում այն մասին, թե արդյոք վարչական մարմինները պետք է փոխհատուցում վճարեն այն դեպքերում, երբ արդեն իսկ արձանագրված է լեգիտիմ ակնկալիքի խախտում:

Վերոշարադրվածից հետևում է, որ եթե դատարանը գտնում է, որ վարչական մարմինը արդեն իսկ ձեռնարկել է ողջամիտ քայլեր՝ ակնկալիքի խախտման հետևանքով առաջացած վնասը մեղմելու կամ փոխհատուցելու համար, ապա ավելի հավանական է, որ կհանգի լեգիտիմ ակնկալիքի խախտման բացակա-

⁵³ [1999] LGR 703 (CA), պարագրաֆ 82:

⁵⁴ St'u [2001] EWCA Civ 762:

⁵⁵ Նույն տեղում, պարագրաֆ 72:

⁵⁶ St'u New Zealand Association for Migration and Investments Inc v Attorney-General [2006] NZAR 45, պարագրաֆ 157:

յության վերաբերյալ եզրակացության և, հետևաբար, չի տրամադրի նյութական իրավական պաշտպանություն:

Ա. Բրաունն առանձնացրել է Խրախուսման սկզբունքի՝ որպես լեգիտիմ ակնկալիքի պաշտպանական մոտեցման երեք թերություն: Այսպես, այն դեպքերում, երբ վարչական դատարանները ակնհայտորեն հասկացնում են, որ լեգիտիմ ակնկալիքների խախտումների վերաբերյալ գործերում նրանք ավելի դրական կգնահատեն վարչական մարմինների վարքագիծը, եթե վերջիններս միաժամանակ քայլեր ձեռնարկեն վնասի մեղմման ուղղությամբ կամ դրամական վճարումներ կատարեն առաջացած վնասների դիմաց, նրանք իրականում մղում կամ նույնիսկ սպառնում են այդ մարմիններին՝ նման քայլեր ձեռնարկելու⁵⁷:

Երկրորդ՝ որևէ մղում կամ սպառնալիք արդյունավետ է միայն այն դեպքում, եթե համապատասխան վարչական մարմինը այն համարում է իրատեսական կամ համոզիչ: Սակայն, օրինակ, ոչ իրավաչափ վարքագծի դեպքերում տվյալ մարմինը կգիտակցի, որ դատարանը չի կարող կամ չի պատրաստվում պարտավորեցնել իրեն հարգելու ակնկալիքը, երբ մարմինը չունի դրա համար անհրաժեշտ լիազորություն, իրավասություն կամ գործնական հնարավորություն տվյալ պահին⁵⁸:

Երրորդ թերությունն այն է, որ Խրախուսման սկզբունքը փաստացիորեն նվազեցնում է լեգիտիմ ակնկալիքների պաշտպանության հնարավորությունը, քանի որ շփոթում է ակնկալիքի լեգիտիմության հարցը համապատասխան պաշտպանական միջոցների կիրառման հարցի հետ: Ակնկալիքի լեգիտիմությունը փոխհատուցման վճարմամբ պայմանավորելով՝ այն նաև շրջում է այն տրամաբանական հերթականությունը, որը պետք է կի-

⁵⁷ Տե՛ս **Alexander Brown**, նշված աշխատ., էջ 46:

⁵⁸ Տե՛ս **Alexander Brown**, նշված աշխատ., էջ 47:

րառվի լեզվի տիմ ակնկալիքների պաշտպանության գործերում: Այսպես, նախ՝ պետք է որոշվի՝ արդյոք տվյալ ակնկալիքը լեզվի տիմ է, թե ոչ: Այնուհետև՝ պետք է քննվի նյութական պաշտպանության տրամադրման, այսինքն՝ գործնականում այդ ակնկալիքի իրականացման ապահովման հարցը: Վերջապես՝ նույնիսկ այն դեպքում, երբ գոյություն ունեն գերակշռող պատճառներ, որոնք խոչընդոտում են նյութական պաշտպանություն տրամադրելը, վարչական մարմինը պարտավոր է հատուցում տրամադրել ակնկալիքի խախտման համար⁵⁹:

Կիսելով հեղինակի մտահոգությունները՝ չենք կարող, սակայն, ընդհանրապես չկարևորել խրախուսման տեսության դերը լեզվի տիմ ակնկալիքների պաշտպանության հիմնավորման հարցում: Լեզվի տիմ ակնկալիքների պաշտպանության համատեքստում առաջին պլան մղելով հատուցման մեխանիզմների կիրառման կարևորությունը՝ այս տեսությունը ընդգծում և պատշաճ հիմնավորում է ապահովում լեզվի տիմ ակնկալիքների հատուցողական պաշտպանության համար:

1.4. Անվտանգության տեսությունը

Լեզվի տիմ ակնկալիքների պաշտպանության Օրենքի վրա հիմնված մոտեցման համաձայն՝ դրանք սպառվում են միայն այնպիսի հավատալիքներով (թե ինչ է տեղի ունենալու, և ինչ պետք է տեղի ունենա ապագայում), որոնք հիմնավորված են կոնկրետ իրավական նորմերով և հիմքերով, այլ ոչ թե պարզապես սոցիալական սովորույթներով, վարքագծային ձևերով կամ գաղափարներով: Այլ կերպ ասած՝ «լեզվի տիմ» եզրույթը մատնանշում է այն փաստը, որ անձի՝ ինչ-որ բանի վերաբերյալ ակնկալիքը հիմնված է ձևակերպված և հարկադրական ուժով

⁵⁹ Տե՛ս նույն տեղում, էջ 48:

կիրառվող իրավական կանոնների համակարգի վրա, որոնք որոշել են, որ տվյալ անձն իրականում ունի ինչ-որ բանի նկատմամբ իրավական իրավունք: Հենց այն հանգամանքի շնորհիվ, որ անձն ունի է ինչ-որ բանի նկատմամբ իրավական իրավունք, կարելի է ասել, որ նա ունի դրա վերաբերյալ լեգիտիմ ակնկալիք⁶⁰:

Այն գաղափարը, որ կոնկրետ իրավական նորմերի վրա հիմնված ակնկալիքները կարևոր են և պետք է պաշտպանվեն, առկա է Ջեյմսի Բենթեմի անվտանգության (security) դոկտրինում: Այն սկսվում է այն դիտարկումից, որը հեղինակը համարում է «անվիճելի»։ «Ակնկալիքը, որքանով այն գոյություն ունի մարդկանց գիտակցության մեջ, անդդվելի հնազանդությամբ բխում է օրենքի գոյությունից»⁶¹: Այլ կերպ ասած՝ այն գիտակցումը, որ անձն ինչ-որ բանի նկատմամբ ունի իրավական իրավունք, անխուսափելիորեն տվյալ անձի գիտակցության մեջ ձևավորում է դրա վերաբերյալ ակնկալիք:

Ավելին, ըստ Բենթեմի, փորձը ցույց է տալիս, որ ակնկալիքների թե՛ ինտենսիվությունը, թե՛ տևողությունը զգալիորեն կախված են այն հանգամանքից, թե որքանով են դրանք հիմնված իրավական իրավունքների վրա: Օրինակ՝ իր «Քաղաքացիական օրենսգրքի սկզբունքներում» Բենթեմը հակադրում է մի վայրենի մարդու, ով ակնկալում է, որ կկարողանա օգտվել իր որսած եղջերուից՝ հիմնվելով միայն իր խորամանկության և ֆիզիկական ուժի վրա, այն անձի հետ, ով գործում է իրավական նորմերին համապատասխան և ակնկալում է, որ կկարողանա օգտվել իր գնած եղջերուից՝ հիմնվելով այդ գույքի նկատմամբ իր իրավական իրավունքից: Ինչպես ձևակերպում է Բենթեմը.

⁶⁰ Տե՛ս **Alexander Brown**, նշված աշխատ., էջ 54:

⁶¹ **Jeremy Bentham**, ‘Supply Without Burden’ in **J Bowring** (ed), *The Works of Jeremy Bentham*, vol 2 (William Tait 1843), p. 589.

«Թույլ և անցողիկ ակնկալիքը կարող է ժամանակ առ ժամանակ առաջանալ զուտ ֆիզիկական հանգամանքներից, սակայն ուժեղ և կայուն ակնկալիք կարող է առաջանալ միայն օրենքից»⁶²:

Ամեն դեպքում, Բենթհեմը գտնում է, որ հանրային գործողությունների ուղեցույց պետք է ընդունել այն, ինչ նա կոչում է «անվտանգության սկզբունք» (principle of security), ըստ որի՝ «իրադարձությունները, որքանով դրանք կախված են օրենքներից, պետք է համապատասխանեն այն ակնկալիքներին, որոնք ստեղծել է հենց օրենքը»⁶³: Օրինակ՝ «սեփականության տեսանկյունից անվտանգությունը այն է, որ օրենքների վրա հիմնված՝ այս կամ այն բարիքից օգտվելու ակնկալիքը չհանդիպի որևէ խոչընդոտի, ցնցումի կամ խախտման»⁶⁴:

Անվտանգության սկզբունքը, հնարավոր մեկնաբանություններից մեկի համաձայն, ենթադրում է, որ եթե երբևէ իրավական համակարգը փոփոխության ենթարկվի, ապա այդ փոփոխությունը պետք է կիրառվի միայն հետագա իրավական որոշումների նկատմամբ և չպետք է ունենա հետադարձ ուժ արդեն գոյություն ունեցող իրավունքների վրա: Հակառակ դեպքում՝ այն անձը, ով ուներ ինչ-որ բանի նկատմամբ օրինական ակնկալիք՝ հիմնված դրա նկատմամբ իրավական իրավունքի վրա, կհայտնվի մի իրավիճակում, որտեղ «գորգը կքաշվի նրա ոտքերի տակից»⁶⁵: Այլ կերպ ասած՝ ցանկացած օրենսդրական փոփոխություն չպետք է կիրառվի հետադարձ ուժով՝ հոգուտ այն կայացած ակնկալիքների անվտանգության պաշտպանության, որոնք արդեն իսկ ձևավորվել են գործող իրավունքի հիման վրա:

⁶² **Jeremy Bentham**, 'Principles of the Civil Code' in CK Ogden (ed), *The Theory of Legislation* (Kegan Paul, Trench, Trubner & Co 1931) 113.

⁶³ Նշված աշխատ., էջ 111:

⁶⁴ Նշված աշխատ., էջ 113:

⁶⁵ **Alexander Brown**, նշված աշխատ., էջ 56:

Փաստորեն այս մոտեցման հիմքում ընկած ընդհանուր գաղափարն այն է, որ ակնկալիքները պետք է հիմնավորված լինեն օրենքներով և իրավական հիմքերով, որպեսզի անձինք ունենան ոչ միայն այնպիսի հավատ, որ ապագայում ինչ-որ բան տեղի կունենա կամ չի տեղի ունենա (օրինակ՝ որ նրանք կպահպանեն իրենց սեփականությունը, կամ՝ որ ուրիշները չեն վերցնի այն), և ոչ միայն պարտադիր ակնկալիք, որ իրենք պետք է պահպանեն իրենց սեփականությունը, այլ նաև այնպիսի ընկալում, որ իրենց այդ պարտադիր ակնկալիքը արդարացված է, այսինքն՝ այնպիսի ակնկալիք, որը հասարակության մյուս անդամները կարող են ճանաչել որպես որոշ իմաստով հիմնավոր: Այն հանգամանքը, որ անձը ունի տվյալ գույքի նկատմամբ իրավական իրավունք, ինքնին այդպիսի արդարացնող հիմքերից մեկն է⁶⁶:

Իրականում Անվտանգության տեսությունն իր բնույթով առավել համապատասխան է մասնավոր իրավունքում սեփականության ներքո լեգիտիմ ակնկալիքների պաշտպանությունը հիմնավորելու համար: Այս տեսության շրջանակում առաջ քաշված մոտեցումները շատ նման են Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի Առաջին արձանագրության 1-ին հոդվածով պաշտպանվող գույքի հասկացության ներքո լեգիտիմ ակնկալիքներին պաշտպանություն տրամադրելու համար ՄԻԵԴ-ի առաջադրած պայմաններին: Այսպես, Դատարանը դա հստակորեն նշել է. «Որպեսզի տվյալ իրավունքը ներառվի «գույք» հասկացության ներքո, դիմումատուն պետք է կարողանա ցույց տալ տվյալ տնտեսական օգուտի նկատմամբ իրավական տիտղոս կամ առնվազն լեգիտիմ ակնկալիք, որ այդ տիտղոսը կնյութականանա»⁶⁷:

⁶⁶ Տե՛ս **Jeremy Waldron**, *The Rule of Law and the Measure of Property* (CUP 2012), էջեր 53–54:

⁶⁷ *Stran Greek Refineries & Stratis Andreadis v Greece*, 9 December 1994, Series A no. 301-B, տե՛ս նաև՝ **Ledi Bianku, Predrag Trifunović, Slađana Aras Kramar**

Ավելի ուշ **Bélané Nagy v. Hungary** գործով Դատարանի Մեծ պալատը հաստատել է. «Լեգիտիմ ակնկալիքը պետք է ունենա պարզապես հույսից ավելի կոնկրետ բնույթ և հիմնված լինի իրավական դրույթի կամ իրավական ակտի վրա, օրինակ՝ դատական որոշման: ... Բացի այդ, «լեգիտիմ ակնկալիք» չի կարող առաջանալ այն դեպքում, երբ առկա է վեճ ներպետական իրավունքի ճիշտ մեկնաբանության և կիրառման վերաբերյալ, և դիմումատուի փաստարկները հետագայում մերժվում են ազգային դատարանների կողմից...: Առաջին արձանագրության 1-ին հոդվածին վերաբերող գործերում սովորաբար պետք է պարզել, թե արդյոք գործի հանգամանքները՝ իրենց ամբողջությամբ դիտարկված, դիմումատուին տրամադրել են տվյալ դրույթով պաշտպանվող նյութական շահի նկատմամբ իրավական տիտղոս ... Օրինակ՝ մի շարք գործերում Դատարանը քննության է առել, թե արդյոք դիմումատուներն ունեին «այնպիսի պահանջ, որը բավարար չափով հաստատված էր՝ կատարման ենթակա լինելու համար»⁶⁸:

Այսպիսով, ՄԻԵԴ-ի դատական պրակտիկայում լեգիտիմ ակնկալիքը Առաջին արձանագրության 1-ին հոդվածի նպատակներով «գույք» ճանաչվելու համար հիմնական չափանիշը ակնկալիքի կոնկրետացման հնարավորությունն է. այն պետք է ներկայացնի պաշտպանության ենթակա իրավունք (*assertible right*), այլ ոչ թե «իրական վեճ» (*genuine dispute*) կամ պարզապես «հիմնավորված պահանջ» (*arguable claim*): Այդ ակնկալիքը չպետք է զիջի ներպետական իրավունքի ներքո բավարար չափով հաստատված, նյութական գույքային շահին:

and Ivana Martinović, Right to Property in the Context of Article 1 Protocol 1 to the European Convention on Human Rights and Freedoms (Council of Europe 2020), էջեր 8-11:

⁶⁸ Bélané Nagy v. Hungary [G.C.], No. 53080/13, 13 December 2016:

ՄԻԵԴ-ի մշակած «լեզիտիմ ակնկալիքների» հայեցակարգի՝ Անվտանգության տեսությանը բնորոշ թերևս ամենահիմնական բաղադրիչը հետևյալն է. լեզիտիմ ակնկալիքը պետք է հիմնված լինի իրավական ակտի վրա, որն ունի ամուր իրավական հիմք, օրինակ՝ ներպետական դատարանի որոշման վրա, որպեսզի հնարավոր լինի կիրառել Առաջին արձանագրության 1-ին հոդվածը:

Սակայն Անվտանգության սկզբունքը չափազանց խիստ է և էականորեն սահմանափակում է լեզիտիմ ակնկալիքների պաշտպանության շրջանակը վարչական իրավունքում, քանի որ այն պարզապես պահանջում է հարգել այն ակնկալիքները, որոնք արդեն իսկ հիմնված են գործող օրենքների և իրավական հիմքերի վրա: Վարչական իրավունքում պաշտպանության ենթակա են նաև ընթացակարգային լեզիտիմ ակնկալիքները, որոնք ձևավորվել են վարչական մարմինների պրակտիկայի հիման վրա: Ավելին, ինչպես կհիմնավորվի հետագայում, նյութական լեզիտիմ ակնկալիքներին պաշտպանություն տրվում է անգամ, եթե դրանք առաջացել են ոչ իրավաչափ վարչական ակտերի կամ գործողությունների հիման վրա:

1.5. Պատասխանատվության տեսությունը

Վերջին շրջանում լեզիտիմ ակնկալիքների պաշտպանության նոր տեսություն է անգլիացի հեղինակ Ա. Բրաունի մշակած «Պատասխանատվության տեսությունը» (Responsibility-Based Account): Ըստ հեղինակի՝ վարչական դատարանները կայացնում են ex post որոշումներ այն հարցի շուրջ, թե արդյոք և ինչ չափով վարչական մարմինները պետք է պատասխանատու լինեն անձանց փոխհատուցում վճարելու համար, եթե նրանց ակնկալիքները, հիմնվելով վարչական մարմնի վարքագծի վրա,

ճանաչվել են լեգիտիմ, սակայն խախտվել են հենց նույն վարչական մարմնի կողմից, հատկապես այն դեպքերում, երբ նյութական պաշտպանություն տրամադրելու հնարավորությունը բացառված է⁶⁹:

Պատասխանատվության տեսության համաձայն՝ ակնկալիքների օրինականությունը կախված է այն հանգամանքից, թե վարչական մարմիններն ինչ չափով են պատասխանատու դրանց ձևավորման համար՝ միաժամանակ հաշվի առնելով, որ այդ մարմիններն արդեն իսկ իրենց վրա են վերցրել դերային պատասխանատվություն՝ անձանց էական շահերին առնչվող պարտադիր որոշումներ կայացնելու համար:

Հեղինակը հիմնավորում է Պատասխանատվության տեսությունը մասնավորապես նրանով, որ այն չունի մյուս մոտեցումներին բնորոշ թերությունները՝ օբյեկտիվության և անկողմնակալության պակասը, «անատամ լինելը», այսինքն՝ իրական ազդեցություն չունենալը: Տեսությունը չունի այն ռիսկը, որ վարչական մարմինը կարող է խուսափել համարժեք փոխհատուցում վճարելուց, եթե դատարանը գտնի, որ մարմնին ակնկալիքը հարգելուն պարտավորեցնելը չի բխում հանրային շահից: Եվ վերջապես՝ ակնկալիքի լեգիտիմությունը չի նույնացվում փոխհատուցման նպատակահարմարության հարցի հետ:

Հեղինակի կարծիքով, ակնկալիքների լեգիտիմությունը կախված չէ նրանից՝ արդյոք վարչական մարմինը կամ պաշտոնատար անձը օժտված է եղել օրինական իշխանությամբ (legitimate authority): Այսինքն՝ ակնկալիքների լեգիտիմությունն ու պաշտպանության անհրաժեշտությունը պայմանավորված են ոչ միայն նրանով, թե վարչական մարմինը գործել է իր լիազորությունների շրջանակում, այլ նաև նրանով, թե արդյոք իրավա-

⁶⁹ Տե՛ս **Alexander Brown**, նշված աշխատ., էջ 48:

կան ու կառավարման համակարգը, որի մաս է կազմում վարչական մարմինը, ընդհանրապես դրսևորում է օրինական քաղաքական իշխանություն⁷⁰:

Ա. Բրաունի առաջարկած նոր մոտեցման ելակետն այն է, որ հստակորեն ճանաչվի, թե ակնկալիքի լեգիտիմության համար ինչն է իրականում կարևոր, և ինչը՝ ոչ: Ըստ նրա՝ այդ իրական նշանակության համար պարտադիր չէ, թե ինչպիսին է եղել անձի վարքագիծը. այսինքն՝ վստահելով վարչական մարմնին՝ անձը դիմել է ինչ-որ գործողության, թե ոչ: Սրանով հեղինակը կարծես հերքում է վստահության տեսության այն մոտեցումը, որ լեգիտիմ ակնկալիքներին պաշտպանություն պետք է տրամադրվի, միայն եթե վստահելով վարչական մարմնի վարքագծին՝ անձը վնաս է կրել:

Հեղինակը համաձայնում է Պ. Էլիասի այն մտքին, որ «իրական նշանակություն ունի որոշում կայացնողի վարքագիծը, որը ապահովում է պաշտպանության հիմքը»⁷¹: Կամ, ինչպես ձևակերպում է Ռեյնոլդսը, «դոկտրինը կարող է միջամտել (և ճիշտ ընկալման դեպքում՝ միջամտում է միայն այն պարագայում), երբ որոշում կայացնողի որոշակի գործողության արդյունքում առաջանում են իրավունքներ»⁷²:

Ա. Բրաունն անձանց ակնկալիքները իրապես արդարացված դարձնելու համար անհրաժեշտ է համարում նաև երկրորդ ընդհանուր տարր: Այն է՝ փաստը, որ համապատասխան վարչական գործակալները կամ մարմինները արդեն իսկ կա՛մ օժտված են եղել, կա՛մ իրենց վրա են վերցրել (այսինքն՝ գիտակ-

⁷⁰ Տե՛ս **Alexander Brown**, նշված աշխատ., էջ 63:

⁷¹ **Patrick Elias**, ‘Legitimate Expectation and Judicial Review’ in **J Jowell and D Oliver** (eds), *New Directions in Judicial Review* (Stevens 1988), p. 41.

⁷² **Paul Reynolds**, ‘Legitimate Expectations and the Protection of Trust in Public Officials’ (2011) *Public Law*, p. 334.

ցաքար ստանձնել են) որոշակի դերային պատասխանատվություն, իրավասություն կամ հայեցողություն՝ պարտադիր ուժ ունեցող որոշումներ կայացնելու այնպիսի հարցերի շուրջ, որոնք ազդում են մասնավոր անձանց, ինչպես նաև այլ հանրային մարմինների և հանրային հատվածի աշխատողների էական շահերի վրա⁷³:

Պատասխանատվության տեսության հիմնական առավելությունը այն է, որ ի տարբերություն մյուս տեսությունների՝ տալիս է այն հիմնավորումը, թե ինչու պետք է պաշտպանվեն նաև ոչ իրավաչափ վարչարարության հիման վրա առաջացած լեգիտիմ ակնկալիքները: Այսպես, տեսությունը հիմնավորում է, որ անկախ նրանից՝ արդյոք տվյալ վարչական մարմինները իրականում գործում են լեգիտիմ իշխանության հիման վրա, թե ոչ, այն փաստը, որ նրանք իրենց վրա են վերցրել այդպիսի դերային պատասխանատվություն, ակնկալիք ունեցող անձինք իրական այլընտրանք չունեն, քան հենվել նրանց վարքագծի վրա՝ որպես որոշում կայացնողների:

Պատասխանատվության տեսության այս ասպեկտը կարելի է բխեցնել նաև վարչական մարմինների (ոչ իրավաչափ) հայտարարություններին վստահության հիման վրա առաջացած լեգիտիմ ակնկալիքների պաշտպանության վերաբերյալ ՄԻԵԴ-ի դատական պրակտիկայից: Այսպես, **Lelas v Croatia** գործով ՄԻԵԴ-ը նշել է. «Դատարանը գտնում է, որ բարեխղճորեն գործող անհատը, որպես ընդհանուր կանոն, իրավասու է ապավինելու պետական կամ հանրային պաշտոնյաների կողմից արված հայտարարություններին, **որոնք արտաքինից թվում են կատարված համապատասխան լիազորություն ունեցող անձանց կողմից և այն պայմաններում, երբ ենթադրվում է, որ ներքին**

⁷³ Տե՛ս **Alexander Brown**, նշված աշխատ., էջ 69:

կանոններն ու ընթացակարգերը պահպանվել են, եթե միայն հրապարակայնորեն մատչելի փաստաթղթերից (ներառյալ առաջնային կամ ենթաօրենսդրական ակտերից) ակնհայտորեն չի հետևում, կամ անհատը այլ կերպ չի իմացել կամ պետք է իմանար, որ տվյալ պաշտոնյան չուներ պետությանը իրավաբանորեն պարտավորեցնելու լիազորություն:

Չպետք է անհատի վրա դրվի պարտականություն՝ ապահովելու, որ պետական մարմինները պահպանում են իրենց իսկ ներքին կանոններն ու ընթացակարգերը, որոնք հանրությանը մատչելի չեն և հիմնականում նախատեսված են պետական մարմնի ներսում հաշվետվողականությունն ու արդյունավետությունը ապահովելու համար:

Պետությունը, որի մարմինները չեն պահպանել իրենց իսկ ներքին կանոններն ու ընթացակարգերը, չպետք է կարողանա օգտվել այդ խախտումից կամ խուսափել իր պարտավորություններից: Այլ կերպ ասած՝ պետական մարմինների թույլ տված ցանկացած սխալի ռիսկը պետք է կրի պետությունը, և սխալները չպետք է շտկվեն շահագրգիռ անհատի հաշվին, հատկապես երբ առկա չէ որևէ հակասող մասնավոր շահ»⁷⁴:

Այս գործով դիմողն իր հրամանատարի կողմից բազմիցս տեղեկացվել էր, որ նրա պահանջները վիճարկման ենթակա չեն և կվճարվեն բյուջետային միջոցների հատկացումից հետո: Դատարանը գտել է, որ հաշվի առնելով ռազմական հիերարխիայի կանոնները՝ դիմողը կարող էր դիմել միայն իր անմիջական վերադասին: Նրա համար բնական էր ենթադրել, որ իրեն փոխանցվող տեղեկատվությունը բխում էր այնպիսի մարմնից, որն ուներ պարտքը ճանաչելու լիազորություն: Հաշվի առնելով, որ բացակայում էր հստակ իրավական դրույթ կամ հանրությանը

⁷⁴ ECtHR *Lelas v. Croatia*, no. 55555/08, § 74, 20 May 2010.

մատչելի փաստաթուղթ, որը սահմանում էր պարտքի ճանաչման իրավասու մարմինը, դիմողի համար ողջամիտ էր կարծել, որ Ջինված ուժերի Գլխավոր շտաբի հայտարարությունները պարտադիր էին նախարարության համար: Պատասխանատվության տեսության համատեքստում այս գործով ՄԻԵԴ-ի եզրահանգումները նշանակում էին, որ քանզի հրամանատարը ստանձնել էր դերային պատասխանատվություն Ջինված ուժերի անունից հայտարարություն անելու, ուրեմն ողջամիտ էր ակնկալել, որ դիմողը հենվելու էր (վստահելու էր) նրա վարքագծի վրա:

Ամփոփելով պարագրաֆը՝ կարող ենք փաստել, որ վարչական իրավունքում լեզիտիմ ակնկալիքների պաշտպանության հիմքում նախ և առաջ վարչական մարմինների որոշումներին և գործողություններին անձանց վստահությունը պաշտպանելու անհրաժեշտությունն է: Ընդ որում, վստահությունը պետք է ընկալել որպես այդ ակտերի իրավաչափությանն ապավինում: Լեզիտիմ ակնկալիքների պաշտպանության դոկտրինի հիմքում ընկած է նաև օրենքի գերակայությունն իր որոշակիության, վարչարարության կանխատեսելիության ու հետևողականության պահանջներով, որոնք պայմանավորում և հիմնավորում են ոչ միայն կոնկրետ ակտերի, այլ նաև վարչական մարմնի պրակտիկայի հիման վրա լեզիտիմ ակնկալիքների պաշտպանությունը: Ընդ որում, այնքանով, որքանով վարչական մարմիններն իրենց վարքագծով դրդել են անձանց վստահելու իրենց գործողությունների իրավաչափությանը, դրանով իսկ պատասխանատվություն են ստանձնում վստահության արդյունքում ձևավորված լեզիտիմ ակնկալիքների համար՝ անկախ նրանից՝ գործողություններն իրականում իրավաչափ եղել են, թե ոչ:

§2. Լեզբիտիմ ակնկալիքների պաշտպանության շրջանակը

2.1. Ակնկալիքի լեզբիտիմության բովանդակությունը. ողջամիտ ակնկալիք և լեզբիտիմ ակնկալիք

Ակնկալիքի լեզբիտիմության մասին խոսելիս նախ անհրաժեշտ է պարզաբանել, թե ինչով է այն տարբերակվում պարզապես ողջամիտ ակնկալիքներից: Առօրյա խոսքում «ողջամիտ ակնկալիք» տերմինը հաճախ օգտագործվում է ապագայի կանխատեսմանը վերաբերող իմաստով, որը որևէ անձի համար ողջամիտ է ունենալ՝ հիմնվելով գիտելիքների կամ տեղեկությունների վրա⁷⁵:

Օրինակ. «Ես ողջամիտ ակնկալիք ունեի, որ եթե արձակուրդս պլանավորեմ օգոստոսին, անձրևները չեն խանգարի»: Սա մոտավորապես նշանակում է՝ այն, ինչ մարդը կարող է ողջամտորեն կանխատեսել՝ ելնելով առօրյա իրադարձությունների բնականոն ընթացքի մասին իր ունեցած գիտելիքներից: Այնուամենայնիվ, որոշ դեպքերում «ողջամիտ ակնկալիք» արտահայտությունն օգտագործողները կարող են ցանկանալ ընդլայնել դրա իմաստը՝ ներառելով նաև **պարտադրական տարր**: Օրինակ, քանի որ դու միշտ այդպես ես վարվել, ես ողջամտորեն ակնկալում եմ, որ կշարունակես այդպես վարվել, ինչը նշանակում է. «Ես ակնկալում եմ, և դու պարտավոր ես շարունակել այդ վարքագիծը»:

Փիլիսոփա Ա. Ջոն Սիմոնսի օրինակով. «Երբ Կանտի՝ Քյոնիգսբերգ քաղաքի միջով ամենօրյա զբոսանքները տիկնանց մոտ առաջացնում է ողջամիտ ակնկալիք, որ կարող են ժամացույցները կարգավորել նրա անցնելու պահով, Կանտը ոչ մի

⁷⁵ Տե՛ս **Alexander Brown**, նշված աշխատ., էջ 3:

պարտավորություն չի ստանձնում շարունակելու այդ զբոսանքները: Նրա վրա զբոսնելու որևէ պարտականություն չի դրվում, և նա կցանկանա մի օր մնալ տանը՝ ընթերցելու Ռուսո»⁷⁶:

Կանտը ոչ մի բարոյական պարտավորություն չի ստանձնում և առավել ևս՝ ոչ մի իրավական պարտավորություն: Կանտի ամենօրյա զբոսանքների համատեքստում «ողջամիտ ակնկալիք» տերմինը չի առաջացնում որևէ բարոյական կամ իրավական հետևանք: Այս դիտարկումից ելնելով՝ գուցե թվա, որ ողջամիտ ակնկալիքների և լեգիտիմ ակնկալիքների հիմնարար տարբերությունը պարզ է. առաջինները իրավական հետևանքներ չեն առաջացնում, մինչդեռ երկրորդներն առաջացնում են:

Տեսնենք, թե ինչպես է այս տարբերակումը ներկայացնում Լորդ Դիպլոքը անգլիական **Council of Civil Service Unions v Minister for the Civil Service** գործով⁷⁷. «Ես նախընտրում եմ օգտագործել *լեգիտիմ ակնկալիք* (legitimate expectation) հասկացությունը, ոչ թե՝ *ողջամիտ ակնկալիք* (reasonable expectation), որպեսզի ցույց տամ, որ այն առաջացնում է հետևանքներ, որոնք հանրային իրավունքում ունեն իրավական ուժ: Մինչդեռ որևէ շարունակական օգուտ կամ առավելություն ստանալու վերաբերյալ ակնկալիքը կամ հույսը, որը կարող է ունենալ «ողջամիտ մարդը», անհրաժեշտաբար նման հետևանքներ չի առաջացնում»⁷⁸:

Union of India and others v Hindustan Development Corporation and others գործում դատավոր Ռեդի ձևակերպ-

⁷⁶ A John Simmons, 'Associative Political Obligations' (1996) 106 Ethics 247, p. 258.

⁷⁷ *St' u Council of Civil Service Unions v Minister for the Civil Service* [1984] 3 All ER 935:

⁷⁸ Նույն տեղում:

մամբ⁷⁹. «Ինչքան էլ անկեղծ ու լուրջ լինի որևէ ցանկություն, մղում կամ հույս, և որքան էլ վստահորեն որևէ մեկը ակնկալի դրանց իրականացումը, հենց դրանք՝ այդ ցանկությունը կամ հույսը, չեն կարող ձևավորել պաշտպանվող ակնկալիք, և պարզապես հիասթափությունը իրավական հետևանք չի առաջացնում»⁸⁰:

Այն հանգամանքը, որ ակնկալում ենք՝ ինչ-որ բան տեղի կունենա, կամ կարծում ենք, թե այն պետք է տեղի ունենա, ինքնին մեզ իրավունք չի տալիս պահանջելու, որ այն տեղի ունենա⁸¹: Կամ՝ **Buckley v Secretary-General of the United Nations** գործով ՄԱԿ-ի վեճերի կարգավորման դատարանի (UNDT, նախկին՝ Բողոքարկման տրիբունալ) դատավոր Ադամսի բառերով⁸². «Դիմողի այն պնդման վերաբերյալ, որ նա ունի պաշտոնի նշանակվելու լեգիտիմ ակնկալիք, ես համաձայն եմ, որ նա ուներ ողջամիտ (առօրյա խոսքում) ակնկալիք նշանակման վերաբերյալ: Սակայն սա *լեգիտիմ ակնկալիք* չէ այն իմաստով, որ կարող է առաջացնել որևէ իրավական իրավունք»⁸³:

Անշուշտ, ճիշտ է, որ դոկտրինի վաղ զարգացման շրջանում մի շարք վարչական դատարաններ «ողջամիտ ակնկալիք» և «լեգիտիմ ակնկալիք» տերմինները օգտագործել են որպես համարժեքներ՝ «ողջամիտ ակնկալիք» նշելով հենց այն ակնկալիքը, որը դատարանը ճանաչում էր որպես իրավական հետևանքներ ունեցող: Սակայն հնարավոր է, որ այս վաղ կիրառությունները

⁷⁹ Տե՛ս Union of India and others v Hindustan Development Corporation and others [1993] 3 SCR 128, 182:

⁸⁰ Նույն տեղում:

⁸¹ Տե՛ս **Philip A Joseph**, “Law of Legitimate Expectation in New Zealand” in **M Groves and G Weeks** (eds), *Legitimate Expectations in the Common Law World* (Bloomsbury 2017), էջ 55:

⁸² Տե՛ս Judgment UNDT/2009/064 (UNDT, 29 October 2009):

⁸³ Նույն տեղում:

պարզապես անտեսվեն, քանի որ դրանք դարձել են հնացած՝ այդ երկու հասկացությունների տարբերությունը ավելի հստակեցնող վերջին դատական մեկնաբանությունների լույսի ներքո: Բոլոր դեպքերում ակնկալիքի լեգիտիմության էությունը, իսկ լեգիտիմ և պարզապես ողջամիտ ակնկալիքների տարբերությունը այն է, որ առաջինն առաջացնում է իրավական հետևանքներ:

Լեգիտիմ ակնկալիքի պաշտպանության վերաբերյալ ձևավորվել են «դոկտրինաների ընտանիք», որը ներառում է, սակայն սահմանափակված չէ հետևյալով.

- Գերմանական հանրային իրավունքի Vertrauensschutz դոկտրինը, որը հաճախ թարգմանվում է հենց որպես «լեգիտիմ ակնկալիք»,
- Անգլիական վարչական իրավունքի լեգիտիմ ակնկալիքների դոկտրինը, որը ձևավորվել է անգլիական վարչական դատարանների պրակտիկայում և հետագայում զարգացել ընդհանուր իրավունքի համակարգ ունեցող այլ երկրներում,
- Եվրամիության (նախկին՝ Եվրոպական համայնքի) վարչական իրավունքում ձևավորված լեգիտիմ ակնկալիքների դոկտրինը, որը մշակվել է Եվրամիության Դատական համակարգի երկու դատարանների՝ Ընդհանուր դատարանի (EGC, նախկին՝ Առաջին ատյանի դատարան) և Եվրոպական դատարանի (ECJ) կողմից,
- Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից սեփականության իրավունքի պաշտպանության համատեքստում ձևավորված դոկտրինը,
- ՄԱԿ-ի վեճերի կարգավորման իրավունքում ձևավորված լեգիտիմ ակնկալիքների դոկտրինը, ինչպես կիրառվում է ՄԱԿ-ի վեճերի կարգավորման դատարանի (UNDT) կողմից,

- Միջազգային ներդրումային իրավունքի օրինական ակնկալիքների դոկտրինը, որը զարգացել է միջազգային վեճերի կարգավորման կամ արբիտրաժային մարմինների, օրինակ՝ Միջազգային դրամաշնորհային վեճերի կարգավորման կենտրոնի (ICSID), գործերի շրջանակում:

Ամփոփելով կարող են նշել, որ լեգիտիմ ակնկալիքը պարզապես ողջամիտ ակնկալիքից տարբերվում է իր իրավական նշանակությամբ. եթե վարչարարությունը շոշափում է անձանց լեգիտիմ ակնկալիքները, վարչական մարմինները պարտավոր են հարգել և հաշվի առնել դրանք:

2.2. Օրենսդրության և վարչարարության հիման վրա առաջացած լեգիտիմ ակնկալիքներ

Համեմատական փորձի վերլուծությունը ցույց է տալիս, որ որպես ընդհանուր կանոն սկզբունքը կիրառվում է ինչպես վարչարարության, այսինքն՝ կոնկրետ անհատական գործերով վարչական մարմինների վարչական ակտերի կամ գործողությունների, այնպես էլ օրենսդրական ակտերի հիման վրա առաջացած լեգիտիմ ակնկալիքների պաշտպանության նկատմամբ:

Այսպես, գերմանական վարչական իրավունքը մշակել է ակնկալիքներին վերաբերող գործերի կիրառման համար սեփական դոկտրինը՝ Vertrauensschutz, որը վերաբերում է ոչ միայն վստահության պաշտպանությանը, այլև հենման (reliance) շահերի պաշտպանությանը: Այս դոկտրինը էական դեր է խաղացել Դաշնային վարչական դատարանի (Bundesverwaltungsgericht) կողմից վարչական մարմինների գործողությունների վերաբերյալ գործերի քննության ընթացքում⁸⁴ և հետագայում կողիֆիկացվել

⁸⁴ Տե՛ս **Marina Künnicke**, Tradition and Change in Administrative Law: An Anglo-German Comparison (Springer 2007), էջեր 124–125, **Klaus Rennert**, ‘The

է 1976 թ. «Վարչական վարույթի մասին ակտի» 48 և 49-րդ հոդվածներում⁸⁵: Նշված դրույթները վերաբերում են ակնկալիքներին և հենման շահերին, որոնք կենտրոնացած են «վարչական ակտերի» (Verwaltungsakt) շուրջ:

Դաշնային սահմանադրական դատարանը (Bundesverfassungsgericht) Vertrauensschutz-ի դոկտրինը տարածել է նաև հիմնական օրենսդրության վրա⁸⁶: Մի շարք հայտնի գործերում դատարանը Գերմանիայի Հիմնական օրենքի (Grundgesetz für die Bundesrepublik Deutschland) 14-րդ հոդվածի 1-ին մասը դիտարկել է որպես օրինական ակնկալիքների սահմանադրական պաշտպանության հիմք: Մասնավորապես, հանրային լայն ուշադրության արժանացած Վաթթենֆալլ ԱԲ և այլք ընդդեմ Գերմանիայի Դաշնային Հանրապետության գործում⁸⁷ Դաշնային սահմանադրական դատարանը վճռել է, որ Հիմնական օրենքի 14(1)-րդ հոդվածը պաշտպանում է Գերմանիայում միջուկային արդյունաբերության ոլորտում գործող ընկերությունների լեգիտիմ ակնկալիքները: Մասնավորապես, Դատարանը գտել է, որ Կառավարությունը խախտել է 14(1)-րդ հոդվածը՝ հիմնական օրենսդրության միջոցով (2011 թ. հուլիսի 31-ի «Ատոմային էներգիայի մասին օրենքում փոփոխություններ կատարող տասներեքերորդ օրենքը») ընդունելով հանկարծակի որոշում՝ արագացնելու ատոմակայանների շահագործման դադարեցման գործընթացը ճապոնիայում Ֆուկուսիմայի ատոմակայանի վթարից հետո, և միաժամանակ չնախատեսելով փոխհատուցման

Protection of Legitimate Expectations under German Administrative Law' (paper given at the seminar on the protection of legitimate expectations of the Association of Councils of State and Supreme Administrative Jurisdictions of the European Union (ACA-Europe), Vilnius, Lithuania, 21 April 2016), էջ 7:

⁸⁵ Տե՛ս Administrative Procedure Act 1976:

⁸⁶ Տե՛ս **Rennert**, նշված աշխատ., էջեր 8–10:

⁸⁷ Տե՛ս [2016] 1 BvR 2821/11:

մեխանիզմ այն ընկերությունների համար, որոնք ներդրումներ էին կատարել գույքի և դրա օգտագործման մեջ միջուկային էներգետիկայի ոլորտում՝ հիմնվելով գործող օրենսդրությամբ նախատեսված աստիճանական դադարեցման ռեժիմի վրա:

ԵՄ վարչական իրավունքում լեգիտիմ ակնկալիքների դոկտորինի կիրառման շրջանակը ևս չի սահմանափակվել միայն վարչական քաղաքականություններով և միջոցառումներով: Նույնիսկ ԵՄ հիմնական օրենսդրությանը վերաբերող, այսինքն՝ Եվրոպական հանձնաժողովի կողմից առաջարկված և Եվրոպական միության խորհրդի կողմից, Եվրոպական խորհրդարանի մասնակցությամբ ընդունված կանոնակարգերի հիման վրա առաջացած ակնկալիքները կարող են ճանաչվել լեգիտիմ ԵՄ Ընդհանուր դատարանի (EGC) և Եվրոպական դատարանի (ECJ) կողմից:

Ավելին, սկզբունքը դիտարկվել է որպես ԵՄ վարչական իրավունքի հիմնարար հենասյուներից մեկը: Ինչպես նշել է գլխավոր փաստաբան **Deuka v Einfuhr- und Vorratsstelle Getreide** գործում⁸⁸. «Առկա է անհրաժեշտություն հարգել այն անձանց օրինական ակնկալիքները, ովքեր ենթարկվում են [Եվրոպական հանձնաժողովի] կանոնակարգերին»⁸⁹:

Այդուհանդերձ, երբ խոսքը վերաբերում է լեգիտիմ ակնկալիքների խախտման հիմքով փոխհատուցման պահանջներին, պատասխանատվության բնույթն ինքնին հակված է սահմանափակելու դոկտրինի կիրառման շրջանակը: Այսպես, Մուլդերը և այլք ընդդեմ Խորհրդի և Հանձնաժողովի (Mulder and others v Council and Commission) գործում⁹⁰ գլխավոր փաստաբան Վան Գերվենը կարծիք հայտնեց, որ Եվրոպական համայնքը (ԵՀ) կա-

⁸⁸ St'u Case C-5/75 [1975] ECR 759:

⁸⁹ Նույն գործը, 776 (Mr Advocate-General Trabucchi):

⁹⁰ St'u Cases 104/89 և 37/90 [1992] ECR I-3061:

որոշ է պատասխանատվության ենթարկվել միայն այն դեպքում, երբ ակնկալիք ունեցող անձանց խումբը լինի հստակ սահմանված, այսինքն. «Այն անձանց թիվը, որոնց շահերը շոշափվել են, պետք է հնարավոր լինի որոշել այն պահին, երբ կայացվում է փոխհատուցման վերաբերյալ վճիռը»⁹¹:

Անգլիայի վարչական դատարանները ճանաչել են, որ լեգիտիմ ակնկալիքների դոկտրինը կիրառելի է և՛ վարչարարության⁹², և՛ երկրորդային կամ պատվիրակված օրենսդրության նկատմամբ⁹³: Խորհրդարանի ակտերը սովորաբար լիազորում են նախարարներին՝ որոշելու հանրությանը ծառայությունների, իրավունքների և թույլտվությունների տրամադրման վերաբերյալ մանրամասն կանոններ կամ կարգավորումներ (statutory instruments):

Հետաքրքիր է, որ մի շարք գործերում, որոնք առնչվում էին նման մանրամասն կանոններին, վարչական դատարանները ճանաչել են լեգիտիմ ակնկալիքներ, որոնք ստեղծվել էին մի պետական մարմնի իրավական ակտի արդյունքում, բայց խաթարվել էին մեկ այլ մարմնի գործողություններով:

Այսպես, NHS գործով ընկերությունը տասնամյակներ շարունակ բախվում էր այնպիսի մասնագետների պակասի, որոնք պատրաստ էին զբաղեցնել *կրպսեր բժշկի հաստիքները*: Դրանք ոչ միայն ապահովում էին կլինիկական պատրաստվածություն բժշկական կրթություն ավարտած անձանց համար, այլև կենսական նշանակություն ունեին NHS հիվանդանոցների համար: 1980-ականներին Պահպանողական կառավարությունը թե-

⁹¹ Նույն գործը:

⁹² Տե՛ս, օրինակ, R v Ministry of Agriculture, Fisheries and Food, ex p Hamble (Offshore) Fisheries Ltd [1995] 2 All ER 714; Bhatt (n 27) [28], [69]:

⁹³ Տե՛ս Immigration Rules, հասանելի է՝

<https://www.gov.uk/government/organisations/uk-visas-and-immigration:>

թևացրեց Միգրացիոն կանոնները՝ թույլ տալով միջազգային բժշկական շրջանավարտներին (IMGs) NHS-ում զբաղեցնել կրտսեր բժշկի հաստիքներ Առանց թույլտվության վերապատրաստման (Permit-Free Training (PFT) կարգով: 2002 թ. Լեյբորիստական կառավարությունը ևս մի քայլ կատարեց՝ տրամադրելով Բարձր որակավորում ունեցող միգրանտների ծրագրի (Highly Skilled Migrant Programme (HSMP) կարգավիճակ այն ներգաղթյալներին, ովքեր ցանկանում էին NHS-ում աշխատել: Ի տարբերություն սովորական աշխատաշուկայի թույլտվությունների, HSMP ստանալու համար դիմորդները պարտավոր չէին ունենալ աշխատանքի կոնկրետ առաջարկ, սակայն պետք է հայտարարեին, որ մտադիր են մնալ Միացյալ Թագավորությունում և այն դարձնել իրենց տունը:

2006 թ. Առողջապահության պետական քարտուղարն ամբողջությամբ փոխեց Միգրացիոն կանոնները՝ սահմանելով, որ միայն Միացյալ Թագավորության բժշկական դպրոցների շրջանավարտները կօգտվեն PFT ռեժիմից: Ավելին, իր հայեցողությամբ նա NHS հիվանդանոցներին տրամադրեց նոր «ղեկավարող ուղեցույցներ», ըստ որոնց՝ նոր բժշկական անձնակազմի հավաքագրման ընթացքում միայն այն ներգաղթյալները, ովքեր ունեին Միացյալ Թագավորությունում մնալու աշխատանքային ժամկետը գերազանցող թույլտվություն, պետք է դիտարկվեն Միացյալ Թագավորության դիմորդների հետ հավասար հիմունքներով: Մյուս բոլոր ներգաղթյալները կարող էին աշխատանքի ընդունվել միայն այն դեպքում, եթե Միացյալ Թագավորության դիմորդներ չկային: Նախարարությունը պնդում էր, որ ներգաղթյալների ներգրավումը NHS-ում հանգեցնում է բրիտանացի շրջանավարտների տեղափոխմանը դեպի այլ երկրներ կամ մասնավոր ոլորտ, մինչդեռ ներգաղթյալները սովորաբար

երկարաժամկետ չեն մնում NHS-ում, և նրանց հեռանալուց հետո առաջանում է մասնագետների պակաս:

R (Bapio Action Ltd and another) v Secretary of State for the Home Department and another գործում⁹⁴ Բրիտանիայի՝ Հնդկական ծագմամբ բժիշկների ասոցիացիան (BAPIO Ltd) վիճարկեց ինչպես Ներքին գործերի, այնպես էլ Առողջապահության պետական քարտուղարների գործողությունները: Դատավոր Բուրնթոն որոշեց, որ մինչ Ներքին գործերի քարտուղարի կողմից PFT-ին վերաբերող կանոնների փոփոխությունը իմիգրանտները չունեին լավաճ լինելու ընթացակարգային օրինական ակնկալիք, քանի որ տվյալ ոլորտում նախկինում՝ քաղաքականություն փոխելուց առաջ, խորհրդակցությունների անցկացումը անընդհատ պրակտիկա չէր եղել⁹⁵: Նա նաև վճռեց, որ Առողջապահության քարտուղարի կողմից NHS հիվանդանոցներին տրված ուղեցույցները ոչ իրավաչափ չէին, քանի որ դրանք չէին փորձում փոխել Միգրացիոն կանոնների բովանդակությունը⁹⁶: Սակայն այս որոշումը բեկանվեց Վերաքննիչ դատարանի կողմից⁹⁷: Դատավոր Սիդլին գտավ, որ տվյալ ուղեցույցը ոչ իրավաչափ էր, քանի որ այն ուղղակիորեն և դիտավորյալ փոփոխում էր միգրացիոն իրավունքն ու պրակտիկան՝ սահմանելով լրացուցիչ սահմանափակում, որը առկա չէր Միգրացիոն կանոններում⁹⁸: 2008 թ. գործը հասավ Լորդերի տանը, որտեղ մեծամասնությունը հաստատեց Վերաքննիչ դատարանի վճիռը⁹⁹:

⁹⁴ Տե՛ս [2007] EWHC 199 (QB):

⁹⁵ Տե՛ս նույն տեղում, պարագրաֆ 55:

⁹⁶ Տե՛ս նույն տեղում, պարագրաֆ 63:

⁹⁷ Տե՛ս R (Bapio Action Ltd and another) v Secretary of State for the Home Department and another II [2007] EWCA Civ 1139:

⁹⁸ Տե՛ս նույն տեղում, պարագրաֆ 50:

⁹⁹ Տե՛ս R (Bapio Action Ltd and another) v Secretary of State for the Home Department and another III [2008] UKHL 27 HL:

Համաձայնող կարծիքում Լորդ Մանսն ընդգծեց, որ արդեն Միացյալ Թագավորությունում գտնվող և HSMP կարգավիճակ ունեցող ներգաղթյալներն «իրավամբ ակնկալում էին շարունակել ապրել և աշխատել NHS-ում այնքան ժամանակ, մինչև նրանց տրվեր անժամկետ բնակության իրավունք»¹⁰⁰: Հետևաբար, NHS մարմիններին մարմիններին տրված Առողջապահության նախարարության ուղեցույցները «ակնհայտորեն խաթարում էին նրանց լեգիտիմ ակնկալիքները»¹⁰¹:

Լորդ Մանսը նաև հստակեցրեց, որ կառավարությունը չէր կարող պնդել, թե ակնկալիքները խաթարվել են ոչ թե Ներքին գործերի, այլ Առողջապահության քարտուղարի գործողությամբ. «Ուղեցույցը հրապարակելով՝ Առողջապահության նախարարությունը որպես Թագավորության մեկ մարմին իրականացրեց իր հայեցողությունը՝ սահմանելով ոչ պաշտոնական կարգավորում, որը հակասում էր Միգրացիոն կանոններին և դրանց կիրառությունից ծնված լեգիտիմ ակնկալիքներին, որոնք ձևավորվել էին Թագավորության մեկ այլ մարմնի՝ Ներքին գործերի քարտուղարի կողմից»¹⁰²:

Այնուամենայնիվ, լեգիտիմ ակնկալիքների պաշտպանության սկզբունքի կիրառման անգլիական փորձի առանձնահատկությունն այն է, որ մինչ օրս անգլիական վարչական դատարանները չեն կիրառել լեգիտիմ ակնկալիքների դոկտրինը Խորհրդարանի ակտերին վերաբերող ակնկալիքների նկատմամբ: Օրինակ՝ **R (Wheeler) v Office of the Prime Minister and another**¹⁰³ գործում դիմողը պնդում էր, որ 2004 թ. այն ժամանակվա վարչապետ Թոնի Բլեյրը խորհրդարանին և հանրության

¹⁰⁰ Նույն տեղում, պարագրաֆ 60, (Lord Mance):

¹⁰¹ Նույն տեղում:

¹⁰² Նույն տեղում:

¹⁰³ Sե'ս [2008] EWHC 1409 (Admin):

նը խոստացել էր հանրաքվե անցկացնել, թե արդյոք Միացյալ Թագավորությունը պետք է վավերացնի ԵՄ անդամակցությունը հաստատող պայմանագիրը: Դիմողի կարծիքով՝ այդ խոստմամբ ստեղծվել էր նաև լեգիտիմ ակնկալիք, որ մինչ Լիսաբոնի պայմանագրի վավերացումն ու ներքին իրավունքում ուժի մեջ դնելը պետք է անցկացվեր հանրաքվե: Հենվելով կայացած նախադեպային իրավունքի վրա՝ Բարձր դատարանը հրաժարվեց լեգիտիմ ակնկալիքների դոկտրինը կիրառել հիմնական օրենսդրությանը վերաբերող, Լիսաբոնի պայմանագրի վերաբերյալ հանրաքվե նախատեսող Խորհրդարանի ակտի ընդունման վերաբերյալ այս սպասման նկատմամբ: Գլխավոր լորդ Ռիչարդս խոսքերով. «Այսպիսի խոստման առարկան, բնույթը և համատեքստը այն տեղափոխում են քաղաքականության, այլ ոչ թե դատարանների ոլորտ, և այն հարցը, թե արդյոք կառավարությունը պետք է պարտավորված համարվի նման խոստմամբ, քաղաքական է, այլ ոչ թե իրավական»¹⁰⁴:

Որոշակի հետաքրքրություն է ներկայացվում լեգիտիմ ակնկալիքների դոկտրինի կիրառելիության հնարավորությունը նախընտրական ծրագրերի և խոստումների նկատմամբ, որոնք կարող են վերաբերել նաև հնարավոր օրենսդրական փոփոխություններին: Նախընտրական գործընթացի շրջանակում գործող քաղաքական կուսակցությունը դուրս է մնում դոկտրինի կիրառման դաշտից երկու հիմնական պատճառով: Առաջին՝ նախընտրական ծրագրերի և խոստումների բովանդակության մեծ մասը վերաբերում է լայն քաղաքական նպատակներին: Երկրորդ՝ նույնիսկ այն դեպքերում, երբ խոստումները վերաբերում են վարչական քաղաքականություններին կամ միջոցառումներին, խոստումներ տալու պահին քաղաքական կուսակցությունը չի գոր-

¹⁰⁴ Նույն տեղում, պարագրաֆ 41:

ծում որպես պետական վարչական մարմին, որին իրավասություն կամ լիազորություն է վերապահված:

Այս առումով հիշարժան է անգլիական **R v Secretary of State for Education and Employment, ex parte Begbie** գործով գլխավոր լորդ Լոուդի կարծիքը¹⁰⁵. «Մի բան է ասել, որ վարչակազմը կարող է բարոյապես պարտավոր լինել հաշվի առնելու իր նախընտրական խոստումները: Բոլորովին այլ բան է ասել, որ այն պարտադիր պետք է հաշվի առնի դրանք և առավել ևս՝ սովորաբար պարտավոր է գործել դրանց համաձայն: Իրավունքը դրան անգամ չի մոտենում»¹⁰⁶:

Ակնհայտ է, որ հաղթած կուսակցությունը պաշտոնը ստանձնելուց հետո սկսում է ձևավորել վարչական մարմինների գործունեության ուղղությունները: Եթե այդ պահին, օրինակ, որևէ նախարար խոստում է տալիս նախընտրական ծրագրի իրականացմանը նպաստող կոնկրետ վարչական քաղաքականության կամ միջոցառման մասին, ապա լեգիտիմ ակնկալիքների դոկտրինը կրկին կիրառելի է դառնում: Սակայն այս դեպքում օրինական ակնկալիքը առաջանում է ոչ թե կուսակցության, այլ տվյալ խոստման համար պատասխանատու կոնկրետ նախարարի նկատմամբ¹⁰⁷:

Այն մոտեցումը, որ քաղաքական բնույթի հայտարարությունները չեն կարող հանդիսանալ լեգիտիմ ակնկալիքների ձևավորման աղբյուր, հետևողականորեն արտահայտվել է նաև ԵՄ Արդարադատության դատարանի դատական պրակտիկայում: Դատարանը վերջերս *Barón Crespo and Others v European Parliament*¹⁰⁸ գործով կայացրած որոշմամբ նշեց, որ Խորհրդա-

¹⁰⁵ Տե՛ս [2000] 1 WLR 1115:

¹⁰⁶ Նույն տեղում:

¹⁰⁷ Տե՛ս նույն տեղում:

¹⁰⁸ Տե՛ս Joined Cases T-620/23 to T-1023/23 *Barón Crespo and Others v European Parliament* (Judgment of 17 December 2025):

րանի բանաձևը բացառապես քաղաքական բնույթի հայտարարություններ պարունակող փաստաթուղթ է, որը որևէ կերպ պարտադիր ուժ չունի և չի կարող ձևավորել լեգիտիմ ակնկալիք դրա իրականացման վերաբերյալ¹⁰⁹:

Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում սկզբունքի պաշտպանությունը տարածվում է ոչ միայն վարչարարության, այլ նաև օրենսդրության հիման վրա առաջացած լեգիտիմ ակնկալիքների նկատմամբ: Թեև Օրենքն ուղղակիորեն չի օգտագործում «լեգիտիմ ակնկալիք» ձևակերպումը, դրանում առկա կարգավորումները, որոնք ուղղված են վարչական ակտի հասցեատիրոջ վստահության պաշտպանությանը, ըստ էության հենց այս սկզբունքի դրսևորման ձևեր են: Բոլոր դեպքերում պետք է կարևորել, որ համեմատական փորձը ցույց է տալիս վարչական վարույթների մասին օրենքներում հենց «լեգիտիմ ակնկալիք» ձևակերպման օրենսդրական ամրագրման միտումը¹¹⁰:

Ինչ վերաբերում է օրենսդրության հիման վրա առաջացող լեգիտիմ ակնկալիքների պաշտպանությանը, տեղին է հիշատակել ՀՀ սահմանադրական դատարանի 2012 թ. դեկտեմբերի 14-ի ՍԴՈ-1061 որոշումը, որում արձանագրվել է. «Սահմանադրական դատարանն իր՝ ՍԴՈ-649, ՍԴՈ-723, ՍԴՈ-758, ՍԴՈ-881, ՍԴՈ-1000 որոշումներում արտահայտած իրավական դիրքորոշումներով բազմիցս, (...) արձանագրել է անձի իրավական վիճակը վատթարացնող օրենքին և այլ իրավական ակտերին

¹⁰⁹ Տե՛ս նաև՝ Joined Cases 87/77, 130/77, 22/83, 9/84 and 10/84 Salerno and Others v Commission and Council [1985] ECR 2523, պարագրաֆ 59, Case T-346/03 Krikorian and Others v Parliament and Others [2003] ECR II-603, պարագրաֆներ 19–20:

¹¹⁰ Տե՛ս **Paul Craig, Herwig C.H. Hofmann, Jens-Peter Schneider and Jacques Ziller** (eds), *ReNEUAL Model Rules on EU Administrative Procedure* (Oxford University Press 2017):

հետադարձ ուժ հաղորդելու անթույլատրելիությունը, կարևորելով, որ «... անձի իրավական վիճակը վատթարացնող նորմերի հետադարձ ուժի արգելման սկզբունքը՝ իրավական անվտանգության սկզբունքի հետ մեկտեղ, կոչված է ապահովելու լեգիտիմ ակնկալիքների հանդեպ հարգանքը», և որ անձի իրավական վիճակը վատթարացնող նորմերի հետադարձ ուժի արգելքը «... հանդիսանում է պետական իշխանության նկատմամբ վստահության և իրավական պետության սկզբունքների կարևոր բաղադրատարրերից մեկը: Այդ սկզբունքը միաժամանակ հանդես է գալիս որպես իրավական որոշակիության սկզբունքի ապահովման կարևոր երաշխիք: Օրենքի հետադարձ ուժի մերժման սկզբունքից բխում է այն արգելքը, համաձայն որի՝ անթույլատրելի է այն իրավունքների սահմանափակումը կամ վերացումը, որոնք ամրագրվել են նախկինում գործող նորմերի հիման վրա: Նման պարտավորություն է նաև ստանձնել Հայաստանի Հանրապետությունը մի շարք միջազգային պայմանագրերով»¹¹¹:

Այսպիսով կարող են եզրահանգել, որ լեգիտիմ ակնկալիքները և դրանց պաշտպանության անհրաժեշտությունն առաջանում են ոչ միայն վարչական մարմինների իրականացրած վարչարարության, այլ նաև օրենսդրության հիման վրա: Թեև աշխատանքի շրջանակներում անդրադառնալու ենք բացառապես վարչական իրավունքում օրենսդրության կանխատեսելիության, կայունության և հետադարձ ուժի արգելքի հարցերին, այս համատեքստում լեգիտիմ ակնկալիքների պաշտպանության կապակցությամբ ներկայացված գիտագործնական վերլուծությունները կարող են օգտակար լինել նաև այլ ոլորտների օրենսդրական ակտերի կապակցությամբ:

¹¹¹ ՀՀ սահմանադրական դատարանի 2012 թ. դեկտեմբերի 14-ի ՍԴԴ-1061 որոշումը, կետ 8:

2.3. Վարչարարության ձևերը, որոնք կարող են առաջացնել լեգիտիմ ակնկալիքներ

Վարչական իրավունքում լեգիտիմ ակնկալիքների պաշտպանության սկզբունքի գիտագործնական վերլուծության համակողմանիությունն ապահովելու տեսանկյունից առանձնացվում է չորս իրավիճակ, երբ կարող են առաջանալ լեգիտիմ ակնկալիքների պաշտպանության հարցեր.

առաջին՝ երբ վարչական մարմինը ընդունում է վարչական ակտ, որը հետագայում վերացնում է.

երկրորդ՝ երբ վարչական մարմինը տրամադրում է տեղեկատվություն կամ դիրքորոշում, որ հետևելու է որոշակի ընթացակարգի կամ քաղաքականության որոշակի անձի կամ խմբի վերաբերյալ և հետագայում այլ որոշում է կայացնում.

երրորդ՝ երբ վարչական մարմինը ընդհանուր պատկերացում է տալիս այն ընթացակարգի կամ քաղաքականության մասին, որին հետևելու է որոշումների որոշակի տեսակների վերաբերյալ, բայց հետագայում միայն կոնկրետ դեպքում շեղվում է այդ ընթացակարգից կամ քաղաքականությունից.

չորրորդ՝ երբ վարչական մարմինը փոխում է քաղաքականությունը, որի վրա անձը կամ խումբը հիմնվել է¹¹²:

Ըստ այդմ լեգիտիմ ակնկալիքները կանոդ են հենվել վարչական ակտերի, վարչական մարմնի հայտարարությունների կամ այլ գործողությունների, պրակտիկայի և քաղաքականության վրա: Կախված լեգիտիմ ակնկալիքի առաջացման հիմքից (օրինակ, վարչական ակտ կամ հայտարարություն)՝ կարող են տարբեր լինել թե՛ այն նկատառումները, որոնք հաշվի են

¹¹² Տե՛ս **Schönberg, Søren J.**, նշված աշխատ., էջեր 8-9, **Craig**, նշված աշխատ., էջեր 614-615:

առնվում ակնկալիքների լեգիտիմությունը որոշելիս, և թե՛ տրամադրվող պաշտպանության ծավալը:

Առաջին իրավիճակում վարչական մարմինը ձգտում է վերացնել ուժի մեջ մտած վարչական ակտը: Նման գործողությունները, ամենայն հավանականությամբ, միանշանակորեն կխաթարեն վարչական ակտի հասցեատիրոջ սպասելիքները և կխախտեն նրա ծրագրերը: Այսպիսով, կանխատեսելիության պահանջը պատշաճ հիմնավորում է ապահովում ուժի մեջ մտած վարչական ակտերից բխող ակնկալիքները պաշտպանելու համար: Ավելին, նման իրավիճակներում պաշտպանություն տրամադրելը բխում է վարչական ակտի հասցեատիրոջ ակնկալիքներից, որ պաշտոնական որոշումը վերջնական է և չի հակասում ձևական հավասարության սկզբունքին:

Վարչական ակտերն ընդունվում են ձևական ընթացակարգերին համապատասխան, որոնք բոլոր դեպքերում հնարավորինս ապահովում են, որ որոշումները ընդունվեն գործող օրենսդրության և քաղաքականության համաձայն: Այսպիսով, վարչական ակտը որպես կանոն դրա հասցեատիրոջը տրամադրում է այն, ինչը ցանկացած այլ հասցեատեր կստանար նույն իրավիճակում:

Մյուս կողմից, եթե վարչական ակտն իրավաչափ չէ, պաշտպանության հիմնավորումը թուլանում է, քանի որ օրինական կառավարման սկզբունքը պահանջում է, որ վարչական մարմինները գործեն իրավաչափորեն, իսկ ոչ իրավաչափ վարչական ակտն ուժի մեջ թողնելը կարող է հանգեցնել հասցեատիրոջ նկատմամբ ավելի լավ վերաբերմունքի, քան մյուսները նմանատիպ հանգամանքներում: Այնուամենայնիվ, ակնկալիքները պաշտպանելու փաստարկը դեռ վավեր է և համոզիչ, քանի որ օրինական կառավարման սկզբունքը բացարձակ չէ և պետք է

հավասարակշռված լինի արդարության պահանջի հետ: Թույլ տալ վարչական մարմնին վերացնել ոչ իրավաչափ որոշումները, կարող է անարդար լինել, քանի որ անհատները, հաշվի առնելով ժամանակակից վարչական իրավունքի բարդությունը, հազվադեպ են կարողանում պարզել, որ վարչական մարմինների որոշումներն իրավաչափ չեն, և, հետևաբար, հաճախ պլանավորում են իրենց կյանքը՝ հիմնվելով այն ենթադրության վրա, որ դրանք իրավաչափ են:

Երկրորդ իրավիճակում վարչական մարմինը հայտարարում է, որ հետևելու է որոշակի ընթացակարգի կամ քաղաքականության որոշակի անձի կամ խմբի վերաբերյալ և հետագայում որոշում է կայացնում, որը տարբերվում է ձևավորած ընկալումից: Այս տեսակի վարչական վարքագիծը, ամենայն հավանականությամբ, կխաթարի սպասումները, քանի որ անհատի և փաստերի որոշակի շրջանակի վերաբերյալ հատուկ հավաստիացումը ստեղծում է վերջնականության կամ հետևողականության տպավորություն, որը պահպանվելու է այնքան ժամանակ, քանի դեռ համապատասխան փաստերը մնում են անփոփոխ:

Սակայն այս իրավիճակներում լեգիտիմ ակնկալիքների պաշտպանությունն ավելի հավանական է, որ հանգեցնի անհավասար վերաբերմունքի, քան վերը նկարագրված իրավիճակում: Կոնկրետ իրավիճակների վերաբերյալ վարչական մարմինների արած հայտարարությունները սովորաբար չեն ենթարկվում այն ֆորմալ ընթացակարգերին, ինչ վարչական ակտերը: Հետևաբար, վարչական ակտի համեմատությամբ ավելի հավանական է, որ հայտարարությունն է ոչ իրավաչափ կամ չի համապատասխանում գոյություն ունեցող քաղաքականությանը:

Այն, որ այս դեպքում վարչական մարմնի վարքագծի իրավաչափության նկատմամբ վստահությունը պետք է ավելի քիչ լի-

նի, թուլացնում է, բայց չի վերացնում հայտարարություններից առաջացած սպասումները պաշտպանելու արդարացումները: Քանի որ անհատները հաճախ ի վիճակի չեն պարզել, որ հայտարարությունները ոչ իրավաչափ են կամ չեն համապատասխանում քաղաքականությանը, անարդար կլինի անհատներից պահանջել յուրաքանչյուր դեպքում ստուգելու դրանք:

Երրորդ իրավիճակում վարչական մարմինն ընդհանուր պատկերացում է տալիս այն ընթացակարգի կամ քաղաքականության մասին, որին հետևելու է կոնկրետ հարցի լուծման վերաբերյալ, բայց հետագայում կոնկրետ դեպքում շեղվում է ընթացակարգից կամ քաղաքականությունից: Այն ոչ միայն խաթարում է անձի սպասելիքները, այլ նաև կամայականության արգելքի և հավասարության սկզբունքների խախտման հիմնավոր փաստարկ է: Այսպիսով, այս դեպքում ևս կա լեգիտիմ ակնկալիքների պաշտպանության ուժեղ հիմնավորում¹¹³: Իրոք, այս իրավիճակում անհատների պաշտպանության հիմնավորումը նույնքան համոզիչ է, որքան վարչական ակտերի վերացման իրավիճակում:

Չորրորդ իրավիճակում իշխանությունը շեղվում է իր ընդհանուր վարքագծից՝ հաշվի առնելով ընդհանուր ընթացակարգի կամ քաղաքականության փոփոխությունը, որը տեղի է ունեցել սկզբնական վարքագծի և որոշման կայացման միջև ընկած ժամանակահատվածում: Այս իրավիճակն ավելի բարդ է: Գոյություն ունեցող քաղաքականությունը կարող է ողջամիտ ակնկալիքներ ստեղծել, որ այն կշարունակի կիրառվել որոշ ժամանակ կամ մինչև փոփոխության մասին ծանուցումը: Այսպիսով, օրենքի գե-

¹¹³ Տե՛ս **D. J. Galligan**, 'The Nature and Function of Policies Within Discretionary Power' (1976) PL 332, **R. Baldwin and K. Hawkins**, 'Discretionary Justice: Davis Reconsidered' (1984) PL 570:

րակայությունը և կանխատեսելիությունը պահանջում են իրավական պաշտպանության որոշակի մակարդակ:

Այնուամենայնիվ, այս հիմնավորումը թուլանում է երկու նկատառումով: Նախ, քաղաքականությունը հաստատուն չէ, և չի կարելի ողջամտորեն ակնկալել, որ հավերժ կմնա անփոփոխ: Երկրորդ, հավասարության սկզբունքը չի ապահովում պաշտպանություն այս իրավիճակում: Ճիշտ է, որ նոր քաղաքականության համաձայն՝ գործերի լուծումը, համեմատած այն դեպքերի հետ, որոնք լուծվել են նախորդ քաղաքականության համաձայն, տարբեր է լինելու է¹¹⁴: Այնուամենայնիվ, ցանկացած տարբերակված վերաբերմունք չէ, որ հակասում է հավասարության սկզբունքին կամ հանգեցնում է անարդարության: Ժամանակի ընթացքում տարբերակված վերաբերմունքը արդարացված է և, հետևաբար, հավասարության խախտում չէ, քանի որ հակառակ դեպքում բոլոր իրավական փոփոխությունները անհնարին կլինեին: Այսպիսով, չնայած ընդհանուր քաղաքականության փոփոխություններից լեգիտիմ ակնկալիքները պաշտպանելու համար կա որոշակի նորմատիվային հիմնավորում, այն ավելի թույլ է, քան մյուս երեք իրավիճակներում: Պետք է նկատել, որ չորրորդ իրավիճակում լեգիտիմ ակնկալիքների պաշտպանության վերաբերյալ ներկայացված նկատառումները վերաբերելի են նաև ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի փոփոխությունների դեպքում ակնկալիքների պաշտպանությանը:

Այսպիսով, լեգիտիմ ակնկալիքների պաշտպանության ծավալն ու ինտենսիվությունը տարբեր են՝ վարչարարության դրսևորման ձևից կախված: Թերևս ավելի մեծ պաշտպանության են ենթակա վարչական ակտերի և վարչական մարմիննե-

¹¹⁴ Տե՛ս **T. R. S. Allan**, *Law, Liberty, and Justice: The Legal Foundations of British Constitutionalism* (Oxford, 1993), էջեր 175-176:

րի պրակտիկայի հիման վրա առաջացած լեգիտիմ ակնկալիքները: Ընդ որում, վարչարարության նշված երկրորդ ձևի դեպքում պաշտպանությունը հիմնավորվում է նաև հավասարության, հետևողականության և կամայականության արգելքի սկզբունքներով: Լեգիտիմ ակնկալիքների ավելի փոքր պաշտպանություն կիրառվում է վարչական մարմինների քաղաքականությունը փոխելու դեպքերի նկատմամբ, ինչը բխում է քաղաքական նպատակները փոխելու վարչական մարմինների հայեցողությունից:

2.4. Լեգիտիմ ակնկալիքների ընթացակարգային, նյութական և հատուցողական պաշտպանությունը

Լեգիտիմ ակնկալիքների պաշտպանության հիմնախնդիրների ուսումնասիրությանը նվիրված իրավաբանական գրականության մեջ առանձնացվում են դոկտրինի լայն և նեղ ասպեկտները: Լայն ասպեկտն առանձնացնում է լեգիտիմ ակնկալիքների երկու հիմնական տեսակներ՝ **ընթացակարգային և նյութական**, մինչդեռ նեղ տարբերակը ընդգրկում է միայն ընթացակարգային լեգիտիմ ակնկալիքները: Բացի այդ՝ առանձնացվում է նաև լեգիտիմ ակնկալիքների նյութական ընթացակարգային և հատուցողական պաշտպանությունը¹¹⁵:

Նյութական լեգիտիմ ակնկալիքները պաշտպանում են այնպիսի շահեր, որոնք վերաբերում են կոնկրետ նյութական իրավունքի: Ի տարբերություն դրա, ընթացակարգային լեգիտիմ ակնկալիքները կարող են ապահովել արդար ընթացակարգեր՝ նյութական իրավունքի ճանաչման, փոփոխման կամ դադարեց-

¹¹⁵ Տե՛ս, օրինակ, **Louise Otis and Jérémy Boulanger-Bonnely**, ‘The Protection of Legitimate Expectations in Global Administrative Law’ (2014), <https://rm.coe.int/the-protection-of-legitimate-expectations-in-global-administrative-law/16809a45b6>, էջեր 12-14, **Alexander Brown**, նշված աշխատ., էջեր 12-15:

ման դեպքում (օրինակ՝ հանրային ծառայության պաշտոնից ազատումը հիմնավորելը), կամ երաշխավորել նախկին կամ խոստացված ընթացակարգերի պահպանումը:

Չնայած այն հանգամանքին, որ ընդհանուր իրավունքի մի շարք երկրներում դատարանները ճանաչում են միայն ընթացակարգային ակնկալիքներ (օրինակ՝ Ավստրալիա¹¹⁶ և Կանադա¹¹⁷), անգլիական վարչական իրավունքը միակը չէ, որը ճանաչում է և՛ ընթացակարգային, և՛ նյութական լեգիտիմ ակնկալիքները¹¹⁸: Նման երկակի ճանաչում գոյություն ունի, օրինակ, Սինգապուրում¹¹⁹: Նոյնիսկ Իռլանդիայի վարչական դատարաններն այժմ սկսել են ճանաչել նյութական լեգիտիմ ակնկալիքները՝ հիմնված տրված խոստման կամ վարքագծի (արտահայտված կամ լռելյայն) վրա, սակայն միայն այն իրավիճակներում, երբ «հանրային մարմինները կատարում են վարչական կամ ոչ օրենսդրական բնույթի գործառնություններ»¹²⁰:

Փորձ է արվել հիմնավորել, որ ԵՄ իրավունքը բացահայտորեն չի տարբերում ընթացակարգային և նյութական օրինական ակնկալիքները¹²¹: Այնուամենայնիվ, դատական մի շարք վճիռներից բացահայտ է դառնում, որ իրավաբանական կամ ֆիզիկական անձինք կարող են ունենալ լեգիտիմ ակնկալիք կոնկրետ բարիքի նկատմամբ: **Mulder** գործում այդ բարիքը վերաբերել է առանց լրացուցիչ հարկման ենթարկվելու կաթի արտադրու-

¹¹⁶ *St' u Re Minister for Immigration and Multicultural and Indigenous Affairs*, ex p Lam (2003) 214 CLR 1, պարագրաֆներ 28, 68–80, *Rush v Commissioner of Police* [2006] 150 FCR 165, պարագրաֆներ 80–82:

¹¹⁷ *St' u Agraia v Canada (Public Safety and Emergency Preparedness)* [2013] SCC 36, պարագրաֆ 97:

¹¹⁸ *St' u Alexander Brown*, նշված աշխատ., էջ 15:

¹¹⁹ *St' u Chiu Teng@Kallang Pte Ltd v Singapore Land Authority* [2014] 1 SLR 1047:

¹²⁰ *Power v Minister for Social and Family Affairs* [2007] 1 IR 543, 556, *Curran v The Minister for Education and Science* [2009] 4 IR 300, 316.

¹²¹ *St' u Robert Thomas*, նշված աշխատ., էջ 58:

թյամբ զբաղվելու իրավունքին: Այսպիսով, թեև տերմինաբանական տարբերակումը ԵՄ իրավունքում հստակ չի արտահայտված, դատական պրակտիկան փաստում է, որ որոշակի, նյութական բնույթի օրինական ակնկալիքներ այստեղ ևս իրավական պաշտպանություն են ստանում¹²²:

Այն դեպքում, երբ խոսվում է լեգիտիմ ակնկալիքների նյութական պաշտպանության մասին, նկատի է ունեցվում նյութական կամ ընթացակարգային լեգիտիմ ակնկալիքների նյութական իրականացման (substantive or procedural enforcement) ապահովումը¹²³: Սա կարող է դրսևորվել, օրինակ, ոչ իրավաչափ վարչական ակտը վերացնելով, վարչական մարմնի տված հայտարարություններին կամ պրակտիկային հետևելով և այլն:

Միաժամանակ, լեգիտիմ ակնկալիքների ընթացակարգային պաշտպանությունը ենթադրում է, որ բոլոր դեպքերում, երբ վարչական մարմինն ընդունելու է ակտ կամ դրսևորելու է վարքագիծ, որոնցով շոշափվելու են անձանց լեգիտիմ ակնկալիքները, պետք է ապահովվի բոլոր ընթացակարգային երաշխիքների պահպանումը: Այդպիսի ընթացակարգային երաշխիքները ներառում են, սակայն չեն սպառվում վարույթի մասնակիցներին լսելով, հիմնավորումներ տալով, մինչև գործող վարչական քաղաքականության կամ պրակտիկայի փոփոխությունը խորհրդակցություններ անցկացնելով և այլն:

Լեգիտիմ ակնկալիքների հատուցողական պաշտպանության իրավական միջոցները լրացնում են վարչական իրավունքում լեգիտիմ սպասումների պաշտպանության ընթացակարգային և նյութական միջոցներին: Դրանք կիրառվում են այն դեպքում, երբ լեգիտիմ ակնկալիքները հիմնավորված են, սա-

¹²² St'u Case 120/86 Mulder v Minister van Landbouw en Visserij [1988] ECR 2321:

¹²³ St'u **Robert Thomas**, նշված աշխատ.:

կայն հանրային շահի գերակշռմամբ պայմանավորված դրանք նյութականորեն չեն իրականացվել:

Այս աշխատանքի շրջանակներում լեզիտիմ ակնկալիքների պաշտպանության հետազոտությունն իրականացվելու է դրանց վերը թվարկված տրամաբանությանը համապատասխան: Նախ քննարկվելու են սույն գլխի առաջին պարագրաֆում ներկայացված իրավիճակներում լեզիտիմ ակնկալիքների նյութական և ընթացակարգային, ապա հատուցողական պաշտպանությունը:

§3. Օրենսդրության հիման վրա առաջացած լեգիտիմ ակնկալիքների պաշտպանությունը

3.1. Հետադարձ ուժի արգելքը վարչական իրավունքում

Իրավական որոշակիությունը պահանջում է, որ իրավական համակարգը լինի կայուն՝ գործելով միայն ապագայի համար, որպեսզի կարողանա ուղղորդել սուբյեկտների վարքագիծը¹²⁴: Իրավունքի գերակայությունն իր հերթին պահանջում է, որ իրավական համակարգը լինի «ճկուն և փոփոխվող պայմաններին արձագանքող»¹²⁵, երբ գործող կանոնները դառնում են անհիմաստ, կամ երբ առաջանում են հանրային բարիքի նոր պահանջներ¹²⁶: Թեև կայունությունը իրավունքի գերակայության կարևոր բաղադրիչ է, իշխանությունները երբեմն կարող են ստիպված լինել ընդունելու որոշումներ, որոնք անհամատեղելի են անցյալում կայացված որոշումների հետ կամ խաթարում են նախկին նորմերի կամ որոշումների հիման վրա անհատների կազմած ծրագրերը՝ ազդելով անցյալում ձևավորված իրավական կարգավիճակի վրա¹²⁷:

Կայունության և փոփոխության միջև այս մրցակցության շրջանակում են գտնվում հետադարձ ուժի արգելքի և լեգիտիմ ակնկալիքների պաշտպանության դրկտորինները: Շատերն են

¹²⁴ Տե՛ս **Joseph Raz**, *The Authority of Law: Essays on Law and Morality*, Oxford University Press, Oxford, 2009, էջեր 214-216; **John Finnis**, *Natural Law and Natural Rights*, 2nd edition, Oxford University Press, Oxford, 2011, էջ 270:

¹²⁵ **Lon Fuller**, *The Morality of Law*, Yale University Press, New Haven and London, 1969, p. 29.

¹²⁶ Տե՛ս **Timothy Endicott**, *Vagueness in the Law*, Oxford University Press, Oxford, 2000, էջ 193:

¹²⁷ Տե՛ս **Jaime Phillips Letelier**, 'The Normative Foundations of Retroactivity and Legitimate Expectation in the UK Administrative Law' (2023) 7 *Revista de Derecho Público: Teoría y Método* 83, էջ 84:

ալնդում, որ հետադարձ ուժով որոշում կայացնելու հիմնական խնդիրն այն է, որ այն մարդկանց թույլ չի տալիս հենվել գործող կանոնների վրա՝ դրանով իսկ խաթարելով ցանկացած առողջ իրավական համակարգի հիմնարար սկզբունքներից մեկը¹²⁸: Այս առումով Զ. Ռազը հետադարձ ուժի արգելքը դիտարկում է որպես իրավունքի գերակայության համար էական արժեք¹²⁹:

Թեև միջազգային դատարաններն ու տրիբունալները հաճախ հղում են անում հետադարձ ուժի արգելքին՝ որպես իրավունքի ընդհանուր սկզբունքի, նրանք հազվադեպ են բացատրում, թե այդ սկզբունքը կոնկրետ ինչ է ենթադրում¹³⁰: Օրենքները սովորաբար կիրառվում են ապագայի նկատմամբ (prospectively), դրանք կարող են կիրառվել նաև անցյալի նկատմամբ (retroactively)՝ ազդեցություն ունենալով մինչև օրենքի ընդունումը կատարված գործողությունների կամ գոյություն ունեցած իրավիճակների վրա¹³¹: Հետադարձ ուժ ունեցող օրենքները մարտահրավեր են նետում իրավունքի գերակայության հիմքում ընկած հավասարության, իրավական որոշակիության և կանխատեսելիության հիմնարար սկզբունքներին:

Հետադարձ ուժի արգելքի սկզբունքն առաջին անգամ հստակ ձևակերպվել է հռոմեական իրավունքում, որտեղ արդեն

¹²⁸ Տե՛ս **Cass Sunstein and Adrian Vermeule**, *Law & Leviathan: Redeeming the Administrative State*, The Belknap Press of Harvard University Press, Cambridge Massachusetts and London, 2020, էջ 40:

¹²⁹ Տե՛ս **Raz**, նշված աշխատ., էջեր 214-215:

¹³⁰ Տե՛ս *Conocophillips Gulf of Paria B.V. v Corporación Venezolana de Petróleo, S.A., Petróleos de Venezuela, S.A.*, ICC Case No. 22527/ASM/JPA Award [29 July 2019], 378, *Perenco Ecuador Limited v Republic of Ecuador (Petroecuador)*, ICSID Case No. ARB/08/6 Interim Decision on the Environmental Counterclaim [11 August 2015] 357, *Hissein Habre v Republic of Senegal*, ECW/CCJ/JUD/06/10 Judgment [18 November 2010]:

¹³¹ Տե՛ս **Yarik Kryvoi and Shaun Matos**, ‘Non-Retroactivity as a General Principle of Law’ (2021) 17(1) *Utrecht Law Review* 46–58, էջ 46:

մ.թ.ա. II դարի վերջից այն կիրառվում էր թե՛ քրեական, թե՛ քաղաքացիական իրավունքում՝ գործող իրավակարգը և տնտեսական շահերը պաշտպանելու նպատակով¹³²: Հռոմեական պետական գործիչ Ցիցերոնը բացատրել է հետադարձ ուժի արգելքի սկզբունքի կարևորությունը: Ըստ նրա՝ անհատները պետք է կարողանան հենվել գործող օրենքների վրա՝ ունենալով այն ակնկալիքը, որ պետությունը հետագայում չի միջամտի իրենց իրավունքներին¹³³: Այսպիսի ակնկալիքն օգնում էր ապահովել բոլորի հավասարությունը օրենքի առջև՝ պահպանելով կանխատեսելիությունն ու իրավական որոշակիությունը¹³⁴:

Հռոմեական իրավունքը տարբերակում էր բնական կամ չգրված իրավունքը (*ius*) և օրենսդրի կողմից ընդունված օրենքները (*lex*): Ի տարբերություն *lex*-ի՝ *ius*-ը գոյություն ուներ Հռոմի հիմնադրումից շատ առաջ՝ իր արմատներով հասնելով հնագույն ժամանակներ¹³⁵: Ցիցերոնը բացատրում էր նաև հետադարձ ուժի արգելքի սահմանները, օրինակ՝ այնպիսի իրավիճակներում, երբ կատարված արարքների առանձնապես ծանր բնույթը հանգեցնում էր դրանցից զերծ մնալու ենթադրյալ դրական պարտականության առկայության, նույնիսկ եթե բացակայում էր օրենքում ամրագրված դրական իրավանորմը: *Ius*-ը բխում էր հիմնարար բարոյական արժեքներից և բնական իրավունքից, որոնք պարտադիր չէ, որ արտահայտված լինեին *lex*-ում: Նոր օրենք ստեղծելու և այն հետադարձորեն կիրառելու փոխարեն՝ դատավորը դիտարկվում էր որպես իրավական կանոնների կոնկրետ որոշարկմանը նպաստող սուբյեկտ: Հետևաբար, հե-

¹³² Տե՛ս **G. Broggin**, 'Retroactivity of Laws in the Roman Perspective' (1996) 1 Irish Jurist 151, էջ 168:

¹³³ Տե՛ս **G. Broggin**, նշված աշխատ., էջ 167:

¹³⁴ Տե՛ս նույն տեղում:

¹³⁵ Տե՛ս **G. Broggin**, նշված աշխատ., էջ 151:

տադարձ ուժի արգելքի սկզբունքը չէր տարածվում ius-ի վրա, որը սովորաբար ընդգրկում էր միայն ծանր հանցագործությունները կամ իրավախախտումները¹³⁶:

Աշխարհի տարբեր տարածաշրջանների պետությունների սահմանադրությունները, որոնք ունեն տարբեր իրավական ավանդույթներ, ներառում են հետադարձ ուժի արգելքի սկզբունքը¹³⁷: Այն նաև կազմում է Եվրոպական միության իրավունքի՝ իրավական որոշակիության ավելի լայն սկզբունքի բաղադրիչ մասը¹³⁸, որը սերտորեն առնչվում է լեգիտիմ ակնկալիքների գաղափարին¹³⁹: ՀՀ Սահմանադրության 73-րդ հոդվածը սահմանում է, որ անձի իրավական վիճակը վատթարացնող օրենքները և այլ իրավական ակտերը հետադարձ ուժ չունեն: Անձի իրավական վիճակը բարելավող օրենքները և այլ իրավական ակտերը հետադարձ ուժ ունեն, եթե դա նախատեսված է այդ ակտերով:

Սկզբունքն արտացոլված է նաև որպես կանխավարկած պայմանագրերի մեկնաբանության շրջանակում¹⁴⁰, և դրան հղում է կատարվել օրենսդրության վիճարկման դեպքերում՝ այն

¹³⁶ Տե՛ս նույն տեղում:

¹³⁷ Տե՛ս Canadian Charter of Rights and Freedoms, Part I of the Constitution Act, 1982, Constitution of the Republic of The Gambia, art. 24(5), art. 8 of the Republic of Lithuania Code of Administrative Offences Regeringsformen [Constitution], The Constitution of the People's Democratic Republic of Algeria, art. 46, Constitution of the Republic of Madagascar, art. 13, Constitución Española, art. 25(1); Constitution of the Islamic Republic of Pakistan, art. 12, Constitution of Botswana, art. 10(8), Constitution of Zambia, art. 18(8), Article 9 of the 2001 Constitution of Senegal, 2008 Constitution of Ecuador, Article 76(3), Daehanminguk Hyonbop [Constitution], art. 13(2) (Republic of Korea), U.S. Constitution art. I § 9, Arts 54 and 57 Constitution of the Russian Federation:

¹³⁸ Տե՛ս **A. Portuese, O. Gough and J. Tanega**, 'The Principle of Legal Certainty as a Principle of Economic Efficiency' (2017) 44 European Journal of Law and Economics, էջեր 131, 131–133:

¹³⁹ Տե՛ս Case C-99/78, Weingut Gustav Decker K.G. v Hauptzollamt Landau, ECR 101 [1979], պարագրաֆ 59:

¹⁴⁰ Տե՛ս Vienna Convention on the Law of Treaties, (23 May 1969), art. 28:

հիմնավորմամբ, որ խախտվել են անհատական իրավունքները¹⁴¹: Բոլոր դեպքերում, հազվադեպ չէ, որ պետություններն ընդունում են հետադարձ ուժ ունեցող օրենսդրություն¹⁴²:

Ներպետական իրավակարգերի մեծ մասը, եթե ոչ բոլորը, հետադարձ ուժի արգելքի սկզբունքը հստակորեն ճանաչում է քրեական իրավունքի համատեքստում¹⁴³: Քրեական իրավունքում հետադարձության արգելքը նշանակում է, որ քրեական պատիժները չեն կարող կիրառվել այն արարքների նկատմամբ, որոնք տեղի են ունեցել մինչև համապատասխան նորմի ուժի մեջ մտնելը: Օրինակ՝ Կանադայի Սահմանադրությունը ամրագրում է այս սկզբունքը քրեական իրավունքի առնչությամբ¹⁴⁴: Նմանաբովանդակ դրույթներ իրենց սահմանադրություններում ունեն նաև Գամբիան և Շվեդիան¹⁴⁵: ՀՀ Սահմանադրության 72-րդ հոդվածի համաձայն՝ ոչ ոք չի կարող դատապարտվել այնպիսի գործողության կամ անգործության համար, որը կատարման պահին հանցագործություն չի հանդիսացել:

Որոշ պետություններ չունեն գրավոր սահմանադրություններ կամ ունեն այնպիսի սահմանադրություններ, որոնք չեն պա-

¹⁴¹ *St'u R v HMRC ex p Huitson* [2010] EWHC 97, appealed in *R (Huitson) v HMRC*, [2011] EWCA 893; Constitutional Court of Hungary, Decision no. 184/2010. (X.28.) AB [26 October 2010], §§ 5.2–5.3:

¹⁴² *St'u Nazis and Nazi Collaborators (Punishment) Law* (Israel), 5710–1950, 4 LSI 154 (1949–1950), *War Crimes Act*, 1991, c.13 (U.K.), *Finance Act*, 2006, c. 25 § 94 (U.K.), *Law No. 2019-759 of 24 July 2019*, *Journal Officiel de la République Française* [J.O.] [Official Gazette of France], *The Taxation (Unpaid Company Tax) Assessment Act*, 1982, c. 119 (Austl.), **Cathya Djanogly**, 'Retrospective tax legislation: a clash of two moral imperatives' (2012) Thomson Reuters Practical Law:

¹⁴³ *St'u K.S. Gallant*, *The Principle of Legality in International and Comparative Criminal Law* (CUP 2010), 231–302 and Annex C.:

¹⁴⁴ *St'u Canadian Charter of Rights and Freedoms*, Part I of the Constitution Act, (1982):

¹⁴⁵ *St'u Constitution of the Republic of The Gambia*, art. 24(5), *Regeringsformen* [Constitution], art.10 (Sweden):

րունակում քրեական իրավունքի հետադարձ կիրառումն արգելող հստակ դրույթ: Այնուամենայնիվ, համանման արդյունք ունեցող դրույթներ հաճախ կարելի է գտնել դատական նախադեպերում կամ ներպետական օրենքներում: Չինաստանի Ժողովրդական Հանրապետության սահմանադրությունը չի պարունակում հետադարձ ուժի արգելքի վերաբերյալ որևէ դրույթ, սակայն գոյություն ունեն մի շարք օրենքներ, որոնք ճանաչում են այդ սկզբունքը¹⁴⁶: Միացյալ Թագավորությունը չունի գրավոր սահմանադրություն, սակայն ճանաչում է այդ սկզբունքը իր Մարդու իրավունքների ակտում (որով Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան ներառվել է ներպետական իրավունքի մեջ), ինչպես նաև դատական պրակտիկայում¹⁴⁷: Նմանապես, Նոր Զելանդիան ճանաչում է այդ սկզբունքը իր Իրավունքների մասին ակտում (Bill of Rights)¹⁴⁸: Ֆրանսիան ընդունել է դրույթներ, որոնք պահանջում են իրավական տեքստի հրապարակում նախքան քրեական պատասխանատվության սահմանումը¹⁴⁹:

Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը արգելում է քրեական դատապարտումը ցանկացած այնպիսի վարքագծի համար, որը դրա կատարման պահին, ներպետական կամ միջազգային իրավունքի համաձայն, հանցագործություն չէր համարվում¹⁵⁰: Բացի այդ, այն արգելում է կիրառել ավելի ծանր պատիժ, քան այն, որը կիրառելի էր հանցագործության կատար-

¹⁴⁶ St'u People's Republic of China Criminal Law arts 3 and 12, People's Republic of China Legislation Law, ch. 2 National Law, Scope of Lawmaking Authority, art 9, People's Republic of China Legislation Law, ch. 5 Scope of Application and Filing, art. 84:

¹⁴⁷ St'u United Kingdom Human Rights Act 1998, sched. 1, pt. 1, art. 7, Knüller (Publishing, Printing and Promotions) Ltd. v DPP, [1973] AC 435:

¹⁴⁸ St'u New Zealand Bill of Rights Act 1990 arts 25 and 26:

¹⁴⁹ St'u Declaration of the Rights of Man and of the Citizen, art. 8:

¹⁵⁰ St'u Universal Declaration of Human Rights:

ման պահին¹⁵¹: Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան նույնպես սահմանում է, որ ոչ ոք չի կարող մեղավոր ճանաչվել քրեական իրավախախտման համար որևէ այնպիսի գործողության կամ անգործության հիման վրա, որը կատարման պահին իրավախախտում չէր համարվում¹⁵²: Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը պարունակում է համանման դրույթներ¹⁵³: Բազմաթիվ պետություններ ընդունել են հետադարձության վերաբերյալ ներպետական կարգավորումներ, որոնք էապես ազդված են նման միջազգային պայմանագրերի ձևակերպումներից¹⁵⁴:

Միջազգային դատարաններն ու տրիբունալները հետևողականորեն ճանաչել և կիրառել են այդ սկզբունքը քրեական իրավունքի համատեքստում: Օրինակ՝ մի գործով ՄԻԵԴ-ն արձանագրել է հետադարձ ուժի արգելքի սկզբունքի խախտում, երբ ներպետական դատարանը դիմողներին դատապարտել էր այնպիսի օրենսդրության հիման վրա, որը արարքի կատարման պահին գոյություն չէր ունեցել¹⁵⁵: Իր վճռում Դատարանը մերժել է այն փաստարկները, թե 7-րդ հոդվածում ամրագրված հետադարձ ուժի արգելքի սկզբունքը կիրառելի չէ պատերազմական հանցագործությունների դեպքում¹⁵⁶:

Այլ գործերով ՄԻԵԴ-ը նույնպես արձանագրել է 7-րդ հոդվածի խախտում, քանի որ ներպետական դատարանները չեն

¹⁵¹ Տե՛ս նույն տեղում:

¹⁵² Տե՛ս European Convention on Human Rights, art 7:

¹⁵³ Տե՛ս International Covenant on Civil and Political Rights:

¹⁵⁴ Տե՛ս Criminal Law of the People's Republic of China, (adopted by the Fifth National People's Congress on 1 July 1979) art. 12, Grondwet van Nederland [Constitution] art. 16 (The Netherlands); Constitution of Argentina, art. 18:

¹⁵⁵ Տե՛ս *Maktouf and Damjanovic v Bosnia and Herzegovina*, 2013-IV Eur. Ct. H.R. 1 (2013):

¹⁵⁶ Տե՛ս նույն տեղում:

կիրառել իրավունքն այն տեսքով, որով այն գործում էր համապատասխան արարքների կատարման պահին¹⁵⁷: **Kononov v Latvia** գործում Դատարանը բնութագրել է այդ սկզբունքը որպես «իրավունքի գերակայության էական տարր», որը «նշանակալի տեղ է զբաղեցնում Կոնվենցիայում»¹⁵⁸: Նմանապես, Մարդու իրավունքների միջամերիկյան դատարանը նշել է, որ պետությունը չի կարող անձին քրեական պատասխանատվության ենթարկել այնպիսի հանցակազմերի համար, որոնք թեև առկա էին ներպետական իրավունքում, սակայն իրավախախտման կատարման պահին տվյալ անձի նկատմամբ կիրառելի չէին¹⁵⁹:

Ամփոփելով վերոգրյալը՝ նշենք, որ առկա է լայն համաձայնություն՝ ի պաշտպանություն քրեական իրավունքում հետադարձ ուժի արգելքի սկզբունքի: Միջազգային և ներպետական իրավունքի նորմերը նախատեսում են, որ ոչ ոք չպետք է դատապարտվի որևէ քրեական իրավախախտման համար այնպիսի վարքագծի հիման վրա, որը դրա կատարման պահին, ներպետական կամ միջազգային իրավունքի համաձայն, հանցագործություն չէր համարվում:

Թեև թվում է, որ միջազգային մակարդակում ձևավորվել է համաձայնություն քրեական իրավունքում հետադարձ ուժի արգելքի վերաբերյալ, վարչական իրավունքում իրավիճակն ավելի բարդ է: Մինչ քրեական իրավունքը վերաբերում է առավել ծանր իրավախախտումներին, վարչական իրավունքը սահմանում է կանոններ, որոնք կարգավորում են, թե ինչպես է վարչակազմը լիազորված գործելու, ինչպես նաև՝ ինչ միջոցներ են կիրառվում

¹⁵⁷ Տե՛ս EctHR, *Korbely v Hungary*, App no 9174/02 [2008], EctHR, *Vasiliauskas v Lithuania*, App no 35343/05 [2015]:

¹⁵⁸ *Kononov v Latvia*, ECtHR App no 36376/04 [2010].

¹⁵⁹ Տե՛ս *Likat Ali Alibux v Suriname*, Case 12.608, Inter-Am. Ct. H.R., Report No. 101/11, OEA/Ser.L./V/II.142, doc. 32 Written Final Observations, 2–3 [2011]:

վարչական կարգավորումների խախտման դեպքում¹⁶⁰: Ազատագրվումը վարչական կամ կարգավորիչ բնույթի խախտումների համար պատիժ չէ, սակայն խոշոր տուգանքները, արգելանքները և կատարում պարտադրող որոշումները կարող են էական բացասական ազդեցություն ունենալ անձի վրա: Շատերը ցանկություն կունենան նախապես իմանալ գործող կանոնները և իրենց վարքագիծը հարմարեցնել այնպես, որպեսզի խուսափեն այդպիսի պատժամիջոցներից¹⁶¹: Վարչական իրավունքում, ինչպես նաև քրեական իրավունքում, կանոնները սահմանվում են պետության կողմից, այլ ոչ թե համաձայնեցվում կողմերի միջև: Հետևաբար, այն տրամաբանությունը, որը բացատրում է քրեական իրավունքում հետադարձության արգելքի կիրառումը, կարող է կիրառելի լինել նաև վարչական իրավունքում:

Ներպետական սահմանադրությունները կարող են նախատեսել, որ հետադարձ ուժի արգելքի սկզբունքը հավասարապես կիրառվում է ինչպես վարչական, այնպես էլ քրեական իրավունքի համատեքստում¹⁶²: Սակայն այդպես են վարվել միայն սահմանափակ թվով իրավակարգեր: Օրինակ՝ Էկվադորի Սահմանադրությունը սահմանում է հետադարձ ուժի արգելքի ընդհանուր սկզբունք, որը կիրառվում է «քրեական, վարչական կամ այլ իրավախախտումների» նկատմամբ¹⁶³: Կորեայի Հանրապետության Սահմանադրությունը պաշտպանում է սեփականագրվումից հետադարձ ուժ ունեցող օրենսդրության միջոցով¹⁶⁴: Միա-

¹⁶⁰ Տե՛ս **J. Bell** ‘Comparative Administrative Law’ in Mathias Reimann and Reinhard Zimmermann (eds.) *The Oxford Handbook of Comparative Law* (Oxford University Press 2012):

¹⁶¹ Տե՛ս **J. Harris Aiken**, ‘Ex Post Facto in the Civil Context: Unbridled Punishment’ (1992) 81 *Kentucky Law Journal* 323, էջեր 323–325:

¹⁶² Տե՛ս, օրինակ, art. 8 of the Republic of Lithuania Code of Administrative Offences:

¹⁶³ Տե՛ս 2008 Constitution of Ecuador, Article 76(3):

¹⁶⁴ Տե՛ս Daehanminguk Hyonbop [Constitution], art. 13(2) (Republic of Korea):

ցյալ Նահանգների Սահմանադրությունը, առանց իրավունքի որևէ կոնկրետ ճյուղ առանձնացնելու, արգելում է կառավարությանը ընդունել ex post facto օրենքներ, այսինքն՝ հետադարձորեն անօրինական դարձնել այնպիսի վարքագիծ, որը դրա կատարման պահին անօրինական չէր¹⁶⁵: Այդպիսին է մոտեցումը նաև ՀՀ Սահմանադրությունում:

Չնայած հետադարձ ուժի արգելքի լայն ձևակերպմանը՝ դատարանները փաստացի սահմանափակել են դրա կիրառությունը քրեական օրենքներով¹⁶⁶: Պետությունների մեծամասնության սահմանադրություններում քրեական իրավունքից դուրս հետադարձ ուժի արգելքի վերաբերյալ հստակ դրույթներ չկան: Ավելին, ներպետական վարչական կարգավորումները կարող են ուղղակիորեն նախատեսել հետադարձ ուժ: Վերջին շրջանում առավել հաճախ վիճարկվող վարչական կարգավորումների տեսակները վերաբերել են հետադարձ միջոցառումներին, որոնք կա՛մ պատասխանատվություն են սահմանում արդեն իսկ տեղի ունեցած՝ շրջակա միջավայրին վնաս պատճառող խախտումների համար, կա՛մ հետադարձորեն վերացնում են սուբսիդիաները կամ դրանց հետ կապված տնտեսական խթանները¹⁶⁷:

Հարկումը ևս վարչական իրավունքի այն ոլորտներից է, որտեղ օրենքի հետադարձ կիրառումը տարածված երևույթ է¹⁶⁸: Օրինակ՝ 1980-ականներին Ավստրալիայի կառավարությունն ընդունել է մի շարք հարկային օրենքներ՝ հարկերից խուսափելու դեմ պայքարելու նպատակով, որոնք թույլ էին տալիս հարկերի

¹⁶⁵ Տե՛ս U.S. Const. art. I § 9:

¹⁶⁶ Տե՛ս **S. Selinger**, ‘The Case Against Civil Ex Post Facto Laws’ (1995) 15 Cato Journal 191, **W.W. Crosskey**, ‘The True Meaning of the Constitutional Prohibition of Ex-Post-Facto Laws’ (1947) 14 University of Chicago Law Review 539:

¹⁶⁷ Տե՛ս **Yarik Kryvoi and Shaun Matos**, նշված ախշատ., էջ 47:

¹⁶⁸ Տե՛ս **C. Djanogly**, ‘Retrospective tax legislation: A clash of two moral imperatives’ (2012) Thomson Reuters Practical Law:

հետադարձ ուժով գանձում¹⁶⁹: Նմանապես, Ֆրանսիայում Սահմանադրական խորհուրդը վավեր է ճանաչել հետադարձ ուժ ունեցող հարկային օրենսդրությունը, որը դիտարկվել է որպես ընդհանուր շահին համապատասխանող¹⁷⁰: Ավելի ուշ Ֆրանսիան հետադարձ ուժով ընդունել է Թվային ծառայությունների ակտը՝ սահմանելով երեք տոկոս հարկ թվային ծառայությունների նկատմամբ¹⁷¹: Միացյալ Թագավորությունում կառավարությունը նույնպես ընդունել է մի շարք հարկային կարգավորումներ՝ հետադարձ ուժով¹⁷²: Ինչպես ստորև ավելի մանրամասն կքննարկվի, այս միջոցառումները ներպետական դատարաններում վիճարկվել են՝ հիմնվելով Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի հետ դրանց անհամատեղելիության վրա¹⁷³: Սակայն դատարանները գտել են, որ արդարացված էր կառավարության կողմից նման օրենսդրություն ընդունելը¹⁷⁴:

Օգտակար է անդրադառնալ այն ներպետական դատարանների փաստարկներին, որոնք քննել են վարչական իրավունքի հետադարձ կիրառման դեմ ներկայացված բողոքները: Անգլիական դատարանի հիմնավորումը մի գործով, որը վերաբերում էր 2008 թվականի Ֆինանսական ակտի հետադարձ դրույթներին¹⁷⁵, սերտորեն նման էր ավելի վաղ ՄԻԵԴ-ի՝ համանման

¹⁶⁹ St'u The Taxation (Unpaid Company Tax) Assessment Act, 1982, c. 119 (Austl.):

¹⁷⁰ St'u CC decision no. 99-425DC, [29 December 1999], պարագաֆ 8:

¹⁷¹ St'u Law No. 2019-759 of 24 July 2019, Journal Officiel de la République Française [J.O.] [Official Gazette of France]:

¹⁷² St'u Finance Act 2006 on notional payments, c. 25 § 94 (U.K.), the Finance Act 2008 on double taxation, c. 9 § 58, Finance Act 2010 on repo rules:

¹⁷³ St'u Convention for the Protection of Human Rights and Fundamental Freedoms, *opened for signature* 4 November 1950, (ETS No. 5):

¹⁷⁴ St'u նույն տեղում:

¹⁷⁵ St'u *R v HMRC ex p Huitson* [2010] EWHC 97 [76]–[97], appealed in *R (Huitson) v HMRC*, [2011] EWCA 893, պարագրաֆներ 47–73:

հարցի վերաբերյալ կայացված վճռի հիմնավորմանը¹⁷⁶: Երկու գործերում էլ դատարանները օրենքի հետադարձ կիրառման իրավաչափությունը գնահատելիս հենվել են երեք գործոնի վրա: Նախ՝ այն, որ հանրային շահը պահանջում էր կանխել, որ քաղաքացիների փոքրաթիվ խումբը խուսափի հարկերից: Երկրորդ՝ այն, որ երկու գործերով էլ բողոքաբերներին հստակ նախազգուշացվել էր, որ իրենց կողմից նախատեսվող սխեման հակասում էր տվյալ պահին գործող հարկային միջոցների նպատակին: Երրորդ՝ բողոքաբերները ագրեսիվ կերպով խաթարում էին օրենսդրի նպատակը:

Միացյալ Նահանգների դատարանները ճանաչում են քրեական օրենքների հետադարձ կիրառման դեմ ուղղված կանխավարկածը, սակայն նաև վճռել են, որ օրենքի ուժի մեջ մտնելու ամսաթվից առաջ կատարված արարքների համար պատասխանատվության սահմանումն ինքնին չի խախտում պատշաճ իրավական ընթացակարգի (due process) պահանջը¹⁷⁷: Քանի դեռ առկա է օրենսդրական լեգիտիմ նպատակ, օրենսդրության հետադարձ կիրառումը համարվում է արդարացված¹⁷⁸: Պատմականորեն Միացյալ Նահանգների դատարանները հակված են եղել այդ սկզբունքը կիրառել այնպիսի օրենսդրության նկատմամբ, որը դիտարկվել է որպես պատժիչ նպատակ հետապնդող¹⁷⁹: Այս հարցը քննած դաշնային դատարաններից մեկը հիմ-

¹⁷⁶ Տե՛ս *The National and Provincial Building Society v The UK* (197) S.T.C. 1466:

¹⁷⁷ Տե՛ս *United States v Security Industrial Bank*, 459 U.S. 70, 79, 103 S.Ct. 407, 413, 74 L.Ed.2d 235 [1982], *United States v Northeastern Pharmaceutical & Chemical Co Inc.*, 810 F.2d 726 [1983]:

¹⁷⁸ Տե՛ս *Pension Benefit Guaranty Corp. v R.A. Gray & Co.*, 467 U.S. 717, 730, 104 S.Ct. 2709, 2718, 81 L.Ed.2d 601 [1984], *United States v Northeastern Pharmaceutical & Chemical Co Inc.*, 810 F.2d 726 [1983]:

¹⁷⁹ Տե՛ս *Burgess v Salmon*, 97 US (7 Otto) 381 [1878] and *Cummings v Missouri*, 71 US (4) 277 [1866]:

նավորել է, որ «պատժի սահմանումը՝ լինի օրենսդրական կարգով, թե հետադարձորեն, անհրաժեշտ պայման է այնպիսի օրենսդրության համար, որը հակասում է այս սահմանադրական արգելքներին»¹⁸⁰:

Նման մոտեցում արտացոլող մեկ այլ օրինակ է Հունգարիայի Սահմանադրական դատարանի որոշումը, որով այն գտել է, որ ազատման նպաստների նկատմամբ սահմանված 98% հարկի հետադարձ բնույթն ակնհայտորեն չափազանցված էր և ուներ բռնագրավող բնույթ, հետևաբար՝ անհամաչափ և չարդարացված էր¹⁸¹: Այս գործերը վկայում են, որ համաչափ հետադարձ վարչական միջոցները, որպես կանոն, համարվում են վավեր: Ընդհակառակը, եթե այդպիսի միջոցները կրում են բռնագրավող և պատժիչ բնույթ, մեծ է հավանականությունը, որ դրանք կճանաչվեն անվավեր:

Եվրոպական միության իրավունքը նույնպես թույլ է տալիս շեղում օրենքի հետադարձ ուժի արգելքի սկզբունքից «այն դեպքերում, երբ դա պահանջում է հետապնդվող նպատակը, և երբ պատշաճ կերպով հարգված են շահագրգիռ անձանց լեգիտիմ ակնկալիքները»¹⁸²: ԵՄ դատարանը կիրառել է ծախս-օգուտ վերլուծություն՝ որոշելու համար՝ արդյոք «ընդհանուր շահի» օգուտները գերակշռում են հետադարձ վարչական կարգավորումների ծախսերին¹⁸³: Հետևաբար, այն իրավիճակներում, երբ հետադարձ ուժի ազդեցության ենթարկված անձանց համար առա-

¹⁸⁰ *United States v Monsanto*, 858 F. 2d 160 [1988].

¹⁸¹ St'u Constitutional Court of Hungary, Decision no. 184/2010. (X.28.) AB [26 October 2010], պարագրաֆներ 5.2–5.3:

¹⁸² C-98/78, *Racke v Hauptzollamt Mainz*, E.C.R. 69 [1979].

¹⁸³ St'u Case C-108/81, *Amyllym v Council*, E.C.R. 3107 [1982], Case C-4/73, *Nold v Commission*, E.C.R. 491 [1974]:

ջացրել է միայն օգուտներ և ոչ մի ծախս, օրենքի հետադարձ կիրառման ընդհանուր սկզբունքը չի կիրառվել¹⁸⁴:

ԵՄ իրավունքում մեկ այլ բացառություն վերաբերում է այն իրավիճակներին, երբ օրենքի հետադարձ կիրառումը ողջամտորեն կանխատեսելի էր: Օրինակ՝ հակադեմպինգային իրավունքի համատեքստում Եվրոպական դատարանը եզրակացրել է, որ հակադեմպինգային տուրքերի հետադարձ ազդեցությունը չի կազմել լեգիտիմ ակնկալիքների սկզբունքի խախտում, քանի որ այդ հետևանքները ողջամտորեն կանխատեսելի էին, թեև գոյություն չունեին անցումային միջոցներ՝ օրենքի հետադարձ կիրառման ազդեցությունը մեղմելու համար¹⁸⁵:

Միջազգային տրիբունալների պրակտիկան միատեսակ չէ, և կարելի է պնդել, որ տրիբունալները երբեմն հոչակում են հետադարձ ուժի արգելքի ընդհանուր սկզբունքի գոյությունը՝ առանց բավարար հիմնավորման: Օրինակ՝ մի շարք գործերով միջազգային վարչական տրիբունալները¹⁸⁶ աշխատանքային իրավունքներին վերաբերող վեճերի համատեքստում հղում են արել այն բանին, ինչ իրենք անվանել են հետադարձ ուժի արգելքի «հայտնի ընդհանուր սկզբունք»: Սակայն յուրաքանչյուր գործով այդ սկզբունքի գոյությունը պարզապես պնդվել է, և որևէ փորձ չի արվել ուսումնասիրելու ներպետական կամ մի-

¹⁸⁴ St'u Case C-90/95 de Compte v Parliament, E.C.R. 1999 [1997], Case C-15/85, Consorzio Cooperative d'Abruzzo v Commission, E.C.R. 1005 [1987], Case C-78/77, Johann Luhrs v Hauptzollamt Hamburg-Jonas, E.C.R. 169 [1978], Case T-7/99, Medici Grimm v Council, E.C.R. II-2671 [2000]:

¹⁸⁵ St'u Case C-246/87, *Continente Produkten-Gesellschaft Erhardt-Renken GmbH & Co. v Hauptzollamt Munchen-West*, E.C.R. 1151 [1989]:

¹⁸⁶ St'u Y. Kryvoi, 'The Law Applied by International Administrative Tribunals: from Autonomy to Hierarchy' (2015) 47 *George Washington International Law Review* 267:

ջազգային իրավունքի կանոնները¹⁸⁷: Նույն քննադատությունը կարող է վերաբերել նաև այլ տրիբունալների: Այդպիսի օրինակ է **RREEF Infrastructure v Spain** գործով Ներդրումային վեճերի կարգավորման միջազգային կենտրոնի (ICSID) վճիռը: Տրիբունալը գտել է, որ հետադարձ միջոցների կիրառումը խախտել է «իրավունքի հաստատված ընդհանուր սկզբունքը»¹⁸⁸:

Մշտական արբիտրաժային դատարանի 2020 թվականի վճիռը *Cairn Energy v India* գործով որդեգրել է հետադարձության նկատմամբ ավելի նրբերանգված և, հավանաբար, ավելի պատշաճ մոտեցում վարչական իրավունքում¹⁸⁹: Այդ գործում ներդրողը պնդում էր, որ պետությունը խախտել է արդար և հավասար վերաբերմունքի (fair and equitable treatment) չափանիշը՝ ընդունելով հետադարձ ուժ ունեցող հարկային կարգավորումներ: Տրիբունալը եզրակացրել է, որ քրեական իրավունքի սահմաններից դուրս պարտականությունների հետադարձ սահմանումը կամ իրավունքների հետադարձ սահմանափակումը թույլատրելի է, եթե դա բխում է հանրային շահից և համաչափ է: Հետևաբար, տրիբունալը հիմնավորել է, որ պետք է իրականացվի հավասարակշռման քննություն՝ որոշելու համար, թե արդյոք առկա է եղել արդար և հավասար վերաբերմունքի չափանիշի խախտում:

Վենետիկի հանձնաժողովը «Իրավունքի գերակայության ստուգաթերթում» (Rule of law checklist) նշում է. «Մարդիկ պետք

¹⁸⁷ *St' u Al Albani v Secretary-General of the United Nations*, Judgment No. 2016-UNAT-663 [2016], *Hunt-Matthes v Secretary-General of the United Nations*, Judgment No. 2014-UNAT-444/Corr.2 [2014], *Mrs S. N. v World Intellectual Property Organization (WIPO)*, Judgment No. 3185 [6 February 2013]:

¹⁸⁸ *RREEF Infrastructure (G.P.) Ltd and RREEF Pan-European Infrastructure Two Lux Sarl v Kingdom of Spain*, ICSID Case No. ARB/13/30 Decision on Responsibility and the Principles of Quantum [30 November 2018].

¹⁸⁹ *St' u Cairn Energy PLC and Cairn UK Holdings Ltd. v Republic of India*, PCA Case No. 2016-7, Award [21 December 2020]:

է նախապես տեղեկացված լինեն իրենց վարքագծի հետևանքների մասին: Սա ենթադրում է կանխատեսելիություն և հետադարձ ուժի արգելքի սկզբունք, հատկապես՝ քրեական օրենսդրության դեպքում: Հետադարձ ուժի արգելքի սկզբունքը կիրառվում է բոլոր այն պատժամիջոցների նկատմամբ, որոնք իրենց բնույթով քրեական են:

Քաղաքացիական և վարչական իրավունքում հետադարձ ուժը կարող է բացասաբար անդրադառնալ իրավունքների և օրինական շահերի վրա: Այնուամենայնիվ, քրեական ոլորտից դուրս անհատների իրավունքների հետադարձ սահմանափակումը կամ նոր պարտականությունների սահմանումը կարող է թուլատրելի լինել, բայց միայն այն դեպքում, եթե դա բխում է հանրային շահից և համապատասխանում է համաչափության սկզբունքին (ներառյալ՝ ժամանակային առումով): Օրենսդիրը չպետք է հնարավորություն ունենա միջամտելու դատարանների կողմից գործող օրենսդրության կիրառմանը ընթացիկ դատական գործերի շրջանակներում»¹⁹⁰:

Վենետիկի հանձնաժողովը նշել է, որ հետադարձության հարցը, ըստ էության, եվրոպական չափանիշների խախտում չէ, սակայն անհրաժեշտ է հիմնավորել «ընդհանուր շահերի անհերքելի հիմքերի» կամ «հանրային շահի նկատառումների» և կանխատեսելիության չափանիշի առկայությունը¹⁹¹:

ՄԻԵԴ-ը իր մի շարք գործերով օրենքի հետադարձության հետ կապված պետության գործողությունները ընդունելի է հա-

¹⁹⁰ CDL-AD(2025)002-e The Updated Rule of Law Checklist, adopted by the Venice Commission at its 145th Plenary Session (Venice, 12-13 December 2025), պարագրաֆ 59:

¹⁹¹ Տե՛ս նույն տեղում:

մարել՝ հիմք ընդունելով հանրային շահով պայմանավորված ծանրակշիռ դրդապատճառները¹⁹²:

Քանի որ պետությունները և տարածաշրջանային իշխանությունները ջերմոցային գազերի արտանետումների թիրախներին հասնելու նպատակով ընդունում են նոր կարգավորումներ, այդ վարչական կարգավորումներից մի քանիսը ունեն հետադարձ ուժ, ինչը հանգեցնում է վեճերի թվի աճին: Աճում է նաև այն գիտակցումը, որ վերականգնվող էներգիայի աղբյուրները ապագայում առանցքային դեր են ունենալու Կայուն զարգացման մի շարք նպատակների հասնելու համար¹⁹³, այդ թվում՝ բոլորի համար կայուն էներգիայի ապահովման, կայուն տնտեսական աճի խթանման և կլիմայի փոփոխության հետևանքների մեղմման գործում¹⁹⁴: Միջազգային առևտրի պալատը (International Chamber of Commerce) ստեղծել է աշխատանքային խումբ՝ ուսումնասիրելու արբիտրաժի դերը կլիմայի փոփոխության հետ կապված վեճերի լուծման հարցում: Այդ խմբի վերջին գեկույցը եզրակացրել է, որ «կլիմայի փոփոխության հետ կապված վեճերը կաճեն էքսպոնենցիալ կերպով»¹⁹⁵: Արբիտրաժում արդեն իսկ

¹⁹² *St' u National & Provincial Building Society, Leeds Permanent Building Society and Yorkshire Building Society v United Kingdom* (1997) 25 EHRR 127, պարագրաֆ 112 (հարկային ոլորտ), *Forrer-Niedenthal v Germany* App no 47316/99 (ECtHR, 20 February 2003), պարագրաֆ 64 (սեփականության իրավունք), *OGIS-Institut Stanislas, OGEK Saint-Pie X and Blanche de Castille and Others v France* App nos 42219/98 and 54563/00 (ECtHR, 27 May 2004) պարագրաֆներ 71-72 (պետական աջակցություն):

¹⁹³ *St' u Sustainable Development Goals*, G.A. Res. 70/1, at 14, U.N. Doc.A/RES/70/1 (25 September 2015):

¹⁹⁴ *St' u C. Verbarg and J. Waverijn*, 'Liberalizing the Global Supply Chain of Renewable Energy Technology: The Role of International Investment Law in Facilitating Flows of Foreign Direct Investment and Trade' (2019) 2(1) Brill Open Law 101-139:

¹⁹⁵ International Chamber of Commerce Commission on Arbitration and ADR, *Resolving Climate Change Related Disputes Through Arbitration and ADR* 16 (2019).

ծագում են խնդիրներ, երբ տրիբունալները բախվում են օրենքները հետադարձորեն կիրառելու փորձերին, և հավանական է, որ մոտ ապագայում բնապահպանական հարցերին վերաբերող ավելի շատ գործեր ի հայտ գան¹⁹⁶:

Աճող թվով վեճեր վերաբերում են կլիմայի փոփոխության դեմ պայքարին ուղղված ԵՄ քաղաքականությունների ներպետական իրավական իրականացմանը: Սկզբնական շրջանում ԵՄ օրենսդրությունը խթանում էր Եվրոպայում մաքուր էներգիայի զարգացումը, մասնավորապես՝ վերականգնվող էներգիայի աղբյուրներում ներդրումները՝ այդ աղբյուրներին աջակցելու համար առատաձեռն սուբսիդիաների խրախուսմամբ¹⁹⁷: Սակայն, ԵՄ անդամ պետություններում սակագնային գրաֆիկների հետագա փոփոխությունը և համապատասխանեցման տեխնիկական չափանիշների հետադարձ ուժով վերաձևակերպումը նվազեցրել են այդ սուբսիդիաները՝ գրեթե պատժիչ ազդեցություն ունենալով վերականգնվող էներգիայի ոլորտում արդեն իսկ կատարված ներդրումների վրա: Ներդրողները հայցեր են ներկայացրել ԵՄ անդամ պետությունների դեմ՝ պնդելով, որ օրենքի հետադարձ կիրառումը այն եղանակներից մեկն է, որով պետությունը կարող է խախտել ներդրողի լեգիտիմ ակնկալիքները կամ նույնիսկ անուղղակիորեն բռնազրավել ներդրումները¹⁹⁸:

Էներգետիկ խարտիայի քարտուղարության (Energy Charter Secretariat) նման միջկառավարական կազմակերպությունները

¹⁹⁶ St'u Conocophillips Gulf of Paria B.V. v Corporación Venezolana de Petróleo, S.A., Petróleos de Venezuela, S.A., ICC Case No. 22527/ ASM/JPA Award (29 July 2019):

¹⁹⁷ St'u Renewable Energy Directive (2009/28/EC); European Commission, Delivering the internal electricity market and making the most of public intervention, C(2013) 7243 final (5 November 2015):

¹⁹⁸ St'u **M. Alessi, J. Núñez Ferrer and C. Egenhofer**, 'Suspended in Legal Limbo: Protecting Investment in Renewable Energy in the EU', CEPS, (23 January 2018):

խորհուրդ են տալիս խուսափել ներպետական իրավունքում գործող կարգավորումների փոփոխությունների հետադարձ կիրառումից՝ օտարերկրյա ներդրողների հետ հակասությունները նվազագույնի հասցնելու համար¹⁹⁹: Այնուամենայնիվ, աշխարհի տարբեր մասերում կառավարությունները կիրառել են հետադարձ հարկային քաղաքականություններ՝ խթանելու որոշակի էներգիայի աղբյուրների զարգացումը այն պայմաններում, երբ նման նախագծերը հարկային արտոնությունների և սուբսիդիաների բացակայության դեպքում տնտեսապես ոչ գրավիչ կլինեին²⁰⁰: Օրինակ՝ Չեխիայի Հանրապետությունում խորհրդարանը հետադարձ ուժով փոխել է վերականգնվող էներգիայի ռեժիմը՝ բարձրացնելով վճարման ենթակա շահութահարկի դրույքաչափը՝ արևային մարտկոցների ներդրումը խթանելու նպատակով²⁰¹: Չեխիայի Հանրապետության Սահմանադրական դատարանը վճռել է, որ նման հետադարձ փոփոխությունները թույլատրելի են սահմանափակ իրավիճակներում, եթե դրանք արդարացված են հանրային կարգի նկատառումներով²⁰²:

Իտալիայում շրջակա միջավայրի և էներգետիկայի հարցերին վերաբերող օրենքները ներառել են հետադարձ դրույթներ²⁰³: Նմանապես, Իսպանիան հետադարձ ուժով կրճատել է վերականգնվող էներգիայի համար տրամադրվող առատաձեռն

¹⁹⁹ St'u Best Practices in Regulatory Reform: Minimising Potential Conflicts with Foreign Investors, Decision of the Energy Charter Conference, CCDEC 2017 4 INV, Brussels (11 October 2017):

²⁰⁰ St'u **C.J. Sarasa-Maestro, R. Dufo-López and J.L. Bernal-Agustín**, 'Photovoltaic Remuneration Policies in the European Union' (2013) 55 Energy Policy 317, էջ 326:

²⁰¹ St'u նույն տեղում:

²⁰² St'u Photovoltaic Power Plants, Czech Republic Constitutional Court Case No. Pl. ÚS 17/11 15.05.2012 Judgment [2012]:

²⁰³ St'u Article 23 of law 91/2014:

սութիդիաները²⁰⁴: Դա հանգեցրել է ներպետական և միջազգային տարբեր պահանջների ներկայացման, այդ թվում՝ Սահմանադրական դատարան և Գերագույն դատարան ներկայացված հայցերի: Դատարաններին առաջարկվել է քննել օրենքի հետադարձ կիրառման իրավաչափությունը Իսպանիայի Սահմանադրության լույսի ներքո, որը երաշխավորում է «անբարենպաստ կամ անհատի իրավունքները սահմանափակող պատժիչ միջոցների հետադարձ ուժի արգելքը»²⁰⁵:

Ի վերջո, Իսպանիայի Սահմանադրական դատարանը և Գերագույն դատարանը եզրակացրին, որ վերականգնվող էներգիայի խթանման միջոցների կրճատումը համատեղելի էր լեգիտիմ ակնկալիքների, իրավական որոշակիության և հետադարձության արգելքի սահմանադրական սկզբունքների հետ: Դատարանների տրամաբանության համաձայն՝ օրենսդիրը պատշաճ կերպով հիմնավորել էր այդ կրճատումները որպես վերականգնվող էներգետիկ տեխնոլոգիաների աճն ու այս ոլորտում մրցակցությունը խթանող համահունչ քաղաքականության մաս, և, հետևաբար, այդ միջոցները չէին հանդիսանում հանրային իշխանության կամայական կիրառում²⁰⁶:

Միացյալ Նահանգներում 1980 թվականի Շրջակա միջավայրի արձագանքի, փոխհատուցման և պատասխանատվության համապարփակ ակտը (CERCLA) կառավարությանը լիազորեց պարտավորեցնել պատասխանատու կողմերին մաքրել վտանգավոր նյութերով աղտոտված ոչ ակտիվ կամ լքված տա-

²⁰⁴ Տե՛ս **C. Otero Garcia-Castrillón**, ‘Spain and Investment Arbitration: The Renewable Energy Explosion’ in Armand de Mestral (ed.), *Second Thoughts: Investor State Arbitration between Developed Democracies* (McGill-Queen’s University Press 2017):

²⁰⁵ Art 9(3) Constitution of Spain.

²⁰⁶ Տե՛ս **Yarik Kryvoi and Shaun Matos**, նշված աշխատ., էջ 55:

րաձքները²⁰⁷: CERCLA-ն հետադարձորեն կիրառվում է՝ «վերահսկելու լքված և ոչ ակտիվ վտանգավոր թափոնների հեռացման վայրերի հետ կապված լայնածավալ խնդիրները»²⁰⁸:

Թեև CERCLA-ի ձևակերպումը հստակ չէ, դաշնային դատարանները գտել են, որ, հաշվի առնելով օրենքի ընդունման պատմությունը և դրա ընդհանուր նպատակը, այն պետք է մեկնաբանվի որպես պատասխանատվություն սահմանող ակտ՝ այն դեպքերի համար մաքրման և արձագանքման ծախսերի վերականգնման առնչությամբ, որոնք տեղի են ունեցել մինչև այդ օրենքի ընդունումը²⁰⁹: ԱՄՆ դատարանների կարծիքով՝ CERCLA-ի ներքո «մաքրման ծախսերի փոխհատուցումը նպատակ չի ունեցել գործել և փաստացի չի գործում՝ որպես քրեական պատիժ կամ պատժիչ զսպման միջոց»²¹⁰: Հետևաբար, քանի դեռ օրենքը չունի պատժիչ բնույթ, ոչ հետադարձության սկզբունքը չի կիրառվում²¹¹:

Վերը ներկայացված ներպետական և միջազգային իրավունքի քննարկումը ցույց է տալիս, որ ի տարբերություն քրեական իրավունքի՝ վարչական իրավունքում հետադարձության արգելքի սկզբունքից համաչափորեն շեղվելու մոտեցումը ոչ միայն ընդունելի է, այլ նաև աճող միտում ունի: Այն սկսվել է կիրառվել հարկային և ֆինանսական ոլորտներում, սակայն չի սահմանափակվել դրանցով: Վերջին շրջանում պատասխա-

²⁰⁷ S՝u Comprehensive Environmental Response, Compensation, and Liability Act § 106, 42 U.S.C. Sec. 9606:

²⁰⁸ **D. Farber**, ‘How Legal Systems Deal with Issues of Responsibility for Past Harmful Behaviour’ in **L. H. Meyer and P. Sanklecha** (eds.) *Climate Justice and Historical Emissions* (2017), pp. 88–89.

²⁰⁹ S՝u *United States v Shell Oil Co* 22 Env’t Rep. Cas. (BNA) 1473 (D. Colo) [1985]:

²¹⁰ Նույն տեղում:

²¹¹ S՝u նույն տեղում:

նատվություն սահմանող կամ անձի վիճակն այլ կերպ վատթարացնող օրենսդրության հետադարձ ուժով կիրառումը սկսել է լայնորեն կիրառվել նաև բնապահպանական իրավունքի՝ որպես վարչական իրավունքի տարատեսակի համատեքստում:

3.2. Իրական և ոչ իրական հետադարձություն

Վարչական իրավունքում օրենսդրության՝ հետադարձությամբ կիրառման համատեքստում լեգիտիմ ակնկալիքների պաշտպանության սկզբունքը ձեռք է բերում առանձնակի կարևորություն: Այս սկզբունքը ենթադրում է, որ այն անձինք, որոնք ողջամտորեն և բարեխղճորեն գործել են իրավունքի հիման վրա՝ այնպիսին, ինչպիսին այն կա կամ առնվազն ներկայացվում է, չպետք է կրեն այդ ակնկալիքների խախտման բացասական հետևանքները²¹²: ԵՄ դատարանն ուղղակիորեն արձանագրել է, որ իրավունքի հետադարձ կիրառումը պետք է թույլատրվի միայն բացառիկ հանգամանքներում, երբ դա անհրաժեշտ է որոշակի նպատակների հասնելու համար, և երբ այն չի խախտում անձանց լեգիտիմ սպասումները²¹³:

Հետադարձ ուժով օրենսդրության կիրառման դեպքում լեգիտիմ ակնկալիքների պաշտպանության հարցի ուսումնասիրության համար գիտագործնական նշանակություն ունի հետադարձության տարբերակումը իրականի և ոչ իրականի: Այսպես, իրավական որոշակիության ամենահայտնի կիրառումը այն

²¹² Տե՛ս **Craig and de Búrca**, “EU Law; Texts, Cases and Materials”, (Oxford University Press, 2008), էջեր 556-557; **Schermers and Waelbroeck**, “Judicial Protection in the European Union”, The Hague, Kluwer Law International, 6th edn, 2001), էջեր 79-80; **J Schwarze**, European Administrative Law (London, Sweet & Maxwell, 1992), էջ 949 և Case 81/72 Commission v Council [1973] ECR 575, esp 584, պարագրաֆ 10 կամ Case 120/86 Mulder I [1988] ECR 2321, esp 2345-2353 և Case C-152/88 Sofrimport [1990] ECR I-2477:

²¹³ Տե՛ս Case C-260/91 and C-261/91 Diversinté and Iberlacta [1993] ECR I-1885:

դեպքերն են, երբ կանոնները ունեն **«իրական հետադարձ» ուժ**: Սա այն իրավիճակն է, երբ որևէ նորմ կիրառվում է արդեն ավարտված իրադարձությունների նկատմամբ, որը կարող է առաջանալ այն դեպքում, երբ իրավական ակտի ուժի մեջ մտնելու օրը նախորդում է դրա հրապարակման ամսաթվին, կամ երբ նորմը տարածվում է այն հանգամանքների վրա, որոնք արդեն ավարտվել էին մինչև այդ նորմի ուժի մեջ մտնելը:

Որոշ այլ իրավիճակներում առկա է **ոչ իրական հետադարձություն**. այսինքն՝ իրավական ակտը ուժի մեջ է մտնում ապագայի համար, բայց ազդեցություն է ունենում անցյալում տեղի ունեցած, սակայն դեռևս վերջնականապես չավարտված իրադարձությունների վրա: Այսպիսով, ոչ իրական հետադարձությունն այն է, երբ նորմը կամ որոշումը տարածվում է անցյալում սկսված, սակայն դեռևս չավարտված իրադարձությունների վրա, որոնց վրա անմիջապես ազդում է հետագա նորմը, որոշումը կամ քաղաքականությունը՝ առանց «ուղղակիորեն» հետադարձ լինելու (այստեղից էլ՝ «թվացյալ» բնորոշումը)²¹⁴:

Իրական հետադարձության դեմ հիմնավոր փաստարկները խիստ համոզիչ են: Իրավունքի գերակայության հիմնարար սկզբունքի էությունը այն է, որ մարդիկ պետք է կարողանան պլանավորել սեփական կյանքը՝ վստահ լինելով իրենց գործողությունների իրավական հետևանքների վերաբերյալ: Այս առանցքային սկզբունքը խախտվում է այն միջոցների կիրառմամբ, որոնք ուժի մեջ չէին տվյալ իրադարձությունների տեղի ունենալու պահին:

Հենց սրանով է պայմանավորված այն հանգամանքը, որ իրական հետադարձությունը որոշ երկրներում ամբողջովին ար-

²¹⁴ Տե՛ս **Jürgen Schwarze**, European Administrative Law, Rev. edition, Sweet & Maxwell, London, 2006, էջեր 1120-1121:

գելված է: Այսպես, Կորեայի Հանրապետությունը ընդունեց օրենք, որում ամրագրվել էր վերը քննարկված CERCLA-ի մոտեցումը²¹⁵: Սակայն հետագայում Կորեայի Սահմանադրական դատարանը վճռեց, որ պատասխանատվության հետադարձ սահմանումը խախտում էր «լեգիտիմ ակնկալիքների պաշտպանության սկզբունքը», որը արմատավորված է Կորեայի Սահմանադրությամբ նախատեսված պատշաճ իրավական ընթացակարգի իրավունքներում՝ և ըստ որի՝ «ոչ ոք չի կարող զրկվել սեփականության իրավունքից հետադարձ ուժ ունեցող օրենսդրության միջոցով»²¹⁶: Դատարանը տարբերակեց «հետադարձ ուժ ունեցող օրենսդրության» երկու տեսակ՝ «իրական», որը կիրառվում է արդեն ավարտված փաստերի կամ իրավահարաբերությունների նկատմամբ, և «ոչ իրական», որը կիրառվում է դեռևս ընթացիկ փաստերի կամ իրավահարաբերությունների նկատմամբ: «Ոչ իրական» հետադարձ օրենսդրությունը թույլատրելի է՝ պայմանով, որ օրենսդիրը հավասարակշռի հետադարձությունը պահանջող հանրային շահը և լեգիտիմ ակնկալիքները: Իրավունքի կայունությունն ու հանրային վստահությունն ապահովելու նպատակով «իրական» հետադարձ օրենսդրությունը, Սահմանադրության համաձայն, անթույլատրելի էր բացառիկ հանգամանքների բացակայության պայմաններում: Դրանից հետո Կորեայի խորհրդարանը սահմանեց մաքրման պարտավորությունների վերաբերյալ նոր պաշտպանական հիմքեր և փոխհատուցում ստանալու իրավունք այն կողմերի համար, որոնք սկզբնապես

²¹⁵ Տե՛ս **Y. Yoon**, 'The Impacts and Implications of CERCLA on the Soil Environmental Conservation Act of the Republic of Korea' (2017) 6 Transnational Environmental Law 11, էջեր 11–12:

²¹⁶ Constitutional Court of the Republic of Korea, Decision 2010 Hunba 28, (23 August 2012), Constitutional Court of the Republic of Korea, Decision 2010 Hunba 167 (23 August 2012).

պատասխանատու էին մաքրման համար, ինչպես նաև ընդունեց հատուկ միջոցներ՝ հետադարձ պատասխանատվության հակա-սահմանադրականության դիսկը նվազեցնելու նպատակով²¹⁷:

Այն իրավական համակարգերը, որոնցում թույլատրվում է վարչական իրավունքի շրջանակում հետադարձ ուժի կիրառումը, իրական հետադարձությունը կիրառվում է որպես բացառություն: ԵՄ-ն ևս այս առումով բացառություն չէ: Հիմնարար սկզբունքը ձևակերպվել է **Racke** գործով²¹⁸: Եվրոպական հանձնաժողովը կարգադրությամբ սահմանել էր փոխհատուցման դրամական գումարներ որոշակի ապրանքի համար, իսկ այնուհետև երկու հաջորդ կարգադրություններով փոխել այդ գումարները: Յուրաքանչյուր համապատասխան կարգադրություն նախատեսում էր, որ այն կկիրառվի հրապարակմանը նախորդող տասնչորսերորդ օրը: Դատարանը վճռեց, որ ԵՄ իրավական կարգի հիմնարար սկզբունքն այն է, որ որևէ իրավական ակտը չպետք է կիրառվի համապատասխան անձանց նկատմամբ այն ժամանակահատվածից առաջ, երբ նրանք հնարավորություն չեն ունեցել ծանոթանալու դրան²¹⁹: Այնուհետև դատարանը այս սկզբունքից բխեցրեց հետադարձ ուժ ունեցող միջոցառումներին վերաբերող հետևանքները²²⁰:

Թեև ընդհանուր առմամբ իրավական որոշակիության սկզբունքը արգելում է, որ որևէ համայնքային (ԵՄ) միջոց կի-

²¹⁷ Տե՛ս նույն տեղում:

²¹⁸ Տե՛ս Case T-357/02 Freistaat Sachsen v Commission [2007] ECR II-1261, Case C-161/06 Skoma-Lux sro v Celní ředitelství Olomouc [2007] ECR I-10841, Case C-410/09 Polska Telefonia Cyfrowa sp. z o.o. v Prezes Urzędu Komunikacji Elektronicznej, EU:C:2011:294, Cases T-229 and 276/11 Lord Inglewood v European Parliament, EU:T:2013:127, Case T-471/11 Éditions Odile Jacob SAS v European Commission, EU:T:2014:739:

²¹⁹ Տե՛ս Case 98/78 Racke:

²²⁰ Տե՛ս նույն տեղում:

րառվի այն պահից, երբ այն դեռ չի հրապարակվել, որոշ բացառիկ դեպքերում կարող է թույլատրվել դրա հետադարձ ուժը, եթե այդպիսի միջոցառման նպատակն այնքան կարևոր է, որ դրա իրականացումը պահանջում է նման քայլ, և եթե շահագրգիռ անձանց օրինական ակնկալիքները պատշաճ կերպով պահպանվում են: Այս վերապահմանը համահունչ՝ Դատարանը ճանաչել է հետադարձ ուժ ունեցող միջոցների վավերությունը հատկապես գյուղատնտեսության ոլորտում, երբ այդ միջոցները անհրաժեշտ են եղել շուկայի կայունությունն ապահովելու համար, կամ երբ հետադարձ ուժը տվյալ անհատի համար ավելի բարենպաստ պայմաններ է ստեղծել²²¹:

Հետևաբար, ընդհանուր սկզբունքն այն է, որ նոր իրավական նորմը կիրառվում է այն իրավական ակտի ուժի մեջ մտնելու պահից, որով այն սահմանվել է: Նոր նորմը չի տարածվում այն իրավական իրավիճակների վրա, որոնք առաջացել և դարձել են վերջնական նախկին իրավունքի ներքո, սակայն այն կարող է կիրառվել այդ իրավիճակների ապագա հետևանքների, ինչպես նաև նոր իրավական իրավիճակների նկատմամբ: Այս կանխավարկածը կարող է հաղթահարվել միայն այն դեպքում, երբ նոր նորմը պարունակում է հատուկ դրույթներ, որոնք հստակ սահմանում են դրա ժամանակային կիրառման պայմանները, սակայն այդ դեպքը չի բխում իրավական ակտերի հետադարձ ուժի բացառման սկզբունքից և կարող է կիրառվել բացառիկ դեպքերում: Ընթացակարգային նորմերը, որպես կանոն, կիրառվում են ուժի մեջ մտնելու պահից, մինչդեռ նյութական նորմերը սովորաբար մեկնաբանվում են այնպես, որ տարածվում են մինչև իրենց ուժի մեջ մտնելը գոյություն ունեցած իրավիճակների վրա միայն այն դեպքում, երբ դա հստակորեն բխում

²²¹ St'u Case T-7/99 *Medici Grimm KG v Council* [2000] ECR II-2671:

է տվյալ նորմի բովանդակությունից, նպատակներից կամ կառուցվածքից²²²: Այնուամենայնիվ, սովորական կանխավարկածը դեմ է հետադարձ ուժ ունեցող միջոցառումների վավերությանը: Սա դրսևորվում է ինչպես մեկնաբանության, այնպես էլ նյութական իրավունքի մակարդակներում:

Մեկնաբանության տեսանկյունից, ԵՄ դատարանը հստակ նշել է, որ նորմը կմեկնաբանվի հետադարձ ուժ ունեցող միայն այն դեպքում, երբ դա հստակորեն բխում է դրանց բովանդակությունից կամ այն ընդհանուր համակարգի նպատակներից, որի մաս են կազմում տվյալ նորմերը: Հետևաբար, մեկնաբանության ընդհանուր սկզբունքը դեմ է նորմերին հետադարձ ուժ տալուն: Այսպես, **Salumi**²²³ գործում Եվրոպական դատարանը վճռեց, որ նյութական դրույթների համար կիրառելի մեկնաբանության ընդհանուր կանոնը այն է, որ դրանք կարող են մեկնաբանվել որպես կիրառելի իրավիճակների նկատմամբ, որոնք առաջացել են դրանց ուժի մեջ մտնելուց առաջ, միայն եթե այդ մեկնաբանությունը հստակորեն բխում է տվյալ դրույթի բովանդակությունից կամ այն ընդհանուր կառուցվածքից, որի մաս է այն: Նման մեկնաբանությունն ապահովում է իրավական որոշակիության և օրինական ակնկալիքների պաշտպանության սկզբունքների պահպանումը, «որոնց ուժով ԵՄ օրենսդրության գործողությունը պետք է լինի հստակ և կանխատեսելի այն անձանց համար, որոնց վրա այն տարածվում է»²²⁴:

²²² St' u Cases 212–217/80 Amministrazione delle Finanze dello Stato v Srl Meridionale Industria Salumi [1981] ECR 2735, Case C-334/07 P Commission v Freistaat Sachsen, EU:C:2008:709; Case C-596/13 P European Commission v Moravia Gas Storage as, EU:C:2015:203:

²²³ St' u Cases 212–217/80 *Salumi*:

²²⁴ Case C-400/98 Finanzamt Goslar v Brigitte Breitsohl [2000] ECR I-4321, Case C-396/98 Grundstücksgemeinschaft Scholßstraße GbR v Finanzamt Paderborn [2000] ECR I-4279, Case C-110/03 Belgium v Commission [2005] ECR I-2801, Case T-

Նյութական իրավունքի տեսանկյունից. ԵՄ դատարանը անվավեր կհայտարարի հետադարձ ուժ ունեցող այն միջոցները, որոնց դեպքում կա՛մ չկա հրատապ նպատակ, որը բխում է ԵՄ շահերից, կա՛մ հնարավոր չէ պատշաճ կերպով պահպանել այդ միջոցով շոշափվող անձանց լեգիտիմ ակնկալիքները²²⁵:

Ինչ վերաբերում է ոչ իրական հետադարձությանը, ապա այս կապակցությամբ մոտեցումը միանշանակ է. հանրային իշխանությունը կարող է ընդունել ոչ իրական հետադարձություն ունեցող օրենսդրություն լեգիտիմ ակնկալիքները պաշտպանելու պայմանով:

Այստեղ հիմնավորումը պարզ է. ԵՄ դատարանի ձևակերպմամբ՝ անձինք չեն կարող ունենալ լեգիտիմ ակնկալիք, որ ԵՄ հայեցողական լիազորությունների սահմաններում ընդունված որոշումների հիման վրա ձևավորված իրավիճակը պահպանվելու է²²⁶: Ինչպես նշում է պրոֆեսոր Գ. Դանիելյանը, սոցիալ-քաղաքական զարգացումներին համահունչ (իսկ այդ զարգացում-

25/04 González y Díez, SA v Commission [2007] ECR II-3121, Case T-348/04 Société internationale de diffusion et d'édition SA (SIDE) v Commission [2008] ECR II-625, Case C-256/07 Mitsui & Co Deutschland GmbH v Hauptzollamt Düsseldorf [2009] ECR I-1951, Case C-596/13 P European Commission v Moravia Gas Storage as, EU:C:2015:203.

²²⁵ St'u Case 224/82 *Meiko-Konservenfabrik v Federal Republic of Germany* [1983] ECR 2539, Case C-161/06 *Skoma-Lux sro v Celní ředitelství Olomouc* [2007] ECR I-10841, Case C-459/02 *Willy Gereken and Association agricole pour la promotion de la commercialisation laitière procola v Luxembourg* [2004] ECR I-7315:

²²⁶ St'u Case C-17/03 *Vereniging voor Energie, Milieu en Water and others v Directeur van de Dienst uitvoering en toezicht energie* [2005] ECR I-4983, պարագրաֆներ 73–87, Case C-310/04 *Spain v Commission* [2006] ECR I-7285, պարագրաֆներ 81–84 Case C-241/07 *JK Otsa Talu OÜ v Põllumajanduse Registrite ja Informatsiooni Amet (PRIA)* [2009] ECR I-4323, պարագրաֆ 51, Case C-449/08 *Elbertsen v Minister van Landbouw, Natuur en Voedselkwaliteit* [2009] ECR I-10241, պարագրաֆ 45, Case C-496/08 P *Pilar Angé Serrano and Others v European Parliament* [2010] ECR I-1793, պարագրաֆ 93, Case T-79/13 *Accorinti v European Central Bank*, EU:T:2015:756, պարագրաֆ 76:

ները ևս ներկայումս դարձել են աննախադեպ հարափոփոխ) օրենսդրություն ստեղծելու անհրաժեշտությունը չի կարող վիճահարույց լինել²²⁷:

ԵՄ իրավունքում, օրինակ, սա հատկապես ընդունված է ընդհանուր գյուղատնտեսական քաղաքականության (CAP) շրջանակներում, որտեղ մշտական հարմարեցումներ են պահանջվում շուկայի նոր պայմաններին համապատասխան: Նույնն է մոտեցումը նաև այլ ոլորտներում, օրինակ՝ մրցակցության քաղաքականության մեջ, որտեղ ԵՄ դատարանները ընդգծել են համապատասխան լիազորող կանոնակարգերի սահմաններում Հանձնաժողովի տուգանքների չափերը փոփոխելու առնչությամբ հայեցողական իրավունքը²²⁸:

Սա ապացուցվում է **ATB** գործով²²⁹: Այն վերաբերում էր ծխախոտի շուկայի ընդհանուր կազմակերպմանը: 1992 թ. ընդունված հիմնական կարգավորումը նախատեսում էր համակարգ, որով ծխախոտ արտադրողներն ստանում էին պարգևատրում մշակող ձեռնարկություններից: Այնուամենայնիվ, այս կարգավորմամբ հստակեցվում էր, որ այս ռեժիմը անցումային կլինի, և հետագայում կձեռնարկվեն միջոցներ, որպեսզի քվոտաները ուղղակիորեն հատկացվեն արտադրողներին: 1995 թ. կարգավորմամբ մշակման քվոտայի համակարգը փոխարինվեց արտադրության քվոտայի սկզբունքով: Դիմողները վիճարկեցին

²²⁷ Տե՛ս **Գևորգ Դանիելյան**, «Իրավական որոշակիության, իրավունքի անալոգիայի (համանմանության) և իրավական ակտի մեկնաբանության փոխհարաբերության արդի հիմնախնդիրները», Բանբեր Երևանի համալսարանի. Իրավագիտություն, 2016, էջեր 3–17, էջ 3:

²²⁸ Տե՛ս Case T-31/99 ABB Asea Brown Boveri Ltd v Commission [2002] ECR II-1881, Case T-23/99 LR AF 1998 A/S v Commission [2002] ECR II-1705, Cases C-189, 202, 205, 208 and 213/02 P Dansk Rorindustri, պարագրաֆներ 171–173:

²²⁹ Տե՛ս Case C-402/98 ATB v Ministero per le Politiche Agricole [2000] ECR I-5501:

այս կարգավորումը՝ հիմնավորելով, որ այն ուժի մեջ է մտել 1995 թ. ապրիլի սկզբին, երբ արդեն կայացվել էին տվյալ բերքահավաքի տարվա համար ծխախոտի բույսը տնկելու որոշումները: Նրանք պնդեցին, որ 1995 թ. կարգավորումը պետք է չեղարկվի, քանի որ խախտում է իրենց իրավաչափ սպասումները՝ պատճառելով վնասներ, որոնք առաջացել են արտադրության և մշակման քվոտաների տարբերությունից:

ԵՄ Դատարանը մերժեց այդ պահանջը²³⁰. «Թեև իրավաչափ ակնկալիքների պաշտպանությունը համարվում է ԵՄ-ի հիմնարար սկզբունքներից մեկը, տնտեսական գործունեություն իրականացնող սուբյեկտները չեն կարող ունենալ իրավաչափ ակնկալիք, որ գոյություն ունեցող մի իրավիճակը, որը կարող է փոփոխվել ԵՄ մարմինների կողմից իրենց հայեցողական լիազորությունների շրջանակում, կպահպանվի անփոփոխ. սա հատկապես արդիական է այնպիսի ոլորտում, ինչպիսին է շուկաների ընդհանուր կազմակերպումը, որի նպատակն է շարունակական հարմարեցումներ կատարելը՝ արձագանքելու տնտեսական իրավիճակի փոփոխություններին: Այսպիսով՝ տնտեսական գործունեություն իրականացնող սուբյեկտները չեն կարող պահանջել պահպանել այն առավելությունը, որը ստացել են շուկաների ընդհանուր կազմակերպման արդյունքում և որից օգտվել են որևէ կոնկրետ ժամանակահատվածում»²³¹:

ԵՄ Դատարանը գտավ, որ իրավաչափ ակնկալիքների խախտում տեղի չի ունեցել, քանի որ 1992 թվականի կարգավորումը նախատեսում էր, որ արտադրության քվոտայի համակարգը պետք է ներդրվեր անդամ պետությունների կողմից մինչև 1995 թվականը: Այսպիսով՝ արտադրողները գիտեին, որ նոր

²³⁰ Տե՛ս նույն տեղում:

²³¹ Տե՛ս նույն տեղում:

համակարգ է մտնելու ուժի մեջ, իսկ 1995 թվականի կարգավորումը պարզապես հաստատում էր այդ փոփոխությունը:

Հստակ է, որ վերոնշյալ մեջբերման մեջ ընդգրկված սկզբունքը կիրառելի է նույնիսկ այն դեպքում, երբ նախկին կարգավորման մեջ որևէ հղում չկա այն մասին, որ այն ժամանակավոր է: Տնտեսական իրավիճակի փոփոխություններին համապատասխան շարունակական հարմարեցումների անհրաժեշտությունն ինքնին բացառում է լեգիտիմ ակնկալիքների հիմքով առաջադրված պահանջը՝ հիմնված նախկին կարգավորման վրա:

Այսպիսով՝ **Cordis** գործով²³² հայցվորը վիճարկում էր բանաձևի ներմուծման լիցենզիաների տրամադրման համար կիրառվող հաշվարկային շրջանը: Նախորդ՝ 1993 թվականի կարգավորման սահմանած հաշվարկային շրջանը փոփոխվել էր 1998 թվականի կարգավորմամբ: Հայցվորը պնդում էր, որ դա խախտում է իր իրավաչափ ակնկալիքները: Սակայն ԵՄ առաջին ատյանի դատարանը (CFI) չհամաձայնվեց: Դատարանը վերահաստատեց այն սկզբունքը, որ ԵՄ հաստատությունները քաղաքականության որոշ նպատակներին հասնելու միջոցների ընտրության հարցում ունեն հայեցողական դաշտ: Այդ պատճառով տնտեսվարող սուբյեկտները չեն կարող ունենալ իրավաչափ ակնկալիք, որ իրավիճակը, որը ենթակա է փոփոխության՝ ԵՄ հաստատությունների հայեցողական լիազորությունների սահմաններում ընդունված որոշումների հիմքով, կմնա անփոփոխ: Սա հատկապես վերաբերում է շուկաների ընդհանուր կազմակերպման ոլորտին, որն իր բնույթով ենթադրում է շարունակական հարմարեցումներ՝ տնտեսության վիճակի փոփոխություննե-

²³² St'u Case T-18/99 Cordis Obst und Gemuse Groshandel GmbH v Commission [2001] ECR II-913:

րին արձագանքելու համար: Արդյունքում՝ հայցվորը չէր կարող ունենալ իրավաչափ ակնկալիք, որ ներմուծման լիցենզիաների տրամադրման հաշվարկային շրջանի հարաբերական ժամանակահատվածը՝ սահմանված 1993 թվականի կարգավորմամբ, պահպանվելու է²³³:

Նույն մոտեցումը ակնհայտ է նաև **Իտալիան ընդդեմ Խորհրդի** գործով²³⁴: Շաքարի շուկային վերաբերող կանոնների դեմ ներկայացված պահանջը մերժելիս ԵՄ Դատարանը նշել է, որ քանի որ 1981 թվականի Կարգավորումը պահանջում էր՝ Խորհուրդը և Հանձնաժողովը ամեն տարի նորից որոշեն միջամտության գները, նվազագույն գները և բարձրացված գները՝ հիմնվելով արտադրության և սպառման օրինաչափությունների վրա, ուստի տնտեսվարող սուբյեկտները չէին կարող ունենալ իրավաչափ ակնկալիք, որ շուկայավարման նախկին տարիների համար սահմանված գները կպահպանվեն:

Հայցվորի համար դժվար կլինի ապացուցել լեգիտիմ ակնկալիքի առկայությունը, երբ նախկին կարգավորման կամ հրահանգի հիման վրա սահմանված ընդհանուր քաղաքական որոշումը փոխարինվում է նոր կարգավորմամբ կամ հրահանգով, որն այդ քաղաքականությունը փոփոխում է: Այնուամենայնիվ, կան դեպքեր, երբ ԵՄ Դատարանները պատրաստակամ են եղել ճանաչել լեգիտիմ ակնկալիքի առկայությունը:

Mulder գործը²³⁵ ի ցույց է դնում վերը նշված իրավիճակների առաջին տեսակը: Միության կողմից կաթի ավելցուկը նվազեցնելու նպատակով 1977 թվականին ընդունվել էր Կանոնակարգ, ըստ որի՝ արտադրողները կարող էին որոշ ժամանակով

²³³ Տե՛ս նույն գործը, պարագրաֆներ 74–76:

²³⁴ Տե՛ս Case C-340/98 Italy v Council [2002] ECR I-2663:

²³⁵ Տե՛ս Case 120/86 Mulder v Minister van Landbouw en Visserij [1988] ECR 2321:

դադարեցնել կաթի արտադրությունը և դրա դիմաց ստանալ պարգևավճար՝ կաթը շուկայում չվաճառելու համար: Հայցվորը՝ Մուլդերը, 1979 թվականին նման համաձայնություն էր կնքել հինգ տարվա համար: 1984 թվականին նա նախատեսում էր վերականգնել արտադրությունը և դիմեց համապատասխան հովանդական իշխանություններին՝ ստանալու կաթի հղման քանակություն (reference quantity), այսինքն՝ այն քանակը, որը նա կարող էր արտադրել առանց լրացուցիչ հարկ վճարելու: Նրան մերժեցին, քանի որ չէր կարող ապացուցել, որ 1983 թվականին կաթ էր արտադրել: Դա, սակայն, Մուլդերի համար անհնար էր, քանի որ նշված ժամանակահատվածում նա ընդհանրապես չէր արտադրել 1979 թվականին կնքած համաձայնության հիմքով: Նա վիճարկեց 1984 թվականի Կանոնակարգը՝ պնդելով, որ այն խախտում է իր իրավաչափ ակնկալիքները:

Եվրոպական դատարանը վճիռը կայացրեց Մուլդերի օգտին: Արձանագրվեց, որ այն արտադրողը, որը որոշ ժամանակով կամավոր դադարեցրել է արտադրությունը, չի կարող իրավաչափորեն ակնկալել, որ կկարողանա վերականգնել արտադրությունը նախկին պայմաններով՝ առանց հաշվի առնելու այդ ընթացքում ընդունված նոր կանոնները: Սակայն, երբ արտադրողին Եվրոպական Միության իրավական ակտը խրախուսում է հանրային շահի համար որոշ ժամանակով դադարեցնել արտադրությունը և դրա դիմաց ստանալ փոխհատուցում, ապա այդ արտադրողը կարող է իրավաչափորեն ակնկալել, որ իր ստանձնած պարտավորության ավարտից հետո նրա նկատմամբ չեն կիրառվի սահմանափակումներ, որոնք անմիջականորեն բխում են հենց այն փաստից, որ նա օգտվել է այդ հնարավորությունից, որը նախատեսել էր Միության կանոնակարգը²³⁶:

²³⁶ Տե՛ս նույն գործը, պարագրաֆ 24:

Վիճարկվող կանոնակարգերը այնպիսի հետևանք էին առաջացնում, որ արտադրողներին կարող էին մերժել հղման քանակության տրամադրումը՝ հենց այն բանի համար, որ նրանք 1979-ին ստանձնել էին չարտադրելու պարտավորություն: Դատարանը նշեց, որ 1977 թվականի կանոնակարգում որևէ հստակ նշում չկար այն մասին, թե կաթի շուկայից դուրս գալու մասին պարտավորությունը երբ ավարտվի, կարող է հանգեցնել տվյալ գործունեությունը վերականգնելու արգելքի: Դրանով խախտվել էին այն արտադրողների իրավաչափ ակնկալիքները, որոնք համագործակցել էին այդ համակարգի հետ և հիմնավորված ակնկալել էին, որ դրա հետևանքները ժամանակավոր կլինեն²³⁷:

Միաժամանակ, համեմատական դատական պրակտիկայի ուսումնասիրության համատեքստում ոչ իրական հետադարձության նման լայն կիրառության պայմաններում որպես լեգիտիմ ակնկալիքների պաշտպանության հիմնական մեխանիզմ կարող ենք առանձնացնել անցումային միջոցների սահմանումը:

Որպես նշվածի գործնական օրինակ կարող ենք նշել **Sofrimport** գործը²³⁸, որով հայցվորը ցանկացել է ներմուծել խնձորներ Չիլիից: Համապատասխան կանոնակարգի համաձայն՝ նման ներմուծման համար անհրաժեշտ է եղել լիցենզիա: Հետագայում ընդունված նոր կանոնակարգով Եվրահանձնաժողովը պաշտպանիչ միջոցներ է ձեռնարկել և կասեցրել է Չիլիից խնձորի ներմուծման բոլոր լիցենզիաները: Գլխավոր կանոնակարգը՝ 2707/72-ը²³⁹, որը Հանձնաժողովին լիազորում էր ձեռնարկել պաշտպանիչ միջոցներ, իր 3-րդ հոդվածով հստակ սահ-

²³⁷ Տե՛ս նույն գործը, պարագրաֆ 26:

²³⁸ Տե՛ս Case C-152/88 Sofrimport Sarl v Commission [1990] ECR I-2477. Cf Case T-336/94 Efisol SA v Commission [1997] ECR II-1343:

²³⁹ Տե՛ս Council Regulation 2707/72/EEC of 19 December 1972 laying down the conditions for applying Protective measures for fruit and vegetables [1972] OJ L291/3:

մանում էր, որ նման միջոցներ կիրառելիս պետք է հաշվի առնել փոխադրող ապրանքների հատուկ կարգավիճակը, քանի որ դրանք կարող են առանձնահատուկ վնաս հասցնել առևտրականներին: Հայցվորի ապրանքները արդեն ճանապարհին էին, երբ ընդունվեց Չիլիից խնձորի ներմուծման լիցենզիաները կասեցնող կանոնակարգը, սակայն դրանց մուտքը Եվրամիություն մերժվեց: Դատարանը վճռեց, որ Հանձնաժողովի կողմից ճանապարհին եղած ապրանքների համար առանձին դրույթ չնախատեսելը, ինչպես պահանջում էր մայր կանոնակարգը, խախտել է հայցվորի իրավաչափ ակնկալիքները²⁴⁰:

Նմանատիպ մոտեցում նկատվում է նաև **CNTA** գործով²⁴¹: Գործը վերաբերել է փոխարժեքների տատանումները փոխհատուցելու նպատակով նախատեսված դրամական փոխհատուցման վճարներին (MCAs): Հայցվորը ընկերություն էր, որը արտահանման պայմանագրեր էր կնքել՝ ելնելով այն ենթադրությունից, որ այդ վճարները հասանելի կլինեն: Այդ պայմանագրերը կնքվելուց հետո, սակայն, մինչ դրանց կատարումը, Հանձնաժողովը ընդունել էր կանոնակարգ, որով այդ ոլորտում վերացվել էր MCAs-ը: Հայցվորը վնասներ էր կրել, քանի որ պայմանագրերը կնքել էր՝ հաշվի առնելով այդ փոխհատուցումների գոյությունը: Դատարանն արձանագրեց, որ թեև MCAs-ը չէր կարող ամբողջությամբ գերծ պահել արտահանողներին փոխարժեքի բոլոր տատանումներից, դրանք այնուամենայնիվ պաշտպանում էին նման ռիսկերից, ինչի հետևանքով նույնիսկ զգուշավոր արտահանողը կարող էր չձեռնարկել լրացուցիչ փոխհատուցման միջոցներ:

²⁴⁰ St'u Case C-110/97 Netherlands v Council [2001] ECR I-8763, պարագրաֆ 37:

²⁴¹ St'u Case T-18/99 Cordis Obst und Gemuse Groshandel GmbH v Commission [2001] ECR II-913:

Դատարանը ապա հայտարարեց²⁴². «Այդպիսի պայմաններում առևտրականը կարող էր իրավաչափորեն ակնկալել, որ գործարքների համար, որոնք նա անվերադարձ կատարելու պարտավորություն է ստանձնել՝ ստանալով արտահանման լիցենզիա և մուծելով ապահովագրություն, MCAs կվճարվի: Հետագայում այդ վճարները չեղարկելը նրան կդնեն անխուսափելի վնասի առաջ՝ նորից ենթարկելով նրան փոխարժեքային ռիսկերի»:

Այդպիսով, **CNTA** գործով ԵՄ դատարանը գտավ, որ ԵՄ-ն պարտավոր է լինելու հատուցել վնասները, եթե Հանձնաժողովը առանց որևէ գերակա հասարակական շահի վերացնում է դրամական փոխհատուցման վճարները (MCAs)՝ չսահմանելով անցումային միջոցներ, որոնք առևտրականներին թույլ կտային կա՛մ խուսափել վնասից իրենց արտահանման պայմանագրերի կատարման ընթացքում, կա՛մ փոխհատուցում ստանալ այդ վնասի համար²⁴³: Նույն մոտեցումն էր կիրառվել նաև **Sofrimport** գործով²⁴⁴, որտեղ ԵՄ դատարանը եզրահանգեց, որ Հանձնաժողովի կողմից պաշտպանական միջոցների ընդունումը՝ առանց որևէ գերակա հասարակական շահի, որոնք ազդում էին երրորդ երկրներից մրգեր և բանջարեղեն ներմուծող առևտրականների վրա՝ անտեսելով այն անձանց շահերը, որոնց ապրանքները արդեն գտնվում էին տարանցման փուլում, լեգիտիմ ակնկալիքների խախտում էր, որը, որպես ԵՄ իրավունքի լուրջ խախտում, բավարար էր վնասի հատուցման պահանջի համար:

²⁴² St'u Case 74/74 CNTA SA v Commission [1975] ECR 533, պարագրաֆ 42:

²⁴³ St'u Case C-152/88 Sofrimport Sarl v Commission [1990] ECR I-2477, Cases C-182 and 217/03 Belgium and Forum 187 ASBL v Commission [2006] ECR I-5479, պարագրաֆներ 147–149:

²⁴⁴ St'u Case C-152/88 Sofrimport Sarl v Commission [1990] ECR I-2477.

Հատկանշական է, որ ՀՀ իրավական համակարգում, օրինակ՝ «Լիցենզավորման մասին» օրենքում, բազմաթիվ են նորմերը, որոնք սահմանում են անցումային ժամանակահատվածի սահմանում ոչ իրական հետադարձություն ունեցող փոփոխությունների համար: Այսպես, օրենքի 14-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է, որ որակավորման կարգերի փոփոխման մասին իրավական ակտերն ուժի մեջ են մտնում դրանց պաշտոնական հրապարակումից վեց ամիս հետո, եթե այդ ակտով ավելի ուշ ժամկետ սահմանված չէ: Նմանապես, Օրենքի 48-րդ հոդվածի 3-4-րդ մասերը սահմանում են, որ նոր գործունեությունը լիցենզավորված կարող է ճանաչվել դրա մասին համապատասխան օրենքը հրապարակվելուց ոչ շուտ, քան վեց ամիս հետո, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ: Լիցենզիայի պայմանների ու պահանջների այնպիսի փոփոխությունը, որը սահմանափակում է լիցենզավորված անձի իրավունքները կամ նրա համար նախատեսում է նոր պարտականություններ, ուժի մեջ է մտնում համապատասխան փոփոխությունը հրապարակվելուց ոչ շուտ, քան վեց ամիս հետո:

Իհարկե, կարող են լինել դեպքեր, երբ առկա է գերակա հասարակական շահ, օրինակ՝ սպառողների առողջությունը պաշտպանությունը, որի դեպքում անցումային միջոցառումներ չպետք է ընդունվեն: Այս սկզբունքի օրինակ է **Dieckmann** գործը²⁴⁵: Հանձնաժողովը որոշում էր կայացրել, ըստ որի՝ Ղազախստանից ձկնարդյունաբերական ապրանքների ներկրումն այլևս թույլատրված չէ ԵՄ տարածք: Այս որոշումը կայացվել էր փորձագետների զեկույցի հիման վրա, որտեղ նշվում էր, որ երկրի ա-

²⁴⁵ St'u Case T-155/99 Dieckmann & Hansen GmbH v Commission [2001] ECR II-314, Case C-183/95 Affish BV v Rijksdienst voor de keuring van Vee en Vlees [1997] ECR I-4315, պարագրաֆ 57, Case 519/07 Commission v Koninklijke FrieslandCampina NV [2009] ECR I-8495, պարագրաֆ 5:

առողջապահական վերահսկողության ընդհանուր համակարգում կան համակարգային թերություններ: Փորձագետները, սակայն, կոնկրետ արտադրական վայրերի վերաբերյալ խնդիրներ չէին արձանագրել: Դիմողը կնքել էր պայմանագիր Ղազախստանից սև խավիարի ներմուծման վերաբերյալ: ԵՄ դատարանը վճռեց, որ այդ որոշման մեջ անցումային միջոցների բացակայությունը չի խախտել դիմողի լեգիտիմ ակնկալիքները, քանի որ առկա էր գերակա հասարակական շահ՝ սպառողների առողջության պաշտպանություն: Սա արդարացված էր նույնիսկ այն դեպքում, երբ Հանձնաժողովը չէր իրականացրել մանրամասն տեսչական ստուգումներ հենց այն հաստատություններում, որտեղ արտադրվում էր խավիարը: Դատարանն ընդունեց, որ ավելի մանրամասն տեղեկատվությունը կօգներ Հանձնաժողովին ավելի ճշգրիտ գնահատել խավիարի հետ կապված առողջապահական ռիսկերը: Այնուամենայնիվ, ԵՄ Դատարանը եզրակացրեց, որ առողջապահական վերահսկողության համակարգում առկա ընդհանուր թերությունները բավարար էին տվյալ որոշման ընդունումը հիմնավորելու համար²⁴⁶:

Ամփոփելով կարող ենք նշել, որ վարչական իրավունքի զարգացման արդի փուլում իրական հետադարձությունը, այսինքն՝ այն դեպքերը, երբ որևէ նորմ կիրառվում է արդեն ավարտված իրադարձությունների նկատմամբ, թույլատրվում է գերակա հանրային շահով պայմանավորված բացառիկ դեպքերում՝ լեգիտիմ ակնկալիքների առավելագույն պաշտպանության պայմանով: Միաժամանակ, վերը քննարկված համեմատական դատական պրակտիկայի ամփոփումը ցույց է տալիս, որ իրական հետադարձության իրավաչափ կիրառումը ճանաչվել է

²⁴⁶ St'u Case T-155/99 Dieckmann & Hansen GmbH v Commission [2001] ECR II-3143, պարագրաֆներ 80–81:

վարչական իրավունքի այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են հարկային, ֆինանսական և բնապահպանական իրավունքները: Ինչ վերաբերում է ոչ իրական հետադարձությանը, այսինքն՝ այն դեպքերին, երբ նորմի գործողությունը տարածվում է նախկինում ծագած և գործող իրավահարաբերությունների նկատմամբ, պետք է հաշվի առնել այն հանգամանքը, որ հանրային իշխանության մարմինները, հետապնդվող հանրային շահերի պաշտպանության անհրաժեշտությամբ պայմանավորված, պետք է հնարավորություն ունենան փոխելու իրենց քաղաքականությունը և հատկապես այն ոլորտներում, որոնցում հանրային իշխանության մարմիններն ունեն լայն հայեցողություն, անձինք չեն կարող լեգիտիմորեն ակնկալել, որ գոյություն ունեցող իրավիճակը և իրական նորմերը չեն փոխվի: Այս դեպքում լեգիտիմ ակնկալիքների պաշտպանության հիմնական միջոցը նոր քաղաքականության համար անցումային միջոցների նախատեսումն է այն անձանց համար, ովքեր կարող են հատկապես տուժել նոր կարգավորումների համատեքստում:

**ԳԼՈՒԽ 2. ԻՐԱՎԱԶԱՓ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԻՄԱՆ ՎՐԱ
ԱՌԱՋԱՑԱԾ ԼԵԳԻՏԻՄ ԱԿՆԿԱԼԻՔՆԵՐԻ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ**

**§1. Լեգիտիմ ակնկալիքների պաշտպանության
հիմնախնդիրները իրավաչափ վարչական ակտերը
վերացնելու դեպքում**

***1.1. Իրավաչափ բարենպաստ վարչական ակտերը
վերացնելու արգելքի սկզբունքը***

Անձինք հաճախ պլանավորում են կյանքը՝ հենվելով իրենց իրավունքներ տրամադրած բարենպաստ վարչական ակտերի վրա: Ուստի, նման վարչական ակտի վերացումը կարող է հանգեցնել իրավական անորոշության, հիմնավորված ակնկալիքների խաթարման և ֆինանսական կորուստների: Այդ իսկ պատճառով իրավաբանական գրականության մեջ հիմնավորվել է, որ հանրային իշխանության մարմինների լիազորությունները, որոնք կարող են օգտագործվել իրենց որոշումները վերացնելու համար, պետք է սահմանափակվեն²⁴⁷: Իրավաչափ բարենպաստ վարչական ակտերի վերացման դեպքում լեգիտիմ ակնկալիքների պաշտպանության հետազոտությունը հարկ ենք համարում սկսել իրավունքներ ստեղծող կամ ճանաչող որոշումները վերացնելու արգելքի ուսումնասիրությամբ: Այնուհետև անդրադարձ կկատարվի այն հարցին, թե այնուամենայնիվ ինչ հանգամանքներում կարող են վերացվել բարենպաստ վարչական ակտերը:

²⁴⁷ Տե՛ս **Schönberg, Søren J.**, նշված աշխատ., էջ 64:

Սկզբունքը մանրամասն քննարկելու համար հարկ է նախ անդրադառնալ բարենպաստ վարչական ակտերի դասակարգմանը: Իրավաբանական գրականության մեջ դրանք դասակարգվում են ըստ այն հանգամանքի, թե ճանաչում են արդյոք հասցեատիրոջ՝ գոյություն ունեցող իրավունք, թե սահմանում են իրավունք, որը հասցեատերն առանց այդ ակտի չէր ունենա: Վարչական ակտի առաջին տեսակը համապատասխանում է որոշում կայացնողի իրավական պարտականությանը և կոչվում է դեկլարատիվ, քանի որ սկզբունքորեն նոր իրավական իրավիճակ չի ստեղծում հասցեատիրոջ համար²⁴⁸: Բարենպաստ վարչական ակտի երկրորդ տեսակը կախված է որոշում կայացնողի հայեցողական լիազորություններից և անվանվում է սահմանող, քանի որ հանգեցնում է հասցեատիրոջ իրավական կարգավիճակի իրական փոփոխության²⁴⁹:

Համեմատական փորձն այս հարցի վերաբերյալ հետևյալն է: Ֆրանսիայի Պետական խորհուրդն առնվազն 1927 թվականից ի վեր հետևողականորեն տարբերակել է դեկլարատիվ որոշումները (*décisions déclaratifs*) և սահմանող որոշումները (*décisions attributives*)²⁵⁰: Որոշումը սահմանող է, եթե այն հիմնված է օրենքով սահմանված կամ ենթադրվող հայեցողական լիազորությունների վրա: Եվ հակառակը, իմպերատիվ իրավական դրույթների հիման վրա ընդունված որոշումը կրում է դեկլարատիվ բնույթ: Այդ տարբերությունը Ֆրանսիայի դատա-

²⁴⁸ Տե՛ս **C. Yannakopoulos**, *La notion de droits acquis en droit administratif français* (Paris, 1997), էջեր 48-79:

²⁴⁹ Տե՛ս **C. Yannakopoulos**, նշված աշխատ., էջ 56:

²⁵⁰ Տե՛ս *Prétot conclusions CE 25/4-90 Figuereo AJDA 1990*, էջ 641, **M. Nauwelaers and L. Fabius**, 'Chronique générale de jurisprudence administrative française', *AJDA* 1976, էջ 557, **M. Lefondre**, 'Le retrait des aides financières publiques aux entreprises privées' (1993) *Revue Administratif*, էջ 131, **Yannakopoulos**, նշված աշխատ., էջեր 137-138:

կան պրակտիկայում բազմիցս դարձել է քննարկման առարկա²⁵¹:

Անգլիական իրավունքի դիրքորոշումն ըստ երևույթին այն է, որ չնայած իշխանությունները սովորաբար չեն կարող վերացնել այն որոշումները, որոնք «ճանաչում են» իրավունքներ կամ «ազդում» են իրավունքների վրա, դրանք ունեն անքակտելի հայեցողական լիազորություններ՝ վերացնելու այն որոշումները, որոնք տրամադրում են լիցենզիաներ և այլ հայեցողական արտոնություններ: Այլ կերպ ասած՝ իրավաչափ դեկլարատիվ որոշումները չվերացվող են, մինչդեռ սահմանող որոշումները այդպիսին չեն²⁵²:

Դժվար չէ նկատել, որ ֆրանսիական և անգլիական դատական պրակտիկայում բարենպաստ վարչական ակտերի տեսակների տարանջատումը սահմանողի և դեկլարատիվ կամ ճանաչողականի պայմանավորված է վարչական մարմնի լիազորությունների բնույթով: Միաժամանակ, հստակ է, որ տարբերակումն այս իրավունքներում ունի ոչ միայն տեսական, այլ նաև կիրառական նշանակում: Անգլիական իրավունքում սահմանող վարչական ակտերը դուրս են վերացման արգելքի գործողության տիրույթից, իսկ ֆրանսիական իրավունքում նման դասակարգումն առավել մեծ նշանակություն է ձեռք բերում ոչ իրավաչափ վարչական ակտերի վերացման դեպքում²⁵³:

²⁵¹ St'u Labetoulle conclusions CE 15/10-76 Buissière Rec 428, **Yannakopoulos**, նշված աշխատ., էջեր 136-143:

²⁵² St'u **M. Akehurst**, 'Revocation of Administrative Decisions' (1982) PL 613, էջ 617, **G. Aldous and J. Alder**, Applications for Judicial Review: Law and Practice of the Crown Office, 2nd edn. (London, 1993), էջեր 43-47, **M. A. Fazal**, 'Reliability of Official Acts and Advice' (1972) PL 43, էջ 46:

²⁵³ St'u CE 15/10-76 Buissière Rec 428, CE 5/5-50 Clemencelle Rec 265, CE 14/4 61 Cazes Rec 232, CE 15/10-69 Forasetto Rec 437, CE 29/5-96 Secrétaire d'Etat à la Mer Petites Affiches 1996 no 127, CE 2/10-81 Vipal Rec 347, CE 5/12-94 Pétillon

Այլ է մոտեցումը գերմանական, հոլանդական և սկանդինավյան իրավունքներում, որոնք ավելի շատ ուշադրություն են դարձնում վարչական ակտի հետևանքներին, քան լիազորությունների բնույթին²⁵⁴։ Այսինքն՝ այստեղ ելակետ այն է՝ արդյոք վարչական ակտը սահմանում, ճանաչում է իրավունք կամ ազդում է այդ իրավունքների վրա՝ անկախ նրանից՝ վարչական մարմնի հայեցողական, թե իմպերատիվ լիազորության իրականացման արդյունքում է ընդունվել։

Բարենպաստ վարչական ակտերը վերացնելու արգելքի սկզբունքը հետևողականորեն հիմնավորվել է ԵՄ Արդարադատության դատարանի (այսուհետ՝ ԵՄ դատարան) դատական պրակտիկայում։ Հետաքրքրական է, որ այս դատարանի՝ ավելի վաղ շրջանի դատական պրակտիկայում կարելի է գտնել սահմանող և դեկլարատիվ վարչական ակտերի վերաբերյալ վերը քննարկված տերմինաբանական տարբերությունների դրսևորումները։

Սկզբունքն առաջին անգամ քննարկվել է **Algera** գործով²⁵⁵։ Դիմողը ժամկետային աշխատող էր ԵԽ ընդհանուր վեհաժողովում, և նրան նշանակել էին մշտական պաշտոնի այն վարչական խորհրդի որոշմամբ, որը պատասխանատու էր անձնակազմի հարցերի համար։ Յոթ ամիս անց վեհաժողովը դիմողին առնչվող արդյունաբերական վեճի պատճառով փոխեց իր որո-

Rec 774, CE 16/10-96 Vuillecard no 116.867, CE 16/3-90 Consorts Machet Rec 69, CE 31/1-36 Bouzy Rec 142, CE 27/4-45 Broussier Rec 82, CE 10/3-67 Société Samat et Cie Rec 112, CE 12/1-77 Dalbos Rec 19, CE 30/3-79 Université de Bordeaux Rec 141, CE 8/2-85 Marana Rec 28, CE 25/7-86 Société Grandes Distilleries les fils d'Auguste Perreux RFDA 1987, 454, CE 8/3-93 Morange Rec 594, Conclusions CE 15/10-76 Buisserie Rec 428: Տե՛ս նաև՝ **D. Labetoulle**, Principe de légalité et principe de sécurité', in Mélanges Guy Braibant (Paris, 1996), 403, էջեր 409-410:

²⁵⁴ Տե՛ս **Schönberg, Sören J.**, նշված աշխատ., էջ 96:

²⁵⁵ Տե՛ս Cases 7/56 and 3-7/57 *Algera v Common Assembly* [1957] ECR 39:

շումը: Վեհաժողովը փորձեց նրան աշխատանքից ազատել, ինչը պահանջում էր նշանակման որոշման վերացում՝ *ex nunc*: Եվրոպական դատարանը սկսեց իր վերլուծությունը՝ նշելով «**շրջապատույտ**», որից պետք է խուսափել:

Այս մոտեցումն իրենից ներկայացնում էր հետևյալը. հաստատել, որ կա շնորհված/տրամադրված իրավունք (*vested right*), և դրանից բխեցնել, որ այն չի կարող վերացվել: Դատարանը նկատեց, որ այն **տրամաբանական շրջապատույտ է**, քանի որ եթե վարչական ակտով շնորհված իրավունքը կարող է միակողմանիորեն վերացվել, ապա այն բնույթով չի կարող համարվել շնորհված իրավունք: Դատարանը վճռեց, որ եթե նշանակման որոշումները եղել են իրավաչափ, ապա դրանք անհատական վարչական ակտեր են, որոնք ծնում են անհատական իրավունքներ: Այնուհետև դատարանը հարց բարձրացրեց՝ արդյոք նման ակտերը կարող են վերացվել:

ԵՄ դատարանը հղում կատարեց «իրավունքներ սահմանող որոշումների անհերքելիության» (*principle of intangibilité des décisions créatrices de droits*) ֆրանսիական սկզբունքին և իրավական որոշակիության և օրինական ակնկալիքների գերմանական երկակի սկզբունքներին (*Rechtssicherheitsprinzip* և *Vertrauensschutz-prinzip*)²⁵⁶ և արձանագրեց²⁵⁷. «Այս իրավական խնդրի համեմատական ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ եթե վեց անդամ պետություններում վարչական ակտը՝ որպես **իրավաչափ** միջոց, անձի համար անհատական իրավունքներ է սահմանում, սկզբունքորեն չի կարող վերացվել: Այդ դեպքում, քանի որ անհատական իրավունքն արդեն ձեռք է բերվել (*vested*

²⁵⁶ St'u Cases 7/56 and 3-7/57 *Algera v Common Assembly* [1957] ECR 56:

²⁵⁷ St'u նույն գործը, պարագրաֆ 55: St'u նաև՝ Cases 42 and 49/59 *SNUPAT v High Authority* [1961] ECR 53, 78, Case 111/63 *Lemmerz- Werke v High Authority* [1965] ECR 677:

right), անհրաժեշտ է պահպանել ստեղծված իրավիճակի կայունության նկատմամբ վստահությունը, ինչը գերակայություն ունի վարչական մարմնի որոշումը վերացնելու շահերի նկատմամբ: Այս դիտարկումը հատկապես ճիշտ է պաշտոնյայի նշանակման դեպքում»:

Հետաքրքրական է, որ «ձեռք բերված իրավունքներ» ձևակերպումն օգտագործվում է նաև Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի պատշաճ վարչարարության վերաբերյալ հանձնարարականում, որի 6-րդ հոդվածը մասնավորապես սահմանում է. «Նրանք չպետք է միջամտեն ձեռք բերված իրավունքներին և վերջնական իրավական իրավիճակներին, բացառությամբ այն դեպքերի, երբ դա հրամայականորեն անհրաժեշտ է հանրային շահի տեսանկյունից»²⁵⁸:

Այս առումով ԵՄ դատարանները շարունակել են տարբեր լեզվական ձևակերպումներ օգտագործել՝ արտահայտելու իրավաչափ բարենպաստ վարչական ակտերի վերացումը բացառելու անհրաժեշտությունը: Որոշ դեպքերում կիրառվել է այնպիսի ձևակերպում, որ **իրավական ակտը, որը տրամադրում է իրավունքներ կամ նմանօրինակ արտոնություններ, չի կարող վերացվել**: Այս ձևակերպումն օգտագործվել է, օրինակ, **Verli-Wallace** գործում²⁵⁹: ԵՄ դատարանը հանգել է այն եզրակացության, որ դիմողը, ում թույլատրվել էր մասնակցելու թափուր պաշտոնը համալրելու համար իրականացվող քննությանը, ունեցել է մասնակցելու իրավունք, որը չէր կարող վերացվել: Այն անհատական իրավական ակտի՝ ուժի մեջ մտնելու պահից (ex tunc)

²⁵⁸ Recommendation CM/Rec(2007)7 of the Committee of Ministers to member states on good administration.

²⁵⁹ St'u Case 159/82 Verli-Wallace v Commission [1983] ECR 2711:

վերացումը, որը ստեղծում էր իրավունքներ կամ նման արտոնություններ, հակասում է ԵՄ իրավունքի սկզբունքներին²⁶⁰:

Այս նույն ձևակերպումն է, որը առկա է **Lagardère** և **Canal** գործերում²⁶¹: Դիմողները վիճարկել են հանձնաժողովի որոշումը, որով վերացվել էր նախորդ որոշումը, ըստ որի՝ համակենտրոնացումը համարվել էր շուկայում թույլատրելի: ԵՄ առաջին ատյանի դատարանը (CFI) նշել է, որ նախորդ որոշումն ամրագրել է դիմողների սուբյեկտիվ իրավունքներ, հետևաբար գործը գտնվում է այն սկզբունքի շրջանակում, ըստ որի՝ իրավական ակտի ex tunc վերացումը, որը **տրամադրում է** անհատական իրավունքներ կամ նման արտոնություններ, հակասում է ԵՄ իրավունքի ընդհանուր սկզբունքներին²⁶²:

Սահմանող ու դեկլարատիվ բարենպաստ վարչական ակտերի տարբերակման այս հայեցակարգային հարցի վերաբերյալ ԵՄ դատարանը հստակություն մտցրեց **de Compte** գործով²⁶³: Դիմողը, որը աշխատում էր Եվրոպական խորհրդարանում, տառապում էր մտավոր հիվանդությամբ: Բժշկական հանձնաժողովը հաստատեց, որ այն աշխատանքային վնասվածք է՝ համաձայն անձնակազմի համապատասխան կանոնների: Այս զեկույցի հիման վրա նշանակման հանձնաժողովը 1991 թվականի հունվարին որոշեց, որ դիմողին պետք է վճարվի փոխհատուցում: Երեք ամիս անց՝ 1991 թվականի ապրիլին, նշանակող մարմինը վերացրեց այս որոշումը՝ հիմնվելով աշխատանքային վնասվածք հասկացության սխալ մեկնաբանության վրա: Այն

²⁶⁰ Տե՛ս նաև՝ Case T-123/89 Chomel v Commission [1990] ECR II-131, պարագրաֆ 34:

²⁶¹ Տե՛ս Case T-251/00 Lagardere SCA and Canal+ SA v Commission [2002] ECR II-4825:

²⁶² Տե՛ս նույն գործը, պարագրաֆներ 139, 142:

²⁶³ Տե՛ս Case C-90/95 P Henri de Compte v European Parliament [1997] ECR I-1999:

անդեց, որ իրավասու է ուժի մեջ մտնելու պահից վերացնել նախորդ որոշումը: ԵՄ դատարանը վճռեց, որ «**բարենպաստ որոշման՝** ուժի մեջ մտնելու պահից վերացումը սովորաբար ենթակա է շատ խիստ պահանջների»: Չկար որևէ ապացույց, որ **դը Կոնտը** խաբեությամբ ազդել էր նախորդ որոշման վրա: Այսպիսով՝ **իրավաչափ բարենպաստ վարչական որոշման հիման վրա առաջացած օրինական սպասումները չեն կարող հետագայում խախտվել**, և չկա հանրային շահ, որը գերակայություն ունի շահառուի այն շահի նկատմամբ, որ իր ձեռք բերած կարգավիճակը կայուն է լինելու²⁶⁴:

Այսպիսով, այս գործով ԵՄ դատարանն այլևս չի օգտագործել «իրավունքների շնորհման» տերմինաբանությունը: Փոխարենը այն միանշանակ նշել է, որ Ալժերա գործով սահմանված սկզբունքը կիրառելի է «բարենպաստ որոշման» վերացման դեպքում: Այսպիսով, ներկայումս հաստատված է, որ Եվրոպական դատարանը կիրառում է գերմանական և սկանդինավյան, այլ ոչ թե ֆրանսիական մոտեցում: Իրավաչափ վարչական ակտերը, որոնք բարենպաստ են դրանց հասցեատիրոջ համար, չեն կարող վերացվել օրենքով համապատասխան դրույթների բացակայության դեպքում: Կարևոր չէ՝ ակտով ճանաչվել է անձի գոյություն ունեցող իրավունքը, թե նոր իրավունք է տրամադրվել²⁶⁵:

Հատկանշական է նաև, որ ԵՄ դատարանները իրավունքներ հասկացության մեջ ընդգրկում են նաև «այլ նմանօրինակ արտոնությունները», ինչը վկայում է այն մասին, որ դատարանները չեն ցանկանում սահմանափակել իրավական պաշտպանության կիրառելիությունը բացառապես խիստ իմաստով իրա-

²⁶⁴ Տե՛ս նույն գործը, պարագրաֆներ 35–40:

²⁶⁵ Տե՛ս AG Roemer [1961] ECR 129-130:

վունքներով: Բացի այդ, պարզ է, որ ԵՄ դատարանները բավական լայն են ընկալում, թե ինչն է համարվում բարենպաստ որոշում կամ իրավունքի նման արտոնություն: Օրինակ, որոշումը, որը նվազեցնում է քվտայի չափը նախորդ որոշման համեմատ, գտնվում է այս սկզբունքի գործողության շրջանակում, քանի որ նախորդ որոշումը տվել էր արտոնություն: Այսպես, **Alpha Steel** գործով ԵՄ դատարանը որոշեց, որ պողպատ արտադրող ընկերության համար եռամսյակային արտադրական քվտա սահմանելու վերաբերյալ Հանձնաժողովի որոշումը չի կարող վերացվել մի քանի շաբաթ անց և փոխարինվել ավելի փոքր քվտայով: Քանի որ քվտաների սկզբնական չափը մյուսի հետ համեմատած «ավելի բարենպաստ է»: Այս դեպքը նաև ընդգծում է, որ որոշման բնույթը կախված է դրա դրական և բացասական հետևանքների հանրագումարից²⁶⁶:

Ընդհանուր առմամբ ընդունված է նաև, որ որոշման բարենպաստ բնույթը պետք է գնահատվի դրա հասցեատիրոջ տեսանկյունից²⁶⁷: Այսպիսով, հասցեատիրոջ համար միջամտող, բայց երրորդ անձի համար բարենպաստ որոշումը չի «շոշափում» կամ «իրավունքներ չի ստեղծում», և որոշում կայացնողը կարող է իր հայեցողությամբ վերանայել վարչական ակտը հոգուտ դիմողի: Որպես օրինակ կարելի է բերել ֆրանսիական **Feng** գործը: Ի սկզբանե պարոն Ֆենգին մերժվեց դեղատուն բացելու թույլտվությունը, սակայն որոշման մեջ ասվում էր, որ նա կարող է կրկին դիմել, և որ նախընտրելի կլինի գտնել առևտրային տարածք գոյություն ունեցող դեղատնից ավելի քան 250 մետր հեռավորության վրա: Այս որոշումը գոյություն ունեցող դեղատների

²⁶⁶ St'u Case 14/81 Alpha Steel v Commission [1982] ECR 749:

²⁶⁷ St'u **Yannakopoulos**, նշված աշխատ., էջեր 75-76, 100-103, **Girardot and F. Raynaud**, 'Chronique générale de jurisprudence administrative française', AJDA 1997, էջ 943:

սեփականատերերի համար իրավունքներ չէր ստեղծում, և, հետևաբար, դրանից ընդամենը 137 մետր հեռավորության վրա դեղատուն բացելու համար հետագայում տրված լիցենզիան օրինական էր²⁶⁸: Նմանատիպ փաստարկ կիրառելով՝ ֆրանսիական դատարանները հանգել են այն եզրակացության, որ հարևանները և տնտեսական մրցակիցները չեն կարող իրավունքներ ձեռք բերել, համապատասխանաբար, շինարարության թույլտվության մերժման հիման վրա²⁶⁹:

ԵՄ իրավունքում նմանատիպ սկզբունք կարելի է գտնել **Kraft** գործով, որտեղ ԵՄ առաջին ատյանի դատարանը մրցակցային օրենսդրությունը խախտելու համար Հանձնաժողովի սահմանած տուգանքի վերաբերյալ հայտարարել է, որ երբ «որոշումը... պարզապես բեռ կամ տույժեր է դնում շահագրգիռ անձի վրա, Հանձնաժողովը կարող է վերացնել որոշումը՝ ղեկավարվելով լեգիտիմ ակնկալիքներ և ամրագրված իրավունքներ սկզբունքներով»²⁷⁰: Այլ կերպ ասած՝ չնայած տուգանքն անուղղակիորեն բարենպաստ էր Քրաֆթի մրցակիցների համար, այն միջամտող էր «շահագրգիռ» անձի համար:

Ինչ վերաբերում է ներպետական կարգավորումներին, ապա Օրենքի համաձայն՝ բարենպաստ է այն վարչական ակտը, որի միջոցով վարչական մարմիններն անձանց տրամադրում են իրավունքներ կամ նրանց համար ստեղծում են այդ անձանց իրավական կամ փաստացի դրությունը բարելավող ցանկացած այլ պայման: Նորմի տառացի մեկնաբանությունից կարող է թվալ, որ օրենսդիրը բարենպաստ վարչական ակտ հասկացու-

²⁶⁸ St'u CE 11/1-84 Feng no 34.617: St'u նաև՝ CE 27/6-47 Société Duchet Rec 283, CE 8/11-91 Coquide Rec 690:

²⁶⁹ St'u CE 28/5-86 Conseil régional Rhône-Alpes de l'Ordre des architectes Rec 385:

²⁷⁰ Case T-227/95 Kraft v Commission [1997] ECR II-1185, պարագրաֆ 91.

թյան ներքո նկատի է ունեցել միայն սահմանող վարչական ակտերը, քանի որ օգտագործել է «տրամադրում է իրավունք» ձևակերպումը: Սակայն Օրենքում վարչական ակտ հասկացության բնորոշմամբ որպես դրա հատկանիշ նախատեսվում են անձանց համար իրավունքներ ոչ միայն սահմանելը, այլ նաև ճանաչելը: Այսպես, Օրենքի 53-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական ակտն արտաքին ներգործություն ունեցող այն որոշումը, կարգադրությունը, հրամանը կամ այլ անհատական իրավական ակտն է, որը վարչական մարմինն ընդունել է հանրային իրավունքի բնագավառում կոնկրետ գործի կարգավորման նպատակով և ուղղված է անձանց համար **իրավունքներ** և պարտականություններ **սահմանելուն**, փոփոխելուն, վերացնելուն կամ **ճանաչելուն**:

Այսպիսով, Օրենքի իմաստով բարենպաստ վարչական ակտեր պետք է դիտարկել թե՛ սահմանող և թե՛ ճանաչող կամ դեկլարատիվ վարչական ակտերը: Ընդ որում՝ ՀՀ իրավական համակարգում ևս նշանակությունը տրվում է ոչ թե վարչական մարմնի լիազորությունների բնույթին, այլ այդ վարչական ակտերի՝ հասցեատերերի համար ունեցած հետևանքներին: Այսպես, անդրադառնալով վարչական ակտի ընդհանուր բնորոշմանը՝ Վճռաբեկ դատարանը հատկապես կարևորել է վարչական ակտի՝ վարչական մարմնի հետ կազմակերպական, աշխատանքային, ներքին ենթակայական կամ որևէ այլ ուղղակի կապի մեջ չգտնվող համապատասխան **ֆիզիկական կամ իրավաբանական անձի համար ուղղակի իրավական հետևանքներ առաջացնելը**՝ նշելով, որ դրանով վարչական մարմինը սահմանում, փոփոխում, վերացնում կամ ճանաչում է իրավունքներ և պարտականություններ այդ ֆիզիկական կամ իրավաբանական անձանց համար:

Վճռաբեկ դատարանը նաև կարևորել է, որ վարչական վարույթը եզրափակող իրավական ակտի բնորոշումն օրենսդիրը պայմանավորել է վարչական ակտի միջոցով անձանց իրավական կամ փաստացի դրությունը բարելավող կամ վատթարացնող հետևանքի առաջացմամբ: Այլ կերպ ասած՝ եթե վարչական վարույթը եզրափակվել է այնպիսի վարչական ակտի ընդունմամբ, որի միջոցով ցանկացած եղանակով բարելավել կամ վատթարացել է անձանց իրավական կամ փաստացի դրությունը, ապա իրավական համակարգում այդ ակտը չի կարող բնորոշվել այլ կերպ, քան համապատասխանաբար որպես բարենպաստ կամ միջամտող վարչական ակտ²⁷¹:

Ինչ վերաբերում է ԵՄ իրավունքում հետևողականորեն կիրառվող բարենպաստ վարչական ակտերը վերացնելու արգելքին, ապա ո՛չ Օրենքում և ո՛չ էլ ներպետական դատական պրակտիկայում այն ուղղակի ամրագրում չունի: Այսպես, Օրենքի 3-րդ մասը սահմանում է, որ **բարենպաստ իրավաչափ վարչական ակտը կարող է ուժը կորցնել**, եթե՝ ա) օրենքի փոփոխության պատճառով վերանում է տվյալ վարչական ակտի անհրաժեշտությունը, կամ դադարում է այդ ակտի գործողությունը. բ) ուժը կորցրած ճանաչելը թույլատրվում է օրենքով կամ պայմանավորված է իրավաչափ վարչական ակտում այդպիսի վերապահմամբ. գ) վարչական ակտի հետ կապված է օրենքով նախատեսված որևէ պարտականություն, որը պետք է կատարել այդ ակտի հասցեատերը, սակայն չի կատարել կամ պատշաճ չի կատարել. դ) ակտի ընդունումից հետո՝ փաստական հանգամանքների փոփոխության հետևանքով, վարչական մարմինն իրավունք կունենար չընդունելու տվյալ վարչական ակտը, և եթե

²⁷¹ Տե՛ս Վճռաբեկ դատարանի թիվ ՎԴ/11082/05/20 վարչական գործով որոշումը:

վարչական ակտի ուժը չկորցնելու դեպքում կարող է խախտվել գերակայող հանրային շահը. ե) նորմատիվ իրավական ակտի փոփոխության հետևանքով վարչական մարմինն իրավունք կունենար չընդունելու տվյալ վարչական ակտը, քանի դեռ այդ վարչական ակտի հասցեատերը չի օգտվել վարչական ակտով տրամադրված օգուտներից, կամ նրա նկատմամբ դեռևս չեն կատարվել այն գործողությունները, որոնք վարչական ակտով երաշխավորված են եղել, և եթե վարչական ակտն ուժը չկորցնելու դեպքում կարող է խախտվել գերակայող հանրային շահը. գ) անհրաժեշտ է վերացնել այլ անձանց կյանքի, առողջության կամ սեփականության, ինչպես նաև պետության անվտանգության կամ առանձնապես կարևոր հանրային շահերի պաշտպանության համար ծանր հետևանքները կամ խուսափել դրանց առաջացումից:

Օրենքի մեջբերված դրույթից հետևում է, որ օրենսդիրն ըստ էության, մի կողմից, վարչական մարմնի համար նախատեսել է իրավաչափ բարենպաստ վարչական ակտը ուժը կորցրած ճանաչելու իրավական հնարավորություն (հայեցողություն), սակայն, մյուս կողմից, սպառիչ թվարկել է այն բացառությունները (դեպքերը), երբ այն թույլատրելի է: Այս մոտեցումը համահունչ է իրավաչափ բարենպաստ վարչական ակտերը վերացնելու արգելքին այն իմաստով, որ օրենսդիրը այդ ակտերի վերացումը սահմանել է որպես բացառություն:

Բոլոր դեպքերում գտնում ենք, որ ներպետական վարչական իրավունքում պետք է հստակորեն ամրագրվի իրավաչափ բարենպաստ վարչական ակտերի վերացման արգելքի սկզբունքը: Ըստ այդմ, թե՛ նորմատիվ և թե՛ իրավակիրառ մակարդակում ելակետը պետք է լինի այն, որ, գոյություն ունեցող իրավիճակի կայունության նկատմամբ վստահության պաշտպանությամբ

պայմանավորված, վարչական մարմինները չպետք է կարողանան վերացնել իրավունքներ ճանաչող կամ տրամադրող վարչական ակտերը:

1.2. Իրավաչափ բարենպաստ վարչական ակտերն ուժը կորցրած ճանաչելը

Բարենպաստ վարչական ակտն ուժը կորցրած ճանաչելու թերևս առավել հաճախ կիրառվող հիմքը սահմանված է Օրենքի 66-րդ հոդվածի 3-րդ մասի «բ» կետում, ըստ որի՝ բարենպաստ իրավաչափ վարչական ակտը կարող է ուժը կորցնել, եթե ուժը կորցրած ճանաչելը թույլատրվում է օրենքով: Ներպետական օրենսդրության վերլուծությունը ցույց է տալիս, որ օրենքով նախատեսված այդպիսի դեպքերը հիմնականում վերաբերում են այն իրավիճակներին, երբ բարենպաստ վարչական ակտով անձին որևէ իրավունք տրամադրվել է որոշակի պայմանների բավարարելու արդյունքում, սակայն անձը դադարել է համապատասխանել դրանց: Օրինակ, «Լիցենզավորման մասին» օրենքի 37-րդ հոդվածով սահմանված են լիցենզիայի գործողությունը դադարեցնելու հիմքերը:

Որոշակի հետաքրքրություն են ներկայացնում բարենպաստ վարչական ակտն ուժը կորցրած ճանաչելու վերաբերյալ Օրենքի 66-րդ հոդվածի 2-րդ մասի «բ» և «գ» կետերով նախատեսված հիմքերը, որոնք են՝ ուժը կորցրած ճանաչելը պայմանավորված է իրավաչափ վարչական ակտում այդպիսի վերապահմամբ, կամ վարչական ակտի հետ կապված է օրենքով նախատեսված որևէ պարտականություն, որը պետք է կատարեր այդ ակտի հասցեատերը: Հատկանշական է, որ ԵՄ վարչական իրավունքում այդ վարչական ակտերը համարվում են պայմանով, որոնց նկատմամբ վերացնելու արգելքի սկզբունքը տրամաբանորեն

կիրառելի չէ: Այսպես, **Zuckerfabrik Franken** գործով ԵՄ դատարանը վճռել է, որ եվրոպական շաքարի ավելցուկի վերամշակման համար հավելավճարը կարող է բռնագանձվել (վերացվել *ex tunc*), երբ պարզվում է, որ երրորդ կողմը, որը դիմումատուից շաքար է գնել, այն չի օգտագործել կենդանիների սննդի համար, ինչպես պահանջում է դրամաշնորհի որոշումը²⁷²: **CNTA** գործով ԵՄ դատարանը վճռել է, որ արտահանման լիցենզիայի տրամադրումը, սահմանելով ԵՄ կանոնների համաձայն դրամական հատուցման չափը, չի ստեղծել «ամրագրված իրավունքներ», քանի դեռ արտահանումը իրականում չի իրականացվել: Այսպիսով, մինչ այդ պահը որոշումը կարող էր վերացվել²⁷³: **Société Afer** գործում ամենամյա տոնավաճառի թույլտվություն է տրվել բանուկ մայրուղու մոտ՝ հստակ պայմանով, որ դիմողը կապահովի անխոչընդոտ մուտք ավտոկայանատեղիի տարածք: Եթե այս մուտքը չի ստեղծվել, թույլտվությունը կարող է վերացվել²⁷⁴:

Անգլիական վարչական իրավունքում, օրինակ, նման ակտը կոչվում է «նախնական», այլ ոչ թե վերջնական: Օրինակ, **Pearce Homes** գործում տեղական իշխանությունների կողմից շինարարության թույլտվությունը տրվել է՝ պայմանով, որ կառուցապատողը համաձայնել է սահմանափակել շենքի օգտագործումը 60 տարեկանից բարձր անձանց կողմից: Քանի դեռ կառուցապատողը համաձայնություն չի տվել, թույլտվությունը կա-

²⁷² Տե՛ս Cases T-46/98 and T-151/98 CEMR v Commission, 3/2-2000, պարագրաֆներ 68-69:

²⁷³ Տե՛ս Case 74/74 CNTA v Commission [1975] ECR 533:

²⁷⁴ Տե՛ս Case 121/83 Zuckerfabrik Franken v Hauptzollamt Würzburg [1984] ECR 2039: Տե՛ս նաև՝ Cases 124/83 Direktoratet for Markedsordningerne v Nicolas Corman [1985] ECR 3777, 316/86 Hauptzollamt Hamburg-Jonas v Krücken [1988] ECR 2213, T-451/93 San Marco Impex Italiana v Commission [1994] ECR II-1061, T-73/95 Oliveira SA v Commission [1997] ECR II-381, T-331/94 IPK-München v Commission [1997] ECR II-1665, T-194/97 and 83/98 Branco v Commission, 20/1-2000:

որո է վերացվել առանց օրենսդրության համաձայն փոխհատուցում վճարելու²⁷⁵:

Ֆրանսիական իրավունքում ևս նույն մոտեցումն է, թեև այլ եզրույթային ձևակերպմամբ: Պայմանով որոշման վերացումը համարվում է «հետաձգված»: Դեռևս **Pabion** հայտնի գործով վարչական մարմինը 1945 թվականի հունվարին որոշում կայացրեց վերականգնել դիմումատուին հանրային ծառայության պաշտոնում, որը նա զբաղեցնում էր մինչև Երկրորդ համաշխարհային պատերազմը: Սակայն որոշումը կայացվել է «այն պայմանով, որ պարոն Փաբիոնը հրաժարականի դիմում ներկայացնի 1945 թվականի փետրվարի 1-ից»: Եթե դիմողը սա չի անում, որոշումը կարող է վերացվել մի քանի ամիս անց²⁷⁶:

Հատկանշական է, որ Սահմանադրական դատարանը, քննարկելով Օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի վիճարկվող «գ» կետի սահմանադրականության հարցը, արձանագրել է, որ այս դեպքը վերաբերում է պայմանով վարչական ակտերին. վարչական ակտով նախատեսված իրավունքներից կամ անձի իրավական կամ փաստացի դրությունը բարելավող ցանկացած այլ պայմանից օգտվելու իրավական նախադրյալը օրենքով նախատեսված և վարչական ակտով տվյալ անձի վրա դրված որևէ պարտականություն կատարելն է:

Որոշակի հետաքրքրություն են ներկայացնում այն դեպքերը, երբ սկզբնական որոշումը եղել է պայմանով, և տվյալ պահին պայմանները ի սկզբանե կատարվել են, սակայն հետագայում խախտվել են: ԵՄ դատարանը նման իրավիճակներում որոշումը *ex post facto* համարում է «ոչ իրավաչափ», ինչի արդ-

²⁷⁵ St'u R v West Oxfordshire DC, ex p Pearce Homes Ltd [1986] JPL 223, R v London Borough of Lambeth, ex p Stockwell Law Centre, 22/5-98:

²⁷⁶ St'u CE 1/6-56 Pabion Rec 218:

յունքում այն կարող է *ex nunc* վերացվել: Հիմնական գործը **Herpels** է: Պարոն Հերպելսը, ով համայնքային ծառայող էր, 1961 թվականից ստացել է նպաստ, քանի որ նա ապրում էր Բրյուսելում և աշխատում էր Լյուքսեմբուրգում: Երբ 1968 թվականին նրա աշխատավայրը տեղափոխվեց Բրյուսել, վճարումները շարունակվեցին մինչև 1976 թվական, երբ սխալը հայտնաբերվեց: Պարոն Հերպելսը պնդում էր, որ վճարում ստանալու իրավունք ունի, սակայն ԵՄ դատարանը վկայակոչեց իր նախադեպային պրակտիկան, որը վերաբերում էր ոչ իրավաչափ որոշումների վերացմանը, և հայտարարեց, որ «ապագայի համար նման որոշման վերացումը միշտ էլ հնարավոր է»²⁷⁷:

Կան նաև դեպքեր, երբ պարզ է, որ որոշումը ենթակա է եղել որոշակի պայմանների, որոնք պետք է իրականացվեին, սակայն այս պայմանների իրականացման հարցը կարող է հստակ որոշվել ավելի ուշ ժամկետում: Եթե ավելի ուշ պարզվի, որ պայմանները չեն կատարվել, ապա դրանց կիրառման արդյունքում լեգիտիմ ակնկալիքների խախտում տեղի չի ունենա: Այս մոտեցման օրինակ է **Interhotel-Sociedade** գործը²⁷⁸: Դիմողը ստացել էր դրամաշնորհ Եվրոպական Սոցիալական Հիմնադրամից (ESF) մասնագիտական վերապատրաստման համար: ESF ծրագրի համաձայն՝ Հանձնաժողովը դիմումն ընդունելու դեպքում նախնական վճարում էր կատարում, իսկ մնացած գումարը վճարվում էր գործը ավարտելուց հետո՝ ըստ ազգային իշխանությունների և որոշ դեպքերում նաև Հանձնաժողովի հաստատումով առ այն, որ առաջադրանքը կատարվել է ֆինանսավորման պայմաններին համապատասխան: Հանձնաժողովը

²⁷⁷ Case 54/77 *Herpels v Commission* [1978] ECR.

²⁷⁸ *Sté'u Case T-81/95 Interhotel-Sociedade Internacional de Hoteis SARL v Commission* [1997] ECR II-1265:

հրաժարվել էր վճարել ամբողջ գումարը՝ պատճառաբանելով, որ որոշ ծախսեր չէին նշվել սկզբնական դիմումում, իսկ մյուսները լիարժեք փաստաթղթավորված չեն եղել: ԵՄ առաջին ատյանի դատարանը (CFI) որոշեց, որ հանձնաժողովը կարող է նվազեցնել վերջնական վճարումը երկու հիմքով էլ՝ առանց խախտելու լեգտիմ ակնկալիքների սկզբունքը: ESF կանոնակարգերը նախատեսում են ֆինանսական օգնության վերադարձի հնարավորությունը, եթե ֆինանսավորման պայմանները չեն կատարվել, և տրամաբանորեն՝ դիմողը չունի ամբողջ վճարումը ստանալու իրավունք, եթե պայմանները չէին կատարվել²⁷⁹:

Այնուամենայնիվ, **Interhotel-Sociedade** գործից միանշանակ պարզ է, որ դիմողը պետք է ունենա հնարավորություն՝ իմանալու, թե ինչ պայմաններ են կցված տրամադրված ֆինանսավորմանը: Այսպիսով, ԵՄ առաջին ատյանի դատարանը (CFI) քննեց նաև վճարման նվազեցման օրինականությունը՝ հիմնավորելով, որ որոշ ծախսեր հաստատման որոշմամբ չեն թույլատրվել: Դատարանը այս հարցում կողմնորոշվեց դիմողի օգտին: Ուսումնասիրվեց, որ դիմողին տրված հաստատման որոշումը նշել է միայն տրամադրված գումարի ընդհանուր չափը և հաստատված անձանց թիվը: Առաջարկված ծախսերը վճարվելու վերաբերյալ հանձնաժողովի գնահատումը չի հաղորդվել դիմողին մինչև նախագծի ավարտը: Այս հանգամանքներում, չնայած կանոնակարգերը չէին պարտավորեցնում նման մանրամասներ հաղորդել դիմողին, դատարանը գտավ, որ նման հիմ-

²⁷⁹ Տե՛ս նաև՝ Case T-126/97 Sonasa-Sociedade de Seguranca Ld v Commission [1999] ECR II-2793, Cases T-46 and 151/98 CEMR v Commission [2000] ECR II-167, Cases 141-142 and 150-151/99 Vela Srl and Tecnagrind SL v Commission [2002] ECR II-4547, Case T-137/01 Stadtsportverband Neuss eV v Commission [2003] ECR II-3103, Case T-500/04 Commission v IIC Informations-Industrie Consulting GmbH [2007] ECR II-1443:

քով վերջնական վճարման նվազեցումը խախտում է լեգիտիմ ակնկալիքները և իրավական որոշակիությունը, քանի որ ֆինանսավորման շահառուն չէր կարող հստակ իմանալ հաստատված ծախսերի մանրամասները²⁸⁰:

Այսպիսով, եթե իրավաչափ բարենպաստ վարչական ակտով սահմանված իրավունքից օգտվելը պայմանավորվել է այդ ակտով սահմանվող պարտականության կատարմամբ, ապա այդ պարտականությունը չկատարելու հիմքով վարչական ակտն ուժը կորցրած ճանաչելը չի շոշափում անձի լեգիտիմ ակնկալիքները: Սակայն այս եզրահանգման համատեքստում պետք է կարևորել երկու հանգամանք. 1) վերապահումը, որը կարող է հանգեցնել իրավաչափ բարենպաստ վարչական ակտն ուժը կորցրած ճանաչելուն, պետք է հստակ նշվի այդ վարչական ակտում. 2) վերապահման կատարումը պետք է ապահովվի վարչական ակտի գործողության ամբողջ ընթացքում: Եթե վարչական ակտի հասցեատերը սկզբում կատարումը է վերապահումը, հետո խախտում այն, բարենպաստ վարչական ակտը կարող է իրավաչափորեն ուժը կորցրած ճանաչվել:

Օրենքի 66-րդ հոդվածի 3-րդ մասի «դ» և «ե» կետերը թույլատրելի են համարում բարենպաստ վարչական ակտն ուժը կորցնելը, եթե ակտի ընդունումից հետո, փաստական հանգամանքների փոփոխության հետևանքով, վարչական մարմինն իրավունք կունենար չընդունելու տվյալ վարչական ակտը, և եթե վարչական ակտի ուժը չկորցնելու դեպքում կարող է խախտվել գերակայող հանրային շահը, կամ նորմատիվ իրավական ակտի փոփոխության հետևանքով վարչական մարմինն իրավունք կունենար չընդունելու տվյալ վարչական ակտը, քանի դեռ այդ վարչական ակտի հասցեատերը չի օգտվել վարչական ակտով տրա-

²⁸⁰ St'u Case T-81/95 Interhotel-Sociedade, Cases T-46 and 151/98 CEMR:

մադրված օգուտներից, կամ նրա նկատմամբ դեռևս չեն կատարվել այն գործողությունները, որոնք վարչական ակտով երաշխավորված են եղել, և եթե վարչական ակտն ուժը չկորցնելու դեպքում կարող է խախտվել գերակայող հանրային շահը. Օրենքում իրավաչափ բարենպաստ վարչական ակտերն ուժը կորցրած ճանաչելու այս երկու դեպքերն ըստ էության վերաբերում են ակտն ընդունելուց հետո փաստական հանգամանքների և նորմատիվ իրավական ակտերի փոփոխությանը:

Սահմանադրական դատարանն անդադարձել է այս հիմքերից երկրորդի սահմանադրականության քննարկմանը՝ արձանագրելով, որ եթե նորմատիվ իրավական ակտի փոփոխության հետևանքով վարչական մարմինն իրավունք կունենար չընդունելու տվյալ վարչական ակտը, և այդ վարչական ակտի հասցեատերը չի օգտվել վարչական ակտով տրամադրված օգուտներից, կամ նրա նկատմամբ դեռևս չեն կատարվել այն գործողությունները, որոնք վարչական ակտով երաշխավորված են եղել, ապա **գերակայող հանրային շահի ապահովման նպատակով բարենպաստ իրավաչափ վարչական ակտի ուժը կորցնելը** չի կարող ինքնին գնահատվել որպես ոչ իրավաչափ միջամտություն որևէ հիմնական իրավունքի կամ ազատության:

Անդադառնալով անձի իրավական վիճակը վատթարացնող օրենքների և այլ իրավական ակտերի հետադարձ ուժի արգելքի ենթադրյալ խախտմանը՝ Սահմանադրական դատարանը գտնել է, որ վիճարկվող դրույթը չի վերաբերում և չի կարող վերաբերել այն դեպքերին, երբ անձն ամբողջովին կամ մասնակիորեն ստացել է վարչական ակտով նախատեսված օգուտը, ուստի խոսքը վատթարացման մասին չէ, քանի որ իրավահարաբերությունները չեն ավարտվել: Բացի դրանից, վնասի հատուցման լիարժեք հնարավորությունը թույլ է տալիս արդյունավետ կեր-

պով իրականացնել վարչական ակտի հասցեատիրոջ վստահության պաշտպանության իրավունքը²⁸¹:

Ակադեմիական կարծիքը, սակայն, հակված է այն տեսակետին, որ փաստերի կամ քաղաքականության փոփոխության դեպքերում սկզբնական որոշման վերացման իրավասություն չպետք է լինի²⁸²: Այն սկզբունքային առումով ճիշտ եզրակացություն է, քանի որ եթե վարչական ակտը եղել է իրավաչափ այն պահին, երբ ընդունվել է, հիմնավորված չի թվում այն վերացել նորմատիվ իրավական ակտերի փոփոխության պատճառով: Ավելին, այն հանգամանքը, որ փաստական հանգամանքների կամ նորմատիվ իրավական ակտերի փոփոխությունները կարող են հանգեցնել վարչական ակտերն ուժը կորցրած ճանաչելուն, չի բխում նաև վերը քննարկված իրավաչափ բարենպաստ վարչական ակտերը վերացնելու արգելքի սկզբունքից:

Մոտեցումը բխում է նաև վարչական ակտերի վերջնական լինելու գաղափարից: Այսպես, սկզբունքը ենթադրում է, որ հանրային իշխանությունների կայացրած իրավաչափ որոշումները պետք է ունենան որոշակի եզրափակիչ և պարտադիր բնույթ. հակառակ դեպքում իրավունքի գերակայությունը չէր իրացվի, քանի որ առանց վերջնականության որևէ հարց իրականում լուծված չէր համարվի²⁸³:

Այս գաղափարը հիմնականում զարգացել է դատական մարմինների առնչությամբ՝ *res judicata* դոկտրինի միջոցով²⁸⁴: Դրա հիմնավորումը հետևյալն է. երբ դատավորը որոշում է գոր-

²⁸¹ Տե՛ս Սահմանադրական դատարանի 2019 թվականի ապրիլի 30-ի ՍԴԴ-1458 որոշումը:

²⁸² Տե՛ս **Schönberg, Søren** նշված աշխատ., էջեր 81, 88, **Schwarze**, նշված աշխատ., էջեր 1023-1024:

²⁸³ Տե՛ս **Kryvoi Y and Matos S**, նշված աշխատ., էջ 99:

²⁸⁴ Տե՛ս **Kr Handley**, Spencer Bower and Handley: *Res Judicata*, 4th edition, Lexis Nexis, London, 2009, էջեր 233-236:

ծը, նա չի կարող այն վերաբացել, որպեսզի ապահովվի, որ ընթացակարգն ավարտին հասնի: Այս վերջնականությունը գործում է անկախ այն հանգամանքից՝ որոշումը իրավունքի կամ փաստերի տեսանկյունից ճիշտ է, թե ոչ: Այս դոկտրինը համահունչ է այն ընկալմանը, որ դատական իշխանության հիմնական գործառույթը առանձին վեճերի լուծումն է: Դատական որոշումների կայացման մեջ վերջնականությունը անհրաժեշտ է այդ նպատակի իրագործման համար, քանի որ վեճը լուծվում է միայն կողմերի համար պարտադիր վերջնական որոշմամբ: Բացի այդ, առկա է հանրային շահ վեճերը կամ հարցերը վերջնականապես կարգավորված տեսնելու հարցում²⁸⁵: Նույն հիմնավորմամբ՝ կարծում ենք, որ վերջնականության գաղափարը կարող է կիրառվել նաև վարչական որոշումների նկատմամբ: Ինչպես նշվում է. «Հանրային իրավունքում վերջնականությունը առանցքային սկզբունք է և ինքնիշխանության տարր»²⁸⁶:

Մոտեցումը բխում է նաև հանրային իրավունքում հայտնի *functus officio* դոկտրինից, որը սերտորեն առնչվում է լեգիտիմ ակնկալիքների դոկտրինի հետ²⁸⁷: Ուեյդը և Ֆորսայթը նշում են. «Նույն փաստարկները, որոնք պահանջում են վերջնականություն դատարանների որոշումների համար, կիրառելի են նաև կանոնադրական տրիբունալների, նախարարների և այլ մարմինների որոշումների նկատմամբ»²⁸⁸: *Functus officio* դոկտրինը նշանակում է «իր պարտականությունն արդեն կատարած» և

²⁸⁵ Տե՛ս նույն տեղում:

²⁸⁶ **Timothy Endicott**, “The Purpose of a State”, *American Journal of Jurisprudence*, vol. 66(1), 2021, p. 71, **Kryvoi Y and Matos S**, նշված աշխատ., էջ 99:

²⁸⁷ Տե՛ս **Paul Reynolds**, “Legitimate Expectations and the Protection of Trust in Public Officials”, *Public Law*, 2011, էջ 333:

²⁸⁸ **William Wade And Christopher Forsyth**, *Administrative Law*, 11th edition, Oxford University Press, Oxford, 2014, p. 191.

արտահայտում է այն գաղափարը, որ երբ հանրային մարմինը կայացնում է որոշում, այդ որոշումը կայացնելու լիազորությունը դադարում է գոյություն ունենալ²⁸⁹:

Վերը նշված մոտեցումն արտահայտող դատական ակտերի միանշանակ օրինակ գտնելը հեշտ չէ: Այնուամենայնիվ, այս սկզբունքը կարելի է հիմնավորել՝ ներկայացնելով նաև ԵՄ դատարանի դատական պրակտիկայից որոշ օրինակներ: Այն համահունչ է **Algera**²⁹⁰ պատմական գործի հետ, որն այս ոլորտում հիմք դրեց նախադեպային իրավունքի զարգացմանը: Այն համընկնում է ավելի ուշ դատական գործերի հետ, ինչպիսիք են՝ **Interhotel-Sociedade**²⁹¹ և **CEMR**²⁹² գործերը, որտեղ ԵՄ առաջին ատյանի դատարանն ըստ էության հաստատել է կայացված որոշումների վերջնականության գաղափարը: Վերջին գործով ԵՄ առաջին ատյանի դատարանը որոշեց, որ Հանձնաժողովը խախտել է լեգիտիմ ակնկալիքների սկզբունքը՝ մասամբ վերացնելով Եվրոպական սոցիալական հիմնադրամի տրամադրած ֆինանսական դրամաշնորհը: Հանձնաժողովը պնդում էր, որ շահառուի կողմից կատարված որոշ ծախսեր դուրս են եկել փոխհատուցման քաղաքականությունից, բայց դատարանը եզրակացրեց՝ քանի որ դիմողին տրամադրված դրամաշնորհի որոշումը պայմանով չէ և չի սահմանափակվում ծախսերի որոշակի տեսակներով, Հանձնաժողովը սահմանափակված էր

²⁸⁹ Տե՛ս **Ben Collins**, “When Are Public Bodies Functus Officio Law?”, *Judicial Review*, 2001, 6, էջ 61:

²⁹⁰ Տե՛ս Cases 7/56 and 3–7/57 *Algera v Common Assembly* [1957] ECR 39:

²⁹¹ Տե՛ս Case T-81/95 *Interhotel-Sociedade Internacional de Hoteis SARL v Commission* [1997] ECR II-1265:

²⁹² Տե՛ս Cases T-46 and 151/98 *CEMR v Commission* [2000] ECR II-167:

դրանով՝ անկախ նրանից, թե որն էր Հանձնաժողովի սկզբնական կամ հետագա քաղաքականությունը²⁹³:

Այսպիսով գտնում ենք, որ վարչական իրավունքում ընդհանուր սկզբունքը պետք է լինի այն, որ **բարենպաստ, առանց պայմանի և պատշաճ կերպով դիմողին հաղորդված որոշումը չպետք է վերացվի միայն այն պատճառով, որ որոշումն ընդունողը, հաշվի առնելով փաստերի կամ նորմատիվ իրավական ակտերի փոփոխությունը, այլ կերպ կգնահատեր փաստերը**: Բոլոր դեպքերում պետք է նկատի ունենալ, որ իրավաչափ բարենպաստ վարչական ակտն ուժը կորցրած ճանաչելը միջամտություն է թե՛ լեգիտիմ ակնկալիքի պաշտպանության և թե՛ այդ ակտով ճանաչված կամ տրամադրված իրավունքին, ուստի նորմատիվ իրավական ակտերի փոփոխությամբ պայմանավորված բարենպաստ վարչական ակտը կարող է ուժը կորցնել միայն, եթե դա նախատեսված է համապատասխան փոփոխություն նախատեսող նորմատիվ իրավական ակտով, որը, ի դեպ, պետք է լինի օրենք:

²⁹³ St'u Case T-81/95 Interhotel-Sociedade Internacional de Hoteis SARL v Commission [1997] ECR II-1265:

§2. Վարչական մարմնի գործողությունների կամ պրակտիկայի հիման վրա առաջացած լեգիտիմ ակնկալիքների պաշտպանությունը

Նախորդ պարագրաֆում քննարկվեց լեգիտիմ ակնկալիքների պաշտպանության հիմնախնդիրները իրավաչափ վարչական ակտերի վերացման պարագայում: Այժմ քննարկենք այն դեպքերը, երբ անձը վկայակոչում է լեգիտիմ ակնկալիքները՝ հղում կատարելով ընդհանրապես վարչական մարմնի պրակտիկային կամ էլ վարչական մարմնի գործողություններին, որոնք կարող են դրսևորվել կոնկրետ հայտարարությունների կամ տեղեկատվության տեսքով:

Պետք է նշել, որ ներպետական իրավական համակարգում, ի տարբերություն վարչական ակտերի, վարչական մարմնի գործողությունների հիման վրա առաջացող լեգիտիմ ակնկալիքների պաշտպանության վերաբերյալ կարգավորում չկա: Ինչ վերաբերում է վարչական մարմնի պրակտիկային, ապա Օրենքի 7-րդ հոդվածը սահմանում է կամայականության արգելքի սկզբունքը, որը վարչական մարմիններին պարտավորեցնում է միատեսակ մոտեցում ցուցաբերել միատեսակ փաստական հանգամանքների նկատմամբ՝ հայեցողական լիազորություններն իրականացնելով հետևողականորեն:

2.1. Գործողությունների հիման վրա առաջացած լեգիտիմ ակնկալիքների պաշտպանությունը

Անդրադառնալով վարչական մարմնի գործողություններից առաջացած լեգիտիմ ակնկալիքների պաշտպանությանը՝ Վենետիկի հանձնաժողովը նշել է. «Իրավական որոշակիությունը նաև նշանակում է, որ պետության կողմից անհատներին տրված

պարտավորությունները կամ խոստումները, որպես ընդհանուր կանոն, պետք է հարգվեն («լեգիտիմ ակնկալիքների» հասկացությունը)²⁹⁴:

ՄԻԵԴ-ը **Lelas v Croatia** գործով արձանագրել է, որ բարեխղճորեն գործող անհատը, որպես ընդհանուր կանոն, իրավասու է ապավինելու պետական կամ հանրային պաշտոնյաների կողմից արված հայտարարություններին, որոնք արտաքինից թվում են կատարված համապատասխան լիազորություն ունեցող անձանց կողմից և այն պայմաններում, երբ ենթադրվում է, որ ներքին կանոններն ու ընթացակարգերը պահպանվել են, եթե միայն հրապարակայնորեն մատչելի փաստաթղթերից (ներառյալ առաջնային կամ ենթաօրենսդրական ակտերից) ակնհայտորեն չի հետևում, կամ անհատը այլ կերպ չի իմացել կամ պետք է իմանար, որ տվյալ պաշտոնյան չուներ պետությանը իրավաբանորեն պարտավորեցնելու լիազորություն²⁹⁵:

Չնայած Վենետիկի հանձնաժողովի և ՄԻԵԴ-ի մեջբերված դիրքորոշումներին՝ ոչ բոլոր իրավական համակարգերն են, որ ճանաչում են վարչական մարմնի գործողությունների հիման վրա առաջացած լեգիտիմ ակնկալիքների պաշտպանությունը: Այսպես, ֆրանսիական հանրային իրավունքը խիստ տարբերակում է վարչական ակտերը և ավելի ոչ ֆորմալ հայտարարությունները: Վարչական ակտերը համարվում են իրավական ակտեր (*actes administratifs*), որոնք ունեն պարտադիր ուժ և չվերացվող են: Գործողությունները համարվում են «իրավաբանո-

²⁹⁴ CDL-AD(2011)003rev-e Report on the rule of law - Adopted by the Venice Commission at its 86th plenary session (Venice, 25-26 March 2011), պարագրաֆ 48, CDL-AD(2025)002-e The Updated Rule of Law Checklist, adopted by the Venice Commission at its 145th Plenary Session (Venice, 12-13 December 2025), պարագրաֆ 56:

²⁹⁵ *St'u ECtHR, judgement Lelas v Croatia (55555/08) 20 May 2010:*

րեն նշանակալի փաստեր» (faits juridiques), ինչը նշանակում է, որ չնայած վարչական մարմինը կարող է փոխհատուցել գործողություններով պատճառված վնասը, այն պարտավոր չէ գործել իր նախկին գործողություններին համապատասխան²⁹⁶:

Ֆրանկո-ալժիրյան ընկերության հայտնի գործով կառավարության հանձնակատար Ռոմիկուն պնդում էր, որ վարչական մարմինը երբեք չպետք է սահմանափակվի ոչ ֆորմալ վարչարարությամբ, քանի որ այդ մոտեցումը կսահմանափակի նրա հայեցողական լիազորությունները և կխաթարի օրինականության սկզբունքը, ինչը, ըստ օրենքի, կարող է լինել միայն պաշտոնական վարչական ակտերի դեպքում²⁹⁷:

Ս. Սքոնբերգն առանձնացնում է չորս գործոն, որոնք պայմանավորում են ֆրանսիական վարչական իրավունքում վարչական գործողությունների հիման վրա առաջացած լեգիտիմ ակնկալիքներին պաշտպանություն չտրամադրելը: Նախ, ֆրանսիական վարչական իրավունքի ավանդույթների մեջ խորապես արմատավորված է այն մոտեցումը, որ վարչական մարմիններին պետք է տրվի իրավական սահմանափակումներից բավարար ազատություն, որպեսզի նրանք կարողանան գործել արդյունավետորեն՝ ելնելով հանրային շահերից, և որ նրանք ունեն որոշակի իրավասություններ, ինչպիսիք են՝ հասարակական կարգի պահպանմանն ուղղված միջոցներ ձեռնարկելու անքակտելի իրավունքը, որը պաշտպանություն է պահանջվում նույն կերպ, ինչպես դատարանները պաշտպանում են անհատների իրավունքները: Այս ավանդույթի համատեքստում լեգիտիմ ակնկա-

²⁹⁶ St' u **J.-M. André**, 'La responsabilité de la puissance publique du fait des diverses formes d'engagements non contractuels de l'administration', AJDA 1976, էջ 20, **L. Tallineau**, 'Les tolérances administratives', AJDA 1978, էջ 3:

²⁹⁷ St' u Romieu conclusions CE 20/1-1899 Compagnie franco-algérienne D 1899 III 41, confirmed by Teissier conclusions CE 15/5-07 Le Bigot Rec 460:

լիքների սկզբունքը կարող է խնդրահարույց թվալ, քանի որ այն որոշ չափով սահմանափակում է քաղաքականություն մշակելու հարցում վարչական մարմինների ազատությունը²⁹⁸:

Երկրորդ, հանրային իրավունքի ֆրանսիացի մասնագետները նախընտրում են արդարության հարցերը լուծել իրավական սկզբունքների կամ օրենսդրական նորմերի միջոցով, որոնք պարզ և օբյեկտիվ են կամ այդպիսին են թվում: Պարզության և օբյեկտիվության նախապատվության լույսի ներքո Պետական խորհուրդը, ըստ երևույթին, կարծում է, որ լեգիտիմ ակնկալիքների հայեցակարգը չափազանց անորոշ է և, հետևաբար, անհամատեղելի է ֆրանսիական վարչական իրավունքի հայեցակարգային կառուցվածքի հետ²⁹⁹:

Երրորդ պատճառը, որով Պետական խորհուրդը մերժել է լեգիտիմ ակնկալիքներ սկզբունքը ընդունելու առաջարկը, այն է, որ ֆրանսիական օրենսդրությունը նման սկզբունքի կարիք ունի ավելի քիչ, քան եվրոպական օրենսդրությունը: Մի կողմից, կան մի շարք օրենսդրական դրույթներ, հատկապես հարկման և քաղաքաշինության ոլորտում, որոնք լուծում են լեգիտիմ ակնկալիքների սկզբունքի հետ կապված որոշ հարցեր: Մյուս կողմից, հանրային-իրավական պատասխանատվության ֆրանսիական սկզբունքները ավելի կոշտ են: Այն անձինք, ովքեր վնասներ են կրել վարչական ակտերին և գործողություններին վստահելու պատճառով, ավելի հավանական է, որ հատուցում ստանան, և, հետևաբար, ավելի քիչ արդիական է սկզբունքի անհրաժեշտությունը, որն ուղղված է լեգիտիմ ակնկալիքների նյութական պաշտպանությանը³⁰⁰:

²⁹⁸ Տե՛ս **Schönberg, Søren**, նշված աշխատ., էջ 113:

²⁹⁹ Տե՛ս **J.-P. Puissechet**, "Vous avez dit confiance légitime?", in *Mélanges Guy Braibant* (Paris, 1996), էջ 581, **P. Vincent**, 'Chronique de jurisprudence', *AJDA* 1999, էջեր 880, 882:

³⁰⁰ Տե՛ս **P. Vincent**, նշված աշխատ., էջեր 880, 882:

Այլ է մոտեցումը անգլիական իրավունքում: Դատական պրակտիկայում այս սկզբունքի անուղղակի աջակցություն կարելի է գտնել հարկային գործերով մի շարք որոշումների մեջ, ինչպիսիք են **Matrix Securities** և **Unilever** գործերը, որոնցով հաստատվեց, որ ճշգրիտ և անվերապահ գործողությունից հրաժարվելը կարող է հավասարազոր լինել իշխանության չարաշահմանը, քանի որ դա անարդար է³⁰¹: Թեև այս որոշումները ձևակերպված են նյութական արդարության, այլ ոչ թե լեգիտիմ ակնկալիքների ասպեկտից, դրանք հանգեցնում են վարչական գործողությունների արդյունքում առաջացած ակնկալիքների նյութական իրացման: Այս որոշումները կարևորվեցին միայն այն բանից հետո, երբ պարզ դարձավ, որ վարչական մարմնի գործողությունները անարդար համարելու պատճառն այն է, որ գործողությունները ակնկալիքներ են առաջացրել, որոնք իրենց հերթին ազդել են անձանց պլանավորման և վստահության վրա³⁰²:

Kahn գործում Դատավոր Փարքերը հենվել է լորդ Դենինգի ավելի վաղ արտահայտած կարծիքի վրա և որոշել, որ վարչական մարմինը կարող է հրաժարվել հիմնավորված ակնկալիքներից միայն լսումից հետո, այն էլ միայն այն դեպքում, եթե «դա պահանջում են գերակշռող հանրային շահերը»³⁰³: Այլ դատական որոշումներում ընդունվեց, որ ընթացակարգային և նյութա-

³⁰¹ *St' u R v IRC, ex p Preston* [1985] AC 835, *R v IRC, ex p MFK Underwriting Agencies Ltd* [1990] 1 WLR 1545, *Matrix Securities Ltd v IRC* [1994] 1 WLR 334, *R v IRC, ex p Unilever* [1996] STC 681:

³⁰² *St' u, օրինակ, R v Bristol City Magistrates Court, ex p Willsman* [1991] RA 292, *R v Joint Committee on Higher Medical Training, ex p Goldstein* (1993) 11 BMLR 10, *R v Funding Agency for Schools, ex p Bromley LBC* [1996] COD 375, *Home Secretary v Abdi* [1996] Imm AR 148, *R v CEC, ex p Littlewoods Ltd* [1997] STC 317:

³⁰³ *R v Home Secretary, ex p Kahn* [1984] 1 WLR 1337, 1344, տե՛ս նաև՝ *R v Home Secretary, ex p Oloniluyi* [1989] COD 275:

կան ակնկալիքների միջև տարբերությունը տեղին չէ³⁰⁴, իսկ **Ruddock** գործով նշվեց, որ վարչական գործողությունների դեպքում արդարությունը կարող է պահանջել ավելին, քան պարզապես ընթացակարգային պաշտպանությունն է³⁰⁵:

Հենվելով այս նախադեպերի վրա՝ Վերաքննիչ դատարանը **Coughlan** գործով հաստատեց նյութական լեգիտիմ ակնկալիքների սկզբունքը՝ որոշելով, որ. «[եթե] օրինական խոստումը կամ պրակտիկան առաջացրել է օգուտի օրինական ակնկալիք, որը նյութական է, այլ ոչ թե պարզապես ընթացակարգային, դատարանը որոշում կկայացնի այն մասին, թե արդյոք ակնկալիքների խախտումն այնքան անարդար է, որ նոր որոշում կայացնելը հավասարազոր է իշխանության չարաշահմանը»³⁰⁶:

Ինչպես նշում է Ս. Սքոնբերգը, անգլիական իրավունքի շրջանակներում նյութական լեգիտիմ ակնկալիքների ճանաչումը անմիջական նշանակություն ունի վարչական ակտեր կայացնողների համար: Վարչական մարմիններից պահանջվում է համոզվել՝ արդյոք իրենց իսկ խոստումները, գործողությունները և այլ հայտարարությունները օբյեկտիվորեն հիմնավորված ակնկալիքներ են առաջացրել այն անձանց մոտ, որոնց վրա ազդելու են

³⁰⁴ *St' u R v Secretary of State for Transport, ex p Richmond upon Thame LBC* [1994] 1 All ER 577, 595, *R v Ministry of Agriculture, Fisheries and Foods, ex p Hamble Fisheries* [1995] 2 All ER 714, 723:

³⁰⁵ *St' u R v Home Secretary, ex p Ruddock* [1987] 1 WLR 1482, 1487 (approved obiter in *Chundawadra v Immigration Appeal Tribunal* [1988] Imm AR 161): *St' u նաև՝ R v IRC, ex p MFK Underwriting Agencies Ltd* [1990] 1 All ER 91, 107, *R v London Borough of Ealing, ex p Denny* (1994) 26 HLR 424, *R v Devon CC, ex p Baker* [1995] 1 All ER 73, 89-90, *R v Ministry of Agriculture, Fisheries and Foods, ex p Hamble Fisheries* [1995] 2 All ER 714, 724, *R v Gaming Board, ex p Kingsley* [1996] COD 241, 242, *R v Brent LBC, ex p MacDonagh* [1990] COD 3, *R v Northamptonshire CC, ex p Commission for the New Towns* [1992] COD 123:

³⁰⁶ *R v Devon Health Authority, ex p Coughlan* [1999] Lloyd's LR Medical 306, 322.

վարչական որոշումները³⁰⁷: Եթե լեգիտիմ սպասումները կարող են խախտվել, ապա դրանք պետք է պարտադիր հաշվի առնվեն, ստանան որոշակի կշիռ և հավասարակշռվեն հանրային շահերի հետ, երբ ընտրվում է գործողությունների այնպիսի ընթացք, որը կխախտի դրանք³⁰⁸:

Ի տարբերություն ֆրանսիական իրավունքի՝ ԵՄ իրավունքում վարչական մարմինների գործողությունների (հայտարարությունների) և պրակտիկայի հիման վրա առաջացած լեգիտիմ ակնկալիքների պաշտպանությունն ունի ամուր հիմքեր: Այսպես, ԵՄ դատարանը լեգիտիմ ակնկալիքների սկզբունքին համապատասխան պարտավորեցնում է հանրային ինստիտուտներին կատարել իրենց պարտավորությունները³⁰⁹, որը լրացվում է հավասար վերաբերմունքի սկզբունքով³¹⁰: Այս համատեքստում ակնկալիքների սկզբունքն առաջին անգամ կիրառվել է այն իրավի-

³⁰⁷ Տե՛ս **D. Wright**, 'Rethinking the Doctrine of Legitimate Expectations in Canadian Administrative Law' (1997) Osgoode Hall LJ 139, էջ 184:

³⁰⁸ Տե՛ս **R v Beatrix Potter School**, ex p **Kanner** [1997] ELR 468, **R v DPP**, ex p **Burke** [1997] COD 169, **R v Shropshire CC**, ex p **Jones** (1997) 9 Admin LR 625, **R v The Bloody Sunday Inquiry**, ex p **B** The Times 5/4-99, **Devon Health Authority**, ex p **Coughlan** [1999] Lloyd's LR Medical 306: Տե՛ս նաև՝ **Similarly A. W. Bradley**, 'Administrative Justice and the Binding Effect of Official Acts' (1981) CLP 1, էջ 18:

³⁰⁹ Տե՛ս **Mackenzie Stuart**, 'Legitimate Expectations and Estoppel in Community Law and English Administrative Law' (1983) LIEI 53, **F. Hubeau**, 'Le principe de la protection de la confiance légitime dans la jurisprudence de la Cour de Justice des Communautés Européennes', CDE 1983, էջ 143, **E. Sharpston**, 'Legitimate Expectations and Economic Reality' (1990) ELR 103, **Schwarze**, նշված աշխատ., էջեր 1079-1093, **C. Naômé**, 'La notion de sécurité juridique dans la jurisprudence de la Cour de Justice et du Tribunal de Première Instance des Communautés Européennes', RDPE 1993, էջ 223, **M.-H. Planchon**, 'Le principe de la confiance légitime devant la Cour de Justice des Communautés Européennes', Revue de la Recherche Juridique--Droit Prospectif 1994, էջ 447, **T. Tridimas**, *The General Principles of EC Law* (Oxford, 1999), էջեր 169-201:

³¹⁰ Տե՛ս **H. G. Schermers and D. Waelbroeck**, *Judicial Protection in the EC*, 5th edn. (Deventer, 1992), էջեր 69-76:

ճակի համար, երբ ԵՄ հաստատությունը 1966 թվականի **Châtillon** գործով հիմնվել էր «հայտարարության», այլ ոչ թե պաշտոնական որոշման վրա: Այս գործով Եվրոպական դատարանը վճռել է, որ իշխանության բարձրագույն մարմինը կարող է հետ կանգնել իր նախնական հայտարարությունից «լեգիտիմ ակնկալիքները պաշտպանելու պայմանով»³¹¹:

Staff Salaries գործով ԵՄ դատարանը հաստատեց, որ երեք տարվա ընթացքում անձնակազմի աշխատավարձի ճշգրտման հատուկ համակարգ կիրառելու խորհրդի պարտավորությունը «մերժումը արդարացնող բավարար հանգամանքների բացակայության դեպքում անձնակազմի վստահության պաշտպանության կանոնների ուժով պետք է հարգվի»³¹²: Դրանից հետո ԵՄ դատարանը որոշեց, որ լեգիտիմ ակնկալիքների խախտումը կարող է հիմք հանդիսանալ գործողությունը ԵՄ պայմանագրի 230-րդ հոդվածի հիման վրա հակաիրավական ճանաչվելու համար, որ այս սկզբունքը պարտադիր է համայնքի բոլոր ինստիտուտների համար, և որ այն կարող է վերաբերել «ցանկացած անձի, ով հայտնվել է այնպիսի իրավիճակում, երբ ակնհայտ է, որ Համայնքի վարչարարությունը նրան դրդել է ողջամիտ ակնկալիքների»³¹³:

Հաշվի առնելով վարչական մարմինների գործողությունների և պրակտիկայի հիման վրա առաջացած լեգիտիմ ակնկալիքների պաշտպանության վերաբերյալ ԵՄ հարուստ և հետևողական պրակտիկան՝ պարագրաֆի շրջանակներում անդրադառնալու այն հարցին, թե վարչական մարմնի որ գործողություններ

³¹¹ Case 54/65 Châtillon v High Authority [1966] ECR 185, 196.

³¹² Case 81/72 Commission v Council [1973] ECR 575, 584-585.

³¹³ Cases 289/81 Mavridis v EP [1983] ECR 1731, T-534/93 Grynberg v Commission [1994] ECR-SC II-595, պարագրաֆ 51, Case 81/72 Commission v Council [1973] ECR 575, 585:

րը կարող են լեգիտիմ ակնկալիքների առաջացման հիմք հանդիսանալ: Այլ կերպ ասած՝ ինչ պայմանների պետք է համապատասխանի վարչական մարմնի գործողությունը, որպեսզի անձը կարողանա հայցել դրանց հիման վրա առաջացած լեգիտիմ ակնկալիքի պաշտպանություն:

Այսպես, վարչական մարմնի գործողությունների կամ պրակտիկայի կապակցությամբ համեմատական դատական պրակտիկայի ուսումնասիրության հիման վրա կարելի է հիմնավորել այն ընդհանուր սկզբունքը, ըստ որի՝ անձի լեգիտիմ ակնկալիքների պաշտպանության իրավունքը կարող է առաջանալ վարչական մարմնի տված պարզ և կոնկրետ երաշխիքների հիման վրա³¹⁴: ԵՄ դատարանների վաղ շրջանի դատական պրակտիկայում ձևակերպված չափանիշը հետևյալն է. «Վարչակազմը պետք է տրամադրեր ճշգրիտ և հատուկ երաշխիք»³¹⁵: Ձևը, ձևակերպումը և համատեքստը, որում կատարվել է գործողությունը, այս առումով կարևոր չափանիշներ են³¹⁶: Հենց այս դժվար պատենշն է, որ դիմորդները դժվարությամբ հաղթահա-

³¹⁴ St'u Case T-489/93 Unifruit Hellas EPE v Commission [1994] ECR II-1201, Case T-534/93 Grynberg and Hall v Commission [1994] ECR II-595, Case T-456/93 Consorzio Gruppo di Azioni Locale Murgia Messapica v Commission [1994] ECR II-361, Case C-537/08 P Kahla Thüringen Porzellan GmbH v Commission, EU:C:2010:769, Case C-545/11 Agrargenossenschaft Neuzelle eG v Landrat des Landkreises Oder-Spree, EU:C:2013:169, Cases T-50 and 69/06 RENV II Ireland and Aughinish Alumina Ltd v European Commission, EU:T:2016:227, Case C-560/15 Europa Way Srl and Persidera SpA v Autorità per le Garanzie nelle Comunicazioni, EU:C:2017:593, Case C-411/15 P CFPR v European Commission, EU:C:2017:11:

³¹⁵ Cases T-123/89 Chomel v Commission [1990] ECR II-131, T-465/93 Murgia Messapica v Commission [1994] ECR II-361, T-571/93 Lefebvre v Commission [1995] ECR II-2379, T-521/93 Atlanta v Council [1996] ECR II-1707.

³¹⁶ St'u R v Home Secretary, ex p Behluli [1998] COD 328, 329, R v Devon Health Authority, ex p Coughlan [1999] Lloyd's LR Medical 306, 322, 326:

րել են, քանի որ ԵՄ դատարանները հազվադեպ են ընդունում, որ այս չափանիշը կատարվել է³¹⁷:

Innova Privat-Akademie գործով³¹⁸ դիմողը պահանջում էր հատուցում այն վնասի համար, որը պատճառվել էր Հանձնաժողովի կողմից Հնդկաստանում մասնագիտական կրթության համատեղ ձեռնարկություն հիմնելու նպատակով ուսումնասիրության համար ֆինանսավորման դրամաշնորհի չտրամադրելու որոշման հետևանքով: Այսպիսի դրամաշնորհներ կարող էին տրամադրվել հատուկ ծրագրի շրջանակում, որը նպատակ ուներ խրախուսել ներդրումները մասնավորապես Ասիայի և Լատինական Ամերիկայի երկրներում: Դիմողը պնդում էր, որ Հանձնաժողովի որոշումը ոչ իրավաչափ է, քանի որ խախտել է իր լեգիտիմ ակնկալիքները: Այսպես, դիմողը նշել է, որ ուներ լեգիտիմ ակնկալիք առ այն, որ Հանձնաժողովը կհաստատի դրամաշնորհը, և այդ ակնկալիքը հիմնված էր Հանձնաժողովի ուղարկած ֆաքսերի վրա: ԵՄ առաջին ատյանի դատարանը վերահաստատեց սկզբունքը, որ լեգիտիմ ակնկալիքների պաշտպանությունը տարածվում է յուրաքանչյուրի վրա, ով գտնվում է իրավիճակում, որտեղ ԵՄ մարմինները տվել են հստակ և կոնկրետ երաշխիքներ, որոնք պատճառ են դարձել դիմողի լեգիտիմ ակնկալիքների համար: Սակայն դատարանը մերժեց, որ այս գործով չափանիշը բավարարված է: Հանձնաժողովի ներկայացրած համապատասխան ֆաքսերը, ըստ ԵՄ առաջին ատյանի դատարանի, ոչ թե հստակ երաշխիք էին, որ դրամաշնորհը կտրվի, այլ ընդամենը ցույց էին տալիս նախնական եզրակացու-

³¹⁷ Տե՛ս, օրինակ, Case C-414/08 P Sviluppo Italia Basilicata SpA v European Commission, EU:C:2010:165, Case C-566/14 P Marchiani v European Parliament, EU:C:2016:437:

³¹⁸ Տե՛ս Case T-273/01 Innova Privat-Akademie GmbH v Commission [2003] ECR II-1093, Case C-443/07 Mediavilla v Commission [2008] ECR I-10945:

թյուն և պարունակում էին ուղղակի հայտարարություն, որ պաշտոնական որոշումը կհետևի ավելի ուշ:

Alpharma գործով³¹⁹ դիմողը վիճարկեց որոշակի հավելումների՝ կերերում օգտագործելու թույլտվության վերացումը՝ պնդելով, որ այն խախտում է իր լեգիտիմ ակնկալիքները: Դիմողը ընդունեց, որ չի կարող լեգիտիմ սպասում ունենալ, թե ԵՄ-ն երբեք իր հայեցողական իրավասությունը չի կիրառի և չի վերացնի տվյալ կերի հավելման թույլտվությունը, եթե դա արդարացված է հանրային առողջության տեսանկյունից: Դրանով հանդերձ, նա պնդեց, որ համապատասխան հանձնարարականը, որով սահմանվել էր հսկողության ծրագիր՝ հակաբիոտիկների նկատմամբ դիմադրություն առաջացնելու հնարավոր խնդիրների գնահատման համար, ստեղծել է այնպիսի իրավիճակ, որից կարող էր արդարացիորեն ակնկալվել, որ հավելման արգելքի վերաբերյալ որոշում չի կայացվի, մինչև հետազոտության արդյունքները հայտնի չլինեն: Դիմողը նաև պնդեց, որ այդ սպասումները առաջացել են նաև Հանձնաժողովի նամակով և գյուղատնտեսության հանձնակատարի հայտարարություններով: Սակայն ԵՄ առաջին ատյանի դատարանը հակառակ կարծիք հայտնեց: Դատարանը եզրակացրեց, որ Հանձնարարականը, որ Հանձնաժողովի կազմած հսկողության ծրագիրը որևէ հիմք չեն տվել, որ հավելումների թույլտվության վերացումը կպայմանավորվի հետազոտության ավարտով³²⁰: Դատարանը գտավ, որ ԵՄ ինստիտուտների համար կային բավական ապացույցներ, որ հավելումը ներկայացնում է առողջական վտանգ, ինչը հիմնավորում է մարդու առողջության համար պաշտպանիչ միջոցներ ձեռնարկելու առաջնահերթությունը, նույնիսկ եթե հետազոտությունը

³¹⁹ St'u Case T-70/99 Alpharma Inc v Council [2002] ECR II-3495:

³²⁰ St'u նույն գործը, պարագրաֆներ 375–377:

սկսվել էր ԵՄ-ի կողմից և արդյունաբերության համար մեծ ծախսեր է առաջացրել³²¹:

Առաջին ատյանի դատարանը մերժեց նաև լեգիտիմ ակնկալիքների պնդումը՝ հիմնված Հանձնաժողովի նամակի և գյուղատնտեսության հանձնակատարի հայտարարությունների վրա՝ նշելով, որ ոչ մեկը չի տալիս դիմողի պնդած հստակ և կոնկրետ երաշխիքը:

Martinez գործով³²² Եվրոպական խորհրդարանի մի շարք պատգամավորներ կազմեցին TDI (Անկախ անդամների տեխնիկական խումբ) կոչվող խումբ: Խմբի հայտարարված նպատակն էր ապահովել, որ բոլոր պատգամավորները կարողանան խմբի լիազորություններն իրագործել՝ պահպանելով իրենց քաղաքական ինքնուրույնությունը: Եվրոպական խորհրդարանը, հիմնվելով իր կանոնակարգի վրա, որոշեց, որ TDI-ն չի համապատասխանում քաղաքական խմբի ճանաչման չափանիշներին, քանի որ TDI անդամները չունեին որևէ համատեղ քաղաքական պատկանելություն: Վերջիններս պնդեցին, որ նախորդող 20 տարիների ընթացքում Եվրոպական խորհրդարանում ստեղծվել են այլ «տեխնիկական» խմբեր, և հետևաբար գոյություն ուներ լեգիտիմ ակնկալիք, որ TDI-ն նույնպես պետք է ճանաչվի քաղաքական խումբ: ԵՄ առաջին ատյանի դատարանը մերժեց այս պնդումը՝ հիմնավորելով, որ նախկինում ձևավորված խմբերը տարբեր են եղել TDI-ից, քանի որ վերջիններիս անդամները չեն հրաժարվել համատեղ քաղաքական առնչությունից: Այսինքն, անցյալ պրակտիկան չէր կարող որակվել որպես կոնկրետ երաշխիք TDI-ի հիմնադիրների համար, որ նրանց խումբը կճանաչվի որպես քաղաքական խումբ Եվրոպական խորհրդարանում:

³²¹ Տե՛ս նույն գործը, պարագրաֆներ 378–379:

³²² Տե՛ս Cases T-222, 327 and 329/99 Jean-Claude Martinez, Charles de Gaulle, Front National and Emma Bonino v European Parliament [2001] ECR II-2823:

Այսպիսով, լեգիտիմ ակնկալիքների խախտման շուրջ պահանջների մեծամասնությունը ծախողվում է, քանի որ հայցվորը չի կարողանում ապացուցել անհրաժեշտ ճշգրիտ և կոնկրետ երաշխիքը: Այնուամենայնիվ, կան դեպքեր, երբ այս պահանջը հաջողվել է: Մասնավորապես, **Embassy Limousines** գործով³²³ որոշվել է, որ լեգիտիմ սպասումների խախտում կարող է լինել այն դեպքում, երբ տենդեր ներկայացնող ընկերությունը խախտվել է կատարել ներդրումներ նախքան պայմանագրի կնքումը՝ կրելով ակցեպտի ներկայացման հետ կապված ռիսկերը: **CEMR** գործով³²⁴ ԵՄ առաջին ատյանի դատարանը որոշել է, որ Հանձնաժողովը չի կարող, լեգիտիմ ակնկալիքները խախտելով, կրճատել ծրագրի համար նախատեսված բյուջետային գումարը, եթե այդ աշխատանքը ներառված էր սկզբնական բյուջեում, որը Հանձնաժողովն ընդունել էր:

Լեգիտիմ ակնկալիքը հաստատվել է նաև **MCI** գործով, որտեղ ԵՄ առաջին ատյանի դատարանը որոշել է, որ միավորման կողմերն ունեցել են լեգիտիմ ակնկալիք, որ իրենց կողմից ուղարկված նամակը, որով նրանք հայտնել էին, որ չեն շարունակելու միավորումը ներկայիս ձևով, կնշանակի գործի ավարտ՝ համաձայն Հանձնաժողովի վարչարարական պրակտիկայի, որը հրապարակված էր, և որի հետ կապված հակասություններ չեն եղել³²⁵:

Միաժամանակ, դատական պրակտիկայից պարզ է դառնում նաև, որ պայմանով կամ վերապահումով հայտարարություններն ու հավաստիացումները չեն ստեղծի լեգիտիմ ակնկա-

³²³ St'u Case T-203/96 Embassy Limousines & Services v European Parliament [1998] ECR II-4239, Case T-271/04 Citymo SA v Commission [2007] ECR II-1375, [138]–[156]:

³²⁴ St'u Cases T-46 and 151/98 CEMR v Commission [2000] ECR II-167:

³²⁵ St'u Case T-310/00 MCI, Inc v Commission [2004] ECR II-3253:

լիքներ: ԵՄ առաջին ատյանի դատարանը **Langnese-Iglo** գործում հաստատեց, որ «մխիթարական նամակը», որում Հանձնաժողովը ոչ պաշտոնապես ճանաչել է համաձայնագրի օրինականությունը, հիմք չի տվել ակնկալելու, որ Հանձնաժողովը չի վերսկսի այս հարցի քննարկումը, քանի որ այն պահպանել է իր իրավունքը՝ «դա անել օրենքի կամ փաստի նկատելի փոփոխությունների լույսի ներքո»³²⁶:

Այդ դեպքում ո՞րն է հստակ և կոնկրետ հավաստիացումը: **Urretavizcaya** գործը հազվադեպ օրինակ է³²⁷: Դիմողն ընդգրկվել է հետազոտական օգնականների պահուստային ցուցակում՝ «C3, B5 և B3 դասի աշխատավարձով պաշտոններ» մրցույթի արդյունքների հիման վրա: Նրան գրավոր առաջարկվել է «B3 դասի» պաշտոն, որին համաձայնել է և վեց ամսվա ընթացքում ստացել է B3 կարգի աշխատավարձ: Երբ նա խնդրել է իրեն տրամադրել իր պայմանագրի գրավոր պատճենը, հանձնաժողովը որոշել է նրան տեղափոխել ավելի ցածր՝ B5 կատեգորիա և համապատասխանաբար իջեցնել աշխատավարձը: ԵՄ առաջին ատյանի դատարանը որոշել է, որ նամակը ճշգրիտ երաշխիք է, որին դիմումատուն կասկածելու պատճառ չունի: Հետևաբար, այն վերացրեց որակավորման կարգ նշանակելու որոշումը և շնորհեց փոխհատուցում, որը համարժեք էր B5 և B3 աշխատավարձերի տարբերությանը:

ԵՄ դատարանի վերջին շրջանի դատական պրակտիկայի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ վարչական մարմնի գործողությունների հիման վրա լեգիտիմ ակնկալիքների պաշտպա-

³²⁶ Case T-7/93 Langnese-Iglo v Commission [1995] ECR II-1533, պարագրաֆ 35-41: Տե՛ս նաև՝ Case T- 229/94 Deutsche Bahn v Commission [1997] ECR II-1689, T-182/96 Partex v Commission, 16/9-99, պարագրաֆ 193, **D. Stevens**, 'The "Comfort Letter": Old Problems, New Developments' (1994) ECLR 81:

³²⁷ Տե՛ս Case T-587/93 Ortega Urretavizcaya v Commission [1996]:

նություն տրամադրելու չափանիշները խստացել են: Այսպես, որպեսզի անձը կարողանա հղում կատարել լեզվտիմ ակնկալիքների պաշտպանության սկզբունքին, ԵՄ դատարանը, բացի գործողությունների հստակ և անվերապահ լինելուց, նախատեսել է վարչական ևս մեկ չափանիշ՝ **հետևողականությունը**:

Այսպես, ԵՄ դատարանը **DT** գործով կայացրած որոշմամբ³²⁸ վերահաստատել է, որ լեզվտիմ ակնկալիքների պաշտպանության սկզբունքին հղում կատարելու իրավունքը նախ ենթադրում է, որ շահագրգիռ անձին ԵՄ իրավասու մարմինների կողմից տրվել են **հստակ, անվերապահ և հետևողական հավաստիացումներ**, որոնք բխում են **իրավասու և վստահելի աղբյուրներից**: Ընդհակառակը, անձը չի կարող վկայակոչել այդ սկզբունքի խախտումը, եթե նման հավաստիացումներ իրեն չեն տրամադրվել³²⁹: Երկրորդ՝ այդ հավաստիացումները պետք է լինեն այնպիսին, որ հասցեատիրոջ մոտ ձևավորեն լեզվտիմ ակնկալիք: Երրորդ՝ տրված հավաստիացումները պետք է համապատասխանեն կիրառելի իրավական կանոններին³³⁰:

Այս գործով հայցվորը պնդում է, որ իր պայմանագիրը դադարեցնելով՝ Eulex Kosovo-ն խախտել է լեզվտիմ ակնկալիքների պաշտպանության սկզբունքը: Նա նշում է, որ հիմնվել է 2023 թվականի հունիսից մինչև 2023 թվականի օգոստոս ընկած ժամանակահատվածում իրեն տրված հստակ, անվերապահ և հետևողական տարբեր հավաստիացումների վրա, ըստ որոնց՝ իր աշխատատեղը վտանգված չէր:

³²⁸ St'u Case T-218/24, DT v Eulex Kosovo, Judgment of the General Court (Fifth Chamber), 21 January 2026, պարագրաֆ 200:

³²⁹ St'u նաև՝ Case C-584/17 P ADR Center v Commission [2020] ECLI:EU:C:2020:576, պարագրաֆ 75:

³³⁰ St'u նաև՝ Case T-431/18 WN v Parliament [2019] ECLI:EU:T:2019:781, պարագրաֆ 116:

Դատարանը նշել է, որ ո՛չ այն հանգամանքը, որ հայցվորին իր աշխատանքային պայմանագրի գործողության ընթացքում հանձնարարվել են որոշակի գործառույթներ, ո՛չ այն, որ, հայցվորի պնդմամբ, Eulex Kosovo-ի առաքելության ղեկավարը կամ աշխատակազմի ղեկավարը գիտելիքների կառավարման կարևորությունը գնահատել են որպես նշանակալի, ո՛չ այն, որ, հայցվորի պնդմամբ, առաքելության ղեկավարը նշել է, որ այդ գործառույթների համար պետք է նախատեսվի առնվազն մեկ տեղական աշխատակից, և ո՛չ էլ այն, որ, հայցվորի պնդմամբ, աշխատակազմի ղեկավարը հերքել է հայցվորի աշխատանքային պայմանագրի դադարեցման վերաբերյալ շրջանառվող լուրերը, չեն կարող հավասարեցվել հստակ, անվերապահ և հետևողական հավաստիացումների՝ ԵՄ դատական պրակտիկայի իմաստով, այն մասին, որ հայցվորի աշխատանքային պայմանագիրը չի դադարեցվելու:

Անդրադառնալով հայցվորի նախկին գործընկերոջ ներկայացրած ապացույցին, ըստ որի՝ Eulex Kosovo-ի աշխատակազմի ղեկավարը հավաստիացրել է հայցվորին, որ նրա պաշտոնը ապահով է, Դատարանը նշել է, որ նախ այդ հանգամանքը նույնիսկ ապացուցված լինելու դեպքում կունենար մեկուսացված բնույթ, քանի որ դա միակ փաստն է, որին հայցվորը հղում է կատարում, և որը ուղղակիորեն ու բացահայտորեն վերաբերում է նրա պաշտոնի պահպանմանը:

Այսպիսով, կարող ենք եզրահանգել, որ իրավական որոշակիությունը, իրավահավասարության սկզբունքը և վստահության պաշտպանությունը թելադրում են վարչական մարմինների գործողությունների հիման վրա առաջացած լեգիտիմ ակնկալիքների պաշտպանության անհրաժեշտությունը: Միաժամանակ, պաշտպանության ենթակա լեգիտիմ ակնկալիք կարող է առա-

ջացնել վարչական մարմնի գործողությունը, որը հստակ է և հետևողական: Վարչական մարմնի գործողությունը այդպիսին չէ, եթե այն պարունակում է պայմաններ կամ վերապահումներ: Նաև ԵՄ դատական պրակտիկայի վերլուծության համատեքստում պետք է փաստել, որ, ի տարբերություն ոչ իրավաչափ վարչական ակտերի, ոչ իրավաչափ գործողությունների դեպքում հատկապես մեծ կարևորություն է ձեռք բերում անձանց վնաս պատճառած լինելու հանգամանքը: Այսինքն՝ հատկապես կարևորվում է այն, որ վստահելով վարչական մարմինների գործողությունների իրավաչափությանը՝ անձինք վնաս են կրել:

Ընդ որում, գործողության ձևի վերաբերյալ հատուկ կանոններ չկան³³¹: Այն կարող է արտահայտվել նամակներով³³², ֆաքսերով³³³, զեկույցներով³³⁴, հաղորդակցություններով³³⁵, պրակտիկայով³³⁶, վարքականոններով³³⁷ և նման այլ միջոցներով, հայտարարություններով (եթե դրանք բավականաչափ պարզ են)³³⁸ և, հնարավոր է, նույնիսկ ընդհանուր տեղեկատվական

³³¹ Տե՛ս **Schönberg, Søren**, նշված աշխատ., էջեր 120–122:

³³² Տե՛ս Case 144/82 Detti v ECJ [1983] ECR 2439:

³³³ Տե՛ս Cases T-46 and 151/98 CEMR v Commission [2000] ECR II-167, պարագրաֆներ 79–80:

³³⁴ Տե՛ս Case 265/85 Van den Bergh en Jurgens and Van Dijk Food Products v Commission [1987] ECR 1155:

³³⁵ Տե՛ս Case T-7/89 Hercules v Commission [1991] ECR II-1711, պարագրաֆներ 53–55:

³³⁶ Տե՛ս Case T-310/00 MCI, Inc v Commission [2004] ECR II-3253, պարագրաֆ 112:

³³⁷ Տե՛ս Case C-313/90 CIRFS v Commission [1993] ECR I-1125:

³³⁸ Տե՛ս R v Home Secretary, ex p Hammersmith and Fulham LBC [1991] 1 AC 521, R v Home Secretary, ex p Batemann The Times 1/7-94, Samir v Home Secretary [1993] Imm AR 551, Musah v Home Secretary [1995] Imm AR 236. Cases 424 425/85 Frigo v VIV [1987] ECR 2755 պարագրաֆ 32-33, T-229/94 Deutsche Bahn v Commission [1997] ECR II-1689. Compare R v DPP, ex p Kebilene The Times 31/3-99:

նյութերով³³⁹: Այնուամենայնիվ, լեգիտիմ սպասում չի կարող ծագել այն անձի միակողմանի գործողությունից, ով փորձում է հենվել այդ սպասման վրա³⁴⁰:

Բանավոր հայտարարություններն ավելի քիչ կշիռ ունենան, քան գրավոր հայտարարությունները³⁴¹: Դրանք դժվար է ապացուցել³⁴² և հաճախ համարվում են ոչ իրավաչափ, քանի որ դրանք ներկայացնող պաշտոնատար անձին պատշաճ կերպով չեն պատվիրակվել տվյալ հարցի վերաբերյալ որոշում կայացնելու լիազորությունները: Շատ ճշգրիտ բանավոր հավաստիացումների արդյունքում առաջացած ակնկալիքները, այնուամենայնիվ, ԵՄ դատարանների կողմից որակվել են որպես լեգիտիմ մի քանի կարևոր գործերով³⁴³:

Հատկանշական է, որ ԵՄ իրավունքում լռությունը, անգործությունը կամ հետաձգումն ինքնին չեն կարող հանգեցնել լեգիտիմ ակնկալիքների³⁴⁴: Օրինակ, երբ **Keung** գործում ներգաղթյալի անձնագիրը սխալմամբ պահվել է սահմանին, դիմողը մի քանի ամիս անց ողջամիտ հիմք չի ունեցել ակնկալելու, որ իրեն

³³⁹ St'u R v IRC, ex p Mead [1993] 1 All ER 772:

³⁴⁰ St'u Case T-107/02 GE Betz, Inc, formerly BetzDearborn Inc v OHIM [2004] ECR II-1845, պարագրաֆ 87:

³⁴¹ St'u Chundawadra v Immigration Appeal Tribunal [1988] Imm AR 161, R v Home Secretary, ex p Brind [1991] 1 AC 696, R v DPP, ex p Kebilene The Times 31/3-99: St'u նաև՝ **M. Hunt**, Using Human Rights Law in English Courts (Oxford, 1997), էջեր 242-259:

³⁴² St'u Kuku v Home Secretary[1990] Imm AR 27, R v Shropshire CC, ex p Jones (1997) 9 Admin LR 625, R v Newport CBC, ex p Avery [1999] JPL 452, Cases T-163/89 Sebastiani v EP [1991] ECR II-715, պարագրաֆներ 36-37, T-18/90 Jongen v Commission [1991] ECR II-187, պարագրաֆներ 35-36, T-30/90 Zoder v EP [1991] ECR II-207, պարագրաֆ 25, T-22/92 Weißenfels v EP [1993] ECR II-1095, պարագրաֆ 92:

³⁴³ St'u Cases T-66/96 and 221/97 Mellett v ECJ [1998] ECR-SC II-1305, R v Home Secretary, ex p Oloniluyi [1989] COD 275, Lewis v DPP [1998] COD 98:

³⁴⁴ St'u Khan v Home Secretary [1987] Imm AR 543:

թույլ կտան անորոշ ժամանակով մնալ պետության տարածքում³⁴⁵: Հետաքրքրական է, որ ԵՄ դատարանը վճռել է, որ դիմում ներկայացնելուց հետո անգործությունն ինքնին չի կարող հանգեցնել բարենպաստ արդյունքի ողջամիտ ակնկալիքի, նույնիսկ եթե վարչակազմը գերազանցի օրենքով սահմանված ժամկետը³⁴⁶: Ավելին, ո՛չ բանակցությունները, որքան էլ դրանք երկար և ինտենսիվ լինեն³⁴⁷, ո՛չ էլ դիմումատուին տրված աջակցությունը, թե ինչպես շտկել դիմումը, չեն ստեղծում բարենպաստ արդյունքի ողջամիտ ակնկալիքներ³⁴⁸:

ԵՄ դատարանը վերջերս կայացրած որոշմամբ վերահաստատել է այս մոտեցումը: Այսպես, **Határ Diszkont** գործով³⁴⁹ դատարանը արձանագրել է, որ ազգային հարկային մարմնի՝ նույնիսկ մի քանի տարիների ընթացքում ԱԱՀ հայտարարագրերի ընդունումը, որոնք չեն ներառել հարկ վճարողի կողմից իրականացված որոշ գործարքների հետ կապված գումարները, հստակ հավաստիացում չեն այն մասին, որ այդ գործարքների նկատմամբ ԱԱՀ չի կիրառվի, և, հետևաբար, չի կարող ձևավորել լեգիտիմ ակնկալիք³⁵⁰:

³⁴⁵ St'ú Keung v Home Secretary [1992] Imm AR 201: St'ú նաև՝ Nkiti v Immigration Officer, Gatwick [1989] Imm AR 585, R v Home Secretary, ex p Ansari, 16/1-97:

³⁴⁶ St'ú Cases T-123/89 Chomel v Commission [1990] ECR II-131, C- 258-259 /90 Naviera Laida v Commission [1992] ECR I-2901: St'ú նաև՝ Cases 92/85 Hamai v ECJ [1986] ECR 3157, պարագրաֆներ 8-9, T-23/90 Peugeot v Commission [1991] ECR II-653, պարագրաֆ 47, T-5/93 Tremblay v Commission [1995] ECR II-185 պարագրաֆներ, 76-80, T-44/93 Sabyv Commission [1995] ECR-SC II-541, պարագրաֆներ 50-52:

³⁴⁷ St'ú Cases C-249/87 Mulfinger v Commission [1989] ECR 4127, պարագրաֆներ 17-18:

³⁴⁸ St'ú Case T-465/93 Murgia Messapica v Commission [1994] ECR II-361:

³⁴⁹ St'ú Case C-427/23 Határ Diszkont Kft. v Nemzeti Adó- és Vámhivatal Fellebbviteli Igazgatósága [2025] ECLI:EU:C:2025:XXX:

³⁵⁰ St'ú նաև Case C-846/19 Administration de l'Enregistrement, des Domaines et de la TVA [2021] EU:C:2021:277, պարագրաֆ 92:

Նմանապես, այն հանգամանքը, որ ազգային հարկային մարմինները մի քանի տարիների ընթացքում ընդունել են Határ Diszkont-ի ԱԱՀ հայտարարագրերը՝ հարկային ստուգումների ընթացքում չվիճարկելով ԱԱՀ կառավարման գործարքների դասակարգումը որպես ԱԱՀ-ից ազատված գործարքներ, որպես կանոն բավարար չէ, բացառությամբ շատ հատուկ հանգամանքների, շրջահայաց և բավարար տեղեկացված տնտեսավարողի մոտ ձևավորելու հիմնավորված ակնկալիք, որ այդ գործարքների նկատմամբ այդ հարկը չի կիրառվի³⁵¹:

Ընթացակարգի երկար ձգձգումը, որը հանգեցնում է միջամտող միջոցների ընդունմանը, կարող է, այնուամենայնիվ, լեգիտիմ ակնկալիքներ առաջացնել, եթե ուշացումը տուժած անձի մեղքով չէ: Այսպիսով, **Kahn** գործով հայտարարվել է, որ եթե իշխանությունները որևէ գործողություն չեն ձեռնարկում անօրինական ներգաղթյալի նկատմամբ ավելի քան չորս տարի այն բանից հետո, երբ նրանք իմացել են նրա ներկայության մասին, կարող է ողջամիտ հիմքեր առաջացնել ակնկալելու, որ նա չի արտաքսվի³⁵²:

Հատկանշական է, որ ՀՀ իրավական համակարգը բարենպաստ վարչական ակտերի մասով որդեգրել է հակառակ մոտեցումը: Այսպես, Օրենքի 48-րդ հոդվածը վարչական մարմնի լրության կամ անգործության դեպքում նախատեսում է դրական ֆիկցիայի կանոնը, ըստ որի՝ օրենքով սահմանված ժամկետում

³⁵¹ Տե՛ս նաև՝ Cabinet Medical Veterinar Dr. Tomoiagă Andrei, C-144/14, EU:C:2015:452, պարագրաֆ 46, և Case C-183/14 Salomie and Oltean [2015] EU:C:2015:454, պարագրաֆներ 47 և 48:

³⁵² Տե՛ս Khan v Home Secretary [1987] Imm AR 543 (obiter dictum): Տե՛ս նաև՝ R v Home Secretary, ex p Sinclair [1992] Imm AR 293. Compare R v Secretary of State for Foreign and Commonwealth Affairs, ex p Samuel The Times 17/8-89, Musah v Home Secretary [1995] Imm AR 236:

որևէ որոշում չկայացնելու վարչական ակտը համարվում է ընդունված:

Հաջորդ հանգամանքը, որը գիտագործնական նշանակություն ունի վարչական մարմնի հայտարարությունների հիման վրա լեգիտիմ ակնկալիքների պաշտպանության համատեքստում, **դրանց հասցեատիրոջ կարգավիճակն է:**

Այսպես, ԵՄ իրավունքում լեգիտիմ ակնկալիքների խախտման վերաբերյալ պահանջը կմերժվի, եթե բողոքարկվող վարքը կարող էր կանխատեսվել խոհեմ, հստակ և լավ տեղեկացված առևտրականի կողմից: Հետևաբար, շուկայի պրոֆեսիոնալ մասնակիցները պետք է տեղյակ լինեն պաշտոնական տեղեկագրին³⁵³, ներառյալ օրենսդրության վերաբերյալ առաջարկություններին և Եվրահանձնաժողովի հաղորդագրություններին³⁵⁴, ինչպես նաև ընդհանուր և մասնագիտացված փաստաթղթերին³⁵⁵ և նույնիսկ համապատասխան առևտրային կանոնների և քաղաքականության սպասվող փոփոխությունների վերաբերյալ նախարարների խորհրդում բանակցությունների մասին³⁵⁶:

Այսպես, **Van den Bergh** գործով³⁵⁷ դիմողները՝ ճարպ արտադրողները, պնդել են, որ Ամանորյա կարագի ծրագիրը, որն

³⁵³ St'u Case C-80/89 Behn v Hauptzollamt Itzehoe [1990] ECR I-2659, պարագրաֆ 13: St'u նաև՝ Cases 90/77 Stimming v Commission [1978] ECR 995, 26/81 Oleifici Mediteranei v EEC [1982] ECR 3057, 52/81 Faust v Commission [1982] ECR 3745, 84/81 Staple Dairy Products [1982] ECR 1763, 235/82 Ferriere San Carlo v Commission [1983] ECR 3949:

³⁵⁴ St'u Cases C-13-16/92 Driessen v Minister van Verkeer [1993] ECR I-4751, պարագրաֆներ 31-34, C-22/94 Irish Farmers Association [1997] ECR I-1809, պարագրաֆ 23:

³⁵⁵ St'u Cases 95-98/74, 15 and 100/75 CAC v Commission and Council [1975] ECR 1615, պարագրաֆ 30, 97/76 Merkur v Commission [1977] ECR 1063, պարագրաֆ 6, Case 338/85 Pardini v Ministero del Commercio [1988] ECR 2041, պարագրաֆներ 24-25:

³⁵⁶ St'u Case 281/82 Unifrex v Commission [1984] ECR 1969, պարագրաֆ 26:

³⁵⁷ St'u Case 265/85 Van den Bergh en Jurgens and Van Dijk Food Products v Commission [1987] ECR 1155:

ուղղված էր կարագի ավելցուկային պաշարները նվազեցմանը՝ գներ իջեցնելով, վնաս է հասցրել իրենց: Նրանք նշեցին, որ ծրագիրը խախտում է լեզիտիմ ակնկալիքների սկզբունքը: Նրանք հիմնավորեցին, որ Հանձնաժողովը մի քանի անգամ հրապարակավ հայտարարել է, որ նման ծրագրերը չեն կարող նվազեցնել առկա պաշարները, և, հետևաբար, պատճառ չունեն սպասելու, որ Հանձնաժողովը նման ծրագրի կկիրառի: ԵՄ դատարանը գտավ, որ Հանձնաժողովը երբեք խոստում չի տվել, որ նման ծրագրեր չեն կիրառվի կրկին, այլ միայն նշել է, որ դրանք կկիրառվեն չափավոր: Այսպիսի պայմաններում «չի կարելի բացառել, որ հետագայում ևս կիրարկվի Ամանորյա կարագի ծրագիր, և խոհեմ ու ողջամիտ առևտրականը պետք է հաշվի առներ այդ հնարավորությունը»³⁵⁸: Հետևաբար, լեզիտիմ ակնկալիքների խախտման պնդումը մերժվեց:

Առևտրականից պահանջվող խոհեմության և լավ տեղեկացվածության չափանիշները շատ լեզիտիմ ակնկալիքների պնդումների անհաջողության պատճառ են դարձել, հատկապես այն ոլորտներում, որտեղ գործում են համընդհանուր քաղաքականություններ, ինչպիսիք են՝ գյուղատնտեսությունը, ձկնորսությունը և տրանսպորտը: Այս ոլորտներում կանոնները հաճախ են փոխվում՝ հարմարվելու շուկաների վրա ազդող տարբեր գործոններին: Այդ պատճառով էլ շատ դժվար է պահպանել լեզիտիմ սպասումների պնդումը, քանի որ Միության դատարանները կսպասեն, որ խոհեմ առևտրականը իր շուկայական հաշվարկներում հաշվի կառնի նման փոփոխությունների հնարավորությունը³⁵⁹:

³⁵⁸ Նույն գործը, պարագրաֆ 45:

³⁵⁹ St'u Case 78/77 Luhrs v Hauptzollamt Hamburg-Jonas [1978] ECR 169, Case 127/78 Spitta & Co v Hauptzollamt Frankfurt/Main-Ost [1979] ECR 171, Case C-350/88 Delacre v Commission [1990] ECR I-395, Case T-489/93 Unifruit Hellas (n

Ակնկալիքների պաշտպանությունը նաև հաճախ մերժվում է, քանի որ, ըստ Համայնքի դատական համակարգի, այս կամ այն միջոցը կանխատեսելի էր ընդհանուր տնտեսական իրադարձությունների և շուկայի միտումների լույսի ներքո³⁶⁰: Օրինակ, **Frico** գործով Հանձնաժողովը հրապարակավ հայտարարեց (ի պատասխան Եվրախորհրդարանի հարցի), որ այն «չի նախատեսում [կարագի պահեստավորման] օգնության տարբերակում՝ հիմնված անդամ պետություններում գործող տոկոսների վրա»: Եվրոպական դատարանը վճռել է, որ Հանձնաժողովը, այնուամենայնիվ, իրավունք ուներ մի քանի ամիս անց տարբերակելու օգնության չափը, երբ ցածր տոկոսներով պետություններում սկսեցին կուտակվել խոշոր գումարներ: Ի վերջո, պահեստավորող ընկերությունները պետք է տեղյակ լինեին շուկայի այս զարգացման մասին և կանխատեսեին Հանձնաժողովի գործողությունները³⁶¹:

Հստակ է նաև, որ առևտրականը պետք է լինի ոչ միայն փաստացի, այլև իրավաբանորեն լավ տեղեկացված, թեև այս պահանջը կարող է շատ խիստ թվալ: Այսպես, **Behn** գործում³⁶² հայցվորը ոչ անդամ երկրներից ներկրել էր թուղթ և վճարել էր 3 և 7.5 տոկոս սակագներ՝ հիմնվելով Գերմանիայի ֆինանսների

82), Case T-336/94 Efisol SA v Commission [1996] ECR II-1343, Cases T-466, 469, 473, 474 and 477/93 O'Dwyer v Council [1996] ECR II-2071, Cases T-142 and 283/01 Organización de Productores de Túnidos Congelados (OPTUC) v Commission [2004] ECR II-329, Case C-342/03 Spain v Council [2005] ECR I-1975, Cases C-182 and 217/03 Belgium and Forum 187 ASBL v Commission [2006] ECR I-5479, Case C-519/07 P Commission v Koninklijke FrieslandCampina NV [2009] ECR I-8945, Case T-290/12 Poland v European Commission, EU:T:2015:221:

³⁶⁰ St'u Joined Cases C-319/93, C-40/94 and C-224/94, Hendrik Evert Dijkstra and Others v. Friesland (Frico Domo) Coöperatie BA and Others, (Full Court) Judgment of 12 December 1995, [1995] ECR I-4471:

³⁶¹ St'u Cases 424 425/85 Frigo v VIV [1987] ECR 2755, պարագրաֆներ 32-33:

³⁶² St'u Case C-80/89 Behn Verpackungsbedarf GmbH v Hauptzollamt Itzehoe [1990] ECR I-2659:

նախարարության կողմից հրապարակված մաքսային սակագների ձեռնարկի վրա: Սակայն պետք էր վճարել 3.2 և 8 տոկոս, և Գերմանական մաքսային վարչությունը պահանջեց տարբերության վճարում: Հայցվորը վիճարկեց և պնդեց, որ տրամաբանական չէր, որ ինքը կարող էր հայտնաբերել Գերմանական ձեռնարկում կատարված սխալը, ուստի չպետք է վճարի լրացուցիչ գումարը: ԵՄ մաքսային օրենսդրությունը նման հայցերի պաշտպանություն նախատեսում էր³⁶³: Դատարանը ակնհայտորեն համակրում է հայցվորին և հարցնում՝ արդյոք անհատից պահանջվող ուշադրությունը չափազանցված չէ՞, քանի որ նրանից պահանջվում է կիրառելի սակագների վերաբերյալ տեղեկացված լինել ավելի լավ, քան Գերմանիայի ֆինանսների նախարարությունն ու մաքսային վարչությունը:

ԵՄ դատարանը չկիսեց այս համակրանքը. «Միության կիրառվող սակագների կարգավորումները հանդիսանում էին միակ համապատասխան դրական իրավունքը Եվրոպական համայնքների պաշտոնական տեղեկագրում իրենց հրապարակման օրվանից, և ակնկալվում էր, որ յուրաքանչյուր ոք գիտի այդ օրենքը»³⁶⁴: Այդ պատճառով առևտրականը պետք է կարդար պաշտոնական տեղեկագիրը և ծանոթանար համապատասխան կանոններին:

ԵՄ դատարանը վերջերս կայացրած որոշմամբ վերահաստատել է այս մոտեցումը: Այսպես, **Barón Crespo and Others**³⁶⁵ դատարան արձանագրել է, որ անկախ այն բանից, թե ինչ ձևով

³⁶³ St'u Council Regulation 1697/79/EEC of 24 July 1979 on the post-clearance recovery of import duties or export duties which have not been required of the person liable for payment of goods entered for a customs procedure involving the obligation to pay such duties [1979] OJ L197/1, Art 5(2):

³⁶⁴ Case C-80/89 Behn Verpackungsbedarf GmbH v Hauptzollamt Itzehoe [1990] ECR I-2659, [13].

³⁶⁵ St'u Joined Cases T-620/23 to T-1023/23 Barón Crespo and Others v European Parliament (17 December 2025):

է տեղեկատվությունը տրամադրվել, հստակ, անվերապահ և հետևողական տեղեկատվությունը, որը բխում է իրավասու և վստահելի աղբյուրներից, այնպիսի հավաստիացում է, որը կարող է ձևավորել նման ակնկալիքներ: Սակայն անձը չի կարող հիմնավոր կերպով վկայակոչել լեգիտիմ ակնկալիքների պաշտպանության սկզբունքի խախտումը, եթե նման հավաստիացումներ չեն տրամադրվել: Նմանապես, եթե շրջահայաց և զգոն անձը կարող էր կանխատեսել իր շահերի վրա ազդեցություն ունեցող ԵՄ միջոցի ընդունումը, ապա այդ միջոցի ընդունման դեպքում նա չի կարող վկայակոչել լեգիտիմ ակնկալիքների պաշտպանության սկզբունքը³⁶⁶: Պարզ է, որ ԵՄ դատարանները խստագույն դիրք են ընդունում առևտրականների և նույնիսկ ԵՄ աշխատակիցների³⁶⁷ նկատմամբ, թե ինչ կարող են նրանք կանխատեսել:

Եվ վերջապես, վարչական մարմնի տված հավաստիացումներից հրաժարվելու դեպքում լեգիտիմ ակնկալիքների պաշտպանության հարցը որոշելիս նշանակություն ունի նաև անձի վարքագիծը: Ակնկալիքները, որոնք հիմնված են կեղծիքի միջոցով ստացված վարչական առաջարկությունների կամ հայտարարությունների վրա, հիմնավորված չեն ճանաչվել³⁶⁸:

Անգլիական իրավունքում ընդունված է համարել, որ հավաստիացում ստանալու ցանկություն ունեցող անձը պետք է «բոլոր քարտերը դնի սեղանին»³⁶⁹: Այսինքն, այն պետք է բացա-

³⁶⁶ St'u Case C-725/20 P Coppo Gavazzi and Others v Parliament EU:C:2024:766 (19 September 2024):

³⁶⁷ St'u Case 3/83 Abrias v Commission [1985] ECR 1995, պարագրաֆներ 23–27, Cases T-576–582 Browet v Commission [1994] ECR II-677, պարագրաֆ 46:

³⁶⁸ St'u Cases C-96/89 Commission v Netherlands [1991] ECR I-2461, պարագրաֆ 30, C-285/95 Kol v Land Berlin [1997] ECR I-3069, պարագրաֆ 28: St'u նաև՝ McPhee v North Lanarkshire Council (1998) SLT 1317:

³⁶⁹ R v IRC, ex p MFK Underwriting Agencies Ltd [1990] 1 WLR 1545, 1569, Matrix Securities Ltd v IRC [1994] 1 WLR 334.

հայտի գործին առնչվող բոլոր փաստերը և, հնարավոր է, նույնիսկ ուշադրություն հրավիրի համապատասխան իրավական հարցերի վրա, որոնք ինքնին ակնհայտ չեն³⁷⁰:

Այսպիսով, կարող ենք եզրահանգել, որ վարչական մարմնի գործողությունների (հայտարարությունների) հիման վրա լեգիտիմ ակնկալիքների պաշտպանության կարևոր նախապայման են նաև անձի կարգավիճակը և նրա վարքագիծը: Այսպես, լեգիտիմ ակնկալիքների խախտումը չի կարող վկայակոչվել, եթե շրջահայաց անձի համար կարող էր կանխատեսելի լինել իր շահերի վրա ազդող որոշման ընդունումը, ինչպես նաև եթե մարմնի գործողությունը (հայտարարությունը) հիմնված է դրա հասցեատիրոջ տրամադրած թերի կամ սխալ տեղեկատվության վրա:

2.2. Լեգիտիմ ակնկալիքների պաշտպանությունը վարչական պրակտիկան կամ քաղաքականությունը փոփոխելու դեպքում

Վերը քննարկվեցին այն դեպքերը, երբ վարչական մարմինը կոնկրետ անձի հետ հարաբերություններում իրականացրել է կոնկրետ հայտարարություն, որը հիմք է հանդիսացել լեգիտիմ ակնկալիքի ձևավորման համար, սակայն հետագայում շեղվել է դրանից: Այժմ քննարկենք այն իրավիճակները, երբ վարչական մարմինը շեղվում է իր պրակտիկայից: Ընդ որում՝ հնարավոր է երկու իրավիճակ. երբ վարչական մարմինը փոխում է իր պրակտիկան, և երբ վարչական մարմինը շեղվում է իր պրակտիկայից միայն կոնկրետ դեպքով:

Առաջին տեսակի դեպքերը առանձնապես դժվար են, քանի որ վարչական մարմնի կողմից պրակտիկայի փոփոխման

³⁷⁰ *St'u Matrix Securities Ltd v IRC* [1994] 1 WLR 334:

անհրաժեշտությունը ակնհայտ է: Անգլիայի, Ֆրանսիայի և ԵՄ իրավունքում լայնորեն ընդունված է այն սկզբունքը, որ վարչական մարմիններն իրավունք ունեն ժամանակ առ ժամանակ փոխելու իրենց քաղաքականությունը և պրակտիկան: Առանց նման լիազորությունների իշխանությունները չէին կարողանա արդյունավետ գործել հանրային շահերից ելնելով: Այսպիսով, անհատները չեն կարող լեգիտիմորեն ակնկալել բարենպաստ քաղաքականության կամ պրակտիկայի պահպանում, և միայն այն փաստը, որ որևէ փոփոխություն անձի համար անբարենպաստ է, սովորաբար բողոքելու առիթ չի տալիս³⁷¹:

Այնուամենայնիվ, արդյունավետ կառավարումը պետք է զուգորդվի հանրային իշխանության նկատմամբ արդարության, որոշակիության և վստահության հետ, ինչը պահանջում է հարգել լեգիտիմ ակնկալիքները: Քաղաքականության ընդհանուր փոփոխությունը, որպես կոնկրետ դեպքում դրանից շեղում, կարող է խաթարել այն անհատների ակնկալիքներն ու վստահությունը, ովքեր գործել են սկզբնական քաղաքականության կամ պրակտիկային համաձայն:

Գրականության մեջ առանձնացվում է երկու փաստարկ պրակտիկայից շեղվելու՝ վարչական մարմնի ազատությունը սահմանափակելու հարցում: Նախ, պրակտիկայից շեղվելը կարող է չարդարացնել անձանց ակնկալիքները, ովքեր պլանավորել և ապավինել են դրան: Երկրորդ, գոյություն ունեցող պրակտիկայի համաձայն անձին վերաբերվելու անհրաժեշտությունը բխում է հավասար վերաբերմունքի սկզբունքից:

³⁷¹ St'u Hughes v Department of Health and Social Security [1985] AC 776, 778, Cases 19/61 Mannesman v High Authority [1962] ECR 717, 752, 52/81 Faust v Commission [1982] ECR 3745, 3762, C-216/87 R v Ministry of Agriculture, ex p Jaderow [1989] ECR 4509, C-280/93 Germany v Council [1994] ECR I-4973, պարագրաֆ 80, C-69/89 Nakajima v Council [1991] ECR II-2069, պարագրաֆ 119-120, T-134/96 Smets v Commission [1997] ECR II-2333:

Այս երկու տարբեր հիմնավորումները տարբեր դեր են խաղում տարբեր իրավական համակարգերում: Օրինակ, թեև ֆրանսիական դատարանները դիմում են միայն հավասար վերաբերմունքի սկզբունքին պրակտիկայից և քաղաքականությունից շեղվելու սահմանափակումները հիմնավորելու համար, անգլիական և եվրոպական իրավունքներում կարելի է գտնել հղումներ ինչպես հավասարության (հաճախ կոչվում է «հետևողականություն»), այնպես էլ ակնկալիքների պաշտպանության սկզբունքներին³⁷²: Իդեալում անհրաժեշտ է ճանաչել երկու հիմնավորումների նպատակահարմարությունն էլ և դրանով իսկ նաև լեզիտիմ ակնկալիքների ավելի մեծ ծավալով պաշտպանություն տրամադրել կոնկրետ իրավիճակներում պրակտիկայից շեղվելու դեպքում, քան պրակտիկայի ընդհանուր փոփոխության իրավիճակներում:

Ֆրանսիայում քաղաքականությունը կիրառելու պարտականությունը սահմանվել է **Crédit foncier de France** 1970 թվականի որոշմամբ: Այս որոշումը ընդունում էր, որ հանրային իշխանությունը բնակարանային պայմանների բարելավման ազգային հիմնադրամից դրամաշնորհներ տրամադրելու հայեցողական լիազորությունները կարող է իրականացնել՝ համաձայն ընդհանուր գրավոր քաղաքականության ուղեցույցների (իրահանգների)³⁷³: Կառավարության հանձնակատար Բերտրանն այս կապակցությամբ բացատրեց, որ նման քաղաքականությունը ձևա-

³⁷² Տե՛ս R v Home Secretary, ex p Kahn [1984] 1 WLR 1337, R v DPP, ex p Duckenfield [1999] 2 All ER 873, Case T-7/89 Hercules Chemicals v Commission [1991] ECR II-1711:

³⁷³ Տե՛ս CE 11/12-70 Crédit foncier de France Rec 750 confirmed by CE 29/6-73 Société Gea Rec 453, CE 3/11-76 Aufaure no 00.838, CE 18/11-77 SA Marchand Rec 442, CE 14/12-88 SA Gibert Marine AJDA 1989, 266, CE 18/10-91 Union nationale de la propriété immobilière Rec 338, CE 29/7-94 Gentilhomme Rec 371, CE 28/7-95 Haguet DA 1995 no 556:

կերպելուց հետո հավասար վերաբերմունքի ընդհանուր սկզբունքը պահանջում էր հանրային իշխանությունից այն կիրառել բոլոր հայտարարությունների համար, բացառությամբ այն դեպքերի, երբ գործի հատուկ հանգամանքները կամ կարևորագույն հանրային շահը արդարացնում էին այլ արդյունք³⁷⁴:

Contremoulin գործով Պետական խորհուրդը վճռել է, որ դիմումատուն իրավունք ունի իր երեխայի համար տեղ ստանալու իր աշխատավայրին մոտ գտնվող դպրոցում՝ համաձայն արդեն իսկ գործող պրակտիկայի, որից օգտվել են իր որոշ գործընկերները, ովքեր աշխատում են իրենց տներից հեռու: Հատուկ հանգամանքների կամ գերակա հանրային շահերի բացակայության պայմաններում հավասարության սկզբունքը պահանջում էր պրակտիկայի հետևողական կիրառում³⁷⁵:

Ֆրանսիական դատական պրակտիկայում առկա այս մոտեցումը կարելի է գտնել նաև ԵՄ իրավունքում: **Louwage** ընկերության վերաբերյալ հայտնի գործով Եվրահանձնաժողովը մերժել էր երկու աշխատակիցների հատուցումները, ինչը հակասում էր բոլոր աշխատակիցների շրջանում տարածված «ներքին հրահանգում» շարադրված փոխհատուցման քաղաքականությանը: Եվրոպական դատարանը վճիռ կայացրեց հոգուտ դիմումատուների՝ ասելով, որ. «Չնայած ներքին հրահանգը չունի օրենքի ուժ, որը վարչակազմը միշտ պարտավոր է պահպանել, այն, այնուամենայնիվ, սահմանում է վարքագծի կանոն, որը ցույց է տալիս այն գործելակերպը, որը պետք է պահպանվի, որից վարչակազմը չի կարող հետ կանգնել՝ առանց բացատրելու այն պատճառ-

³⁷⁴ St'u Braibant conclusions CE 12/12-72 Robinet D 1975, 216-7, TA Besançon 7/2-73 Ballaud AJDA 1973, 590:

³⁷⁵ St'u J. S. Bell, French Constitutional Law (Oxford, 1992), էջ 88:

ները, որոնք նրան դրդել են դա անել, քանի որ հակառակ դեպքում հավասարության սկզբունքը կխախտվեր»³⁷⁶:

Gangadeen, Credit foncier de France, Courage գործերում ընդունված սկզբունքը, չնայած դատարանների կողմից տրված տարբեր հիմնավորումներին հետևյալն է: Չի կարելի անտեսել գոյություն ունեցող քաղաքականությունը (հրահանգը). դա պարտադիր է այն անձանց հետ հարաբերություններում, ովքեր հայտնվել են դրա գործողության ներքո³⁷⁷: Քաղաքականությունը պետք է մտածված լինի, որոշում կայացնողը պետք է դրան որոշակի կշիռ տա և դրանից շեղվելու դեպքում հավասարակշռի հանրային շահերի հետ³⁷⁸:

Ընդ որում, «քաղաքականություն» հասկացությունը, որը պետք է կիրառվի բարեխղճորեն, բավականին լայն է: Գրավոր հայտարարությունը, որը ներկայացնում է օրենսդրական դրույթների մեկնաբանությունը, հայեցողության կիրառման քաղաքականությունը կամ գերակշռող պրակտիկան, *prima facie* պարտադիր է՝ անկախ դրա ճշգրիտ ձևից կամ նպատակից³⁷⁹:

³⁷⁶ Case 148/73 *Louage v Commission* [1974] ECR 81, պարագրաֆ 12: *St' u նաև՝ Case 105/75 Giuffrida v Commission* [1976] ECR 1395, պարագրաֆ 17:

³⁷⁷ *St' u R v IRC, ex p Camacq Co* [1989] STC 785, *R v Jockey Club, ex p RAM Racecourses* [1993] 2 All ER 223, *R v Home Secretary, ex p Shahed* [1995] Imm AR 303, *R v Home Secretary, ex p Katoorah* [1996] Imm AR 595, *Cases T- 576-582 /93 Browet v Commission* [1994] ECR-SC II-619, T-244/94 *British Steel v Commission* [1998] ECR II-1887, CE 22/1-93 *Sabiani no 89.078*, CAA Bordeaux 15/1-91 *Arnal DF 1992 no 19 comm 990*:

³⁷⁸ *St' u Bristol DC v Clark* [1975] 3 All ER 978, 981-2, *R v Bolton MBC, ex p Kirkman* [1998] JPL 787, *R v Brent LBC, ex p MacDonagh* [1990] COD 3, *R v DPP, ex p Burke* [1997] COD 169, *R v North Derbyshire Health Authority, ex p Fisher* (1998) 10 Admin LR 27, 32, 42-43:

³⁷⁹ *St' u Case T-134/96 Smets v Commission* [1997] ECR II-2333, *Cases C-58/94 Netherlands v Council* [1996] ECR I-2169, պարագրաֆ 37-38, 181-184 /86 *Del Plato v Commission* [1987] ECR 4991, 282/81 *Ragusa v Commission* [1983] ECR 1245, պարագրաֆ 18, T-33/91 *Willams v Court of Auditors* [1992] ECR II-2499, պարագրաֆ 66:

Ավելին, քաղաքականություն կիրառելու պարտականությունը տարածվում է միայն հրապարակված փաստաթղթերի վրա, ի տարբերություն զուտ «ներքին» փաստաթղթերի³⁸⁰: Այս կանոնը կիրառվում է ԵՄ իրավունքում, չնայած որ հրապարակման ձևի համար խիստ պահանջներ չկան³⁸¹:

Վերջինը և ամենակարևորն այն է, որ քաղաքականության մասին հայտարարությունները հաճախ «կողավորում» են արդեն գոյություն ունեցող պրակտիկան³⁸²: Այլ կերպ ասած քաղաքականությունը և պրակտիկան կիրառելու պարտականությունը վերաբերում է նաև չգրված, բայց կայացած վարչական պրակտիկային:

Ֆրանսիական **Contremoulin** գործով Պետական խորհուրդը վճռել է, որ դիմումատուն իրավունք ունի իր երեխայի համար տեղ ստանալու իր աշխատավայրին մոտ գտնվող դպրոցում՝ համաձայն արդեն իսկ գործաձված պրակտիկայի, որից օգտվել են իր որոշ գործընկերներ, ովքեր աշխատում են իրենց տներից հեռու: Հատուկ հանգամանքների կամ գերակա հանրային շահերի բացակայության պայմաններում հավասարության սկզբունքը պահանջում էր պրակտիկայի հավատարիմ կիրառում³⁸³:

³⁸⁰ Տե՛ս R v Home Secretary, ex p Hastrup [1996] Imm AR 616, R v IRC, ex p MFK Underwriting Agencies Ltd [1990] 1 All ER 91, 107, R v Home Secretary, ex p Amankwah [1994] Imm AR 240, Home Secretary v Abdi [1996] Imm AR 148, CE 31/5-89 Castellani no 91.681, CAA Nantes 24/11-93 Prono no 92NT00504, CE 17/10-97 Majorel no 148. 660, Cases 343/81 Michael v Commission [1983] ECR 4023, պարագրաֆ 13, T-63/89 Latham v Commission [1991] ECR II-19, պարագրաֆ 25, T-155/94 Climax Paper Converters v Council [1996] ECR II-873, պարագրաֆ 115:

³⁸¹ Տե՛ս **Schönberg, Søren**, նշված աշխատ., էջ 140:

³⁸² Տե՛ս Cases 25/83 Buick v Commission [1984] ECR 1773, 7/86 Vincent v EP [1987] ECR 2473, 2477:

³⁸³ Տե՛ս **J. S. Bell**, French Constitutional Law (Oxford, 1992), էջ 88:

Բոլոր դեպքերում պետք է նկատի ունենալ, որ դժվար է ապացուցել պրակտիկայի առկայությունը, որը չի «կողիֆիկացվել» գրավոր ձևով³⁸⁴: Խնդիրը կայանում է նրանում, որ չկա հստակություն այն հարցի մասին, թե երբ է պրակտիկան բավականաչափ «հաստատված» դառնում³⁸⁵: Համեմատական փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ մինչ քսանհինգ - երեսունհինգ տարի անընդմեջ կիրառվող պրակտիկան հստակ է³⁸⁶, անձը, որպես կանոն, դժվար թե ունենա բարենպաստ որոշում կայացնելու լեգիտիմ ակնկալիքներ, պարզապես այն պատճառով, որ նախկինում մի քանի անգամ իր³⁸⁷ կամ նմանատիպ հանգամանքներում գտնվող մեկ այլ անձի³⁸⁸ վերաբերյալ նման որոշում է կայացվել: Բացի այդ, դատական պրակտիկայի վերլուծությունը ցույց է տալիս, որ դատարանները միջամտում այս հարցին, երբ վարչական մարմիններն ամբողջովին անտեսել են իրենց նախկին պրակտիկան:

Ferriere San Carlo գործով³⁸⁹ դիմողը պահանջեց վերացնել տուգանքը, որը նշանակվել էր պողպատի արտադրության քվո-

³⁸⁴ Տե՛ս Samir v Home Secretary [1993] Imm AR 551, Patel v Home Secretary [1993] Imm AR 392, R v IRC, ex p Warburg [1994] STC 518, Case 92/85 Hamai v ECJ [1986] ECR 3157, պարագրաֆ 8-9:

³⁸⁵ Տե՛ս **C. F. Forsyth**, "The Provenance and Protection of Legitimate Expectations" (1988) CLJ 238, էջեր 380-381:

³⁸⁶ Տե՛ս **Schönberg, Søren**, նշված աշխատ., էջեր 141-142:

³⁸⁷ Տե՛ս R v North East Thames Health Authority, ex p de Groot [1988] COD 25, R v Birmingham CC, ex p Sheptonhurst [1990] 1 All ER 1026, Cases 16-19/59 Geitling v High Authority [1960] ECR 45, 64 and 67/63 SOREMA v High Authority [1964] ECR 321, 352, C-69/89 Nakajima v Council [1991] ECR II-2069, պարագրաֆներ 119-120, T-20/91 Holtbecker v Commission [1992] ECR II-2599, պարագրաֆ 53, C-258-259 /90 Naviera Laida v Commission [1992] ECR I-2901, T-498/93 Dornonville v Commission [1994] ECR-SC II-813, պարագրաֆ 46, T-134/96 Smets v Commission [1997] ECR II-2333:

³⁸⁸ Տե՛ս Yakub v Chief Immigration Officer, Heathrow [1988] Imm AR 177:

³⁸⁹ Տե՛ս Case T-243/94 British Steel v Commission [1997] ECR I-1887, պարագրաֆ 78:

տան գերազանցելու համար: Նա պնդեց, որ վաճառքը կատարվել է համաձայն Հանձնաժողովի ընդունած ընդհանուր պրակտիկայի, որը թույլ էր տալիս որոշ պաշարների վաճառք՝ ի լրումն մատակարարման քվոտայի: ԵՄ դատարանը գտավ, որ չկա որոշում, որը դադարեցնում էր նախկին պրակտիկան, և դիմող ընկերությանը անհատապես չէր նախազգուշացվել, որ պրակտիկան դադարեցվել է: Ուստի դիմողը իրավունք ուներ ենթադրելու, որ պրակտիկան չի դադարեցվել, և Հանձնաժողովի վրա կար պարտականություն՝ նախքան տուգանքի նշանակումը կատարել ստուգում՝ պարզելու, թե արդյոք ավելցուկը կարող է վերաբերել այդ պրակտիկային: Հանձնաժողովը, սակայն, հրաժարվել էր այդ ստուգումը կատարել, և տուգանքի նշանակումը խախտել էր դիմորդի լեգիտիմ ակնկալիքները:

ԵՄ դատարանը **Dansk Rørindustri** գործով, սակայն, հրաժարվեց կիրառել նախորդ գործի տրամաբանությունը մրցակցության իրավունքի ոլորտում: Դատարանը գտավ, որ տուգանքների չափի սահմանման հետ կապված անցյալ պրակտիկան չի ստեղծում լեգիտիմ ակնկալիք, թե տուգանքի չափը չի փոխվի առանց նախազգուշացման, հատկապես այն պատճառով, որ տեղի ունեցած փոփոխությունը կանխատեսելի էր³⁹⁰:

Խոսելով վարչական պրակտիկայի կամ քաղաքականության փոփոխության մասին՝ պետք է կարևորել ոչ միայն լեգիտիմ ակնկալիքների, այլ նաև հավասարության նկատառումները: Այսինքն՝ նույնիսկ եթե դիմողը չի կարող ապացուցել լեգիտիմ ակնկալիք, **հավասարության սկզբունքը** պետք է բավարար լինի պահանջի հիմք հանդիսանալու համար, եթե վարչական մարմինը չի կարող հիմնավորել իր պրակտիկայից շեղվելու պատճառները:

³⁹⁰ St'u Cases C-189, 202, 205, 208 and 213/02 P Dansk Rørindustri:

Այսպես, վերը նշված **Louwage** գործով³⁹¹ դիմողը պահանջեց տեղափոխման ծախսերի հետ կապված իրավունքների վերաբերյալ Հանձնաժողովի որոշման վերացում՝ հիմնվելով Հանձնաժողովի ներսում գործող որոշակի ուղեցույցի վրա: ԵՄ դատարանը եզրակացրեց, որ չնայած ներքին ուղեցույցը չունի օրենքի ուժ, որի պահպանման պարտավորություն վարչակազմը միշտ կունենա, այն սահմանում է վարքագծի կանոն, որը ցույց է տալիս հետևողական պրակտիկան: Վարչակազմը չի կարող շեղվել այս կանոնից առանց հիմնավորելու դրա պատճառները, «քանի որ հակառակ դեպքում խախտվում են հավասարության սկզբունքները»³⁹²: Այս սկզբունքը կրկնվեց **Dansk Rørindustri** գործով³⁹³, որտեղ ԵՄ դատարանն ընդգծեց, որ վարչակազմը չի կարող առանձին դեպքերում շեղվել այսպիսի կանոններից առանց **հավասար վերաբերմունքի սկզբունքին** համահունչ հիմնավորումների: Նման կանոնների ընդունումը սահմանափակում է արտոնյալ լիազորությունների իրականացման ձևը:

Նմանապես, **Vlaamse Gewest** գործով³⁹⁴ ԵՄ դատարանը նշեց, որ Հանձնաժողովն է մշակել այն չափորոշիչները, որոնք կօգտագործվեն գնահատելու համար, թե արդյոք օգնությունը համատեղելի է ընդհանուր շուկայի հետ, եթե դրանք համապա-

³⁹¹ St'u Case 148/73 Louwage v Commission [1974] ECR 81:

³⁹² Case 282/81 Ragusa v Commission [1983] ECR 1245, Case T-33/91 Williams v Court of Auditors [1992] ECR II-2499, Case F-52/05 Q v Commission EU:F:2008:161.

³⁹³ St'u Cases C-189, 202, 205, 208 and 213/02 P Dansk Rørindustri, Case T-59/02 Archer Daniels Case T-374/04 Germany v Commission [2007] ECR II-4431:

³⁹⁴ St'u Cases 95-98/74, 15 and 100/75 CAC v Commission and Council [1975] ECR 1615, պարագրաֆ 30, 235/82 Ferriere San Carlo v Commission [1983] ECR 3949, պարագրաֆ 11-13, C-22/90 France v Commission [1991] ECR I-5285, T-451/93 San Marco Impex Italiana v Commission [1994] ECR II-1061, պարագրաֆ 74, T-129/96 Preussag Stahl v Commission [1998] ECR II-609, պարագրաֆ 79-83, T-141/94 Thyssen Stahl v Commission, 11/3-99, պարագրաֆ 511:

տասխանում են ԵՄ հիմնադիր պայմանագրի հոդվածներին: Հանձնաժողովն իրավունք ունի նման չափորոշիչներ սահմանել ուղեցույցներում, և դրանց ընդունումը պետք է դիտվի որպես Հանձնաժողովի հայեցողական լիազորությունների կանխատեսելի իրականացումն ապահովող միջոց: Սակայն ուղեցույցները պետք է կիրառվեն հավասարության սկզբունքի համաձայն, այսինքն՝ **նման դեպքերը, ինչպես սահմանված են ուղեցույցներում, պետք է համարժեք և նույն կերպ գնահատվեն**³⁹⁵:

Ամփոփելով վարչական մարմնի քաղաքականությունից և պրակտիկայից շեղվելու դեպքում լեգիտիմ ակնկալիքների պաշտպանության ուսումնասիրությունը՝ կարող են փաստել, որ վարչական մարմիններն իրավունք ունեն ժամանակ առ ժամանակ փոխելու իրենց քաղաքականությունը և պրակտիկան, և անհատները չեն կարող լեգիտիմորեն ակնկալել գործող քաղաքականության կամ պրակտիկայի պահպանում: Սակայն բոլոր դեպքերում, երբ վարչական մարմինը ցանկանում է փոխել իր քաղաքականությունը կամ պրակտիկան, պարտավոր է հիմնավորել որոշակի հանրային շահ, որը գերակշռում է լեգիտիմ ակնկալիքի պաշտպանությանը: Ընդ որում, քաղաքականության և պրակտիկայի հետևողական կիրառման պահանջը բխում է ոչ միայն լեգիտիմ ակնկալիքների պաշտպանության, այլ նաև հավասարության և կամայականության արգելքի սկզբունքներից: Ուստի նույնիսկ եթե անձը չի կարող ապացուցել լեգիտիմ ակնկալիք, **հավասարության սկզբունքը** ևս վարչական մարմնից պահանջում է հիմնավորել իր պրակտիկայից շեղվելու պատճառները:

³⁹⁵ St' u R v Bristol City Magistrates' Court, ex p Willsman [1991] RA 292, R v Department of Trade and Industry, ex p Blenheim [1992] COD 453, Musah v Home Secretary [1995] Imm AR 236, R v Home Secretary, ex p Dey [1996] Imm AR 521:

§3. Լեզիտիմ ակնկալիքների ընթացակարգային պաշտպանությունը

Լեզիտիմ ակնկալիքների ընթացակարգային պաշտպանությունն ունի երկու ասպեկտ: Նախ, եթե վարչական մարմինը պետք է վերացնի կամ փոփոխի բարենպաստ վարչական ակտը, լեզիտիմ ակնկալիքների պաշտպանությունը պահանջում է դա իրականացնել բոլոր ընթացակարգային երաշխիքների պահանմամբ (լսվելու հնարավորություն, հիմնավորում և այլն): Մյուս կողմից, վարչական մարմնի վարքագիծը անձի մոտ կարող է ձևավորել որոշակի ընթացակարգի հետևելու լեզիտիմ ակնկալիք: Օրինակ, որոշումներ կայացնելուց առաջ որպես կանոն լսումների իրականացումը կամ դրանք իրականացնելու վերաբերյալ տված կոնկրետ և հստակ խոստումն անձի մոտ կարող է ձևավորել լեզիտիմ ակնկալիք առ այն, որ որոշումը չի կայացվի նախքան իրեն լսելը: Լեզիտիմ ակնկալիքների ընթացակարգային պաշտպանության այս ասպեկտներին անդրադառնանք առանձին-առանձին:

Վարույթի և լեզիտիմ ակնկալիքների միջև կապը կարելի է բացատրել հետևյալ կերպ: Նախ, պատշաճ իրականացված վարչական վարույթը կարող է նվազեցնել այն ռիսկը, որ ակնկալիքներն իրականում կխաթարվեն այնպես, որ անարդարություն կամ անվստահություն զգացում առաջացնեն վարչական մարմնի նկատմամբ: Եթե վարչարարությունից տուժող անձինք նախապես ստանում են պատշաճ ծանուցում, նրանք կարող են հարմարեցնել իրենց ակնկալիքները և գործել այնպես, որ խուսափեն կամ սահմանափակեն վարչարարությանը վստահելու հետևանքով առաջացած վնասները: Եթե շահագրգիռ անձինք լսվեն, նրանց ակնկալիքներն ու վստահությունը կարող են

ներկայացվել վարչական մարմնի ուշադրությանը՝ առաջարկելով փաստարկներ այն գործողությունների դեմ, որոնք կխաթարեն այդ սպասելիքները: Եթե ակնկալիքների վրա ազդող որոշումները պատճառաբանված լինեն, վարչական մարմինը ստիպված կլինի հաշվի առնել այն հիմնավորումները, որոնցով այդ սպասումները չեն արդարացվել:

Երկրորդ, պատշաճ վարույթը կարող է նվազեցնել անարդարության և անվստահության զգացումը, որը հաճախ ունենում է այն անձը, ում ակնկալիքները չեն բավարարվել: Եթե ակնկալիքների հասցեատիրոջը տրվում է ծանուցում, վարույթի ընթացքում լսվելու իրավունք, ինչպես նաև հիմնավորում, թե ինչու չեն կարող բավարարվել նրա ակնկալիքները, վարչական մարմինն ընդունում է, որ իր գործողությունները ազդում են նրա ինքնավարության և արժանապատվության վրա³⁹⁶:

Այժմն անդրադառնանք այն հարցին, թե վարութային կամ ընթացակարգային իրավունքներն ինչ դեր ունեն լեգիտիմ ակնկալիքների պաշտպանության հարցում: Վարութային իրավունքների նշանակությունը գործնականում ազդում է դրանց շրջանակի և բովանդակության վրա³⁹⁷:

Ֆրանսիայում ընթացակարգային իրավունքների արժեքը, ընդհանուր առմամբ, դիտվում է դրանց ներդրումը ճիշտ արդյունքների հասնելու գործում: Այսինքն՝ դրանց հիմնավորումը գրեթե բացառապես դիտարկվում է որպես գործիքային: Այսպիսով, Ֆրանսիայում դատարանի կողմից ընթացակարգային սխալի արդյունքում վարչական ակտը կվերացվի միայն այն

³⁹⁶ Տե՛ս նաև՝ **Կարեն Հակոբյան**, «Պատշաճ վարչարարության իրավունքի արժեքը», ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի գիտաժողովի նյութերի ժողովածու, 2019, էջեր 129–140, էջ 131:

³⁹⁷ Տե՛ս **Craig**, նշված աշխատ., էջեր 402–403:

դեպքում, եթե պարզվի, որ սխալն իսկապես ըստ էության ազդել է ընդունված որոշման վրա³⁹⁸:

Ընդհակառակը, ընդհանուր իրավունքի երկրներում իրավաբան-գիտնականները³⁹⁹ և ավելի ու ավելի հաճախ դատարանները՝ չեն ընդունում վարության իրավունքների գործիքային հիմնավորումը⁴⁰⁰: Համարվում է, որ ընթացակարգերը նպաստում են ժողովրդավարական մասնակցությանը, արժանապատվությանը և ինքնավարությանը, ինչպես նաև իրավաբանորեն ճիշտ արդյունքներին, հետևաբար, ընթացակարգային սխալի հիման վրա ընդունված վարչական ակտերը սովորաբար վերացվում են դատական վերանայման ընթացքում՝ առանց ընթացակարգի և բովանդակության պատճառահետևանքային կապը ապացուցելու անհրաժեշտության⁴⁰¹: Մեծ Բրիտանիայում ոչ գործիքային հիմնավորումների ճանաչումը կարող է բացատրել, թե ինչու է այստեղ ընթացակարգային իրավունքների շրջանակը ավելի լայն, քան Ֆրանսիայում⁴⁰²:

³⁹⁸ Տե՛ս **J. Moreau**, 'Les conséquences des illégalités procédurales en droit administratif français' (1993) ERPL, special edn. 85, էջեր 90-91:

³⁹⁹ Տե՛ս **J. L. Mashaw**, *Due Process in the Administrative State* (New Haven, 1985), էջեր 104-1055, **R. M. Dworkin**, *A Matter of Principle* (Oxford, 1985), էջեր 79-84, **T. R. S. Allan**, *Procedural Fairness and the Duty of Respect* (1998) OJLS 497:

⁴⁰⁰ Տե՛ս, օրինակ, *R v Home Secretary, ex p Doody* [1994] 1 AC 531: Տե՛ս նաև՝ **G. Richardson**, 'The Legal Regulation of Process', in **G. Richardson and H. Genn** (eds.), *Administrative Law and Government Action* (Oxford, 1994), **D. Woodhouse**, *In Pursuit of Good Administration: Ministers, Civil Servants and Judges* (Oxford, 1997), էջեր 161-167:

⁴⁰¹ Տե՛ս *John v Rees* [1970] Ch 345, 402, *R v Chief Constable of North Wales Police force, ex p Evans* [1982] 1 WLR 1155, 1160-1, *R v Chief Constable of the Thames Valley Police Force, ex p Cotton* [1990] IRLR 344:

⁴⁰² Տե՛ս *Cases C-142/87 Belgium v Commission* [1990] ECR I-959, T-30/91 *Solvay v Commission* [1995] ECR II-1775, պարագրաֆ 68, T-290/97 *Dordtselaan v Commission*, 18/1-2000, պարագրաֆ 47:

Այնուամենայնիվ համեմատական տեսանկյունից պետք է նշել, որ վերջին քսան տարիների ընթացքում վարչական գործունեության նկատմամբ դատական վերահսկողության ընդհանուր և մայրցամաքային իրավական համակարգերի դատարանների մոտեցման միջև տարբերությունը փոքր-ինչ նվազել է: Բրիտանական դատարանները սկսեցին մշակել ըստ էության վերանայման ավելի նուրբ և մտածված սկզբունքներ: Միաժամանակ, եվրոպական երկրների օրենսդրական զարգացումները ցույց են տալիս լուծման, հիմնավորման և գործի նյութերի հասանելիության աճող կարևորության մասին: Այնուամենայնիվ, կարևոր տարբերություններ կան ինչպես հայեցակարգի, այնպես էլ ընթացակարգային իրավունքների բովանդակության մեջ:

Անգլիական օրենսդրության մեջ ընթացակարգային պաշտպանությունը բխում է բնական արդարության երկու հիմնասյուներից (*audi alterem partem* և *nemo iudex in re sua*)⁴⁰³, որոնք ներկայումս հայտնի են պարզապես որպես ընթացակարգային արդարության սկզբունք⁴⁰⁴: Այս առումով հետաքրքրական է այն, որ վարութային իրավունքները և ընթացակարգային արդարության սկզբունքը գնալով աճող կարևորություն է ձեռք բերում նաև մայրցամաքային իրավական համակարգում: Տեղին է հիշատակել, որ 2015 թվականի սահմանադրական փոփոխություններով ՀՀ Սահմանադրությունում ամրագրվեց պատշաճ վարչարարության իրավունքն իր բաղադրիչներով, այդ թվում՝ գործի արդարացի քննության պահանջով:

⁴⁰³ Տե՛ս **D. J. Galligan**, *Due Process and Fair Procedures* (Oxford, 1996), էջեր 437-447.

⁴⁰⁴ Տե՛ս **Craig**, նշված աշխատ., էջեր 409-412, **D. J. Galligan**, նշված աշխատ., էջ 186:

ԵՄ իրավունքում ֆունկցիոնալ համարժեք սկզբունքները հայտնի են որպես պաշտպանության իրավունք⁴⁰⁵ և անկողմնակալություն⁴⁰⁶: ԵՄ օրենսդրությամբ նախատեսված պաշտպանության իրավունքի սկզբունքը ձևավորվել է աշխատանքային վեճերում, բայց **TMPA** 1974 թ. գործով Եվրոպական դատարանը հաստատեց դրա կարգավիճակը որպես համընդհանուր կիրառելի նորմ, որը պարտադիր է ԵՄ բոլոր ինստիտուտների կողմից և գործում է ավելի բարձր մակարդակով, քան բոլոր երկրորդական միջոցները⁴⁰⁷:

ՀՀ իրավական համակարգում ևս այն մոտեցումն է, որ ընթացակարգային նորմերն ունեն օժանդակող բնույթ, և դրանց խախտումը կարող է հանգեցնել վարչական ակտի վերացման, եթե ազդեցություն է ունեցել վարչական ակտի նյութական իրավաչափության վրա: Այսպես, Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ թեև իրավական պետության պայմաններում մասնավոր անձանց առնչվող վարչական մարմինների կողմից իրականացվող գործունեության իրավաչափության միակ չափանիշը նյութական իրավունքը չէ, և վարչական մարմնի գործունեությունը նաև պետք է համապատասխանի օրենսդրի կողմից սահմանված ընթացակարգային պահանջներին, սակայն միաժամանակ ընթացակարգային պահանջները ՀՀ իրավական համակարգում ունեն օժանդակ գործառույթ: Ընթացակարգային պահանջների օժանդակ գործառույթի իրավական բնույթը այն է, որ

⁴⁰⁵ Տե՛ս **M. Basset**, 'Le principe dit de 'l'acte contraire' en droit administratif français', Doctoral thesis (Paris, 1967), էջեր 217-245:

⁴⁰⁶ Տե՛ս **R. Hostiou**, Procédures et formes de l'acte administratif unilatéral en droit français (Paris, 1974), էջեր 265-268:

⁴⁰⁷ Տե՛ս Case 17/74 Transocean Marine Paint Association v Commission [1974] ECR 1063: Տե՛ս նաև` Cases 85/76 Hoffmann-La Roche v Commission [1979] ECR 461, պարագրաֆներ 9-11, C-49/88 Al-Jubail Fertilizer v Commission [1991] ECR I-3187, պարագրաֆ 17, T-260/94 Air Inter v Commission [1997] ECR II-997, պարագրաֆ 60:

ընթացակարգային պահանջներին հետևելու նպատակն իրավա-
չափ որոշում կայացնելն ու շահագրգիռ անձանց իրավունքների
գործնականում արդյունավետ պաշտպանությունն ապահովելն
է, և այն իրավահարաբերություններում որտեղ ընթացակար-
գային պահանջների պահպանման և իրավաչափ որոշում կա-
յացնելու և շահագրգիռ անձանց իրավունքների գործնականում
արդյունավետ պաշտպանելու միջև անմիջական կապը բացա-
կայում է, ընթացակարգային պահանջները և դրանց խախտման
իրավական հետևանքները հարաբերական բնույթ են կրում: Այ-
սինքն՝ նյութական իրավունքի համեմատությամբ ընթացակար-
գային պահանջների օժանդակ գործառույթն արտահայտվում է
ներանում, որ ընթացակարգային սխալները որոշիչ չեն, եթե չեն
ազդում որոշման նյութական իրավաչափության վրա և չեն
խախտում շահագրգիռ անձանց հիմնական իրավունքները⁴⁰⁸:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ընթացակար-
գային պահանջներին հետևելու նպատակն իրավաչափ որոշում
կայացնելն ու շահագրգիռ անձանց իրավունքների գործնակա-
նում արդյունավետ պաշտպանությունն ապահովելն է: Հետևա-
պես, եթե վարույթն իրականացրած մարմնի կողմից թույլ
տրված ընթացակարգային խախտումը գնահատվել է էական
(որոշիչ), որն ազդեցություն է ունեցել ակտի նյութական իրավա-
չափության վրա՝ այդպիսով հանգեցնելով դրա անվավերությա-
նը, ապա չի կարող հետագայում այդ խախտումը վերացվելու
միջոցով նույն անձի նկատմամբ վերջինիս դրսևորած վարքա-
գծի հիման վրա վարչական մարմնի կողմից իրականացվել
կրկնակի վարչարարություն և ընդունվել նոր վարչական ակտ⁴⁰⁹:

⁴⁰⁸ Տե՛ս թիվ ՎԴ/6781/05/12 վարչական գործով Վճռաբեկ դատարանի
30.04.2015 թվականի որոշումը:

⁴⁰⁹ Տե՛ս թիվ ՎԴ/8932/05/18 վարչական գործով Վճռաբեկ դատարանի
10.05.2022 թվականի որոշումը:

Այս համատեքստում հետաքրքրական է ֆրանսիական իրավունքում առկա մոտեցումը: Պաշտպանության սկզբունքը պահանջում է, որ հանրային իշխանության բոլոր մարմինները, ինչպես պետական, այնպես էլ տեղական ինքնակառավարման, հասցեատիրոջը տրամադրեն որոշման մասին ծանուցումներ և գրավոր փաստարկներով պատասխանելու «արդյունավետ» հնարավորություն⁴¹⁰: Այնուամենայնիվ, այս սկզբունքը միշտ չէ, որ կիրառվում է բարենպաստ որոշումների վերացման համար: Ընթացակարգային իրավունքները (*droits de la defense*) կիրառվում են միայն այն դեպքում, եթե որոշումը հիմնված է տուժողի անձի գնահատման և (կամ) նրա վարքի վրա (*mesures prises en consideration de la personne*): Սա ներառում է վարչական տույժերը և «պատժամիջոցները», բայց բացառում է այն որոշումները, որոնք կայացվում են բացառապես «օբյեկտիվ չափանիշների» հիման վրա, որոնք կապված չեն տուժած անձի հետ, մասնավորապես՝ հասարակական անվտանգության, կարգի և առողջության պաշտպանությունը (ոստիկանության վարչական միջոցառումներ): Օրինակ, Պետական խորհուրդը **Tigrini** գործով վճռել է, որ առևտրային լիցենզիան կարող է վերացվել առանց լուծմաների, քանի որ վերացումը նպատակ ուներ ընդհանուր առմամբ պահպանել հասարակական կարգը, այլ ոչ թե արձագանքել դիմողի ոչ իրավաչափ վարքին⁴¹¹:

Այս մոտեցումը հիմնավորվում է նրանով, որ ֆրանսիական իրավական ավանդույթների մեջ խորապես արմատավորված է այն կարծիքը, որ վարչակազմը պետք է ունենա հասարակական կարգի, անվտանգության և առողջության պահպանման լիազորություններ (*l'ordre public*)⁴¹²: Այդ լիազորությունների արագ և

⁴¹⁰ Տե՛ս CE 24/7-46 Neveu Rec 211:

⁴¹¹ Տե՛ս CE 9/11-94 Tigrini Rec 1139:

⁴¹² Տե՛ս CE 8/8-19 Labonne Rec 737: Տե՛ս նաև՝ **J. S. Bell**, French Constitutional Law (Oxford, 1992), էջեր 83, 96:

արդյունավետ իրականացումն ընկալվում է որպես ընթացակարգային իրավունքների հետ անհամատեղելի⁴¹³: Բացի այդ, լսումը, ամենայն հավանականությամբ, կնպաստի ճիշտ արդյունքի, եթե որոշումը հիմնված է տուժած անձի անձնական հանգամանքների, այլ ոչ թե հանրային շահի նկատառումների վրա, որոնց մասին նրանք չունեն հատուկ գիտելիքներ: Դրանից հետևում է, որ Ֆրանսիայում գերակշռող ընթացակարգերի նեղ գործիքային հիմնավորումից ելնելով՝ լսումը պահանջվում է միայն այն դեպքերում, երբ որոշում կայացնողը նկատի է ունենալու անձնական հանգամանքներ:

Յուրաքանչյուր դեպքում պետք է որոշվի՝ վերացումը «պատժամիջոց» է, թե ոստիկանական միջոց, քանի որ պաշտպանության իրավունքները տարածվում են միայն առաջինի վրա⁴¹⁴: Պատժամիջոցները «ռեպրեսիվ» են. դրանք հիմնված են տուժած անձի վարքագծի գնահատման վրա և ենթադրում են ոչ պատշաճ վարքագիծ կամ իրավական պարտավորությունների չկատարում: Ոստիկանության միջոցառումները «կանխարգելիչ» են. դրանք ուղղված են հասարակական կարգի, առողջության և անվտանգության պաշտպանությանը և հասցեատիրոջ նկատմամբ գնահատական կամ սանկցիա չեն ենթադրում⁴¹⁵:

⁴¹³ Տե՛ս Cases C-142/87 Belgium v Commission [1990] ECR I-959, պարագրաֆ 46, C-49/88 Al- Jubail Fertilizer v Commission [1991] ECR I-3187, պարագրաֆ 17, C-48 and 60/90 Netherlands v Commission [1992] ECR I-565, պարագրաֆ 44, C-135/92 Fiskano v Commission [1994] ECR I-2885, պարագրաֆ 39, T-450/93 Lisrestal v Commission [1994] ECR II-1177, պարագրաֆ 42, T-305-307 /94, 313-316 /94, 318/94, 325/94, 328-329 /94 and 335/94 Limburgse v Commission, 20/4-99, պարագրաֆ 260:

⁴¹⁴ Տե՛ս CE 9/11-94 Tigrini Rec 1139:

⁴¹⁵ Տե՛ս CE 27/6-97 Société Lille-Tax no. 161.412, TA Rouen 25/5-99 Ait-Taleb DA 1999 no. 211, CE 18/6-75 Canu Rec 362, CE 7/11-86 Edwige Rec 350, CE 10/5-95 Auriol no. 121. 113:

Իրավաբանական գրականության մեջ ոստիկանական միջոցների բացառումը պաշտպանության սկզբունքից, քննադատության է արժանացել ինչպես հայեցակարգային, այնպես էլ գործնական առումով: Որոշումները հաճախ կայացվում են մի շարք պատճառներով, որոնք կապված են ինչպես հասցեատիրոջ, այնպես էլ հանրային շահերի հետ: Այսպիսով, «պատժամիջոցների» և ոստիկանական միջոցների միջև տարբերությունը դժվար է հետևողականորեն կիրառել գործնականում⁴¹⁶: Ավելի կարևոր է, որ այն ակնկալիքները, որոնք լիցենզավորված անձը կարող է ունենալ լիցենզիայի վերաբերյալ մինչև դրա երկարաժամկետ, առանց լսումների կարող են խաթարվել: Սա չի համապատասխանում լիցենզավորված անձի կենսապահովման և հեղինակության վրա այն լուրջ ազդեցությանը, որը կարող է ունենալ լիցենզիայի վերացումը⁴¹⁷:

Բարենպաստ որոշումների վերացումը և փոփոխումը ԵՄ օրենսդրության մեջ պահանջում են ծանուցում և առնվազն գրավոր դիտողություններ ներկայացնելու հնարավորություն: Սա ուղղակիորեն բխում է համայնքի իրավասության շատ ոլորտներում հատուկ օրենսդրական դրույթներից⁴¹⁸: Այլ ոլորտներում գրավոր լսումների իրավունքը բխում է պաշտպանության իրավունքի սկզբունքից: **Lisrestal** կարևոր գործով ԵՄ դատարանը վճռել է, որ Եվրոպական սոցիալական հիմնադրամի (ESF) կող-

⁴¹⁶ Տե՛ս CE 9/11-94 Tigrini Rec 1139:

⁴¹⁷ Տե՛ս **Hostiou**, նշված աշխատ., էջեր 93-94:

⁴¹⁸ Տե՛ս Annex IX Regulation 259/68, Competition law: Art 19 Regulation 17/62, Art 2 Regulation 99/63, Mergers Art 18 Regulation 4064/89, Art 11-15 Regulation 2367/90, Anti-dumping: Art 6, 20 Regulation 384/96, Art 8, 21 Regulation 3284/94, Trade marks: Art 5, 56(1) Regulation 40/94, Regulation 2100/94, Investment aid: Art 7 Regulation 1168/86, Art 7 Regulation 1116/88, Art 44(1) Regulation 4028/86, Financial grants under the EAGGF: Art 7 Regulation 99/64, Art 22(2) Regulation 17/64:

մից տրամադրված ֆինանսական սուբսիդիան կրճատելու Հանձնաժողովի որոշումը անօրինական է, քանի որ Հանձնաժողովը չի դիմել անդամ պետությանը տուժած անձանց մեկնաբանություններ տրամադրելու խնդրանքով⁴¹⁹:

Կարևոր է նշել, որ դատարանը գտել է, որ թեև ESF կանոնակարգը նախատեսում է լսել միայն անդամ պետությանը, այլ ոչ թե շահառու անձին (անձանց), երբ Հանձնաժողովը մտադիր է վերացնել կամ կասեցնել ֆինանսական օժանդակությունը, պաշտպանության սկզբունքը պահպանելու համար պետք է կիրառվեն պաշտպանության լրացուցիչ ընթացակարգային միջոցներ⁴²⁰: Ավելին, Եվրոպական դատարանը հաստատել է, որ պայմանագրի համաձայն ԵՄ ինստիտուտների՝ հիմնավորումներ նշելու պարտականությունը ներառում է նախկին և ավելի բարենպաստ որոշումները վերացնելու որոշումների վրա⁴²¹:

Ոչ ֆորմալ գործողությունները ևս կարող են ողջամիտ ակնկալիքներ ստեղծել անհատների մոտ նույն կերպ, ինչպես պաշտոնական որոշումները: Օրինակ, գրավոր հավաստիացումը, որ շինարարության թույլտվությունը կտրամադրվի որոշակի պայմանների բավարարման դեպքում, կարող է բարենպաստ որոշման ողջամիտ ակնկալիքներ ստեղծել: Եթե իրավասու մարմինը հրաժարվի երաշխիքից, սպասելիքները կխաթարվեն, դիմումատուի ծրագրերը կխախտվեն, և նա կարող է կորցնել վստահությունը: Այսպիսով, ընթացակարգային պաշտպանության որոշակի աստիճանի տրամադրումը արդարացված է, նույնիսկ եթե

⁴¹⁹ Տե՛ս Case C-32/95P *Commission v Lisrestal* [1996] ECR I-5373 (approving Cases T-450/93 *Lisrestal v Commission* [1994] ECR II-1177, պարագրաֆ 42, T-109/94 *Windmillpark v Commission* [1995] ECR II-3007, պարագրաֆ 50:

⁴²⁰ Տե՛ս Cases C-49/88 *Al-Jubail Fertilizer v Commission* [1991] ECR I-3187, C-135/92 *Fiskano v Commission* [1994] ECR I-2885, T-260/94 *Air Inter v Commission* [1997] ECR II-997:

⁴²¹ Տե՛ս Art 253 EC:

համապատասխան որոշումն այլ կերպ լրջորեն չի ազդում դիմողի իրավունքների և շահերի վրա:

Լեգիտիմ ակնկալիքների ընթացակարգային պաշտպանության այս երկրորդ ասպեկտը կիրառելի է ինչպես ընթացակարգային, այնպես էլ նյութաիրավական ակնկալիքների համար: Ինչպես նյութական ակնկալիքների դեպքում, այստեղ ևս գործողության ձևը կապ ունի ակնկալիքների լեգիտիմության հետ, բայց առաջնային նշանակություն չունի: Համեմատական փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ակնկալիքները ողջամտորեն կարող են հիմնվել ինչպես բացահայտ հայտարարությունների վրա, ինչպիսիք են նամակները⁴²², հրապարակված ծանուցումները և գերատեսչական շրջաբերականները⁴²³, նախարարների ելույթները խորհրդարանում⁴²⁴, տեղական ինքնակառավարման մարմինների հանրային բանաձևերը⁴²⁵ և, հավանաբար, նույնիսկ բանավոր հավաստիացումները⁴²⁶, որոշում կայացնողի վարքագծից կամ հաստատված պրակտիկայից բխող անուղղակի վարքագիծը⁴²⁷, անուղղակի և բացահայտ վարքագծի համադրությունները⁴²⁸:

⁴²² *St'u Costain Homes Ltd v Secretary of State for the Environment* [1988] JPL 701:

⁴²³ *St'u R v London Borough of Ealing*, ex p Lewis [1993] COD 291:

⁴²⁴ *St'u R v Home Secretary*, ex p Katoorah [1996] Imm AR 595:

⁴²⁵ *St'u R v London Borough of Bexley*, ex p Barnehurst Golf Club Ltd [1992] COD 382, *Pelham Homes v Secretary of State for the Environment* [1995] JPL 816:

⁴²⁶ *St'u R v Home Secretary*, ex p Oloniluyi [1989] COD 275:

⁴²⁷ *St'u Breen v Amalgamated Engineering Union* [1971] 2 QB 175, *R v Home Secretary*, ex p Bennett *The Times* 18/8-86, *R v Brent LBC*, ex p Gunning (1985) 84 LGR 168, 187-96, *R v Secretary of State for the Environment*, ex p NALGO (1993) 5 Admin LR 785, *R v Birmingham City Council*, ex p Dredger [1993] COD 340:

⁴²⁸ *St'u*, օրինակ, *Lambeth LBC v Secretary of State for the Environment* [1990] JPL 196, *R v Rochdale MBC*, ex p Schemet [1993] COD 113, *R v British Coal Corporation*, ex p Vardy [1993] ICR 720, *R v Lord Chancellor*, ex p Law Society *The Times* 25/6-93:

Օրինակ, անգլիական **CCSU** հայտնի գործով պարզվել է, որ Պետական հաղորդակցության գլխավոր տնօրինության քաղաքացիական ծառայողները խորհրդակցություններ ակնկալելու լեզվի տիմ ակնկալիք ունեն, նախքան նրանց արհմիությունների իրավունքները խիստ կսահմանափակվեն, քանի որ խորհրդակցությունների պրակտիկան գոյություն ուներ ավելի քան երեսունհինգ տարի⁴²⁹:

Երկրորդ, վարքագծի ձևակերպումը մեծ նշանակություն ունի լեզվի տիմ ակնկալիքներ ստեղծելու ունակության առումով, որոնք կառաջացնեն ընթացակարգային իրավունքներ: Համեմատական փորձը ցույց է տալիս, որ այստեղ ևս չափանիշը նույնն է, ինչ նյութական ակնկալիքների դեպքում: Վարքագիծը, որպես կանոն, պետք է լինի «պարզ, միանշանակ և զերծ համապատասխան վերապահումներից»⁴³⁰: Չնայած այս պահանջը կիրառվում է շատ խիստ, երբ անհատները ձգտում են ապահովել, որ նյութական ակնկալիքները կատարվեն, դատարանները, կարծես, մի փոքր ավելի ներողամիտ են ընթացակարգային հարցերում:

Ֆրանսիական պետական մարմինները, որպես կանոն, ազատ են հրաժարվել պրակտիկայից՝ առանց ընթացակարգային ձևականությունների պահպանման⁴³¹: Ինչպես վերը նշվեց, պաշտպանության սկզբունքը վերաբերում է միայն

⁴²⁹ *St' u CCSU v Minister for the Civil Service* [1985] AC 374, 401, 409:

⁴³⁰ *R v IRC, ex p MFK Underwriting Agencies Ltd* [1990] 1 WLR 1545, 1569, *R v Devon CC, ex p Baker* [1995] 1 All ER 73, 88, *R v Home Secretary, ex p Hargreaves* [1997] 1 WLR 906, 922.

⁴³¹ *St' u CE 11/5-56 Société Lesieur-Afrique Rec. 184*, *CE 18/10-57 Bouveret Rec 542*, *TA Paris 24/5-60 Etablissement Millo-Frolich AJDA 1961*, 218, *CE 27/2 63 Société Paramount Rec 689*, *CE 1/12-72, Texierp Rec 1222*, *CE 26/10-73 SCI Résidence Arcole Rec 601*, *CAA Paris 13/6-89 Commune de Bois d'Arcy Rec 318*, *CE 29/12-95 Hurey no. 122.188*:

«պատժամիջոցներին» (լայնորեն սահմանվում է որպես անձի անհատական հանգամանքների հիման վրա կայացված որոշումներ), որոնք ունեն «բավականին լուրջ» ազդեցություն: Այն փաստը, որ որոշումը չի արդարացնում սպասելիքները, ինքնին այն լուրջ պատժամիջոց չի դարձնում:

Նախ, ֆրանսիական վարչակազմը սահմանափակված չէ որոշակի ընթացակարգ կամ որոշակի արդյունք տրամադրելու անհատական խոստումներով: Սա լավ դրսևորվում է Պրիոլի գործով⁴³²: Այս գործը վերաբերում էր ամուսնական զույգի խնամքին ժամանակավորապես հանձնված ութ երեխաների մշտական խնամակալությունը մերժելու և երեխաներին նրանց խնամքից վերցնելու որոշմանը: Պետական խորհուրդը պարզել է, որ քանի որ երեխաների խնամքի և տեղավորման վերաբերյալ վերջնական որոշում չի կայացվել, երեխաները կարող են ցանկացած պահի վերցվել առանց լսումների: Էական սպասումները, որոնք կարող էին առաջանալ երեխաների սկզբնական խնամակալության ժամանակ, հաշվի չեն առնվել: Ավելին, այն փաստը, որ սոցիալական ծառայության տնօրենը, իբր, դիմումատուներին խոստացել էր խնամակալություն, Պետական խորհրդի կարծիքով, բոլորովին վերաբերելի չէր պաշտպանության սկզբունքի կիրառման համար:

Երկրորդ, այն փաստը, որ վարչական ակտը շեղվում է ընդհանուր քաղաքականությունից կամ պրակտիկայից, ինքնին չի ենթադրում ընթացակարգային ձևականության պահանջ: Պետական խորհուրդը 1970 թ.-ին հայտնի **Crédit foncier de France** գործով վճռել է, որ որոշում կայացնողները չպետք է, գերակշռող հանրային շահերի բացակայության դեպքում, հետկանգնեն ընդհանուր քաղաքականությունից կամ պրակտի-

⁴³² Տե՛ս CE 16/11-77 Priolet Rec 435:

կայից (ներքին հրահանգից) կոնկրետ դեպքում, քանի որ դա կխախտի հավասար վերաբերմունքի ընդհանուր սկզբունքը (*égalité de traitement*)⁴³³: Այնուամենայնիվ, այս սկզբունքը չունի որևէ ընթացակարգային հետևանք: Մի կողմից, եթե հանրային շահի նկատառումներից ելնելով, կառավարությունը մտադիր է կոնկրետ դիմողի գործով հետ կանգնել ըստ էության իրականացվող քաղաքականությունից, ապա նա պարտավոր չէ հայցել դիմողի կարծիքը դրա վերաբերյալ: Դիմումատուի միակ միջոցը մերժումն ըստ էության վիճարկելն է *ex post facto*: Մյուս կողմից, ընդհանուր ծանուցումները, շրջաբերականները և ներքին հրահանգները, որոնք սահմանում են ընթացակարգը, որին պետք է հետևել, ի տարբերություն քաղաքականության, ըստ էության, չեն համարվում «ներքին հրահանգներ», որոնք պարտադիր են անհատների համար՝ համաձայն հավասար վերաբերմունքի սկզբունքի⁴³⁴:

Վերջապես, ֆրանսիական օրենսդրության մեջ ևս քաղաքականության ընդհանուր փոփոխություններից առաջ խորհրդակցելու կամ դրանց պատճառները բացատրելու պարտավորություն չկա: Պաշտպանության իրավունքի սկզբունքը և 1979 և 1983 թվականների դատավարական օրենսգրքերը վերաբերում են բացառապես անհատական որոշումների կայացմանը: Այսպիսով, այն ծավալը, որով իրականացվում են քաղաքականության վերաբերյալ խորհրդատվությունները, խորհրդակցությունների վերաբերյալ օրենսդրական դրույթների բացակայության դեպքում, Ֆրանսիայի վարչակազմի հայեցողությունն է: Դրանից բխում է, որ գոյություն ունեցող քաղաքականության

⁴³³ St'u CE 11/12-70 *Crédit foncier de France* Rec 750, CE 27/6-73 *Société Gea* Rec 453:

⁴³⁴ St'u **Vedel and P. Delvolvé**, *Droit Administratif*, 12th edn. (Paris, 1992), էջ 472:

արդյունքում առաջացած էական ակնկալիքները, որ քաղաքականությունը ուժի մեջ կմնա, Ֆրանսիայում պաշտպանված չեն ընթացակարգային նորմերով:

Անգլիական իրավունքը ապահովում է վարչական գործողություններով ստեղծված սպասումների լայն ընթացակարգային պաշտպանություն: Լեգիտիմ ակնկալիքները, ինչպես վերը բացատրվեց, 1969 թ. ճանաչվեցին որպես ընթացակարգային արդարության առանձին հիմք⁴³⁵ և հետագայում զարգացավ ակնկալիքների հետ կապված լայնորեն ճյուղավորված հայեցակարգ: **Behluli** գործով վերաքննիչ դատարանը հաստատեց, որ իրավական ակնկալիքների սկզբունքը կարևոր տեղ է զբաղեցրել արդարության իրավունքի զարգացման գործում: Դա ակնկալիք է, որը, չնայած իրավաբանորեն ամրագրված իրավունք չէ, հիմնված է ողջամիտ ենթադրության վրա, որը կարող է պաշտպանվել հանրային իրավունքի շրջանակներում: Այն թույլ է տալիս քաղաքացուն վիճարկել այն որոշումը, որը նրան զրկում է հիմնավոր ակնկալիքից, որ իր բողոքը կվերանայվի որոշակի եղանակով⁴³⁶:

Ակնկալիքների ընթացակարգային պաշտպանությունն ավելի զարգացած է ԵՄ իրավունքում, որտեղ պաշտպանության սկզբունքը կիրառվում է այն դեպքերում, երբ որոշումը ազդում է անձի շահերի վրա անբարենպաստ ձևով և զգալի չափով: Պրակտիկայից հրաժարվելն ինքնին ԵՄ իրավունքի համաձայն հիմք չէ ընթացակարգային պաշտպանության միջոցների ներդրման համար: Այնուամենայնիվ, ԵՄ իրավունքում կա լեգիտիմ ակնկալիքների զարգացած դոկտրին, որը սկիզբ է առել Եվրո-

⁴³⁵ St'u Schmidt v Secretary of State for Home Affairs [1969] 2 Ch 149:

⁴³⁶ St'u R v Home Secretary, ex p Behluli [1998] COD 328, 330:

պական ածխի և պողպատի համայնքի գործերից 1950-ականներին⁴³⁷:

ԵՄ իրավունքում միշտ պարզ է եղել, որ նյութական սպասումներն իրականացվում են նյութականորեն, իսկ ընթացակարգային սպասումները՝ ընթացակարգային ձևով: Այլ կերպ ասած, եվրոպական դատարանը միանգամայն տրամաբանական տեսակետ ունի, որ պաշտպանությունը պետք է համապատասխանի այն ամենին, ինչն իրականում ակնկալում է տուժած անձը: Եթե Համայնքի վարչակազմը ձևավորել է նյութական պրակտիկա, ապա տուժած անձը կարող է վստահել, որ այն կպահպանվի: Եթե վարչակազմը ձևավորել է ընթացակարգային պրակտիկա, որը առաջացրել է լեգիտիմ ակնկալիքներ, ապա այդ ընթացակարգը պետք է պահպանվի: Այժմ մանրամասն անդրադառնանք ԵՄ դատական պրակտիկայում ընթացակարգային լեգիտիմ ակնկալիքների պաշտպանությանը, երբ վարչակազմը հրաժարվում է որոշակի արդյունքի անհատական խոստումից կամ առանձին դեպքում շեղվում է ընդհանուր քաղաքականությունից կամ պրակտիկայից:

Նախ, լուծման անցկացնելու պարտականություն չկա, նախքան վարչակազմը կհրաժարվի որոշակի արդյունքի վերաբերյալ անհատական խոստումից: Դիմողի իրավական պաշտպանության միակ միջոցը որոշման վիճարկումն է այն հիմքով, որ այն չի արդարացրել նրա նյութական լեգիտիմ ակնկալիքները: Օրինակ, **Pauvert** գործով դիմումատուին միանշանակորեն խոստացել էին, որ իրեն կտրվի վարորդի աշխատանքը, բայց հետագայում Հաշվեքննիչ պալատը հրաժարվել էր իր խոստումից, երբ հասկացել էր, որ պարոն Պաուվերտը այնքան էլ հարմար չէ այդ աշխատանքի համար: ԵՄ դատարանը վճռել է, որ

⁴³⁷ St'u Cases 7/56 and 3-7/57 *Algera v Common Assembly* [1957] ECR 39:

չնայած հանձնաժողովը պետք է տեղեկացներ դիմումատուին, երբ հասկացավ, որ ստիպված է եղել հրաժարվել իր խոստումից, դրա չկատարումն ինքնին պաշտպանության սկզբունքի խախտում չէ⁴³⁸։ Այս գործի ելքը, հավանաբար, այլ կլիներ, եթե պալատը հայտարարած լիներ, որ դիմումատուին կտրամադրի լաված լինելու կամ այլ ընթացակարգային իրավունքներ։ Չնայած համապատասխան դատական պրակտիկայի բացակայությանը՝ քիչ հիմքեր կան կասկածելու, որ ԵՄ-ի լեգիտիմ ակնկալիքների սկզբունքը կարող է կիրառվել որոշակի դեպքում ընթացակարգային ակնկալիքների կիրարկումն ապահովելու համար⁴³⁹։

Երկրորդ, ընթացակարգային և նյութական վարքագծերի միջև տարբերակումը, ըստ էության, կարևոր է նաև այն դեպքում, երբ համայնքի վարչակազմը առանձին դեպքում հեռանում է ընդհանուր քաղաքականությունից կամ պրակտիկայից։ Եվրոպական դատարանը 1974 թվականի **Louwage** գործով վճռել է, որ համայնքի ղեկավարությունը չպետք է կոնկրետ գործով առանց հիմնավոր պատճառի շեղվի ընդհանուր քաղաքականությունից կամ պրակտիկայից, քանի որ դա կխախտի լեգիտիմ ակնկալիքների և հավասար վերաբերմունքի ընդհանուր սկզբունքները⁴⁴⁰։

ԵՄ նախադեպային իրավունքի մեջ հայեցակարգային կապ չկա քաղաքականությունը հավատարմորեն կիրառելու պարտականություն է և լավելու իրավունք միջև։ Այսպիսով, Համայնքի ինստիտուտը, որը քննարկում է, թե արդյոք պետք է շեղվի գոյու-

⁴³⁸ Տե՛ս Case 228/84 Pauvert v Court of Auditors [1985] ECR 1969, պարագրաֆ 16։ Տե՛ս նաև՝ Cases T-46/90 Devillez v EP [1993] ECR II-699, պարագրաֆ 38, T-493/93 Hansa-Fisch v Commission [1995] ECR II-575, պարագրաֆ 44-50։

⁴³⁹ Տե՛ս Case T-353/94 Postbank v Commission [1996] ECR II-921, պարագրաֆ 73։

⁴⁴⁰ Տե՛ս Case 148/73 Louwage v Commission [1974] ECR 81, պարագրաֆ 12։ Տե՛ս նաև՝ Joined Cases F-99/07 and F-45/08 Bernard v Europol, F-99/07 and F-45/08, EU:F:2009:84, պարագրաֆ 79։

թյուն ունեցող ընդհանուր, էական բնույթի քաղաքականությունից, պարտավոր չէ տուժող անձին լսել այն «հիմնավոր պատճառների» վերաբերյալ, թե ինչու է նա մտադիր իրեն այլ կերպ վերաբերվել, քան գործող քաղաքականության ներքո գտնվող այլ անձանց:

Դիրքորոշումը, սակայն, այլ է, եթե Համայնքի ինստիտուտը հայտարարություն է արել այն ընթացակարգի վերաբերյալ, որին մտադիր է հետևել որոշակի դեպքերում: Լուվաջում շարադրված սկզբունքը վերաբերում է նման ընդհանուր ընթացակարգային հայտարարություններին, և դրանցից առանձին դեպքերում չի շեղվել:

Այսպիսով, **Hercules Chemicals** գործով⁴⁴¹ Հանձնաժողովը պաշտոնական ամսագրում հրապարակված զեկույցում նշել է, որ մրցութային ընթացակարգերի ընթացքում որոշակի փաստաթղթերի հասանելիություն կտրամադրի և մի քանի տարի շարունակ հավատարիմ է եղել այդ պրակտիկային: Դատարանը սահմանել է, որ Հանձնաժողովն իր համար նախատեսել է պարտադիր վարքագծի կանոն: Ելնելով լեգիտիմ ակնկալիքներից և հավասարությունից՝ նա պարտավոր էր հասանելիություն ապահովել բոլոր դիմորդներին, նույնիսկ եթե կոնկրետ դեպքում մի քանի դիմորդներ խնդրել են հասանելիություն մեծ թվով փաստաթղթերի⁴⁴²:

⁴⁴¹ Տե՛ս Case T-7/89 Hercules Chemicals v Commission [1991] ECR II-1711 confirmed by Case T-9/89 Huls v Commission [1992] ECR II-499, պարագրաֆներ 48-49: Տե՛ս նաև՝ Cases 80-83/81 and 182-185 /81 Adam v Commission [1984] ECR 3411, 129 and 274/81 Lux v Court of Auditors [1984] ECR 4127, պարագրաֆներ 20-23, T-45/90 Speybrouck v EP [1992] ECR II-33, պարագրաֆներ 57-80, T-33/91 Willams v Court of Auditors [1992] ECR II-2499, պարագրաֆներ 66-71:

⁴⁴² Տե՛ս AG Leger [1995] ECR I-888, S. Moore (1996) CMLRev 366:

Վերջապես, չնայած ԵՄ քաղաքականության ընդհանուր փոփոխությունների վերաբերյալ միանվագ հիմունքներով իրականացվում է խորհրդատվություն, խորհրդակցություններ անցկացնելու կամ պատճառները բացատրելու իրավական պարտավորություն չկա: Պայմանագիրը չի պարունակում խորհրդակցությունների վերաբերյալ համընդհանուր կիրառելի դրույթներ, և պաշտպանության իրավունքի սկզբունքը կիրառվում է միայն անհատական միջոցառումներից անմիջականորեն շոշափվող անձանց նկատմամբ⁴⁴³: Սա նշանակում է, որ քաղաքականությունն ու ընթացակարգերը, ինչպես նյութական, այնպես էլ ըստ ընթացակարգային տեսանկյունից, կարող են օրինականորեն փոփոխվել՝ ուժի մեջ մտնելու պահից՝ առանց ընթացակարգային ձևականությունների, եթե փոփոխությունը չի ազդում արդեն իսկ ներկայացված դիմումների վրա:

Անդրադառնալով ներպետական վարչական իրավունքում ակնկալիքների ընթացակարգային պաշտպանությանը՝ պետք է կարևորել պատշաճ վարչարարության սահմանադրական իրավունքը, որը ներառում է ընթացակարգային պաշտպանության վերը քննարկված բոլոր բաղադրիչները: Այսպես, Սահմանադրության 50-րդ հոդվածն ամրագրում է, որ յուրաքանչյուր ոք ունի վարչական մարմինների կողմից իրեն առնչվող գործերի անաչառ, արդարացի և ողջամիտ ժամկետում քննության իրավունք: Վարչական վարույթի ընթացքում յուրաքանչյուր ոք ունի իրեն վերաբերող բոլոր փաստաթղթերին ծանոթանալու իրավունք, բացառությամբ օրենքով պահպանվող գաղտնիքների: Պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտո-

⁴⁴³ St'u Cases 37/81 Seton v Commission [1983] ECR 1789 (staff), C-49/88 Al-Jubail Fertilizer v Commission [1991] ECR I-3187, պարագրաֆ 15, C-170/89 BEUC v Commission [1991] ECR I-5709, պարագրաֆ 19-21, C-104/99P Atlanta AG v Council and Commission, 14/10-99, պարագրաֆ 36-38:

նատար անձինք պարտավոր են մինչև անձի համար միջամտող անհատական ակտն ընդունելը լսել նրան, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի: Սահմանադրական դատարանը փաստել է, որ մեջբերված հոդվածում սահմանվում են մարդու և քաղաքացու պատշաճ վարչարարության իրավունքի մաս կազմող՝ վարչական մարմինների կողմից անձին առնչվող գործերի անաչառ, արդարացի և ողջամիտ ժամկետում քննության իրավունքը, տվյալ անձի՝ իրեն վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու իրավունքը, ինչպես նաև անձի համար միջամտող անհատական ակտ ընդունելուց առաջ անձի լսված լինելու իրավունքը⁴⁴⁴:

Սահմանադրական դատարանը նույն որոշմամբ Սահմանադրության 50-րդ հոդվածի վերլուծության արդյունքում արձանագրել է հետևյալը.

1) անձի լսված լինելու իրավունքը մարդու և քաղաքացու հիմնական իրավունքի՝ պատշաճ վարչարարության իրավունքի *բաղկացուցիչ տարր է*,

2) լսված լինելը վարչական մարմինների կողմից գործերի անաչառ, արդարացի և ողջամիտ ժամկետում քննության ընթացքում մարդու և քաղաքացու *իրավական պաշտպանության միջոց է*, որը հնարավորություն է ընձեռում, որ յուրաքանչյուր ոք առարկություն ներկայացնի կամ այլ կերպ իր կարծիքն արտահայտի իր նկատմամբ կայացվելիք և իր իրավունքներին կամ ազատություններին միջամտող ցանկացած վարչական ակտի առնչությամբ,

3) անձի *լսված լինելը* պատշաճ վարչարարության *հիմնարար բաղադրիչ է*,

⁴⁴⁴ Տե՛ս Սահմանադրական դատարանի 2020 թվականի մայիսի 12-ի ՍԴԴ-1529 որոշում, 4.1-ին կետ:

4) անձի լսված լինելու իրավունքի իրականացումն ունի հետևյալ գործառնությանին նշանակությունը. մի կողմից՝ անձի համար երաշխավորվում է վարչական մարմնի միջամտող անհատական ակտի դեմ *արդյունավետ պաշտպանության* ապահովման հնարավորություն, իսկ մյուս կողմից՝ վարչական մարմինը վարչական վարույթի շրջանակներում պարտավոր է քննարկել գործի փաստական հանգամանքներն ամբողջությամբ և պարզել դրանց *օբյեկտիվությունը և լիարժեքությունը*՝ վարույթի մասնակիցների ներկայացրած փաստարկներն ու դիրքորոշումները քննարկման առարկա դարձնելու միջոցով,

5) անձն օժտված է վարչական վարույթում լսված լինելու իրավունքով այն դեպքերում, երբ նրա նկատմամբ պետք է ընդունվի միջամտող անհատական ակտ,

6) վարչական վարույթում լսված լինելու իրավունքով օժտված է վարչական ակտի հասցեատեր և վարչական վարույթի մասնակից չհանդիսացող յուրաքանչյուր անձ, եթե տվյալ վարույթի արդյունքում ընդունվելիք միջամտող անհատական ակտը կարող է անմիջական ազդեցություն ունենալ վերջինիս իրավունքների և օրինական շահերի վրա,

7) լսված լինելու իրավունքը սահմանադրորեն երաշխավորվում է միայն այն վարչական ընթացակարգերում, որոնք ուղղված են անձանց նկատմամբ *միջամտող* անհատական ակտ ընդունելուն,

8) «(...) բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի» դրույթի բովանդակությունից հետևում է, որ վարչական մարմնի կողմից լսումներ կարող են չանցկացվել օրենքով սահմանված բացառիկ դեպքերում (տե՛ս, օրինակ, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 2-4-րդ մասերը):

Այսպիսով, ՀՀ իրավական համակարգում վարչական վարույթի մասնակիցների ընթացակարգային իրավունքների պաշտպանությունը մեծ կարևորություն ունի: Ընդ որում, հենց Սահմանադրության մակարդակում է սահմանվել նախքան միջամտող վարչական ակտ ընդունելն անձանց լսելու վարչական մարմնի պարտականությունը: Ինչ վերաբերում է զուտ ընթացակարգային լեգիտիմ ակնկալիքներին, ապա ցավոք, մեր իրականան համակարգում թե՛ օրենսդրության և թե՛ իրավակիրառ պրակտիկայում դրանք դեռևս ճանաչում չեն ստացել: Բոլոր դեպքերում ստորև կներկայացվեն որոշ եզրահանգումներ, որոնք կարող են գիտագործնական նշանակություն ունենալ ներպետական վարչական իրավունքում լեգիտիմ ակնկալիքների պաշտպանության ընթացակարգային երաշխիքների ապահովման տեսանկյունից:

Նախ, եթե վարչական մարմնի ընդունած ակտով շոշափվելու են անձանց լեգիտիմ ակնկալիքները, ապա ընթացակարգային իրավունքների հետևողական պահպանումը ոչ միայն ապահովում է գործի քննության բազմակողմանիությունը, այլ նաև նվազեցնում է անարդարության և անվստահության զգացումը, որը կարող է ունենալ այն անձը, ում լեգիտիմ ակնկալիքները խաթարվելու են այդ որոշմամբ:

Երկրորդ, վարչական մարմինը, որը կոնկրետ կամ ընդհանուր հայտարարություն է անում այն ընթացակարգի վերաբերյալ, պարտավոր է հետևել դրան, քանի որ ընթացակարգից շեղվելը խախտելու է անձանց լեգիտիմ ակնկալիքների և հավասարության սկզբունքները:

Երրորդ, ինչ վերաբերում է քաղաքականության կամ պրակտիկայի փոփոխությանը, ապա գտնում ենք, որ որոշ ժամանակ կիրառվող պրակտիկան կամ քաղաքականությունը կարող են

էական և հիմնավորված ակնկալիքներ ստեղծել, որ այն պահ-
պանվելու է: Ուստի այս դեպքերում կարծում ենք, որ վարչական
մարմինը պետք է հնարավորինս ապահովի շահագրգիռ ան-
ձանց ծանուցումն ու ըստ անհրաժեշտության նաև խորհրդակ-
ցությունների անցկացումը նախքան քաղաքականության կամ
պրակտիկայի փոփոխությանը:

§4. Իրավաչափ վարչարարության հիման վրա առաջացած լեգիտիմ ակնկալիքների հատուցողական պաշտպանությունը

Նախորդ գլուխներում քննարկվեցին, որ որոշակի օրենսդրական հիմքերի առկայության դեպքում վարչական մարմիններն ունեն իրենց ընդունած իրավաչափ բարենպաստ վարչական ակտերն ուժը կորցրած ճանաչելու լիազորություն: Դրա իրականացումը կարող է հանգեցնել ոչ միայն լեգիտիմ ակնկալիքներ խաթարմանը, այլ նաև վարչական ակտերի վրա հենվող անձանց համար վնասների: Այս համատեքստում հատուցողական միջոցները լրացնում են նախորդ գլուխներում ուսումնասիրված ընթացակարգային և նյութական սկզբունքները և այդպիսով նպաստում քաղաքացիների և վարչական մարմնի միջև հարաբերություններում արդարության և վստահության պահանջների ապահովմանը:

Այս գլխի շրջանակներում համեմատական փորձի ուսումնասիրությամբ նախ անդրադարձ կկատարվեն իրավաչափ վարչական ակտերն ուժը կորցրած ճանաչելու դեպքում անձանց կրած վնասների հատուցման հիմնահարցերին: Ըստ այդմ հետազոտությունը հնարավորինս համակողմանի և համընդգրկուն դարձնելու նպատակով կխոսվի ինչպես հայրենական իրավական համակարգին հայտնի վնասների համար պատասխանատվության սկզբունքների մասին, այնպես էլ այլ իրավական համակարգերում նախատեսված փոխհատուցման սխեմաների⁴⁴⁵:

⁴⁴⁵ Տե՛ս **C. Harlow**, *Compensation and Government Torts* (London, 1982), **S. Arrowsmith**, *Civil Liability and Public Authorities* (South Humberside, 1992), **J. Morrell and R. Foster**, *Local Authority Liability* (Bristol, 1998), **B. S. Markesinis, J.-B. Auby, D. C. Coester-Waltjen, and S. F. Deakin**, *Tortious Liability of Statutory Bodies: A Comparative and Economic Analysis of Five English Cases*

իրավաչափ վարչական գործողությունների հետևանքով առաջացած վնասների համար հատուցման գիտագործնական վերլուծությունը նպատակահարմար է սկսել ֆրանսիական փորձի ուսումնասիրությունից, քանի որ այստեղ գործող հանրային շահի համար վնասի հավասար բաշխման սկզբունքը (*égalité devant les charges publiques*) ամենապատկերավորն է հիմնավորում իրավաչափ վարչարարությամբ առաջացած վնասի հատուցման անհրաժեշտությունը: Այս սկզբունքի էությունը այն է, որ հանրային շահի պաշտպանության համար իրավաչափ բարենպաստ վարչական ակտերի վերացման դեպքում դրա հասցեատերը չպետք է կրի վնասի ամբողջ բեռը⁴⁴⁶:

Այնուամենայնիվ, ֆրանսիական դատական պրակտիկայի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ պատասխանատվության պայմանները գործնականում շատ խիստ են: Հայտնի **Rigal** գործը վառ օրինակ է⁴⁴⁷: Մասնավոր ռադիոլոգի՝ բժշկական նպատակներով ցեղիումի աղբյուր օգտագործելու լիցենզիան, որից նա օգտվել էր շուրջ տասը տարի, վերացվել էր՝ կապված ցածր ինտենսիվության ռադիոակտիվ բուժումների արդյունավետության և կողմնակի ազդեցությունների վերաբերյալ մտահոգությունների հետ: Արդյունքում պարոն Ռիգալը ստիպված էր ներ-

(Oxford, 1999), **C. Harlow**, 'Fault Liability in French and English Law' (1976) MLR 516, 'Remedies in French Law' (1977) PL 227, **M. Deguegue**, *Jurisprudence et doctrine dans l'élaboration du droit de la responsabilité administrative* (Paris, 1994), **F. Gazier, R. Drago** (eds.), *Encyclopédie Dalloz: Répertoire de la responsabilité de la puissance publique* (Paris, 1996), **H. G. Schermers, T. Heukels, and P. Mead** (eds.), *Non-Contractual Liability of the European Communities* (The Hague, 1988), **T. Heukels and A. McDonnell** (eds.), *The Action for Damages in Community Law* (The Hague, 1997), **F. Fines**, *Étude de la responsabilité extracontractuelle de la Communauté Economique Européenne* (Paris, 1997), **P. P. Craig and G. De Búrca**, *EU Law: Text and Materials*, 2nd edn. (Oxford, 1998):

⁴⁴⁶ Տե՛ս, օրինակ, CE 3/11-97 Hôpital Joseph-Imbert D'Arles Rec 412:

⁴⁴⁷ Տե՛ս CE 1/2-80 Rigal AJDA 1981, 44:

դնել նոր և թանկարժեք սարքավորումներ կամ փակել իր կլինիկան:

Պետական խորհուրդը գտավ, որ վարչակազմը գործել էր իրավաչափ կերպով, քանի որ լիցենզիան հանդիսանում էր *autorisation de police*, որը կարող էր վերացվել հանրային առողջության շահերից ելնելով՝ նույնիսկ հստակ օրենսդրական լիազորության բացակայության պայմաններում: Հետևաբար, պատասխանատվությունը բացառվեց:

Այնուամենայնիվ, Պետական խորհրդի Կառավարության կոմիսարը (*Commissaire de Gouvernement*) պնդել էր, որ փոխհատուցում պետք է սահմանվի հավասարության սկզբունքի հիման վրա, քանի որ նախարարության նոր քաղաքականությունը ազդել էր Ֆրանսիայի շուրջ 180 մասնավոր ռադիոլոգներից միայն մոտ 30-ի վրա, որոնք բոլորն էլ կրել էին լուրջ կորուստ հանրային շահի համար: Սակայն Պետական խորհուրդը չընդունեց այդ մոտեցումը և մերժեց պարոն Ռիգալի հայցը: Այս գործում որդեգրված սահմանափակող մոտեցումը արտացոլված է բազմաթիվ այլ որոշումներում, որոնցում նույնպես մերժվել է պատասխանատվությունը լիցենզիաների և այլ բարենպաստ որոշումների իրավաչափ վերացման համար⁴⁴⁸:

Ֆրանսիական օրենսդրությունում քիչ են նաև իրավաչափ վարչարարության համար պատասխանատվության դեպքերը: Փոխհատուցում նախատեսվում է այն իրավիճակներում, երբ ընդհանուր քաղաքաշինական սահմանափակումները միջամտում են արդեն գոյություն ունեցող (իրավաչափ) շինթույլտվություններին⁴⁴⁹: Օրինակ՝ այն անձը, որին տրամադրված շինթույլտվությունը դեռ ամբողջությամբ չի իրացվել, կունենա փոխ-

⁴⁴⁸ St'u CE 22/11-61 Ville d'Agen Rec 668, CE 3/3-65 Coudert AJDA 1965:

⁴⁴⁹ St'u Code de l'urbanisme Art L160-5:

հատուցման իրավունք, եթե այն տարածքը, որտեղ նա իրավունք ուներ կառուցապատում իրականացնելու, հետագայում հայտարարվի կառուցապատման համար ոչ թույլատրելի գոտի (*zone inconstructible*): Թույլտվության վրա հենվելով կատարված ծախսերը, որպես կանոն, ենթակա են հատուցման, սակայն բաց թողնված օգուտի համար փոխհատուցումը շատ հազվադեպ է տրամադրվում⁴⁵⁰:

Անգլիական իրավունքի համար առանցքային է պրոֆեսոր Ա. Վ. Դիսեյի զարգացրած այն գաղափարը, ըստ որի հանրային իշխանությունները ենթակա են և պետք է ենթակա լինեն սովորական դեղիկտային իրավունքի կանոններին⁴⁵¹: Պրոֆեսորի՝ Օրենքի գերակայության (Rule of Law) մասին խիստ ազդեցիկ տեսության համաձայն, վարչական մարմինը պատասխանատվություն է կրում և պետք է պատասխանատվություն կրի վնասների համար այն դեպքերում, երբ գործում է իր լիազորություններից դուրս, բայց ոչ այն դեպքերում, երբ գործում է դրանց շրջանակում⁴⁵²: Այս մոտեցման համաձայն՝ իրավաչափ որոշումների իրավաչափ վերացումից առաջացած վնասների հատուցումը անգլիական իրավունքում գրեթե բացակայում է⁴⁵³:

Անգլիական դատարանները իրավաչափ որոշման հետևանքների համար վնասների հատուցում սահմանել են միայն մեկ դեպքում: **Burmah Oil** գործում բրիտանական բանակը Բիրմայում ոչնչացրել էր արժեքավոր նավթային ենթակառուցվածքներ՝ դրանք թշնամու ձեռքն ընկնելը կանխելու նպատակով:

⁴⁵⁰ Տե՛ս E 10/6-88 SA Bonnargent-Goyon Rec 238, CE 7/3-90 Bore de Loisy Rec 983:

⁴⁵¹ Տե՛ս **A. W. Dicey**, Introduction to the Study of the Law of the Constitution, 10th edn. (London, 1959), էջեր 193-194, 202:

⁴⁵² Տե՛ս **Dicey**, նշված աշխատ., էջեր 193-194:

⁴⁵³ Տե՛ս **Arrowsmith**, նշված աշխատ., էջ 241, **Wade**, նշված աշխատ., էջ 763:

Լորդերի պալատը սահմանել էր վնասների հատուցում՝ ի հավելումն *ex gratia* վճարման, որը առաջարկվել էր Բրիտանական կառավարության կողմից⁴⁵⁴: Սակայն սա բացառիկ դեպք էր: Դատարանի հիմնավորումը հիմնված էր շտտլանդական իրավունքի «*eminent domain*» հասկացության վրա, այլ ոչ թե հանրային շահի համար կրած վնասների վերաբաշխման ընդհանուր սկզբունքի վրա: Ավելին, Միացյալ Թագավորության Խորհրդարանը հետագայում վերացրեց այդ որոշումը հետադարձ ուժ ունեցող օրենսդրությամբ՝ հստակ ազդակ հղելով, որ իրավաչափ վարչական գործողություններից առաջացած վնասների փոխհատուցման հարցը պետք է թողնվի գործադիր իշխանության հայեցողությանը⁴⁵⁵:

Միաժամանակ, օրենքով սահմանված դրույթները, որպես կանոն, փոխհատուցում չեն նախատեսում բարենպաստ վարչական ակտերի վերացման համար: Միակ օրինակը քաղաքաշինական թույլտվություններն են, որոնք չեն կարող վերացվել առանց այն ծախսերի փոխհատուցման, որոնք կատարվել են՝ թույլտվության վրա հենվելով⁴⁵⁶:

Անգլիական վարչական պատասխանատվությունը ունի փոխարինող (*vicarious*) բնույթ, մինչդեռ ֆրանսիական և Եվրոպական համայնքի (ԵՀ) իրավունքում պատասխանատվությունը կորպորատիվ (*corporate*) բնույթ ունի⁴⁵⁷: Այսինքն՝ անգլիական հանրային մարմինները պատասխանատվություն են կրում իրենց աշխատակիցների դեղիկտային գործողությունների հա-

⁴⁵⁴ *St' u Burmah Oil v Lord Advocate* [1965] AC 75:

⁴⁵⁵ *St' u Harlow, C., & Rawlings, R. (2021)*. Law and Administration (4th ed.). Cambridge University Press, էջեր 49-52:

⁴⁵⁶ *St' u Town and Country Act 1990*, s 107:

⁴⁵⁷ *St' u Dicey*, նշված աշխատ., էջեր 404-405, *Harlow*, նշված աշխատ., էջ 516, *M. Paillet in JC Fasc 818*, no 3:

մար, մինչդեռ ֆրանսիական և ԵՀ մարմինները, որպես իրավաբանական անձինք, անմիջականորեն պատասխանատվություն են կրում «համակարգի/ծառայության մեղքերի» (*fautes de service*) համար: Պատասխանատվության մասին խոսելիս պետք է կարևորել, որ Եվրոպական համայնքի (ԵՀ) դատարանները ելնում են այն կանխադրույթից, որ վարչական մարմինն ունի պատշաճ և իրավաչափ կառավարման ընդհանուր պարտականություն, իսկ խնդիրը այն է, թե տվյալ հանգամանքներում ինչ է պահանջում այդ չափանիշը:

Վերջապես, կարևոր է նշել, որ Եվրոպական իրավունքում հիմնականում համակարծիք են, որ պատասխանատվության առաջնային նպատակը խախտումների հետևանքների վերականգնումն է՝ վնասների հատուցման միջոցով: Վարչական մարմինների և պաշտոնատար անձանց զսպումը առավելագույնը երկրորդական նպատակ է⁴⁵⁸: Սա ակնհայտ է այն հանգամանքից, որ պատժիչ վնասների հատուցում հանրային իշխանությունների դեմ շատ հազվադեպ է սահմանվում⁴⁵⁹, ինչպես նաև այն փաստից, որ հանրային մարմիններին թույլատրվում է ձեռք բերել իրավական պատասխանատվության ապահովագրություն: Ավելին, թեև անձի արժանապատվությանը կամ պատվին պատճառված վնասը ևս ենթակա է հատուցման, այդպիսի վնասներն իրենց բնույթով դեռևս հատուցողական են, այլ ոչ թե զսպիչ⁴⁶⁰:

⁴⁵⁸ Տե՛ս անգլիական իրավունք՝ **I. England**, *The Philosophy of Tort Law* (Aldershot, 1993), էջ 7, **R. F. V. Heuston and R. A. Buckley**, *Salmond and Heuston on the Law of Torts*, 21st edn. (London, 1996), էջ 23, ֆրանսիական իրավունք՝ **M.-A. Latournerie**, 'The Law of France', in **J. S. Bell and A. W. Bradley** (eds.), *Governmental Liability: A Comparative Study*, UKCLS vol 13 (London, 1991), էջ 198, **Lochak**, 'Réflexion sur les fonctions sociales de la responsabilité administrative', in **J. Chevallier** (ed.), *Le droit administratif en mutation* (Paris, 1993):

⁴⁵⁹ Տե՛ս *Cassell and Co v Broome* [1972] AC, 1027:

⁴⁶⁰ Տե՛ս *Cassell v Broome* [1972] AC 1027, 1085:

Իրավաչափ և բարենպաստ որոշումները, որպես կանոն, չվերացվող են ԵՄ իրավունքի՝ ձեռք բերված իրավունքների (*vested rights*) սկզբունքի համաձայն: Հետևաբար, ԵՀ որևէ ինստիտուտ կարող է իրավաչափ և բարենպաստ որոշումը վերացնել միայն **հատուկ օրենսդրական դրույթի** հիման վրա: Եթե այդպիսի դրույթի կիրառմամբ ինստիտուտը անհատին պատճառում է վնաս, տվյալ անհատը չի կարողանա փոխհատուցում ստանալ: Այս մոտեցումը պայմանավորված է մի շարք հանգամանքներով:

Առաջին՝ ԵՀ ինստիտուտը պատասխանատվություն է կրում միայն այն դեպքում, երբ իր որոշումը «ոչ իրավաչափ» է այն իմաստով, որ կարող էր վերացվել դատական վերանայման վարույթում⁴⁶¹: Երկրորդ՝ Համայնքային դատարանները երբևէ բացահայտորեն չեն ճանաչել իրավաչափ վարչարարության համար պատասխանատվության սկզբունքի գոյությունը⁴⁶²: ԵՄ դատարանը **De Boer Buizen** գործում ընդունել էր, որ Հանձնաժողովը կարող է ունենալ «որոշակի պատասխանատվություն» այն ձեռնարկությունների նկատմամբ, որոնք կրում են անհամաչափ բեռ Համայնքային միջոցառումների հետևանքով, սակայն դատարանը գտել էր, որ տվյալ գործի փաստերով նման բեռ չի առաջացել⁴⁶³:

Biovilac գործում Եվրոպական դատարանը վճռել էր, որ եթե ԵՀ իրավունքում գոյություն ունենար առանց մեղքի պատասխանատվության սկզբունք, ապա այն ենթակա կլիներ խիստ պայ-

⁴⁶¹ Տե՛ս Case 4/69 Lütticke v Commission [1971] ECR 325, պարագրաֆ 10:

⁴⁶² Տե՛ս **H. J. Bronkhorst**, 'The Valid Legislative Act as a Cause of Liability of the Communities', in **T. Heukels and A. McDonnell** (eds.), *The Action for Damages in Community Law* (The Hague, 1997):

⁴⁶³ Տե՛ս Case 81/86 De Boer Buizen [1987] ECR 3677:

մաններ⁴⁶⁴: Այսպիսով, ԵՄ առաջին ատյանի դատարանը **Dorsch Consult** գործում նշել էր, որ իրավաչափ վարչարարության համար պատասխանատվություն կարող է առաջանալ միայն այն դեպքում, երբ՝

(i) որոշումը անհամաչափ կերպով ազդում է որոշակի շրջանակի անձանց վրա՝ մյուսների համեմատությամբ (ոչ սովորական վնաս), և

(ii) այն գերազանցում է տվյալ ոլորտում գործունեություն իրականացնելու համար բնորոշ տնտեսական ռիսկերի սահմանները (հատուկ վնաս), և երբ միաժամանակ

(iii) ենթադրյալ վնասը պատճառած միջոցառումը արդարացված չէ ընդհանուր (տնտեսական) շահերով⁴⁶⁵:

Այսպիսի չափանիշներով ձևակերպված իրավաչափ վարչարարության համար պատասխանատվության եվրոպական սկզբունքը, հատկապես առաջին և երկրորդ բաղադրիչները, ըստ էության հանրային շահերի համար վնասի հավասար բաշխման ֆրանսիական սկզբունքի անալոգն են: Միաժամանակ, իրավաչափ վարչարարության համար վնասի հատուցման ԵՄ չափանիշը շատ ավելի խիստ է: Մասնավորապես երրորդ պահանջը էապես սահմանափակում է այս սկզբունքի կիրառությունը և, փաստորեն, հակասում է իրավաչափ վարչարարության համար պատասխանատվության հիմնական նպատակին՝ հանրային շահի համար ծանր վնաս կրած առանձին անձանց փոխհատուցում ապահովելուն: Հետևաբար, նույնիսկ եթե Հա-

⁴⁶⁴ St' u Case 59/83 Biovilac v EEC [1984] ECR 4057, պարագրաֆ 28; confirming Case 267/82 Développement SA v Commission [1986] ECR 1907, պարագրաֆ 33, Cases T-113/96 Dubois SA v Council and Commission [1998] ECR II-125, պարագրաֆ 42, Cases 9 and 11/71 Compagnie d'Approvisionnement v Commission [1972] ECR 391, պարագրաֆ 46:

⁴⁶⁵ St' u Case T-184/95 Dorsch Consult Ingenieurgesellschaft v Council and Commission [1998] ECR II-667, պարագրաֆ 80:

մայնքային դատարանները ճանաչեն իրավաչափ վարչարարության համար պատասխանատվության սկզբունքի գոյությունը, քիչ հավանական է, որ այն պաշտպանի անհատներին իրավաչափ որոշումների վերացման հետևանքներից: Այս եզրահանգումը կգործի նաև այն դեպքում, եթե դատարանները պահանջեն «միայն» արտասովոր և հատուկ վնաս, քանի որ այդ պահանջները, ամենայն հավանականությամբ, կմեկնաբանվեն ազգային իրավակարգերի լույսի ներքո⁴⁶⁶:

Ինչ վերաբերում է ՀՀ իրավական համակարգին, ապա Օրենքի 109-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ եթե ուժը կորցրել է բարենպաստ իրավաչափ վարչական ակտը, որի հետևանքով դրա հասցեատիրոջը կամ երրորդ անձին վնաս է պատճառվել, ապա վերջինիս դիմումի հիման վրա վնասը ենթակա է հատուցման այնքանով, որքանով այդ անձը, վստահելով վարչական ակտի գոյությանը, դրա ընդունման կամ կատարման հետևանքով վնաս է կրել: Սահմանադրական դատարանը, ՍԴՈ-1458 որոշմամբ քննարկելով Օրենքի 66-րդ հոդվածի 3-րդ մասի «գ» եվ «ե» կետերի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը, բարենպաստ վարչական ակտերը վերացնելու դեպքում հատուկ կարևորություն է տվել վնասների հատուցմանը: Այս որոշմամբ Սահմանադրական դատարանը կարծես Օրենքի վիճարկվող դրույթների Սահմանադրությանը համապատասխանելու կապակցությամբ եզրահանգումը էականորեն պայմանավորել է հենց հատուցման մեխանիզմների առկայությամբ:

Այսպես, Սահմանադրական դատարանը նշել է. «Բացի դրանից, Օրենքով նախատեսված կառուցակարգը՝ որպես Օրեն-

⁴⁶⁶ Տե՛ս **F. Schockweiler, C. Wivénes, and J.-M. Godart**, 'Le régime de la responsabilité extra- contractuelle du fait d'actes juridiques dans la Communauté européenne', RTDE 1990, էջ 27:

քի համակարգի մաս, արդյունավետ հնարավորություն է ստեղծում շահառու անձի համար իրականացնելու վարչական ակտով իրեն տրամադրված իրավունքը՝ պատշաճ կերպով կատարելով իր վրա դրված պարտականությունը, կամ վիճարկելու ընդունված վարչական ակտի իրավաչափությունը, այլ կերպ՝ վարչական ակտով անձի վրա կարող է դրվել միայն օրենքով սահմանված պարտականություն, իսկ Օրենքի 109-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված է նաև բարենպաստ իրավաչափ վարչական ակտեր ուժը կորցնելու դեպքում՝ վստահության պաշտպանության ուժով, շահառու անձանց պատճառված վնասների հատուցման կառուցակարգ»⁴⁶⁷:

Այնուհետ Սահմանադրական դատարանը հավելել է. «Անդրադառնալով անձի իրավական վիճակը վատթարացնող օրենքների և այլ իրավական ակտերի հետադարձ ուժի արգելքի ենթադրյալ խախտմանը՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ վիճարկվող դրույթը չի վերաբերում և չի կարող վերաբերել այն դեպքերին, երբ անձն ամբողջովին կամ մասնակիորեն ստացել է վարչական ակտով նախատեսված օգուտը, ուստի խոսքը վատթարացման մասին չէ, քանի որ իրավահարաբերությունները չեն ավարտվել: **Բացի դրանից, վնասի հատուցման լիարժեք հնարավորությունը թույլ է տալիս արդյունավետ կերպով իրականացնել վարչական ակտի հասցեատիրոջ վստահության պաշտպանության իրավունքը:** ... Օրենքի այս դրույթը հետապնդում է գերակայող հանրային շահը կենսագործելու նպատակ, չի ենթադրում ուժը կորցնելիք բարենպաստ վարչական ակտերի հետադարձ ներգործություն անձի ստացած

⁴⁶⁷ Տե՛ս Սահմանադրական դատարանի 2019 թվականի ապրիլի 30-ի ՍԴՈ-1458 որոշումը, պարագրաֆ 4.1

օգուտի վրա, ինչպես նաև որևէ կերպ չի սահմանափակում հնարավոր վնասների հատուցման նրա իրավունքը»⁴⁶⁸:

Դժվար չէ նկատել, որ Սահմանադրական դատարանը բարենպաստ վարչական ակտերն ուժը կորցրած ճանաչելում համատեքստում, սահմանադրական համարելով այս մասով վարչական մարմնի՝ Օրենքով սահմանված լայն հայեցողական լիազորությունները, «առաջին պլան է մղում» լեգիտիմ ակնկալիքների հատուցողական պաշտպանության մեխանիզմները:

Այս առումով հայրենական իրավական համակարգում առկա մոտեցումը սկզբունքորեն տարբերվում է վերը քննարկված եվրոպական փորձից: Այսպես, եթե ԵՀ իրավունքում իրավաչափ վարչարարության համար վնասների հատուցման մեխանիզմները կիրառվում են նվազագույն չափով, մեր իրավական համակարգում այն ստացել է հստակ օրենսդրական ամրագրում և կարևորվել է սահմանադրական արդարադատություն իրականացնող մարմնի կողմից:

Սակայն լեգիտիմ ակնկալիքների պաշտպանության հատուցողական միջոցներին նախապատվություն տալը չի կարող վկայել ՀՀ իրավական համակարգում դրանց պաշտպանության ավելի մեծ աստիճանի մասին: Այս եզրահանգումը պետք է դիտարկել նախորդ գլուխներում ուսումնասիրված ընթացակարգային և նյութական պաշտպանության սկզբունքների լույսի ներքո. մինչ ՀՀ իրավական համակարգում վարչական մարմիններն ունեն իրավաչափ և բարենպաստ հայեցողական որոշումները վերացնելու լայն լիազորություններ, ԵՀ վարչակազմը պետք է հենվի կոնկրետ օրենսդրական դրույթների վրա, քանի որ ԵՀ իրավունքի՝ ձեռք բերված իրավունքների սկզբունքը արգելում է

⁴⁶⁸ Սահմանադրական դատարանի 2019 թվականի ապրիլի 30-ի ՍԴՈ-1458 որոշումը:

բոլոր իրավաչափ և բարենպաստ որոշումների վերացումը: Ակնհայտ է, որ լեգիտիմ ակնկալիքների պաշտպանության նյութական և ընթացակարգային միջոցներն ապահովում են դրանց իրական իրացումը, մինչդեռ հատուցողական միջոցները կարծես փոխլրացնում են այս մեխանիզմերին և պետք է կիրառվեն որպես վերջին տարբերակ, երբ գերակա հանրային շահով պայմանավորված պաշտպանության նյութական և ընթացակարգային միջոցները չեն գործում: Ուստի գտնում ենք, որ ներպետական վարչական իրավունքը, նախապատվություն տալով հատուցողական միջոցներին, լեգիտիմ ակնկալիքների համար նախատեսում է պաշտպանության ավելի ցածր աստիճան:

Ինչ վերաբերում է իրավաչափ գործողություններով պատճառված վնասի հատուցմանը, ապա ՀՀ իրավական համակարգի համատեքստում այս դեպքերը կարող են քննարկվել իրավաչափ վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման ինստիտուտի շրջանակում: Այսպես, Օրենքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ իրավաչափ վարչարարության հետևանքով պատճառված վնասը ենթակա է հատուցման միայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքներով սահմանված դեպքերում, ինչպես նաև այն դեպքերում, երբ անձը, սույն օրենքի 63-րդ հոդվածի 3-րդ մասի ուժով, վստահության իրավունք ունի: Ներպետական օրենսդրությամբ իրավաչափ վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման դեպքերը բազմաթիվ են:

Այսպես, «Արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին» օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ արտակարգ դրություն հայտարարելու համար հիմք ծառայած հանգամանքներից կամ դրանց հետևանքների վերացման գործողություններից տուժած ֆիզիկական անձանց փոխհատուցվում է

կրած նյութական վնասը, և տրամադրվում է անհրաժեշտ օգնություն՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով: Ֆիզիկական և իրավաբանական անձինք, որոնց գույքն ու այլ միջոցներն օգտագործվել են արտակարգ դրության իրավական ռեժիմի ապահովման նպատակով, իրավունք ունեն ստանալու համարժեք փոխհատուցում՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով: Համանման կարգավորում սահմանված է նաև «Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին» օրենքի 15-րդ հոդվածում: «Անասնաբուժության մասին» օրենքի 10-րդ հոդվածով սահմանվում է կենդանիների վարակիչ հիվանդությունների դեպքում անկաժ, ոչնչացված կամ սանիտարական սպանդի կամ մորթի ենթարկված կենդանիների համար փոխհատուցման հնարավորություն:

ԳԼՈՒԽ 3. ՈՉ ԻՐԱՎԱԶԱՓ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԻՄԱՆ ՎՐԱ ԱՌԱՋԱՑԱԾ ԼԵԳԻՏԻՄ ԱԿՆԿԱԼԻՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

§1. Լեգիտիմ ակնկալիքների պաշտպանությունը ոչ իրավաչափ վարչական ակտերը վերացնելու դեպքում

1.1. Օրինական կառավարման և լեգիտիմ ակնկալիքների միջև մրցակցությունը

Ավանդաբար, իրավական համակարգերի մեծ մասում անտրամաբանական էին համարում այն գաղափարը, որ ոչ իրավաչափ ակտը կարող է վերացվել: Ոչ իրավաչափ ակտը համարվել է անվավեր և ուժի մեջ չի մտել դրա կայացման պահից: Այս նախադրյալից հետևեց. «Այնտեղ, որտեղ չկա ակտ, չի կարող խոսք լինել այն վերացնելու լիազորությունների մասին. դուք չեք կարող փոխել այն, ինչ գոյություն չունի»⁴⁶⁹: Այսպիսով, վարչական մարմինը կարող է գործել այնպես, կարծես նախնական ակտը գոյություն չուներ⁴⁷⁰:

Ավելի ուշ տեսությունը հիմնավորեց այս գծի տրամաբանական թերությունը: Այն հիմնված է կեղծ նախադրյալի վրա, այն է՝ ոչ իրավաչափ ակտը գոյություն չունի⁴⁷¹: Իրականում ոչ իրավաչափ (անվավեր) վարչական ակտն իսկապես ուժի մեջ է այնքան ժամանակ, քանի դեռ վարչական մարմինը կամ դատարանը չի

⁴⁶⁹ **A. Rubinstein**, Jurisdiction and Illegality (Oxford, 1965), p. 29.

⁴⁷⁰ Տե՛ս **G. Ganz**, 'Estoppel and Res Iudicata in Administrative Law' (1965) PL 237 էջ 243, **M. Akehurst**, 'Revocation of Administrative Decisions' (1982) PL 613, էջ 619:

⁴⁷¹ Տե՛ս **Wade and Forsyth**, նշված աշխատ., էջեր 339-344:

վերացրել այդ որոշումը, կամ այն չի փոխարինվել նոր (իրավա-
չափ) որոշմամբ:

Իրականում, հատկապես վարչական իրավունքում կիրառ-
վող իրավական նորմերը հաճախ բարդ են լինում: Վարչարարու-
թյան իրավաչափ իրականացման ճշգրիտ սահմանները կարող
են նույնիսկ ոլորտի մասնագետների համար լիովին պարզ չլի-
նել: Անգամ իրավաբանները կարող են վիճել, թե որտեղ է անց-
նում իրավաչափության և ոչ իրավաչափության սահմանագիծը,
իսկ դատավորների շրջանում կարող են լինել տարբեր կարծիք-
ներ այն մասին, թե սահմանագծի որ կողմում է գտնվում վարչա-
կան ակտը: Այս համատեքստում անձինք, հաշվի առնելով ժա-
մանակակից վարչական օրենսդրության բարդությունը, ի վիճա-
կի չեն հստակ հասկանալ, որ վարչական ակտը կամ գործողու-
թյունն իրավաչափ չէ:

Բնականաբար, օրինականության և իրավաչափ կառավար-
ման սկզբունքները պահանջում են, որ եթե վարչական մարմինն
ընդունել է ոչ իրավաչափ որոշում, ապա այն պետք է վերացվի,
հատկապես երբ ոչ իրավաչափությունը կարող է լուրջ ազդեցու-
թյուն ունենալ երրորդ անձանց վրա: Այնուամենայնիվ, պարզ է,
որ ոչ իրավաչափ որոշումները վերացնելը կարող է լուրջ հե-
տևանքներ առաջացնել այն անձանց համար, ովքեր հիմնվել են
այդ որոշման վրա՝ վստահելով դրա իրավաչափությանը: Այսպի-
սով, լեգիտիմ ակնկալիքների որևէ պաշտպանության բացակա-
յությունը կարող է զգալի դժվարություններ առաջացնել և խա-
թարել վստահությունը պետական մարմինների նկատմամբ, երբ
անհատները պլանավորում են իրենց կյանքը և ֆինանսապես
ապավինում են ոչ իրավաչափ որոշումներին⁴⁷²:

⁴⁷² Տե՛ս **Bradley**, նշված աշխատ., էջ 3:

Այս հարցը զգալի դժվարություններ է առաջացնում, քանի որ անհատի նկատմամբ արդարությունը հակասության մեջ է մտնում օրինական կառավարման սկզբունքի հետ: Վերջին սկզբունքը պահանջում է, որ վարչական մարմինները գործեն միայն այն դեպքերում, երբ նրանց հատուկ տրված է դրա իրավասությունը, և միայն օրենքով կանխորոշված սահմաններում: Այն, որ ոչ իրավաչափ որոշումներն ու գործողությունները կարող են ակնկալիքներ առաջացնել, որոնք իշխանությունները պարտավոր են պահպանել, հակասում է այս սկզբունքին: Քանի որ, ոչ իրավաչափ հայտարարություններ անելով, իշխանությունները կարող են, դիտավորյալ կամ ակամա, ընդլայնել իրենց լիազորությունները՝ դուրս գալով օրենքով կանխորոշված սահմաններից⁴⁷³: Այս հարցի վերաբերյալ տարբեր իրավական համակարգերում մոտեցումը տարբեր է:

Երբ բախվում են օրինականության և արդարության միջև մրցակցության, անգլիական դատարանները հակված են պաշտպանելու օրինականությունը: Վարչակազմը, սկզբունքորեն, միշտ կարող է վերացել ոչ իրավաչափ որոշումը, ինչպես հետագա, այնպես էլ հետադարձ ուժով, առանց որևէ ժամանակային սահմանափակման⁴⁷⁴: Այնուամենայնիվ, որոշ իրավիճակներում անձին պատճառած դժվարությունները կարող են արդարացնել օրինականության սկզբունքի սահմանափակումը: Անգլիական օրենսդրության մեջ ոչ իրավաչափ գործողությունների որոշ տեսակներ համարվում են պակաս լուրջ, քան մյուսները, և նման սխալների արդյունքում ոչ իրավաչափ որոշումները կարող են պարտադիր լինել և չվերացվել: Սակայն, հայեցակարգային առումով, այս պարտադիր ազդեցությունը բխում է ոչ թե վերաց-

⁴⁷³ *St'u Minister of Agriculture and Fisheries v Mathews* [1950] 1 KB 148:

⁴⁷⁴ *St'u A-G for Ceylon v Silva* [1953] AC 461, 480-481:

ման արգելքի առանձին հանրային-իրավական կամ լեգիտիմ ակնկալիքների սկզբունքից, այլ էստոպելի մասնավոր իրավունքի սկզբունքի կիրառումից⁴⁷⁵:

Ֆրանսիական դատարանները ընդունում են, որ օրինականության սկզբունքը պահպանելու համար (*ultra vires*, *légalité*) վարչական մարմինը պետք է ունենա որոշումը վերացնելու հայեցողական լիազորություններ, եթե պարզվի, որ այն իրավաչափ չէ: Այնուամենայնիվ, Պետական խորհուրդը **Cachet** գործով որոշեց, որ այդ լիազորությունները պետք է սահմանափակվեն իրավական որոշակիության և լեգիտիմ ակնկալիքների պաշտպանության սկզբունքներով⁴⁷⁶: Պետական խորհուրդը ճանաչեց, որ օրինական կառավարման սկզբունքը բացարձակ չէ. այն պետք է հավասարակշռվի անհատական արդարության և կառավարության նկատմամբ վստահության հետ⁴⁷⁷:

Այս համատեքստում գիտագործնական հետաքրքրություն է ներկայացնում այն հարցը, թե ինչ չափանիշներով պետք է առաջնորդվի վարչական դատարանը կամ վարչական մարմինը ոչ իրավաչափ վարչական ակտը *ex tunc* կամ *ex nunc* ուժը կորցրած ճանաչելու հարցը որոշելիս: Այս տեսանկյունից ևս հարուստ նախադեպային պրակտիկա ունի ձևավորած ԵՄ դատարանները, որում ձևավորված մոտեցումները կարող են օգտակար լինել: Ոչ իրավաչափ որոշումների վերացման վերաբերյալ Եվրամիության դատական պրակտիկան զարգացել է Եվրոպական ածխի և պողպատի համայնքի (ECSC) որոշումներից⁴⁷⁸:

⁴⁷⁵ St' u Re 56 Denton Rd., Twickenham, Middlesex [1953] 1, In Rootkin v Kent CC [1981] 1 WLR 1186:

⁴⁷⁶ St' u Pécresse conclusions CE 24/10-97 Laubier RFDA 1998, էջ 528, **Yannakopoulos**, նշված աշխատ., էջեր 436-440:

⁴⁷⁷ St' u **Girardot and Raynaud**, նշված աշխատ., էջ 937:

⁴⁷⁸ St' u **Schwarze**, նշված աշխատ., էջեր 991-1025:

Հետազոտության շրջանակում ոչ իրավաչափ վարչական ակտերի վերացման դեպքում լեգիտիմ ակնկալիքների պաշտպանության հիմնախնդրի վերաբերյալ եզրահանգումներ կառուցելու տեսանկյունից առավել մեծ հետաքրքրություն է ներկայացնում ԵՄ դատարանների դատական պրակտիկայի մանրամասն վերլուծությունը: Հիմնվելով Ֆրանսիայի և Գերմանիայի դատական պրակտիկայի վրա՝ ԵՄ դատարանները մշակել են հանրային իրավունքի հայեցակարգային բարդ սկզբունք, որը կոչված է ապահովել հավասարակշռություն օրինականության և արդարության պահանջների միջև այն անձանց նկատմամբ, ովքեր պլանավորում են իրենց կյանքը և ապավինում են ոչ իրավաչափ որոշումների: Ընդ որում, այս սկզբունքի համատեքստում հստակ տարբերություն է դրվում *ex tunc* և *ex nunc* վերացման միջև:

Ինչ վերաբերում է ներպետական կարգավորումներին, ապա Օրենքի 64-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ոչ իրավաչափ վարչական ակտն իրավաբանական ուժը կորցնում է ինչպես դրա անվավեր ճանաչելու մասին որոշում ընդունելու, այնպես էլ վարչական ակտն ընդունելու պահից՝ նույն մասի երկրորդ պարբերությամբ և նույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված բացառություններով: Նույն մասի երկրորդ պարբերությունը սահմանում է, որ Օրենքի 63-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքերում ոչ իրավաչափ վարչական ակտն անվավեր է ճանաչվում այդ ակտն ընդունելու պահից, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ: Օրենքի 63-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է այն դեպքերը, երբ անձը վարչական ակտին վստահելու իրավուն չունի. այլ կերպ ասած սրանք այն դեպքերն են, երբ լեգիտիմ ակնկալիքների պաշտպանության հարց չի առաջանում:

Այսպիսով, Օրենքի 64-րդ հոդվածի 1-ին մասից հետևում է, որ օրենսդիրը, մի կողմից վարչական մարմնին տրամադրել է հայեցողություն վարչական ակտն ուժը կորցրած ճանաչելու պահը որոշելու հարցում, մյուս կողմից առանձնացրել է հստակ դեպքեր, երբ ոչ իրավաչափ վարչական ակտը պետք է ուժը կորցրած ճանաչվի ընդունման պահից (երբ անձը չունի վարչական ակտին վստահելու իրավունք), և երբ վարչական ակտը պետք է ուժը կորցրած ճանաչվի անվավեր ճանաչելու պահից (Օրենքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ բարենպաստ ոչ իրավաչափ վարչական ակտը, որի հիման վրա ծագում են միաժամանակյա կամ ընթացիկ գույքային պարտականություններ, կամ որն այդպիսի պարտականությունների համար նախադրյալ է համարվում, կարող է ուժը կորցնել միայն դրա անվավեր ճանաչվելու պահից, եթե այդ ակտով օգուտ ստացողը, վարչական ակտի նկատմամբ վստահության իրավունքի ուժով, արդեն ձեռք է բերել տրամադրված օգուտները կամ տնօրինել է գույքը, որի հետևանքով դրանք չեն կարող վերադարձվել, կամ վերադարձվելու դեպքում կարող է էական վնաս պատճառվել օգուտ ստացողին):

1.2. Ոչ իրավաչափ վարչական ակտերի *ex nunc* վերացումը

Ոչ իրավաչափ որոշումների *ex nunc* վերացման մասով ԵՄ դատարանների մոտեցումը, կարծեք թե, հստակ է: Կան որոշ դատական հայտարարություններ, որոնք նշում են, որ **ex nunc** վերացումը սկզբունքորեն միշտ հնարավոր է⁴⁷⁹: Օրինակ, **Algera** հայտնի գործով, Ժողովը դիմումատուին տվեց մշտական աշխատանք և նրան շնորհեց որոշակի կարգ, որը որոշում էր նրա աշխատավարձը: Չնայած նշանակումն ինքնին օրինական էր և վե-

⁴⁷⁹ See Case 15/60 Simon v High Authority [1961] ECR 115, 123:

րացման ենթակա չէր, կարգի նշանակումը խախտում էր անձնակազմի որոշակի կանոններ, և այն կարող էր վերացվել: Այսինքն՝ Ժողովի որոշումը՝ դիմողին տեղափոխել ավելի ցածր կարգի, որը գործելու էր ապագայի համար, չէր խախտել ԵՄ օրենսդրության որևէ ընդհանուր սկզբունք: **Herpels** գործի ձևակերպմամբ՝ թեև սխալ կամ ոչ իրավաչափ որոշման հետադարձությամբ վերացումը ենթակա է խիստ պահանջների, սակայն նման որոշման **ex nunc** վերացումը միշտ հնարավոր է:

Վերջերս քննած **ZF** գործով⁴⁸⁰ ԵՄ դատարանը վերահաստատել է, որ հաստատված դատական պրակտիկայի համաձայն՝ յուրաքանչյուր ԵՄ հաստատություն, որը պարզում է, որ ընդունված ակտը իրավաչափ չէ, իրավունք ունի այդ ակտը վերացնել ողջամիտ ժամկետում՝ հետագա ուժով: Այդ իրավունքը կարող է սահմանափակվել ակտի շահառուի լեգիտիմ ակնկալիքները հարգելու անհրաժեշտությամբ, եթե վերջինս հիմնվել է ակտի իրավաչափության վրա⁴⁸¹: ԵՄ դատարանը հիշեցրել է, որ ԵՄ հաստատությունը իրավունք ունի ոչ իրավաչափ ակտը վերացնել միայն ողջամիտ ժամկետում⁴⁸²: Այսպիսով, դատարանն ամփոփել է, որ հասցեատիրոջ համար ոչ իրավաչափ բարենպաստ ակտի վերացումը ենթակա է երկու իրավական պայմանների. առաջին՝ պետք է պահպանվեն շահագրգիռ անձի լեգիտիմ ակնկալիքները, և երկրորդ՝ վերացումը պետք է իրականացվի ողջամիտ ժամկետում⁴⁸³:

⁴⁸⁰ Տե՛ս Case T-605/18 ZF v Commission [2020] ECR, պարագրաֆ 148:

⁴⁸¹ Տե՛ս նաև՝ Case C-248/89 Cargill v Commission [1991] ECR, պարագրաֆ 20, Case T-233/16 P Ruiz Molina v EUIPO [2017] ECR, պարագրաֆ 27, Case T-365/24 LU v EIB [2026] ECR, պարագրաֆ 100:

⁴⁸² Տե՛ս Case T-605/18 ZF v Commission [2020] ECR, պարագրաֆ 149: Տե՛ս նաև՝ Case C-90/95 P de Compte v Parlement [1997] ECR, պարագրաֆ 35, Case T-233/16 P Ruiz Molina v EUIPO [2017] ECR, պարագրաֆ 27:

⁴⁸³ Տե՛ս Case T-605/18 ZF v Commission [2020] ECR, պարագրաֆ 150:

Գրեթե համանման չափանիշներ ձևակերպել է նաև ՄԻԵԴ-ը: **Moskal v Poland** գործով դատարանը նշել է. «Դատարանը, հաշվի առնելով սոցիալական արդարության կարևորությունը, գտնում է, որ որպես ընդհանուր սկզբունք **հանրային մարմինները չպետք է զրկվեն իրենց սխալները շտկելու հնարավորությունից, նույնիսկ եթե դրանք բխում են սեփական անփութությունից:** Հակառակ մոտեցումը կհակասեր անհիմն հարստացման դոկտրինին: Այն նաև անարդար կլիներ սոցիալական ապահովության ֆոնդին մասնակցող այլ անձանց նկատմամբ, մասնավորապես նրանց, որոնց մերժվել է նպաստը օրենքով սահմանված պահանջները չկատարելու պատճառով: Վերջապես, դա կնշանակեր սահմանափակ հանրային ռեսուրսների ոչ պատշաճ բաշխման սանկցիոնավորում, ինչը հակասում է հանրային շահին»⁴⁸⁴:

Դատարանը նաև կարևորել է, որ չնայած վերոնշյալ կարևոր նկատառումներին, այս ընդհանուր սկզբունքը չի կարող գերակա լինել այնպիսի իրավիճակում, երբ տվյալ անձը ստիպված է կրել չափազանց ծանր բեռ՝ իրեն տրված նպաստից զրկվելու արդյունքում: Եթե սխալը պայմանավորված է հենց իշխանությունների գործողություններով և որևէ երրորդ անձի մեղք առկա չէ, ապա համաչափության գնահատման ժամանակ պետք է կիրառվի տարբեր մոտեցում՝ պարզելու համար, թե արդյոք դիմողի վրա դրված բեռը եղել է չափազանց ծանր⁴⁸⁵:

Գործը վերաբերում էր սոցիալական ապահովության մարմնի կողմից նախկինում նշանակված կենսաթոշակի դադարեցմանը՝ վարչական սխալի բացահայտումից հետո: Դատարանը

⁴⁸⁴ ECtHR judgment Moskal v. Poland (10373/05) 15 September 2009, պարագրաֆ 73: Տե՛ս նաև՝ ECtHR, judgement Beinarovič and Others v Lithuania (70520/10, 21920/10, 41876/11) 12 June 2018:

⁴⁸⁵ Տե՛ս նույն տեղում:

այս գործով կարևորել է ոչ իրավաչափ վարչական ակտերի վերացման դեպքում նշանակություն ունեցող ևս երկու կարևոր հանգամանք. **դիմումատուի բարեխղճությունը, անվավեր ճանաչելու ժամկետը և անցումային ժամանակի նախատեսումը:**

Այսպես, ըստ Դատարանի՝ գործում գույքային իրավունք է ձևավորվել դիմողի կողմից կենսաթոշակի դիմումին կցված փաստաթղթերի դրական գնահատման արդյունքում, որը ներկայացվել էր բարեխղճորեն, ինչպես նաև սոցիալական ապահովության մարմնի կողմից իրավունքի ճանաչման միջոցով: Դատարանը գտել է, որ իշխանությունների կողմից դիմողի գործի վերանայման ուշացումը համեմատաբար երկար էր: 2001 թվականի որոշումը գործել է տասը ամիս, նախքան իշխանությունները հայտնաբերել են իրենց սխալը: Մյուս կողմից, սխալի **բացահայտումից անմիջապես հետո նպաստի վճարումը դադարեցնելու որոշումը ընդունվել է համեմատաբար արագ և կիրառվել անմիջական ուժով:** Դատարանը հատկապես կարևորել է այն հանգամանքը, որ վիճարկվող միջոցի արդյունքում դիմողը գործնականում մեկ օրից մյուսը զրկվեց իր ամբողջ կենսաթոշակից, որը նրա եկամտի միակ աղբյուրն էր⁴⁸⁶: Ընդ որում, այն հանգամանքը, որ պետությունը դիմողից չի պահանջել վերադարձնել անհիմն վճարված կենսաթոշակը, Դատարանի կարծիքով բավարար չափով չի մեղմել նրա նկատմամբ իրականացված միջամտության հետևանքները:

Դատարանը նաև կարևորել է, որ սեփականության իրավունքների համատեքստում առանձնահատուկ նշանակություն պետք է տրվի պատշաճ կառավարման սկզբունքին (principle of good governance): Ըստ դատարանի. «Ցանկալի է, որ հանրային

⁴⁸⁶ St' u նաև՝ ECtHR, judgement Romeva v North Macedonia (32141/10) 12 December 2019:

մարմինները գործեն առավելագույն ճշգրտությամբ և բարեխղճությամբ, հատկապես երբ խոսքը վերաբերում է անձանց համար կենսական նշանակություն ունեցող հարցերին, ինչպիսիք են՝ սոցիալական նպաստները և այլ գույքային իրավունքները: Սույն գործում Դատարանը գտնում է, որ իշխանությունները, հայտնաբերելով իրենց սխալը, չեն կատարել իրենց պարտականությունը՝ գործելու ժամանակին և պատշաճ ու հետևողական կերպով»⁴⁸⁷:

ՄԻԵԴ-ը վերջերս քննած գործերով վերահաստատել է. ««Պատշաճ կառավարման» սկզբունքը պահանջում է, որ երբ առկա է հանրային շահի հարց, հատկապես եթե այն վերաբերում է հիմնարար իրավունքներին, օրինակ՝ սեփականությանը, հանրային մարմինների վրա է դրված պարտականություն՝ գործելու ժամանակին, պատշաճ ձևով և առավելագույն հետևողականությամբ: Պատշաճ կառավարման սկզբունքը, որպես ընդհանուր կանոն, չպետք է խոչընդոտի իշխանություններին ուղղելու պատահական սխալները, նույնիսկ եթե դրանք բխում են սեփական անփութությունից: Սակայն «հին սխալի» ուղղման անհրաժեշտությունը չպետք է անհամաչափ կերպով միջամտի նոր իրավունքին, որը անհատը ձեռք է բերել՝ հանրային մարմնի գործողությունների լեգիտիմության նկատմամբ բարեխղճորեն ապավինելու արդյունքում: Այլ կերպ ասած, պետական մարմինները, որոնք չեն ապահովել կամ չեն պահպանել իրենց իսկ սահմանած ընթացակարգերը, չպետք է կարողանան օգտվել իրենց անիրավաչափ վարքագծից կամ խուսափել իրենց պարտավորություններից: Պետական մարմնի թույլ տված ցանկացած

⁴⁸⁷ ECtHR judgment *Moskal v. Poland* (10373/05) 15 September 2009, պարագրաֆներ 67-76.

սխալի ռիսկը պետք է կրի պետությունը, և սխալները չպետք է շտկվեն շահագրգիռ անձանց հաշվին»⁴⁸⁸:

Այսպիսով, կարող են նշել, որ **ex nunc** վերացումը, որպես կանոն, բոլոր հավասար պայմաններում, վարչական ակտի հասցեատիրոջ համար պակաս միջամտող է, քան **ex tunc** վերացումը: Դրանով է պայմանավորված այն հանգամանքը, որ թե՛ ՄԻԵԴ, և թե՛ ԵՄ դատարանը որպես կանոն ընդունելի են համարում ոչ իրավաչափ բարենպաստ վարչական ակտերի՝ անվավեր ճանաչելու պահից վերացումը: Սակայն պետք է կարևորել երկու հանգամանք, որոնք վարչական մարմինը կամ դատարանը պետք է հաշվի առնեն վարչական ակտի վերացման հարցը քննելիս:

Այսպես, վարչական մարմինը կամ դատարանը յուրաքանչյուր դեպքում պետք է հաշվի առնեն կոնկրետ գործի փաստերը՝ համաչափության սկզբունքի հետևողական կիրառմամբ ապահովելով պատշաճ հավասարակշռություն լեգիտիմ ակնկալիքների պաշտպանության և օրինականության սկզբունքների միջև: Այս համատեքստում պետք է հաշվի առնել, թե արդյոք սկզբնական միջոցը առաջացրել է լեգիտիմ ակնկալիքներ, և արդյոք **ex nunc** վերացումը տեղի է ունենում ողջամիտ ժամկետի ընթացքում: Երրորդ, եթե վարչական ակտի **ex nunc** վերացման անհապաղ ուժի մեջ մտնելը, խաթարելով լեգիտիմ ակնկալիքները, անհամաչափ ծանր բեռ է առաջացնելու վարչական ակտի հասցեատիրոջ համար, պետք է սահմանվի անցումային շրջան, այն է՝ վարչական ակտն ուժը կորցնելու ավելի ուշ ժամկետ:

⁴⁸⁸ ECtHR, judgement Eka Mikeladze and Others v. Georgia (29385/11, 19372/12, 29533/13, and 73699/13) 25 November 2021, պարագրաֆ 49, ECtHR, judgement Văleanu and Others v Romania (59012/17 and 29 others) 8 November 2022, պարագրաֆ 247.

Վերը շարադրված եզրահանգումների համատեքստում պետք է նշել, որ Օրենքը որպես ոչ իրավաչափ վարչական ակտերի վիճարկման ժամկետ սահմանում է երկու ամիսը⁴⁸⁹: Միաժամանակ, Օրենքի 67-րդ հոդվածում, որը սահմանում է վարչական ակտի վերաբերյալ բողոքի բացակայության դեպքում վերահաս վարչական մարմնի կողմից վերահսկողության կարգով և իր նախաձեռնությամբ ստորադաս վարչական մարմնի ընդունած վարչական ակտը վերանայելու իրավունքը, ժամկետային սահմանափակում նախատեսված չէ: Օրենքի 65-րդ հոդվածը սահմանում է, որ նույն օրենքով սահմանված կարգով չբողոքարկված ոչ իրավաչափ վարչական ակտը կարող է անվավեր ճանաչվել 6 ամսվա ընթացքում այն օրվանից, երբ իրավասու վարչական մարմինն իմացել է այն փաստերի մասին, որոնք վարչական ակտն անվավեր ճանաչելու հիմք կարող էին դառնալ: Վարչական ակտն անվիճարկելի է դառնում, և վարչական մարմինը զրկվում է սույն հոդվածով նախատեսված իրավունքից, եթե վարչական ակտի ընդունման օրվանից անցել է 10 տարի, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի: Այսպիսով, իրավական որոշակիության ապահովման նպատակով Օրենքը սահմանել է առավելագույն 10 տարի ժամկետ, որի ընթացքում ոչ իրավաչափ վարչական ակտը կարող է վերացվել:

Միաժամանակ, Օրենքի 64-րդ հոդվածի 1-ին մասի ձևակերպումն առ այն, որ ոչ իրավաչափ վարչական ակտն իրավաբանական ուժը կորցնում է դրա անվավեր ճանաչելու մասին որոշում ընդունելու պահից, թույլ չի տալիս լեգիտիմ ակնկալիքների պաշտպանության անհրաժեշտությամբ պայմանավորված սահմանել անցումային շրջան ոչ իրավաչափ բարենպաստ վարչական ակտերը վերացնելու դեպքում: Կարծում ենք, որ այս

⁴⁸⁹ Տե՛ս Օրենքի 71-րդ հոդվածի 1-ին մասի ա կետը:

կարգավորումը վերը շարադրված վերլուծության համատեքստում վերանայման կարիք ունի:

1.3. Ոչ իրավաչափ վարչական ակտերի ex tunc վերացումը

Մինչ այժմ քննարկվում էր ոչ իրավաչափ բարենպաստ վարչական ակտերի ex nunc վերացումը: Այժմ անդրադարձ կատարենք այն չափանիշներին, որոնցով պետք է առաջնորդվի դատարանը կամ վարչական մարմինը վարչական ակտերի ex tunc վերացման դեպքում: Ինչպես ex tunc վերացման, այնպես էլ այս դեպքում ելակետն այն է, որ պետք է հավասարակշռություն ապահովի օրինականության սկզբունքի և լեգիտիմ ակնկալիքների պաշտպանության միջև⁴⁹⁰: Սակայն քանի որ ex tunc վերացումն ավելի խիստ միջամտություն է լեգիտիմ ակնկալիքներին, ապա չափանիշներն այս դեպքում շատ ավելի խիստ են⁴⁹¹:

ԵՄ դատական պրակտիկայում հավասարակշռության սկզբունքը ներդրվել է **SNUPAT և Hoogovens** գործերում: Սրանք մի քանի դեպքերից երկուսն են, որոնք կապված են այսպես կոչված մետաղի ջարդոնի արժեքի հավասարեցման սխեմայի հետ⁴⁹²:

Սխեմայի շրջանակներում մետաղի ջարդոնի համար գանձվում էր վճար, բացառությամբ ընկերության սեփական արտադրության արդյունքում ստացված ջարդոնի: SNUPAT-ի մրցակիցներից մեկը՝ Հուգովենսը, մետաղի ջարդոն էր ստացել իր բիզ-

⁴⁹⁰ St'u Cases 7/56 and 3-7/57 *Algeria v Common Assembly* [1957] ECR 39, 15/85 *Consorzio Cooperative d'Abruzzo v Commission*. [1987] ECR 1005, պարագրաֆներ 10-11:

⁴⁹¹ St'u Case 54/77 *Herpels v Commission* [1978] ECR, պարագրաֆ 38:

⁴⁹² St'u Cases 42 and 49/59 *SNUPAT v High Authority* [1961] ECR 53, 14/61 *Hoogovens v High Authority* [1962] ECR 253, 11/63 *Lemmerz-Werke v High Authority* [1965] ECR 677, 14/81 *Alpha Steel v Commission* [1982] ECR 749:

նես խմբի մեջ մտնող ընկերությունից, և Հանձնաժողովը որոշել է, որ դա «սեփական» արտադրություն է: Երբ SNUPAT-ին չհաջողվեց հասնել ջարդոնի համար վճարից նույն հիմքով ազատմանը, որը ստացել էր Renault ավտոարտադրողից, նա դիմեց Հանձնաժողովին՝ խնդրելով հետադարձ ուժով վերացնել Հուգովենսին տված արտոնությունը: Երբ հանձնաժողովը մերժեց դիմումը, SNUPAT-ը դիմեց դատարան: ԵՄ դատարանը որոշում կայացրեց, որ Հուգովենսին տրված արտոնությունն իսկապես անօրինական էր, ուստի հարց առաջացավ, թե արդյոք այն պետք է վերացվի: Եվրոպական դատարանը վճռել է. «... իրավական որոշակիության սկզբունքը... պետք է զուգակցվի ... օրինականության սկզբունքի հետ ... դրանցից ո՞րն է գերակշռելու յուրաքանչյուր դեպքում, կախված է քննարկվող մասնավոր շահերի հետ հանրային շահերի համադրումից, այսինքն՝ մի կողմից՝ բարեխղճություն և ... շահառուների վստահության և մյուս կողմից համայնքի շահերի»⁴⁹³:

Հետագայում Հանձնաժողովը հետադարձ ուժով՝ ընդունման պահից վերացրեց Հուգովենսի արտոնությունը: Երբ այս որոշումը, իր հերթին, վիճարկվեց վերջինի կողմից, Եվրոպական դատարանը որոշում կայացրեց հոգուտ Հանձնաժողովի: Դատարանը հաստատեց, որ հետադարձ ուժով վերացումը սահմանափակվում է այն իրավիճակներով, երբ ապագայի համար վերացումը իրական ազդեցություն չունի. «[Երբ] հավասարակշռում եք հակասական շահերը, որոնցից կախված է ոչ իրավաչափ որոշումը ex nunc կամ ex tunc վերացնելու միջև ընտրությունը, կարևոր է [Հանձնաժողովի համար] հաշվի առնել շահագրգիռ կողմերի իրական իրավիճակը»⁴⁹⁴:

⁴⁹³ SNUPAT, պարագրաֆ 87:

⁴⁹⁴ Case 14/61 Hoogovens v High Authority [1962] ECR 253, պարագրաֆ 5:

Այս դեպքում համահարթեցման ամբողջ համակարգը հետագայում վերացվեց: Այսպիսով, որոշման վերացումն ապագայի համար ոչինչ չէր տա, և, հետևաբար, հետադարձ ուժով վերացումը իրավաչափ էր: Ինչպես ցույց են տալիս այս գործերը, օրինականության և հիմնավորված ակնկալիքների միջև հավասարակշռություն պահպանելը հիմնականում վարչական մարմնի խնդիրն է, բայց այն կարող է վերանայվել դատական մարմինների կողմից⁴⁹⁵: Եվրոպական դատարանը այս վերանայումը բնութագրել է որպես «խիստ»⁴⁹⁶, և դատական պրակտիկայի վերանայումը ցույց է տալիս, որ համայնքային դատարանները մեծ նշանակություն են տալիս օրինականության հարցերին, և որ դրանք միջամտելու են միայն այն դեպքում, եթե լուրջ անհամաչափություն առաջանա քննարկվող պետական և մասնավոր շահերի միջև⁴⁹⁷:

Քննարկվող հիմնախնդրի համատեքստում գիտագործնական նշանակություն ունի այն նկատառումների առանձնացումը, որոնք պետք է հաշվի առնվեն բարենպաստ ոչ իրավաչափ վարչական ակտերը *ex tunc* անվավեր ճանաչելու հարցը որոշելիս: Ցանկանում ենք կարևորել, որ այդ չափանիշներն առանձնացրել ենք Մարդու իրավունքների եվրոպական դատարանի, ԵՄ Արդարադատության դատարանի, գերմանական, ֆրանսիական և անգլիական դատական պրակտիկայի վերլուծության հիման վրա:

Առաջինը, ոչ իրավաչափ բարենպաստ վարչական ակտը չվերացնելու մասին կարող է խոսք լինել միայն այն դեպքում, եթե այն անձը, ում օգտին որոշում է կայացվել, լեգիտիմ ակնկա-

⁴⁹⁵ Տե՛ս նաև՝ Case 111/63 Lemmerz-Werke v High Authority [1965] ECR 677:

⁴⁹⁶ Տե՛ս Case C-90/95P Henri de Compte v EP [1997] ECR I-1999, պարագրաֆ 35:

⁴⁹⁷ Տե՛ս Cases 15/85 Consorzio Cooperative d'Abruzzo v Commission. [1987] ECR 1005, C-90/95P Henri de Compte v EP [1997] ECR I-1999:

լիք է ունեցել ենթադրելու, որ այդ որոշումը վերջնականապես լուծելու էր իրեն վերաբերող գործը: Հարցը այն է, թե արդյոք դիմողի ընդհանուր գիտելիքներն ու փորձը տիրապետող անձը կարող է ողջամտորեն ակնկալել, որ տվյալ հարցի վերաբերյալ որոշումը վերջնականապես կարգավորել է հարցը⁴⁹⁸: Լեգիտիմ ակնկալիքն ավելի հավանական է, որ պաշտպանվի, եթե դժվար է հիմնավորել, որ ակտն իրավաչափ չէ, քան եթե այն խախտում է հատուկ օրենսդրական դրույթները կամ հիմնարար ընթացակարգային կամ նյութական սկզբունքները⁴⁹⁹:

Այսպես, միջոցի իրավաչափության նկատմամբ վստահությունը կարևոր գործոն էր նաև **Lagardère u Canal** գործերում⁵⁰⁰: ԵՄ առաջին ատյանի դատարանը որոշեց, որ սկզբնական որոշումը իրականում ոչ իրավաչափ չէր և, հետևաբար, չպետք է հետադարձությամբ վերացվեր: Ավելին, Դատարանը հայտնեց, որ նույնիսկ եթե սկզբնական որոշումը հավելյալ սահմանափակումների պատճառով համարվեր ոչ իրավաչափ, սա նույնպես չէր արդարացնի հետադարձությամբ վերացումը: Հավելյալ սահմանափակումներին անհամապատասխանություն այնքան ակնհայտ չէր, որ դիմորդներին հիմքեր տար կասկածելու՝ երբ նրանք ստացել էին այդ որոշումը: Ոչինչ չէր հուշում դիմորդներին, որպես բարեխիղճ գործարար ձեռնարկությունների, դրա իրավաչափության վերաբերյալ կասկածների մասին: Ուստի հետադարձությամբ վերացումը կհակասեր դիմորդների լեգիտիմ ակնկալիքներին⁵⁰¹:

⁴⁹⁸ St' u Case 74/74 CNTA v Commission [1975] ECR 533: St' u նաև՝ **E. Sharpston**, 'Legitimate Expectations and Economic Reality' (1990) ELR 103:

⁴⁹⁹ St' u Case 112/77 Töpfer v Commission [1978] ECR 1019:

⁵⁰⁰ St' u Case T-251/00 Lagardere SCA and Canal+ SA v Commission [2002] ECR II-4825:

⁵⁰¹ St' u նույն գործը, պարագրաֆներ 146–150:

Նույն տրամաբանությամբ, նույնիսկ եթե անձը կարող էր ողջամտորեն ակնկալել, որ որոշումը վերջնական կլինի, նրա վարքագիծը կարող է ցույց տալ, որ նա իրականում նման ակնկալիքներ չի ունեցել: Եթե անձը դատական կարգով վիճարկում է որոշումը, ապա, ըստ Ֆրանսիայի Պետական խորհրդի, նա չի կարող ունենալ լեգիտիմ ակնկալիքներ⁵⁰²:

Երկրորդ, եթե հաստատվում է, որ անձը լեգիտիմ ակնկալիքներ ունի, վարչական մարմինը պետք է հաշվի առնի անձի շահագրգռվածությունը որոշում կայացնելու հարցում: Հատկապես կարևոր է, թե արդյոք անձը ֆինանսապես հենվել է որոշման վրա⁵⁰³: Այնուամենայնիվ, ֆինանսական վստահությունը ոչ անհրաժեշտ է, ոչ էլ բավարար: Իրական հարցն այն է, թե լայն իմաստով ինչ հետևանքներ կունենար այդ որոշման հետադարձ ուժով վերացումը:

Դիմողի հաջողության հնարավորությունները ավելի փոքր կլինեն, եթե նա չկարողանա ցույց տալ, որ հիմնվել է միջոցի իրավաչափության վրա, որը հետագայում վերացվել է, հատկապես եթե նա չի կարող ցույց տալ որևէ բացասական հետևանք՝ սկզբնական միջոցի և դրա վերացման կամ փոփոխման միջև անցած ժամանակի պատճառով:

Այս մտքին համապատասխանում է **Alpha Steel** գործը⁵⁰⁴: Դիմող ընկերությանը տրվել էր պողպատի քվոտա որոշակի ժամկետով, որը նա վիճարկեց: Դատական քննության ընթացքում Հանձնաժողովը փոխարինեց վիճարկվող որոշումը՝ հիմնա-

⁵⁰² St'u Case 14/81 Alpha Steel v Commission [1982] ECR 749, պարագրաֆ 10:

⁵⁰³ St'u **Lord Mackenzie Stuart**, 'Legitimate Expectations and Estoppel in Community Law and English Administrative Law' (1983) LIEI 53, էջ 60: Վստահությունը ուղղակիորեն նշվել է հետևյալ գործերով՝ Cases 42 and 49/59 SNUPAT v High Authority [1961] ECR 53, 14/81 Alpha Steel v Commission [1982] ECR 749:

⁵⁰⁴ St'u Case 14/81 Alpha Steel v Commission [1982] ECR 749:

վորելով, որ նախորդ որոշումը սխալ էր: Այնուամենայնիվ, նոր որոշումն արդեն սահմանեց ավելի ցածր քվոտա, քան նախորդը: Դիմողը պնդեց, որ Հանձնաժողովը չի կարող վերացնել դատական քննության առարկա որոշումը և փոխարինել այն ավելի ոչ բարենպաստ որոշմամբ: ԵՄ դատարանը չընդունեց փաստարկը: Դատարանը կիրառեց **Algera** գործի սկզբունքը⁵⁰⁵, համաձայն որի՝ ոչ իրավաչափ որոշման վերացումը թույլատրվում է, եթե կատարվում է ողջամիտ ժամկետի ընթացքում և հաշվի է առնվում, թե ինչքանով է դիմողը հիմնվել միջոցի իրավաչափության վրա: ԵՄ դատարանը գտավ, որ դիմողը չի հիմնվել նախորդ որոշման իրավաչափության վրա, հակառակը՝ նա վիճարկել էր դրա օրինականությունը և նաև գիտեր սկզբնական որոշման վերաբերյալ Հանձնաժողովի կասկածների մասին: Դիմողը նաև չի ապացուցել, որ վնաս է կրել մինչև նոր որոշման ընդունումն անցած ժամանակի պատճառով, որը, ի վերջո, ընդունվել էր ողջամիտ արագությամբ՝ հաշվի առնելով, որ Հանձնաժողովը պետք է մշակի տվյալներ մեծ թվով ձեռնարկությունների մասին⁵⁰⁶:

Հենց այս տրամաբանությամբ է պայմանավորված Օրենքի 64-րդ հոդվածի 2-րդ մասը, որը սահմանում է, որ բարենպաստ ոչ իրավաչափ վարչական ակտը, որի հիման վրա ծագում են միաժամանակյա կամ ընթացիկ գույքային պարտականություններ, կամ որն այդպիսի պարտականությունների համար նախադրյալ է համարվում, կարող է ուժը կորցնել միայն դրա անվավեր ճանաչվելու պահից, եթե այդ ակտով օգուտ ստացողը, վարչական ակտի նկատմամբ վստահության իրավունքի ուժով, արդեն ձեռք է բերել տրամադրված օգուտները կամ տնօրինել է

⁵⁰⁵ St'u Cases 7/56 and 3-7/57 *Algera v Common Assembly* [1957] ECR 39:

⁵⁰⁶ St'u Case 14/81 *Alpha Steel v Commission* [1982] ECR 749:

գույքը, որի հետևանքով դրանք չեն կարող վերադարձվել, կամ վերադարձվելու դեպքում կարող է էական վնաս պատճառվել օգուտ ստացողին:

Երրորդ, անհրաժեշտ է հաշվի առնել օրինականության սկզբունքի կարևորությունը կամ կշիռը: Որքան ավելի լուրջ է խախտումը, այնքան ավելի հավանական է, որ որոշումը կարող է վերացվել: Հիմնական իրավունքները խախտող որոշումն ավելի հավանական է, որ վերացվի, քան այն որոշումը, որը ընդունվել է ընթացակարգային խախտումներով, կամ որը հիմնված է ոչ միանշանակ օրենսդրական դրույթի սխալ մեկնաբանության վրա:

De Compte գործով Եվրոպական դատարանը վճռել է, որ հատուցման տրամադրումը, որը հիմնված է «աշխատանքի հետ կապված» հիվանդության հայեցակարգի սխալ մեկնաբանության վրա, չի կարող վերացվել: Ըստ երևույթին, այն արդարացիորեն դիտվում էր որպես համեմատաբար աննշան իրավական սխալ, որը չէր արդարացնում որոշման վերացումը՝ ի վնաս այն անձի, որն արդեն բավականաչափ տուժել էր⁵⁰⁷:

Բայց դիմողը դժվարությամբ կհաջողի այն դեպքերում, երբ միջոցը ակնհայտ ոչ իրավաչափ է, որը բացառում է դրա գոյության նկատմամբ ցանկացած ակնկալիք: Այսպես, **Cargill** գործով⁵⁰⁸ ԵՄ դատարանը կրկնեց այն սկզբունքը, որ ոչ իրավաչափ միջոցի հետադարձությամբ վերացնելու իրավունքը սահմանափակվում է միջոցի իրավաչափության վրա հիմնվելու շահառուի լեգիտիմ ակնկալիքներով: Այնուամենայնիվ, Դատարանը գտավ, որ վիճարկվող միջոցը հետադարձությամբ վերացվել է

⁵⁰⁷ St'u Case C-90/95P *Henri de Compte v EP* [1997] ECR I-1999:

⁵⁰⁸ St'u Case C-365/89 *Cargill BV v Produktschap voor Margarine, Vetten en Olie* [1991] ECR I-3045, [18],

Case C-248/89 *Cargill BV v Commission* [1991] ECR I-2987, պարագրաֆ 20:

խախտումը հայտնաբերվելուն հաջորդող երեք ամիսվա ընթացքում: Բացի դրանից, միջոցի մեջ եղած թերությունը այնքան ակնհայտ էր, որ մի քանի առևտրականներ շտկման համար կապվել էին Հանձնաժողովի հետ դրա հրապարակման պահին: Հետևաբար, զգոն առևտրականը չէր կարող հիմնվել նման սխալ պարունակող միջոցի իրավաչափության վրա:

ԵՄ դատարանը այս չափանիշը կիրառում է նաև այն դեպքում, երբ տվյալ իրավական կարգավորման ձևակերպումից, նպատակներից կամ ընդհանուր կառուցվածքից հստակ հետևում է, որ վերացումը պետք է կատարվի հետադարձորեն: Մասնավորապես, խոսքն այն իրավիճակների մասին է, գերական հանրային շահը կարող է իրացվել միայն, եթե վարչական ակտը վերացվի ընդունման պահից⁵⁰⁹:

Չորրորդ, պետք է հաշվի առնել, թե ինչպես կտուժեն երրորդ կողմերը, եթե ոչ իրավաչափ որոշումը մնա ուժի մեջ: Օրինակ, Հուգովենս գործով Եվրոպական դատարանը որոշում կայացրեց, որ մետաղի ջարդոնի համար հարկային արտոնությունը կարող է հետադարձորեն վերացվել, մասնավորապես այն պատճառով, որ պողպատի մնացած բոլոր արտադրողները չեն օգտվել այդ արտոնությունից: Այսպիսով, արտոնությունն ուժի մեջ պահելը խեղաթյուրող ազդեցություն կունենար մրցակցության վրա⁵¹⁰:

Այնուամենայնիվ, հավասարակշռման գործընթացում կշիռ ունենալու համար երրորդ կողմերի համար հետևանքները պետք

⁵⁰⁹ St'u Case 14/61: Koninklijke Nederlandsche Hoogovens en Staalfabrieken NV v High Authority of the European Coal and Steel Community [1962], Joined Cases C-74/00 P and C-75/00 P: Falck SpA and Acciaierie di Bolzano SpA v Commission of the European Communities [2002], Case C-611/17: Republic of Italy v Council of the European Union (Fishing quota for Mediterranean swordfish) [2019]:

⁵¹⁰ St'u Case 14/61 Hoogovens v High Authority [1962] ECR 253, 269-270:

է լինեն բավականին ուղիղ: Դը Կոնտը, կրկին, հստակ օրինակ է⁵¹¹: Ո՞ւմ կարող է վնաս պատճառվել պարոն դը Կոնտին իր աշխատանքի հետ (չ)կապված հիվանդության համար հատուցում վճարելու ոչ իրավաչափ որոշման արդյունքում: Միայն համայնքի ֆինանսներին. դա եվրոպական հարկատուների ընդհանուր թիվն է: Չի եղել որևէ գործընկեր, որը կարող է ենթարկվել ուղղակի «վնասի» կամ խտրականության՝ ոչ իրավաչափ հատուցման արդյունքում⁵¹²: Այսպիսով, ԵՄ դատարանի դիրքորոշումն այն է, որ ոչ իրավաչափ բարենպաստ վարչական ակտի վերացման հարցը քննարկելիս, եթե այն շոշափում է երրորդ անձանց իրավունքները, անհրաժեշտ է ոչ թե բացառել լեգիտիմ ակնկալիքների պաշտպանությունը, այլ դրանք հավասարակշռել մրցակցող այլ իրավունքների և շահերի հետ:

Այս առումով վիճահարույց է թվում Վճռաբեկ դատարանի՝ վերջերս կացրած որոշմամբ արտահայտած հետևյալ իրավական դիրքորոշումը. «... Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ վարչական ակտի հասցեատիրոջ՝ վարչական ակտի գոյությանը վստահելու իրավունքն ինքնին բավարար նախապայման չէ ոչ իրավաչափ վարչական ակտն անվավեր չճանաչելու համար, այլ անհրաժեշտ է՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 3-րդ մասի կարգավորման ուժով առկա լինի օրենսդրական մյուս նախադրյալը, ըստ որի՝ վարչական ակտի գործողության մեջ գտնվելը չի կարող վնաս պատճառել որևէ անձի իրավունքներին, Հայաստանի Հանրապետությանը կամ որևէ համայնքի:

⁵¹¹ Տե՛ս Case C-90/95P *Henri de Compte v EP* [1997] ECR I-1999:

⁵¹² Տե՛ս նաև՝ Case 15/85 *Consortio Cooperative d'Abruzzo v Commission* [1987] ECR 1005:

⁵¹² Տե՛ս Case 111/63 *Lemmerz-Werke v High Authority* [1965] ECR 677:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ ««վարչական ակտի գործողության մեջ գտնվելը չի կարող վնաս պատճառել որևէ անձի իրավունքներին» նախադրյալի առկայությունը կարող է հիմնավորվել, եթե վարչական ակտի գործողության մեջ գտնվելը չի կարող շոշափել կամ առնչվել այլ անձանց իրավունքներին: Հակառակ դեպքում՝ երբ վարչական ակտի գործողության մեջ գտնվելը ողջամտորեն կարող է առնչվել այլ անձանց իրավունքներին, ապա չի կարող հաղթահարված համարվել քննարկման առարկա նախադրյալը՝ ոչ իրավաչափ վարչական ակտն անվավեր չճանաչելու օրենսդրական կարգավորման կիրառման համար»⁵¹³:

Կարծում ենք, որ վարչական ակտի հասցեատիրոջ վստահության պաշտպանությունը չի կարող միանշանակորեն ստորադասվել այլ անձանց, պետության կամ համայնքի շահերին՝ այս արժեքների միջև մրցակցության դեպքում միանշանակորեն բացառելով առաջինի պաշտպանությունը: Բոլոր դեպքերում, երբ հասցեատերը վարչական ակտի գոյությանը վստահելու իրավունք ունի, սակայն այն շոշափում է այլ անձանց, պետության կամ համայնքի շահերը, ոչ թե պետք է միանշանակորեն բացառել լեգիտիմ ակնկալիքների պաշտպանությունը, այլ համաչափության սկզբունքի հետևողական կիրառմամբ ապահովել մի կողմից ակտի հասցեատիրոջ վստահության իրավունքի, մյուս կողմից օրինականության սկզբունքի և այլ անձանց շահերին պատճառվող վնասը: Մոտեցումը պայմանավորված է նրանով, որ արդարացի չի թվում վարչական մարմինների սխալների ամբողջ պատասխանատվությունը թողնել վարչական ակտի հասցեատիրոջ վրա, անգամ եթե երրորդ անձանց շահերին վնասն իրականում աննշան է:

⁵¹³ Տե՛ս թիվ ՎԴ/8615/05/20 վարչական գործով Վճռաբեկ դատարանի որոշումը:

Վերջապես, անհրաժեշտ է հաշվի առնել որոշման կայացման և դրա վերացման միջև ընկած ժամանակահատվածը: Հետադարձ ուժով վերացումը միշտ պետք է իրականացվի ողջամիտ ժամանակահատվածում: Այս ժամանակահատվածի տևողությունը, մասնավորապես, կախված է նրանից, թե որքան դժվար է եղել վարչական մարմնի և շահագրգիռ անձի համար պարզել, որ որոշումն իրավաչափ չէ, որքան շուտ է շահագրգիռ անձին նախազգուշացվել, որ վարչական մարմինը կարող է վերացնել այդ որոշումը:

Այս չափանիշները դատական պրակտիկայում հազվադեպ են հստակ սահմանվել, և անհնար է հստակ ասել, թե ինչն է «ողջամիտ», չնայած մի քանի շաբաթվա ժամկետը գրեթե միշտ ընդունելի կլինի⁵¹⁴: Եվրոպական դատարանը, օրինակ, վերջին մի քանի գործերում ավելի կոշտ դիրքորոշում է որդեգրել: **Consortio Cooperative d'Abruzzo** գործում⁵¹⁵ դիմողը պահանջել է ԵՄ գյուղատնտեսական օգնության և երաշխավորման հիմնադրամի (EAGGF) որոշման վերացում, որով մոտ մեկ միլիարդ լիրայով նվազեցվել է օգնության չափը: Օգնության նվազեցման որոշումը ընդունվել է երկու տարի անց ավելի վաղ ընդունված որոշումից, որով դիմողին տրվել էր ավելի մեծ օգնություն: Հանձնաժողովը պնդել է, որ հետադարձությամբ վերացումը հիմնավորված է, քանի որ նախորդ որոշումը իրավաբանորեն սխալ է եղել:

ԵՄ դատարանը չհամաձայնեց և որոշեց, որ ոչ իրավաչափ միջոցի հետադարձությամբ վերացումն ընդունելի է միայն այն դեպքում, երբ դա կատարվում է ողջամիտ ժամկետում, և եթե

⁵¹⁴ St'u Case T-336/94 Efisol v Commission [1996] ECR II-1343, պարագրաֆ 34:

⁵¹⁵ St'u Case 15/85 Consortio Cooperative d'Abruzzo v Commission [1987] ECR 1005:

Հանձնաժողովը բավարար ուշադրություն է դարձնում այն հարցին, թե որքանով է դիմողը կարողացել հիմնվել միջոցի իրավաչափության վրա: Այս գործով հետադարձությամբ վերացումը ձախողվեց երկու պատճառներով: Աջակցության նվազեցման որոշումը եղել է երկու տարի անց, ինչը ողջամիտ ժամկետ չէ, քանի որ Հանձնաժողովը կարող էր ավելի շուտ հայտնաբերել և ուղղել իր սխալը: Եվ դիմողը իրավացիորեն էր հիմնվել սկզբնական որոշման իրավաչափության վրա, քանի որ սխալներն ակնհայտ չէին:

Եվրոպական Միության դատարանը (ECJ) գտավ, որ հավասարակշռումը դիմողի օգտին է նաև **de Compte** գործով⁵¹⁶: Հիշեցնենք, որ պատասխանող կողմը փորձեց արդարացնել նախորդ որոշման հետադարձությամբ վերացումը՝ հիմնվելով նրա ոչ իրավաչափ լինելու փաստի վրա, քանի որ այն ընդունվել էր աշխատանքային խեղման սխալ մեկնաբանության հիման վրա: ԵՄ դատարանը մերժեց այդ փաստարկը: Դատարանը հաստատեց, որ ոչ իրավաչափ միջոցը հնարավոր է հետադարձությամբ վերացնել ողջամիտ ժամկետում, սակայն այդ իրավունքը սահմանափակվում է այն պահանջով, որ պետք է հարգել միջոցի հասցեատիրոջ լեգիտիմ ակնկալիքները, ով հիմնվել է դրա իրավաչափության վրա: Այս դեպքում դիմողը իրավունք ուներ վստահելու միջոցի իրավաչափությանը, որը պատասխանող կողմը ցանկանում է վերացնել: Ավելին, չկար որևէ ապացույց, որ դիմողը «հասել» է նախորդ որոշմանը կեղծ կամ անլիարժեք տեղեկություններով: Եվ չկար հանրային շահ, որը կգերակշռեր շահառուի արդարացված համոզմունքը կայուն և պահպանվող իրավիճակի հանդեպ:

⁵¹⁶ St'u Case C-90/95 P Henri de Compte, Case T-416/04 Kontouli, պարագրաֆներ 161–170, Case F-51/07 Philippe Bui Van v Commission, EU:F:2010:108:

Այս որոշումները ցույց են տալիս, որ «ողջամիտ ուշացում» հասկացությունը անքակտելիորեն կապված է լեգիտիմ ակնկալիքների և օրինականության միջև հավասարակշռության հետ: Ինչպես վերը բացատրվեց, դը Կոնտի գործը ներառում էր լուրջ շահեր՝ հոգուտ դիմումատուի, թույլ փաստարկներ՝ հոգուտ օրինականության և երրորդ կողմերին վնաս պատճառելու ռիսկի բացակայության: Հետևաբար, ընդհանուր արդար արդյունք ապահովելու համար Եվրոպական դատարանը զգալիորեն կրճատել է «ողջամիտ» ժամկետը⁵¹⁷:

Ամփոփելով ոչ իրավաչափ բարենպաստ վարչական ակտերի ex tunc վերացման հիմնախնդիրների ուսումնասիրությունը՝ կարող ենք նշել, որ իրավական որոշակիության և լեգիտիմ ակնկալիքների պաշտպանության անհրաժեշտությամբ պայմանավորված նման ակտերի ընդունման պահից վերացումը պետք է կիրառվի բացառիկ դեպքերում: Ոչ իրավաչափ բարենպաստ վարչական ակտերի ex tunc վերացման հարցը լուծելիս պետք է հաշվի առնել հասցեատիրոջ՝ վարչական ակտի իրավաչափությանը վստահելու աստիճանը և շահագրգռվածությունը, օրինականության կշիռը, երրորդ անձանց շահերը և վարչական ակտի ընդունման և դրա վերացման միջև ընկած ժամանակահատվածը

:

§2. Ոչ իրավաչափ գործողությունների հիման վրա առաջացած լեգիտիմ ակնկալիքների պաշտպանությունը

Օրինականության և լեգիտիմ ակնկալիքների միջև բախում է առաջանում նաև այն ժամանակ, երբ վարչական մարմինները ոչ իրավաչափ հայտարարություններ են անում, որոնցից հետո

⁵¹⁷ St'u Case 14/61 Hoogovens v High Authority [1962] ECR 253, պարագրաֆ 5:

փորձում են հրաժարվել դրանից: Որքանո՞վ, եթե դա ընդհանրապես հնարավոր է, անձինք կարող են հիմնվել վարչական մարմինների ոչ իրավաչափ հայտարարությունների վրա:

ԵՄ, անգլիական և ֆրանսիական դատական պրակտիկայի վերլուծության հիման վրա ընդհանուր եզրահանգումն այն է, որ ոչ իրավաչափ հայտարարությունները պարտադիր չեն և չեն կարող հանգեցնել ոչ վստահության, ոչ էլ հիմնավորված ակնկալիքների առաջացմանը⁵¹⁸: Այս կանոնը կիրառվում է, նույնիսկ եթե վարչական մարմինը տրամադրել է շատ հստակ և կոնկրետ երաշխիքներ:

Օրինակ, ֆրանսիական **Powerver** գործում դիմորդին գրավոր հարցազրույցի ժամանակ առաջարկվել է վարորդի աշխատանք: Այնուամենայնիվ, ըստ աշխատանքի հայտարարության, աշխատանք ստանալու համար պահանջվում էր «վարորդության տասնհինգ տարվա փորձ», իսկ դիմորդի տասնհինգ տարվա աշխատանքային փորձից միայն տասը էր վարորդի: Այս պայմաններում Աուդիտորների պալատը սահմանափակված չէր աշխատանքի վերաբերյալ իր հայտարարությունով: Դիմումատուի նշանակման վերաբերյալ պաշտոնական որոշում չի կայացվել, և, ըստ Պետական խորհրդի, նա լեգիտիմ ակնկալիքներ չի ունեցել, քանի որ չի համապատասխանել պայմաններին և պետք է իմանար սեփական աշխատանքային ստաժի բնույթն ու տևողությունը⁵¹⁹:

Նմանապես, ֆրանսիական **Société des huileries de Chauny** հայտնի գործով Պետական խորհուրդը որոշեց, որ ֆինանսների նախարարը սահմանափակված չէ և չի կարող սահ-

⁵¹⁸ St'u Art 1 Decree of 28/11-83, CE 17/10-97 Majorel no 148. 660: St'u նաև՝ CE 31/5-89 Castellani no 91.681, CAA Nancy 23/2-95 Steinmetz no 93NC00840, CAA Nantes 24/11-93 Prono no 92NT00504, CAA Lyon 9/7-92 Torres no 91LY00241:

⁵¹⁹ St'u CE 29/1-54 Notre-Dame du Kreisker Rec 64:

մանափակված լինել ֆրանսիացի նավթավաճառներին տրված գրավոր հավաստիացմամբ, որ գների կարգավորումը կմնա ուժի մեջ, քանի որ այդ հավաստիացումը սահմանափակում էր գների կարգավորման հարցում նախարարի հայեցողական լիազորությունները և, հետևաբար, անօրինական էր⁵²⁰:

Air France գործում⁵²¹ ԵՄ առաջին ատյանի դատարանը, հղում անելով լեգիտիմ ակնկալիքի սկզբունքին, վճռեց, որ ԵՄ որևէ հաստատություն, չի կարող պարտադրվել կիրառել ԵՄ նորմերը՝ *contra legem*: ԵՄ դատարանները, բնականաբար, կիրառել են նույն տրամաբանությունը նաև այն դեպքերում, երբ հարցը վերաբերել է անդամ պետության վարքագծին, ինչն ակնհայտ է **Lageder** գործից⁵²²: Հայցվորները 1973 թ. արտահանել էին գինի և իտալական պետական մարմնից ստացել էին տեղեկացում, որ իրենց վրա չեն տարածվում դրամական հատուցման մեխանիզմները (MCAs), քանի որ գինին դասվում էր «բարձրորակ գինիների» շարքին և, համապատասխանաբար, ազատված էր դրա վճարումից՝ ըստ գործող կանոնակարգի: Սակայն 1977 թ. մեկ այլ իտալական պետական մարմին արձանագրեց, որ տվյալ գինիները չեն կարող որակվել որպես բարձրորակ գինիներ տվյալ կանոնակարգի նպատակներով, և պահանջեց վճարել համապատասխան գումարները: Հայցվորները մերժեցին պահանջը՝ պնդելով, որ այն խախտում է իրենց լեգիտիմ ակնկալիքները, առավել ևս՝ հաշվի առնելով անցած ժամանակահատվածը: ԵՄ դատարանը ընդունեց, որ իտալական իշխանությունները պարտավոր էին գործել լեգիտիմ ակնկալիքների պաշտպանության սկզբունքի շրջանակներում, քանի դեռ

⁵²⁰ St'u CE 24/4-64 Société des huileries de Chauny Rec 249:

⁵²¹ St'u Case T-2/93 Air France v Commission [1994] ECR II-323, պարագրաֆներ 101-102:

⁵²² St'u Cases C-31-41/91 SpA Alois Lageder v Amministrazione delle Finanze dello Stato [1993] ECR I-1761:

նրանք գործում էին համայնքային իրավունքի սահմաններում⁵²³: Սակայն անդամ պետության այն պրակտիկան, որը չի համապատասխանում ԵՄ իրավունքի պահանջներին, չի կարող ստեղծել լեգիտիմ ակնկալիք այն տնտեսվարողի համար, որը օգտվել է տվյալ հակաիրավական իրավիճակից⁵²⁴:

Թեև վարչական գործողությունների օրինականությունը պաշտպանող այս կանոնը հուսալի ելակետ է անօրինական հայտարարությունների իրավական հետևանքները դիտարկելու համար, այնուամենայնիվ, անհրաժեշտ է շարունակել վերլուծությունը: Չնայած կառավարման մեջ օրինականությունը չափազանց կարևոր է, միշտ չէ, որ պետք է թույլ տալ, որ այն գերակշռի վարչական մարմնի նկատմամբ արդարության և վստահության նկատառումներից: Կարծում ենք, որ յուրաքանչյուր գործի հատուկ հանգամանքներում վարչական մարմինները պետք է հավասարակշռություն պահպանեն անհատների ակնկալիքների և վստահության և օրինականության պահպանման հանրային շահերի միջև: Նման ճկուն մոտեցումն ունի առնվազն մեկ կարևոր առավելություն: Վարչական սխալները կյանքի իրականությունն են: Ոչ իրավաչափ գործողությունների հիման վրա լեգիտիմ ակնկալիքների ճանաչումը հանգեցնում է նրան, որ նման սխալի հետևանքով տուժած անձի կրած վնասը փոքր չափով տարածվում է ամբողջ հասարակության վրա: Սա, գոնե որոշ դեպքերում, ավելի արդար և ցանկալի արդյունք կլինի, քան կորստի պատասխանատվությունը հենց անձի վրա բարդելը:

⁵²³ Տե՛ս նույն գործը, պարագրաֆ 33:

⁵²⁴ Տե՛ս Case C-153/10 Staatssecretaris van Financiën v Sony Supply Chain Solutions (Europe) BV, EU:C:2011:224, պարագրաֆ 47, Case C-568/11 Agroferm A/S v Ministeriet for Fodevarer, Landbrug og Fiskeri, EU:C:2013:407, պարագրաֆ 52, Case C-516/16 Erzeugerorganisation Tiefkühlgemüse eGen v Agrarmarkt Austria, EU:C:2017:1011, պարագրաֆ 69:

Ցավոք, ներպետական իրավական համակարգում և դատական պրակտիկայում այս հարցի վերաբերյալ հստակ ձևակերպված կարգավորումներ և մոտեցումներ չկան: Թերևս կարելի է հիշատակել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 43-րդ հոդվածի 6-րդ մասը, որի համաձայն՝ սահմանված կարգով հրապարակվելուց հետո պաշտոնական պարզաբանումը պարտադիր բնույթ չունի, սակայն պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների հետ հարաբերություններում անձինք իրավունք ունեն առաջնորդվելու պաշտոնական պարզաբանումով, իսկ պաշտոնական պարզաբանում տված իրավասու մարմինը պարտավոր է առաջնորդվել իր տված պարզաբանումով:

Նույն օրենքի 44-րդ հոդվածը սահմանում է, որ եթե պաշտոնական պարզաբանում ստանալու համար դիմում ներկայացրած անձն առաջնորդվել է նույն օրենքի պահանջների պահպանմամբ տրված պաշտոնական պարզաբանմամբ, ապա այդ պարզաբանման և իրավասու մարմնի՝ հետազայում տված պարզաբանման միջև հակասության կամ իր նկատմամբ գործողություններ կատարելիս, որոշումներ կայացնելիս դրանով չառաջնորդվելու դեպքում անձն ազատվում է սխալ պարզաբանման հետևանքով թույլ տրված խախտումների համար նախատեսված պատասխանատվությունից: Իրավասու մարմինների տված պաշտոնական սխալ պարզաբանման հետևանքով պատճառված վնասի համար օրենքով սահմանված կարգով պատասխանատվություն է կրում Հայաստանի Հանրապետությունը կամ համապատասխան համայնքը:

Վերը մեջբերված դրույթներում ըստ էության արտացոլված է վարչական մարմինների գործողություններին, տվյալ դեպքում նրանց տված պարզաբանումներին անձի վստահության իրա-

վունքի պաշտպանության որոշ երաշխիքներ: Ընդ որում, սխալ պարզաբանում տալու դեպքում վստահության պաշտպանության ուժով անձը ոչ միայն ազատվում է պատասխանատվությունից, այլ նաև ունի վնասի հատուցում ստանալու իրավունք: Խնդիրը, սակայն այն է, որ պաշտոնական պարզաբանում տալու իրավասություն ունեցող սուբյեկտները⁵²⁵, հաճախ խուսափում են ֆիզիկական և իրավաբանական անձանց դիմումներով բարձրացված հարցերի վերաբերյալ պաշտոնական պարզաբանում տալուց և սահմանափակվում են դրանց վերաբերյալ գրավոր դիրքորոշումներով: Թեև «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 43-րդ հոդվածի 6-րդ մասի իմաստով վստահության իրավունքի պաշտպանության երաշխիքները սահմանված են միայն սահմանված կարգով հրապարակված պաշտոնական պարզաբանումների դեպքում, վերը նշված հիմնավորումներով լեգիտիմ ակնկալիքների պաշտպանությունը պետք է տրվի նաև վարչական մարմիններից ելնող այլ գրավոր դիրքորոշումների դեպքում:

Անկախ այն հանգամանքից՝ պետական մարմնի դիրքորոշումն արտահայտող փաստաթուղթը կրում է պաշտոնական պարզաբանում վերտառությունը, թե ոչ, նրանք պետք է հավատարիմ մնան իրենց տեսակետներին այն դեպքերում, երբ շահագրգիռ անձը կարող է ողջամտորեն վստահել, որ գործողությունը իրավաչափ է եղել, և երբ լեգիտիմ ակնկալիքների պաշտպանությունը անհատի շահերի համեմատությամբ էական վնաս չի պատճառի երրորդ կողմերին կամ հանրային շահերին:

Պետք է նշել, որ այս մոտեցումը համահունչ է նաև ՄԻԵԴ դատական պրակտիկային: Այսպես, Լեւասն ընդդեմ Խորվա-

⁵²⁵ Պաշտոնական պարզաբանում տալու իրավասություն ունեցող պետական կառավարման համակարգի մարմինները սահմանված են Կառավարության 2020 թվականի հուլիսի 9-ի N 1159-Ն որոշմամբ:

թիայի գործով ՄԻԵԴ-ն արձանագրել է. «Դատարանը գտնում է, որ **բարեխղճորեն գործող անհատը, որպես ընդհանուր կանոն, իրավասու է ապավինելու պետական կամ հանրային պաշտոնյաների կողմից արված հայտարարություններին**, որոնք արտաքինից թվում են կատարված համապատասխան լիազորություն ունեցող անձանց կողմից և այն պայմաններում, երբ ենթադրվում է, որ ներքին կանոններն ու ընթացակարգերը պահպանվել են, եթե միայն հրապարակայնորեն մատչելի փաստաթղթերից (ներառյալ առաջնային կամ ենթաօրենսդրական ակտերից) ակնհայտորեն չի հետևում, կամ անհատը այլ կերպ չի իմացել կամ պետք է իմանար, որ տվյալ պաշտոնյան չուներ պետությանը իրավաբանորեն պարտավորեցնելու լիազորություն: Չպետք է անհատի վրա դրվի պարտականություն ապահովելու, որ պետական մարմինները պահպանում են իրենց իսկ ներքին կանոններն ու ընթացակարգերը, որոնք հանրությանը մատչելի չեն և հիմնականում նախատեսված են պետական մարմնի ներսում հաշվետվողականությունն ու արդյունավետությունը ապահովելու համար:

Պետությունը, որի մարմինները չեն պահպանել իրենց իսկ ներքին կանոններն ու ընթացակարգերը, չպետք է կարողանա օգտվել այդ խախտումից կամ խուսափել իր պարտավորություններից: Այլ կերպ ասած, պետական մարմինների թույլ տված ցանկացած սխալի ռիսկը պետք է կրի պետությունը, և սխալները չպետք է շտկվեն շահագրգիռ անհատի հաշվին, հատկապես երբ առկա չէ որևէ հակասող մասնավոր շահ»⁵²⁶: Ընդ որում, մեջբերված գործում ՄԻԵԴ-ը ճանաչեց դիմումատուի լեգիտիմ ակնկալիքների պաշտպանությունը, թեև հայտարարությունն իրավաչափ չէր, քանի որ արվել էր նման իրավասություն չունեցող պաշտոնատար անձի կողմից:

⁵²⁶ ECtHR, judgement *Lelas v Croatia* (55555/08) 20 May 2010, պարագրաֆ 74:

Ամփոփելով պարագրաֆը՝ կարևորում ենք, որ վարչական մարմնի նկատմամբ արդարության և վստահության նկատառումները պահանջում են նաև ոչ իրավաչափ գործողությունների դեպքերում հավասարակշռություն ապահովել անհատների ակնկալիքների և վստահության և օրինականության պահպանման հանրային շահերի միջև: Ըստ այդմ հիմքում ունենալով նաև այս կապակցությամբ ՄԻԵԴ-ի դատական պրակտիկան՝ գտնում ենք, որ հայրենական վարչական իրավունքը պետք է ճանաչվի նաև վարչական մարմինների ոչ իրավաչափ գործողությունների հիման վրա առաջացած լեգիտիմ ակնկալիքները՝ գոնե հատուցողական պաշտպանություն տրամադրելու միջոցով:

**§3. Ոչ իրավաչափ վարչական ակտերի վերացման
դեպքում լեգիտիմ ակնկալիքների հատուցողական
պաշտպանություն**

**3.1. Վարչական ակտերի անվավերությունը
սահմանափակող մեխանիզմները վնասի հատուցման
համարեքսպում**

Նախորդ գլխում քննարկվեց, իրավաչափ վարչարարությանը լեգիտիմ ակնկալիքներին պատճառված վնասի հատուցման հիմնահարցերը: Որպես հետազոտության տրամաբանական շարունակություն այս գլխով կանդրադառնանք ոչ իրավաչափ վարչական ակտերով լեգիտիմ ակնկալիքներին պատճառված վնասների հատուցմանը:

Նախ անհրաժեշտ է տարբերակել երկու իրավիճակ, երբ ոչ իրավաչափ վարչական ակտերով վնաս են պատճառում անհատներին: Առաջին, վարչական մարմինը կարող է ընդունել բարենպաստ իրավաչափ վարչական ակտ, որը հետագայում ոչ իրավաչափորեն ուժը կորցրած է ճանաչվում: Երկրորդ, վարչական մարմինը կարող է ընդունել բարենպաստ ոչ իրավաչափ վարչական ակտ, որը հետագայում վերացվում է:

Ժամանակակից անգլիական դատական պրակտիկայում այն մոտեցումն է, որ վնասների հատուցման միջոցով պատասխանատվությունը ոչ պատշաճ արձագանք է ոչ իրավաչափ վարչական ակտերի առաջացրած խնդիրներին: Այս մոտեցման հիմքում ընկած են մի շարք բարդ կանխադրույթներ: Դատարանները մտավախություն ունեն, որ պատասխանատվությունը պաշտոնատար անձանց կմղի իրենց պարտականությունները կատարել չափազանց զգուշավոր կերպով (այսպես կոչված *chilling effect*), կստեղծվեն դատական գործերի մեծ ծավալներ,

ինչպես նաև վնասների հատուցման հայցերը կխաթարեն ավելի հարմար վարչական պաշտպանության միջոցները⁵²⁷:

Ընդհանուր առմամբ, բրիտանական դատարանները գիտակցում են, որ վնասների վերականգնումը կարող է առաջացնել անորոշ և հնարավոր է՝ չափազանց մեծ պատասխանատվություն, ինչը կծանրաբեռնի հանրային իշխանության մարմինների ռեսուրսները⁵²⁸: Այս մտահոգությունների լույսի ներքո վարչական դեղիկտային պատասխանատվության շրջանակը սահմանափակվել է այն աստիճան, որ անգլիական իրավունքում ոչ իրավաչափ որոշումների դիսկը, որպես կանոն, ընկնում է տուժած անհատի վրա⁵²⁹:

Ֆրանսիական դատական իշխանության վարչական պատասխանատվության վերաբերյալ հիմնարար կանխադրույթները, կարծես, էապես տարբերվում են նրանց անգլիացի գործընկերների մոտեցումներից: Ֆրանսիայում այս իրավական ոլորտը ներշնչված է էգալիտարական գաղափարախոսությամբ, որը վնասների համար պատասխանատվության և օրենքով նախատեսված փոխհատուցման համակարգերի միջոցով դիսկի «սոցիալականացումը» դիտարկում է հիմնավորված և՛ գործնական, և՛ տնտեսական տեսանկյունից: Դատարանների վճիռներում, Պետական խորհրդի կառավարության կոմիսարների (Commissaires du Gouvernement) եզրակացություններում կամ արտադատարանական գրություններում գրեթե չի հանդիպում հղում այն դիսկին, թե պատասխանատվությունը կարող է ունենալ սառեցնող ազդեցություն (*chilling effect*), բացել «ջրիեղելի

⁵²⁷ St'u Dorset Yacht Co v Home Office [1970] AC 1004, Hill v Chief Constable of West Yorkshire [1989] AC 53, X v Bedfordshire CC [1995] 2 AC 633, W v The Home Office [1997] Imm AR 302, Phelps v Hillingdon LBC [1999] 1 All ER 421, 441-442:

⁵²⁸ St'u Stovin v Wise [1996] AC 923, 952:

⁵²⁹ St'u R v Ealing London BC, ex p Parkinson (1996) 8 Admin LR 281, 285:

դռները» (*floodgates*), դատարաններին ներգրավել դատաքննելիությունից դուրս ոլորտներում կամ խաթարել այլ բողոքարկման ընթացակարգերն ու պաշտպանության միջոցները: Ֆրանսիական վարչական դատավորներն ավելի հակված են կարծելու, որ պատասխանատվությունը բարելավում է որոշումների ընդունման որակը, որ դրա շրջանակը կարելի է վերահսկել՝ չժխտելով, որ պետությունը իր քաղաքացիների նկատմամբ ունի խնամքի պարտականություն, և որ վարչական հայեցողությունը կարող է վերանայվել՝ առանց վարչական գործառույթների յուրացման⁵³⁰:

Ֆրանսիական վարչական իրավունքում ելակետն այն է, որ վարչական մարմինը բոլոր ֆիզիկական և իրավաբանական անձանց նկատմամբ ունի իրավաչափ որոշումներ ընդունելու պարտականություն: Սակայն, ֆրանսիական դատարանները ևս լավ գիտակցում են վարչական մարմնի պատասխանատվության վերաբերյալ քաղաքական (*policy*) փաստարկները, մասնավորապես պետական բյուջեի միջոցների խնայողությունը և վարչական մարմինների հայեցողական լիազորությունների իրականացումը չափազանց սահմանափակելու ռիսկը: Այս առումով համեմատական տեսանկյունից որոշակի հետաքրքրություն են ներկայացնում այն մեթոդները, որոնք ֆրանսիական դատարաններն օգտագործում են վարչական մարմինների պատասխանատվությունը «մեղմացնելու» համար:

Այսպես, ֆրանսիական դատարանները մշակել են այն, ինչ ժենևիև Վինեն անվանել է «մի շարք անուղղակի և գրեթե թաքնված մեթոդներ»՝ պատասխանատվության շրջանակը վե-

⁵³⁰ St'u CE 27/1-1893 Le Loir Rec 136, CE 4/11-83 Noulard Rec 451:

րահսկելու համար⁵³¹: Կարելի է առանձնացնել այդպիսի հինգ մեթոդ՝

(I) օրինականության հասկացության փոփոխում այսպես կոչված «շարժառիթների փոխարինման» (*substitution de motifs*) միջոցով,

(II) որոշակի տեսակի որոշումների համար կոպիտ մեղքի (*faute lourde*) պահանջ,

(III) «ուղղակի» պատճառական կապի խիստ կիրառում,

(IV) «որոշակի» վնասի պահանջ և

(V) համակցված մեղքի խիստ կիրառում:

Այսպես, դատարանը կարող է ուժի մեջ թողնել այն որոշումը, որը հիմնված է եղել հայեցողական լիազորության (*pouvoir discrétionnaire*) վրա, որն իրականում կիրառելի չի եղել տվյալ հանգամանքներում, եթե դատարանի գնահատմամբ այդ նույն որոշումը կարող էր ընդունվել այլ օրենսդրական դրույթի կամ հատուկ (պրերոգատիվ) լիազորության հիման վրա: Այս դեպքում դատարանը «փոխարինում է իրավական հիմքը» (*substitution de base légale*)⁵³²: Սխալ փաստերի կամ ոչ վերաբերելի նկատառումների վրա հիմնված հայեցողական որոշումը կարող է ուժի մեջ թողնվել նաև, եթե դատարանը գտնի, որ նույնական որոշում կկայացվեր ճիշտ փաստերի և իրավաչափ նկատառումների հիման վրա (*substitution de motifs*)⁵³³: Այս «փոխարինման» մեթոդի հիմնավորումը, ըստ ֆրանսիական հեղինակների, այն է, որ անարդյունավետ է վերացնել որոշումը, եթե վարչական մարմինը հետագայում պարտավոր է (կամ կարող է)

⁵³¹ Տե՛ս **G. Viney**, 'Modération et limitation des réponsabilité et des indemnisations', in **J. Spier** (ed.), *The Limit of Liability: Keeping the Floodgates Shut* (The Hague 1996), էջեր 127-128:

⁵³² Տե՛ս *Genevois conclusions* CE 19/6-81 *Carliez* AJDA 1981, 105:

⁵³³ Տե՛ս CE 12/1-68 *Perrot* Rec 36:

ընդունել նմանատիպ որոշում⁵³⁴: Փաստացի, ֆրանսիական դատարանը, կիրառելով փոխարինման մեթոդը, իրականում հայտարարում է որոշումը իրավաչափ: Արդյունքում ֆրանսիացի հայցվորը կորցնում է սխալ վարչական որոշումից բխող վնասների հատուցում ստանալու հնարավորությունը, և համարվում է, որ հենց սա է կարևոր պատճառներից մեկը, թե ինչու են ֆրանսիական դատարանները դիմում փոխարինման մեթոդին:

Վարչական մարմնի պատասխանատվությունը որոշ չափով սահմանափակվում է այն երևույթով, որը կարելի է անվանել մեղքի աստիճանավորում (fault-grading)⁵³⁵: «Հատկապես բարդ» համարվող գործառույթները առաջացնում են պատասխանատվություն միայն այն դեպքում, երբ մարմինը թույլ է տվել «կոպիտ մեղք» (faute lourde): Այսինքն՝ առաջադրանքի բարդության հաշվառմամբ պահանջվում է խնամքի ավելի ցածր աստիճան: Մեղքի աստիճանավորման (fault-grading) կարևորությունը վերջին երեսուն տարիների ընթացքում նվազել է⁵³⁶:

Ֆրանսիական վարչական իրավունքի նման ԵՄ դատարանները ենթադրում են, որ ԵՄ հաստատությունները ունեն բոլոր ֆիզիկական և իրավաբանական անձանց նկատմամբ իրավաչափ որոշումներ ընդունելու ընդհանուր պարտականություն⁵³⁷: Երկրորդ, ԵՄ իրավունքում հատուցման ենթակա վնասների տեսակների նկատմամբ խիստ սահմանափակումներ չկան: Հատուցում կարող է սահմանվել մարմնական վնասվածքի, գույ-

⁵³⁴ Տե՛ս **Jean-Philippe Peyrical**, *La substitution de motifs en droit administratif* (Thèse de doctorat, Université Paris II 1993), էջ 29:

⁵³⁵ Տե՛ս CE 10/2-05 Tomaso Gréco Rec 139, **J. F. Couzinet**, 'La notion de faute lourde administrative', RDP 1977, էջ 283, **F. Raynaud and P. Fombeur**, 'Chronique générale de jurisprudence administrative', AJDA 1998, էջեր 403, 418-424:

⁵³⁶ Տե՛ս **C. Geuttier**, *La responsabilité administrative* (Paris, 1996), էջեր 108-113:

⁵³⁷ Տե՛ս Case 27/76 United Brands v Commission [1978] ECR 207, 305-306, 345:

քային վնասի, «բարոյական» վնասի (օրինակ՝ անհարմարության) և նույնիսկ տնտեսական վնասի համար⁵³⁸: Երրորդ, այն փաստը, որ որոշումը վերացվել է կամ կարող էր վերացվել դատական վերանայման արդյունքում, որպես կանոն բավարար է վարչական մարմնի մեղքը հաստատելու համար⁵³⁹:

Կայացած բանաձևի համաձայն՝ որոշումների համար պատասխանատվությունը պայմանավորված է միայն «համապատասխան ԵՄ հաստատությանը վերագրվող վարքագծի ոչ իրավաչափության, վնասի իրական լինելու և այդ վարքագծի ու ենթադրվող վնասի միջև պատճառահետևանքային կապի առկայության ապացուցմամբ»⁵⁴⁰: Խախտման բնույթը, որպես կանոն, նշանակություն չունի, և անձնակազմի հետ կապված որոշ գործերում⁵⁴¹ փոխհատուցում է սահմանվել նաև սխալ փաստերի վրա հիմնված⁵⁴² և ոչ պատշաճ ընթացակարգերով ընդունված⁵⁴³ միջամտող որոշումների համար:

Այս սկզբունքների կիրառումը հստակորեն երևում է **Algera** գործում, որը որոշումների վերացման իրավիճակում վնասների

⁵³⁸ St'u Cases 54 60/74 Kampfmeyer v Commission and Council [1976] ECR 711, T-73/89 Barbi v Commission [1990] ECR II-619:

⁵³⁹ St'u Cases 59/83 Biovilac v EEC [1984] ECR 4057, T-108/94 Candiotte v Council [1996] ECR II-87, պարագրաֆ 54, C-395/95P Geotronics SA v Commission [1997] ECR I-2271, պարագրաֆ 46, 57:

⁵⁴⁰ C-55/90 Cato v Commission [1992] ECR I-2533, պարագրաֆ 18, C-136/92P Commission v Luaili [1994] ECR I-1981, պարագրաֆ 42, T-107/96 Pantochim v Commission [1998] ECR II-311, պարագրաֆ 48.

⁵⁴¹ St'u AG Lenz [1994] ECR I-1991, Cases C-370/89 Etroy v EIB [1993] ECR I-2583, պարագրաֆ 27-36, T-230/94 Farrugia v Commission [1996] ECR II-195, պարագրաֆ 42, T-336/94 Efsol v Commission [1996] ECR II-1343, պարագրաֆ 30-31:

⁵⁴² St'u Case 68/63 Luhleich v Commission [1965] ECR 727: St'u նաև՝ Case T-73/89 Barbi v Commission [1990] ECR II-619:

⁵⁴³ St'u Case 110/63 Willame v Commission [1965] ECR 649:

հաջողված պահանջի միակ հայտնի օրինակն է⁵⁴⁴: Այս գործում Ընդհանուր ժողովը նշանակել էր դիմողին և սահմանել աշխատավարձի որոշակի չափ, սակայն հետագայում վերացրել էր նշանակումը: ԵՄ դատարանը գտավ, որ աշխատավարձի որոշակի չափի սահմանումն էր ոչ իրավաչափ, այլ ոչ թե նշանակումը, հետևաբար, անվավեր ճանաչեց վերջինիս վերացումը: Դիմողին այնուհետև տրվեց փոխհատուցում՝ իր նշանակման ոչ իրավաչափ վերացմամբ պատճառված անհարմարությունների համար: Դատարանը չի քննարկել՝ արդյոք աշխատակցի իրավունքները չհարգելը «լուրջ» խախտում էր: Այն փաստը, որ Ժողովը կայացրել էր ոչ իրավաչափ որոշում, ինքնին բավարար էր մեղքը և վնասների համար պատասխանատվությունը հաստատելու համար:

Վերևում նշվեց, որ ֆրանսիական դատարանները գործնականում սահմանափակում են պատասխանատվությունը մի շարք տեխնիկաների միջոցով: Դրանք կարևոր դեր են խաղում նաև ԵՄ իրավունքում: Հետևաբար, որոշելու համար, թե ԵՄ իրավունքը ինչ չափով է իրականում պաշտպանում անձանց ակնկալիքները և վարչական որոշումների վրա նրանց վստահությունը, բացի «ուղղակի» պատճառահետևանքային կապից, «որոշակի» վնասից և համատեղ մեղքից, անհրաժեշտ է դիտարկել նաև ոչ իրավաչափության հասկացության փոփոխական կիրառումը:

Այսպես, ԵՄ վերջին դատական պրակտիկայում ձևավորվել է իրավական հիմքի փոխարինման դոկտրինա⁵⁴⁵: **Gunzler Aluminium** գործում Հանձնաժողովը, գերմանական իշխանու-

⁵⁴⁴ St'u Cases 7/56 and 3-7/57 *Algera v Common Assembly* [1957] ECR 39:

⁵⁴⁵ St'u Case T-75/95 *Gunzler Aluminium v Commission* [1996] ECR II-497, պարագրաֆ 55:

թյունների դիմումի հիման վրա, որոշել էր, որ առևտրային ընկերությունը պարտավոր է վճարել ներմուծման որոշ մաքսատուրքեր: Հանձնաժողովը սխալմամբ ենթադրել էր, որ այդ մաքսատուրքերը արդեն վճարված էին, և այդ պատճառով կիրառել էր Մաքսատուրքերի ներման վերաբերյալ No 1430/79 Կանոնակարգը, այլ ոչ թե Մաքսատուրքերի հետվերահսկողական (post-clearance) գանձման վերաբերյալ No 1697/79 Կանոնակարգը:

Առաջին ատյանի դատարանը (CFI) սա որակեց որպես իրավական սխալ: Սակայն նշեց, որ «կանոնների երկու համակարգերն էլ հետապնդում են նույն նպատակը, այն է՝ սահմանափակել ներմուծման և արտահանման մաքսատուրքերի հետվերահսկողական վճարումը այն դեպքերով, երբ այդպիսի վճարումը հիմնավորված է և համատեղելի է լեգիտիմ ակնկալիքների պաշտպանության հետ»: Ավելին, այն փաստական հանգամանքները, որոնք արդարացրել էին որոշումը Կանոնակարգ 1430/79-ի հիման վրա, նույն կերպ կարդարացնեին որոշումը նաև Կանոնակարգ 1697/79-ի հիման վրա: Հետևաբար, «սխալը զուտ ձևական բնույթ ուներ, քանի որ այն ... որևէ վճռորոշ ազդեցություն չէր ունեցել արդյունքի վրա», և համապատասխանաբար «կարիք չկար վիճարկվող որոշումը վերացնել այն հիմքով, որ Հանձնաժողովը հենվել էր սխալ իրավական հիմքի վրա»⁵⁴⁶:

Թեև այս գործը ցույց է տալիս, որ ԵՄ դատարանները կարող են փոխարինել մի իրավական հիմքը մյուսով և դրանով սահմանափակել իրավական սխալի համար պատասխանատվությունը, նրանք հակված չեն ոչ վերաբերելի նկատառումները կամ «շարժառիթները» փոխարինելու համարժեք և իրավաչափ հիմքերով:

⁵⁴⁶ Տե՛ս նույն տեղում:

Այսպես, վերջերս քննված **Farrugia** գործում անձը դիմել էր ԵՄ կրթաթոշակի՝ արտասահմանում ուսանելու համար: Նրա դիմումը ոչ իրավաչափորեն մերժվել էր այն հիմքով, թե նա Բրիտանիայի քաղաքացի չէ: Նման իրավիճակում ֆրանսիական դատարանը կարող էր համարել, որ կրթաթոշակը կարող էր մերժվել նաև որևէ այլ իրավաչափ հիմքով և մերժումը թողնել ուժի մեջ՝ շարժառիթների փոխարինման միջոցով: Սակայն Առաջին ատյանի դատարանը (CFI) քննեց միայն այն հարցը, թե արդյոք մերժումը փաստացի հիմնված էր նաև որևէ այլ իրավաչափ հիմքի վրա՝ բացի քաղաքացիությունից: Քանի որ դատարանը պարզեց, որ քաղաքացիությունն էր միակ հիմնավորումը, վերացրեց մերժումը⁵⁴⁷:

Ինչ վերաբերում է հայրենական վարչական իրավունքին, ապա ոչ իրավաչափ վարչարարությամբ պատճառված վնասի հետ կապված հարաբերությունները կարգավորված են Օրենքի 7-րդ բաժնում: Վնասի հատուցման նախապայմանը վարչական մարմնի իրավական ակտը, գործողությունը կամ անգործությունը, որով անձին վնաս է հասցվել, սահմանված կարգով ոչ իրավաչափ ճանաչելն է⁵⁴⁸: Այսինքն՝ ԵՄ իրավունքի նման ՀՀ վարչական իրավունքում ևս վարչական ակտի ոչ իրավաչափ լինելը բավարար է պատճառված վնասի հատուցման պահանջ ներկայացնելու համար: Ընդ որում, Օրենքի համաձայն՝ ոչ իրավաչափ վարչարարության դեպքում հատուցման ենթակա է ինչպես իրական վնասը և բաց թողնված օգուտը, այնպես էլ ոչ գույքային վնասը:

⁵⁴⁷ St'u Case T-230/94 Farrugia v Commission [1996] ECR II-195, պարագրաֆ 31-36:

⁵⁴⁸ St'u Օրենքի 96-րդ հոդված:

Այսպես, ՍԴԴ-1383 որոշմամբ անդրադառնալով վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման վերաբերյալ քննության առարկա իրավակարգավորումների սահմանադրականության խնդրին՝ Սահմանադրական դատարանը կարևորել է «պատճառված վնաս» եզրույթի սահմանադրաիրավական բովանդակության բացահայտման, դրա ճիշտ, միակերպ և ամբողջական ընկալման անհրաժեշտությունը ոչ միայն նորմատիվ իրավական կարգավորման, այլև իրավակիրառման բնագավառներում: Սահմանադրական դատարանը նշել է, որ Օրենքի 7-րդ բաժնի նորմերի համալիր վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրը նախատեսել է ոչ իրավաչափ վարչարարությամբ պատճառված վնասի հատուցում պահանջելու նախապայման, այն է՝ ոչ իրավաչափ ճանաչել վարչական մարմնի իրավական ակտը, գործողությունը կամ անգործությունը, որին Օրենքի 100-րդ հոդվածի իրավակարգավորումների համաձայն կարող է հետևել վարչարարության հետևանքով վնաս պատճառած մարմնին հատուցման պահանջ ներկայացնելը: Այսինքն, պահանջի իրավունքն անձը ձեռք է բերում վարչական մարմնի իրավական ակտը, գործողությունը կամ անգործությունը, որով անձին վնաս է հասցվել, սահմանված կարգով ոչ իրավաչափ ճանաչվելու դեպքում: Սահմանադրական դատարանը գտել է, որ նման նորմատիվ պայմանը հետապնդում է իրավական հիմնավոր նպատակ և միտված է պատճառված վնասի հատուցման (վարչական կամ դատական կարգով) Սահմանադրությամբ երաշխավորված իրավունքի իրացման համար իրավական բարենպաստ պայմաններ (նախադրյալներ) ստեղծելուն⁵⁴⁹:

⁵⁴⁹ Տե՛ս Սահմանադրական դատարանի 2017 թվականի նոյեմբերի 7-ի ՍԴԴ-1383 որոշումը, պարագրաֆ 6:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանն իր կայացրած որոշումներից մեկում անդրադարձել է վարչարարության հետևանքով պատճառված վնասի հատուցման պայմաններին՝ նշելով, որ պետության կամ համայնքի պատասխանատվությունը ծագում է հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում՝ 1) իրականացվել է ոչ իրավաչափ (իսկ օրենքով նախատեսված դեպքերում՝ նաև իրավաչափ) վարչարարություն, 2) պատճառվել է վնաս, 3) իրականացված վարչարարության և պատճառված վնասի միջև առկա է պատճառահետևանքային կապ⁵⁵⁰:

Այսպիսով, ինչպես ԵՄ իրավական համակարգում, մեր ներպետական վարչական իրավունքում ևս վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման առաջնային հիմքը վարչական ակտը ոչ իրավաչափ ճանաչած լինելն է: Պետք է կարևորել, սակայն, որ ի տարբերություն ֆրանսիական և ԵՄ իրավունքների ՀՀ դատական պրակտիկայում չի որդեգրվել վարչական ակտերի ոչ իրավաչափության փոփոխական կիրառումը: Ընդհակառակը, հարկային գործով վերջերս կայացրած որոշումներից մեկով Վճռաբեկ դատարանը մշակել է կրկնակի վարչարարության արգելքի սկզբունքը՝ որդեգրելով տրամաբանորեն հակառակ մոտեցումը:

Այսպես, Վճռաբեկ դատարանի քննած գործերից մեկով Պետական եկամուտների կոմիտեի որոշմամբ «Ավելացված արժեքի հարկի մասին» օրենքի հիման վրա (մեկ օրացուցային տարվա ընթացքում երկու անգամ նույն տեսակի գույքի օտարման համար) ընդունվել էր անձից հարկային պարտավորությունների գանձման մասին որոշում: Պետական եկամուտների կոմիտեի հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնա-

⁵⁵⁰ Տե՛ս թիվ ՎԴ/1761/05/14 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 26.12.2016 թվականի որոշումը:

Ժողովը անձի գանգատը մերժել էր՝ որոշումը թողնելով անփոփոխ:

Նախկինում գործող ՀՀ տեսչական մարմինների միասնական բողոքարկման հանձնաժողովը, սակայն, վարչական բողոքը բավարարել է և որոշել է անվավեր ճանաչել Պետական եկամուտների կոմիտեի հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի որոշումը: Այնուհետև Պետական եկամուտների կոմիտեն ընդունել էր հարկային պարտավորությունների գանձման մասին նոր որոշում, որի հիմքում դրվել էին այն նույն իրավական և փաստական հիմքերը, որոնց հիման վրա ընդունվել էր կոմիտեի նախորդ որոշումը:

Վճռաբեկ դատարանը գտել է, որ անվավեր ճանաչված վարչական ակտով արձանագրված հարկային պարտավորությունները վարչական մարմնի կողմից կրկնակի վարչարարության արդյունքում նոր վարչական ակտի տեսքով կրկին առաջադրելու հնարավորությունը կհանգեցնի նրան, որ վերջինս այլևս կաշկանդված չի լինի օրենքով և վարչարարությունը կիրականացնի կամայականորեն՝ հիմնվելով այն հանգամանքի վրա, որ նույնիսկ իր կողմից իրականացված վարչական վարույթի արդյունքում ընդունված վարչական ակտն անվավեր ճանաչվելու պարագայում վերջինիս ընձեռված է գործի կրկնակի քննության ընթացքում իր կողմից նախորդ քննության ժամանակ թույլ տրված թերությունները շտկելու հնարավորություն:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ իրավական պետությունում, ինչպիսին է Հայաստանի Հանրապետությունը, վարչական մարմինների կողմից իրականացվող արտաքին ներգործություն ունեցող ոչ մի գործողություն չի կարող հակասել օրենսդրությանը: Ընդ որում, ըստ դատարանի, նշված պահանջը վերաբերում է ինչպես նյութաիրավական, այնպես էլ ընթա-

ցակարգային իրավանորմերին, քանի որ վարչական մարմինների գործունեության իրավաչափության միակ չափանիշը նյութական իրավունքը չէ և վարչական մարմնի գործունեությունը պետք է համապատասխանի նաև օրենսդրի կողմից սահմանված ընթացակարգային պահանջներին: Ընթացակարգային պահանջներին հետևելու նպատակն իրավաչափ որոշում կայացնելն ու շահագրգիռ անձանց իրավունքների գործնականում արդյունավետ պաշտպանությունն ապահովելն է: Հետևապես, եթե վարույթն իրականացրած մարմնի կողմից թույլ տրված ընթացակարգային խախտումը գնահատվել է էական (որոշիչ), որն ազդեցություն է ունեցել ակտի նյութական իրավաչափության վրա՝ այդպիսով հանգեցնելով դրա անվավերությանը, ապա չի կարող հետագայում այդ խախտումը վերացվելու միջոցով նույն անձի նկատմամբ վերջինիս դրսևորած վարքագծի հիման վրա վարչական մարմնի կողմից իրականացվել կրկնակի վարչարարություն և ընդունվել նոր վարչական ակտ:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ օրենսդրության նման մեկնաբանությունը խաթարում է հանրային իրավահարաբերությունների կայունությունն ու այդ բնագավառում իրավական անվտանգությունը, ինչպես նաև այնպիսի սկզբունքներ, ինչպիսիք են իրավական որոշակիությունը և կամայականության արգելքը:

Հատկանշականը այն է, որ նույն որոշմամբ Վճռաբեկ դատարանը կարծես ընկել է տրամաբանական շրջապտույտի մեջ՝ փաստելով, որ թեև Պետական եկամուտների կոմիտեն հարկային պարտավորությունների գանձման վերաբերյալ վարչական ակտն անվավեր ճանաչելու դեպքում նման նոր վարչական ակտ կայացնել չի կարող, սակայն քանի որ անձի՝ հարկեր վճարելու պարտականությունը բխում է օրենքից և անձ այդ պարտականությունից ազատվել չի կարող, հարկային մարմինը պետք է

այլ միջոցներով հասնի այդ պարտականության կատարման ապահովմանը:

Այսպես, Վճռաբեկ դատարանը նշել է. «... Վերագրյալ իրավակարգավորումներից բխում է, որ վարչական ակտերն ընդունվում են **հենց օրենքի ուժով առաջացած հարկային պարտավորությունների գանձման նպատակով**, հետևաբար ցանկացած հիմքով այդ վարչական ակտերն անվավեր ճանաչելու պարագայում դրանով առաջացած գումարները չեն կարող վարչական մարմնի կողմից նոր վարչական ակտ կայացնելու միջոցով գանձվել: Բայցևայնպես, անձը չի կարող ազատվել հարկային պարտավորության կատարումից ...:

Վճռաբեկ դատարանը գտել է, որ օրենքով առաջացած հարկային պարտավորությունից անձը չի կարող ազատվել, այն չի կարող դադարել, քանի դեռ առկա չէ «Հարկային» օրենսգրքի 45-րդ հոդվածով նախատեսված հարկային պարտավորության դադարման հիմքերից որևէ մեկը: Հետևաբար Պետական եկամուտների կոմիտեն իրավասու էր կիրառելու իր լիազորություններից բխող բոլոր իրավաչափ ներգործության այլ միջոցները հարկային պարտավորության գծով չվճարված գումարները գանձելու համար, բայց ոչ՝ հարկային պարտավորության գծով ժամանակին չվճարված գումարը գանձելու մասին նոր վարչական ակտ ընդունելով»⁵⁵¹:

Կարծում ենք, որ վարչական ակտերի ոչ իրավաչափության փոփոխական կիրառման՝ ֆրանսիական և ԵՄ իրավունքներում որդեգրված մոտեցումները կարող են դիտարկվել նաև ներպետական իրավունքի համատեքստում՝ որպես վերը քննարկված իրավիճակի լուծման ավելի արդյունավետ մեխանիզմ: Ամբողջովին կիսում ենք ֆրանսիական հեղինակների, այն

⁵⁵¹ Թիվ ՎԴ/8932/05/18 վարչական գործով Վճռաբեկ դատարանի որոշումը:

մոտեցումը, որ անարդյունավետ է վերացնել որոշումը, եթե վարչական մարմինը հետագայում պարտավոր է (կամ կարող է) ընդունել նմանատիպ որոշում: Հավասարապես, անարդյունավետ է վերացնել որոշումը, եթե գործնականում վարչական մարմինն «իր լիազորություններից բխող բոլոր իրավաչափ ներգործության այլ միջոցներով» է հասնելու այդ նույն որոշումից բխող պարտականության կատարման ապահովմանը:

Այսպիսով, գտնում ենք, որ բոլոր այն դեպքերում, երբ վարչական ակտով ամրագրվող պարտականությունն անմիջապես բխում է օրենքից, կամ եթե վարչական ակտն անվավեր ճանաչելու դեպքում վարչական մարմինը նույն հարցով հնարավորություն է ունենալու ընդունելու այլ վարչական ակտ կամ անկախ նման վարչական ակտ ընդունելուց՝ ապահովելու է անվավեր ճանաչված վարչական ակտի փաստացի կատարումը, ներպետական դատական պրակտիկայում կարող է օգտագործվել ԵՄ և Ֆրանսիական իրավունքներում կիրառվող վարչական ակտի ոչ իրավաչափության փոփոխական մեկնաբանության՝ վերը քննարկված մեխանիզմը: Կարծում ենք, որ այս մոտեցումը կփարատի նաև Վճռաբեկ դատարանի այն մտահոգությանը, որ վարչական ակտը վերացնելու հետո նույն հարցով նոր վարչական ակտ կայացնելը էական չափով հարկատուների միջոցների հաշվին գոյացող պետական բյուջեի միջոցների վատնում կլինի, քանի որ վարչական մարմնի անբարեխիղճ գործելաոճի հետևանքով միևնույն հարցի վերաբերյալ կհարուցվեն և կիրականացվեն մեկից ավելի վարույթներ՝ կատարելով լրացուցիչ, չարդարացված ծախսեր:

Շարունակելով հետազոտությունը պետք է փաստել, որ ներպետական դատական պրակտիկայում ևս օգտագործվում են վարչական ակտերի վարչական ակտերի ոչ իրավաչափության

գնահատումը մեղմելու մեխանիզմներ: Այսպես, Վճռաբեկ դատարանը վարչական ակտերի իրավաչափությունը գնահատելիս տարբերակում է նյութական և ընթացակարգային խախտումները՝ նշելով, որ եթե առաջինը միշտ հանգեցնում է վարչական ակտի անվավերության, ապա երկրորդը միշտ չէ, որ պետք է անվերապահորեն հանգեցնի վարչական ակտի վերացմանը:

Այսպես, Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ վարչական ակտի իրավաչափության իրավական հիմքերը սահմանվում են նյութական և ընթացակարգային իրավական նորմերում: Իրավաչափ վարչական ակտը պետք է համապատասխանի իր նկատմամբ կիրառելի բոլոր նյութական և ընթացակարգային իրավական նորմերին: Վարչական դատարանը վարչական ակտի իրավաչափությունը ստուգելիս պետք է պարզի՝ արդյոք տվյալ վարչական ակտը համապատասխանում է օրենսդրի կողմից սահմանած վարչական ակտի նյութական իրավաչափությանը՝ ներկայացվող պահանջներին, այսինքն՝ համապատասխանում է նյութական իրավական նորմերին, թե՛ ոչ, և պետք է պարզի նաև՝ արդյոք տվյալ վարչական ակտը համապատասխանում է օրենսդրի կողմից սահմանած վարչական ակտի ձևական իրավաչափությանը՝ ներկայացվող պահանջներին, այսինքն՝ համապատասխանում է ընթացակարգային նորմերին, թե՛ ոչ:

Վճռաբեկ դատարանը գտել է, որ ի տարբերություն նյութական իրավունքի պահանջների խախտման, ընթացակարգային պահանջների խախտումը միշտ չէ, որ պետք է անվերապահորեն հանգեցնի վարչական ակտի վերացմանը՝ հետևյալ պատճառաբանությամբ. թեև իրավական պետության պայմաններում մասնավոր անձանց առնչվող վարչական մարմինների կողմից իրականացվող գործունեության իրավաչափության միակ չափանիշը նյութական իրավունքը չէ և վարչական մարմնի գործունե-

ությունը նաև պետք է համապատասխանի օրենսդրի կողմից սահմանված ընթացակարգային պահանջներին, սակայն միաժամանակ ընթացակարգային պահանջները ՀՀ իրավական համակարգում ունեն օժանդակ գործառույթ: Ընթացակարգային պահանջների օժանդակ գործառույթի իրավական բնույթը այն է, որ ընթացակարգային պահանջներին հետևելու նպատակն իրավաչափ որոշում կայացնելն ու շահագրգիռ անձանց իրավունքների գործնականում արդյունավետ պաշտպանությունն ապահովելն է, և այն իրավահարաբերություններում, որտեղ ընթացակարգային պահանջների պահպանման և իրավաչափ որոշում կայացնելու և շահագրգիռ անձանց իրավունքների գործնականում արդյունավետ պաշտպանելու միջև անմիջական կապը բացակայում է, ընթացակարգային պահանջները և դրանց խախտման իրավական հետևանքները հարաբերական բնույթ են կրում: Այսինքն՝ նյութական իրավունքի համեմատությամբ ընթացակարգային պահանջների օժանդակ գործառույթն արտահայտվում է նրանում, որ ընթացակարգային սխալները որոշիչ չեն, եթե չեն ազդում որոշման նյութական իրավաչափության վրա և չեն խախտում շահագրգիռ անձանց հիմնական իրավունքները⁵⁵²:

Ամփոփելով վարչական ակտերի անվավերության դեպքերի սահմանափակման համար օգտագործվող մեխանիզմների ուսումնասիրությունը՝ ավելի մանրամասն անդրադարձ կատարենք ոչ իրավաչափ վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման մյուս պայմաններին, որոնք են՝ պատճառահետևանքային կապը, որոշակի վնասը և համատեղ մեղքը:

⁵⁵² Տե՛ս թիվ ՎԴ/6781/05/12 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 30.04.2015 թվականի որոշումը:

3.2. Պատճառահետևանքային կապը, որոշակի վնասը և համարելի մեղքը

Անգլիական իրավունքում կարելի է տարբերակել պատճառական կապի երկու կողմ: Առաջին՝ ոչ իրավաչափ վարչական ակտը պետք է փաստացի պատճառ հանդիսացած լինի վնասի համար, այսինքն՝ պետք է առկա լինի փաստացի պատճառական կապ (causation in fact): Սա որոշվում է դասական «եթե ոչ» (but-for, sine qua non) թեստով: Երկրորդ՝ վնասը չպետք է լինի ոչ իրավաչափ վարչական ակտի չափազանց հեռավոր հետևանք:

Պատճառահետևանքային կապի պահանջը ֆրանսիական իրավունքում կարևոր սահմանափակող դեր ունի պատասխանատվության համար⁵⁵³: Ինչպես անգլիական իրավունքում, այստեղ ևս պատճառահետևանքային կապի պահանջը բաղկացած է երկու տարրից: Նախ՝ պետք է առկա լինի փաստացի պատճառահետևանքային կապ (*causalité matérielle*), որը որոշվում է «եթե ոչ» (*but-for*) թեստով, և երկրորդ՝ վնասը չպետք է լինի ոչ իրավաչափ որոշման չափազանց հեռավոր հետևանք, այսինքն՝ պատճառական կապը պետք է լինի «ուղղակի» (*causalité directe*):

«Ուղղակի» և «անուղղակի» պատճառների սահմանազատման համար ֆրանսիական դատարանները կիրառում են բավարար (համարժեք) պատճառի տեսությունը (*causalité adéquate*)⁵⁵⁴: Ըստ այս տեսության՝ պատճառական կապը համարվում է ուղ-

⁵⁵³ Տե՛ս J.-P. Tagourdeau, 'Le caractère certain et direct du préjudice en matière de responsabilité extra-contractuelle de la puissance administrative', AJDA 1974, էջ 508, P. Vialle, 'Lien de causalité et dommage direct dans la responsabilité administrative', RDP 1974, էջ 1243:

⁵⁵⁴ Տե՛ս Galmot conclusions CE 14/10-66 Marais D 1966, 636-7; Grevisse conclusions CE 19/12-69 Établissement Delannoy RDP 1970:

ղակի, եթե իրադարձությունների բնականոն ընթացքի պայմաններում հավանական էր, որ ոչ իրավաչափ որոշումը կհանգեցներ տվյալ վնասին: Դատարանը կատարում է տարբեր հնարավոր զարգացումների հավանականությունների հետադարձ (*ex post facto*) գնահատում, այլ ոչ թե, ինչպես անգլիական դատարանը, հարցնում է՝ արդյո՞ք վնասը կանխատեսելի էր որոշման ընդունման պահին:

Պատճառահետևանքային կապի որոշման ֆրանսիական մոդելի յուրահատկությունն այն է, որ հատկապես ընթացակարգային խախտումներ թույլ տված լինելու դեպքում, դատարանը գնահատում է, թե արդյո՞ք բոլոր դեպքերում վնասը կպատճառվեր, եթե այդ խախտումը թույլ տրված չլիներ: Այսինքն՝ ֆրանսիական դատարանը չի սահմանափակվում վարչական ակտը ոչ իրավաչափ ճանաչված լինելու հանգամանքով, այլ նաև գնահատում է վարչական մարմնի թույլ տված խախտման բնույթն ու հենց դրա կապը վնասի հետ:

Հենց սրանով պայմանավորված գործնականում պատճառահետևանքային կապի գնահատումը հաճախ հանգեցնում է հայցվորի պահանջի մերժման: Սա հատկապես բնորոշ է այն դեպքերում, երբ որոշումը խախտել է ընթացակարգային կանոններ, օրինակ՝ պատվիրակման արգելքը⁵⁵⁵ կամ լսման և պատճառաբանության իրավունքը⁵⁵⁶: Քաղաքացիական ծառայողների ազատումը և լիցենզիաների վերացումն առանց լսումներ անցկացնելու հանդիսանում են բնորոշ օրինակներ⁵⁵⁷:

⁵⁵⁵ Տե՛ս CE 28/11-80 Domergue no 16.618:

⁵⁵⁶ Տե՛ս J. **Moreau**, 'Les conséquences des illégalités procédurales en droit administratif français' (1993) ERPL Ed spécial 85, էջեր 91-2, M. Paillet JC Fasc 818 no 130, Fasc 870 no 76-80:

⁵⁵⁷ Տե՛ս CE 9/1-59 Dumas Rec 31, CE 2/10-70 Chastang Rec 1198; CE 18/6-86 Krier Rec 166, CE 29/10-86 Bonneau Rec 248, CAA Nancy 28/7-95 Centre hospitalier de Roubaix no 44. 577:

Այսպես, **Dame Deux** գործում որոշ բժշկական ծառայություններ ազգային առողջապահական ապահովագրության հաշվին իրականացնելու լիցենզիան վերացվել էր առանց լսման: Որոշումը բողոքարկվել էր հատուկ հանձնաժողովում, որը հենց այդ հիմքով այն վերացրել էր: Սակայն հետագա վնասների հատուցման պահանջը մերժվեց, քանի որ պարզվեց, որ լիցենզիայի իրավատերը փաստացի չէր կատարել օրենսդրական պահանջները՝ հիվանդներին ամենօրյա զննում իրականացնելու և պատշաճ հաշվառում վարելու վերաբերյալ: Պետական խորհուրդը գտավ, որ հենց այս խախտումն էր, այլ ոչ թե ընթացակարգային սխալը, հանդիսացել սեփականատիրոջ կենսապահովման միջոցների կորստի իրական և ուղղակի պատճառը⁵⁵⁸:

Նյութական նորմերի խախտումների վրա հիմնված վնասների փոխհատուցման հայցերը ևս հաճախ մերժվում են պատճառահետևանքային կապի բացակայության հիմքով: Օրինակ, **Pratt-Flottes** գործում առողջարանը փակելու մասին որոշում էր կայացվել՝ այն պատճառաբանությամբ, թե այնտեղ գտնվելու ընթացքում մահացել էր Մուսա անունով մի տղա: Հետագայում պարզվեց, որ այս փաստը սխալ էր, և Պետական խորհուրդը վերացրեց որոշումը: Այնուամենայնիվ, պատասխանատվության հարցը մերժվեց, քանի որ իրականում այլ երեխաներ ստացել էին վնասվածքներ կամ մահացել: Ուստի փակման որոշումը բովանդակային առումով հիմնավորված էր և չէր հանդիսանում առողջարանի սեփականատիրոջ կրած վնասների պատճառը⁵⁵⁹:

⁵⁵⁸ Տե՛ս CE 22/1-69 Deux Rec 956: Տե՛ս նաև՝ CE 11/10-61 Clémant Rec 559, CE 19/6-81 Carliez AJDA 1981, 103:

⁵⁵⁹ Տե՛ս CE 15/7-64 Prat-Flottes Rec 438: Տե՛ս նաև՝ CE 8/3-63 Massad Rec 143; CE 19/5-76 SA du Château de Neuvecelle RDP 1976, 1385, CE 13/6-80 Haeuw Rec 628, CE 22/1-93 Société de Sannois-Ermont-Franconville D 1994 SC 66, CAA Paris 10/2-94 SA Ballande Rec 1182, CAA Paris 29/9-95 Graillet Rec 1032:

Հատկանշական է, որ իրավաբանական գրականության մեջ ֆրանսիական դատարանների այս մոտեցումը ենթարկվել է քննադատության: Այսպես, Ս. Սքոնբերգը նշում է. «Կարելի է ենթադրել, որ դատարանները դիտավորյալ խուսափում են հստակ պատճառաբանությունից՝ քողարկելու համար այն փաստը, որ պատճառահետևանքային կապի թեստը կիրառվում է վարչական պատասխանատվությունը սահմանափակելու նպատակով՝ քաղաքական նկատառումների լույսի ներքո»⁵⁶⁰: Երկրորդ, հիմնավորումը այն է, որ դատարանների կողմից պատճառահետևանքային կապի ինքնուրույն գնահատումը, փաստորեն հանգեցնում են գործի էության որոշակի գնահատման և դատական փոխարինման⁵⁶¹:

ԵՄ իրավունքում ևս պատճառահետևանքային կապի պահանջը բաղկացած է երկու տարրից՝ փաստական պատճառահետևանքային կապից և հեռավորության (remoteness) պահանջից⁵⁶²: Փաստական պատճառահետևանքային կապը որոշվում է *but-for* թեստով⁵⁶³:

Այսպես, Առաջին ատյանի դատարանը նշել է, որ վնասը պետք է լինի «իրադարձությունների բնականոն զարգացման ընթացքում օբյեկտիվորեն կանխատեսելի հետևանք»⁵⁶⁴: Սա պետք է ընթերցվի դատական պրակտիկայի հետ համադրությամբ, ըստ որի՝ ոչ իրավաչափ որոշումը, որը ենթադրաբար պատճա-

⁵⁶⁰ Schönberg, Sören, նշված աշխատ., էջ 201:

⁵⁶¹ Տե՛ս Bingham LJ, 'Should Public Law Remedies be Discretionary?' (1991) PL 64., էջեր 72-73:

⁵⁶² Տե՛ս A. G. Toth, 'The Concepts of Damage and Causality as Elements of Non-Contractual Liability', in T. Heukels and A. McDonnell (eds.), The Action for Damages in Community Law (The Hague, 1997), էջեր 191-198:

⁵⁶³ Տե՛ս Cases T-168/94 Blackspur v Council and Commission [1995] ECR II-2627, T-213/95 and 18/96 SCK v Commission [1997] ECR II-1739:

⁵⁶⁴ Case T-184/95 Dorsch Consult Ingenieurgesellschaft v Council and Commission [1998] ECR II-667, պարագրաֆ 72:

ռել է հայցվորի վնասը, պետք է հանդիսանա այդ վնասի «ուղղակի, անմիջական և բացառիկ պատճառը»⁵⁶⁵:

ԵՄ իրավունքում պատճառահետևանքային կապի պահանջը գործնականում պատասխանատու է վնասների հատուցման բազմաթիվ հայցերի ձախողման համար՝ թե՛ օրենսդրական ակտերին վերաբերող գործերում⁵⁶⁶, թե՛ վարչական որոշումների առնչությամբ⁵⁶⁷: Երբ ԵՄ դատարանները բախվում են ոչ իրավաչափ որոշման, որը ենթադրաբար պատճառել է վնաս, նրանք ուսումնասիրում են ամբողջ գործի նյութերը և որոշում են՝ արդյո՞ք վարչական մարմինը կարող էր և հավանականությունների հավասարակշռման չափանիշով (on the balance of probabilities) կկայացնե՞ր նույն որոշումը, եթե իրավական սխալներ թույլ չտար: Այս գնահատումը կարող է հանգեցնել դիմողի պահանջի մերժմանը թե՛ այն դեպքերում, երբ որոշումը կայացնելիս թույլ են տրվել ընթացակարգային խախտումներ, և թե՛ այն դեպքերում, երբ թույլ են տրվել նյութական նորմերի խախտումներ:

Պատճառահետևանքային կապի վերաբերյալ ԵՄ դատական պրակտիկայի ուսումնասիրության հիման վրա կարող ենք փաստել, որ թեև ձևակերպումների տարբերությանը, այն բավականին նման է ֆրանսիական մոդելին: Երկու դեպքում էլ դատարանները չեն սահմանափակվում վարչարարության ոչ իրավա-

⁵⁶⁵ Cases 64/76, 113/76, 167/78 239/78, 27-28/79 and 45/79 Dumortier Frères v Council [1979] ECR 309, պարագրաֆ 21, C- 363-364 /88 Finsider v Commission [1992] ECR I-359, պարագրաֆ 25, T-175/94 International Procurement Services v Commission [1996] ECR II-729, պարագրաֆ 55, T-7/96 Perillo v Commission [1997] ECR II-1061, պարագրաֆ 41:

⁵⁶⁶ Տե՛ս **Toth**, նշված աշխատ., էջ 305:

⁵⁶⁷ Տե՛ս Cases 150/77 Bertrand v Ott [1978] ECR 1431, T-54/96 Oleifici Italiani v Commission [1998] ECR II-3377, պարագրաֆ 67, T-13/96 TEAM v Commission [1998] ECR II-4073, պարագրաֆ 60:

չափ ճանաչված լինելու փաստով: Նրանք իրականացնում են գործի փաստերի մանրամասն վերլուծություն՝ պարզելու արդյո՞ք վնասը հենց ոչ իրավաչափ վարքագծի անմիջական արդյունքն է: ԵՄ դատարանն ուղղակիորեն նշել է, որ ենթադրվող վնասը պետք է լինի բողոքարկվող վարքագծի բավարարապես անմիջական հետևանք, և այդ պատճառահետևանքային կապը պետք է հանդիսանա վնասի որոշիչ պատճառը⁵⁶⁸: Նման պատճառահետևանքային կապի ապացուցման բեռը դրված է դիմողների վրա⁵⁶⁹:

Ըստ ԵՄ դատարանի՝ Համայնքային ինստիտուտի ոչ իրավաչափ արարքին վերագրվող վնասը որոշելու նպատակով անհրաժեշտ է հաշվի առնել **այն անգործության կամ խախտման հետևանքները, որոնց պատճառով առաջացել է պատասխանատվությունը, այլ ոչ թե այն ակտի հետևանքները, որի բաղկացուցիչ մասն է այն, պայմանով, որ ինստիտուտը կարող էր կամ պետք է ընդուներ նույն արդյունքը ապահովող միջոց՝ առանց որևէ իրավական նորմ խախտելու**: Այլ կերպ ասած՝ պատճառահետևանքային կապի վերլուծությունը չի կարող ելնել այն սխալ նախադրյալից, թե իրավախախտ վարքագծի բացակայության դեպքում ինստիտուտը զերծ կմնար գործողություններից կամ կընդուներ հակառակ միջոց, ինչը նույնպես կարող էր հանգեցնել խախտման, այլ պետք է հիմնված լինի համեմատության վրա՝ մեկ կողմից ոչ իրավաչափ արարքի հետևանքով եր-

⁵⁶⁸ St'u Joined Cases 64/76, 113/76, 167/78, 239/78, 27/79, 28/79 and 45/79 Dumortier and Others v Council [1979] ECR 3091, պարագրաֆ 21, Case T-175/94 International Procurement Services v Commission [1996] ECR II 729, պարագրաֆ 55, the judgment of 19 July 2007 in Case T-360/04 FG Marine v Commission, not published in the ECR, պարագրաֆ 50:

⁵⁶⁹ St'u Joined Cases C-363/88 and C-364/88 Finsider and Others v Commission [1992] ECR I 359, պարագրաֆ 25, Case T-220/96 EVO v Council and Commission [2002] ECR II 2265, պարագրաֆ 41:

որորդ անձի համար առաջացած իրավիճակի, և մյուս կողմից այն իրավիճակի միջև, որը կստեղծվեր տվյալ երրորդ անձի համար, եթե ինստիտուտի վարքագիծը համապատասխաներ իրավունքի պահանջներին⁵⁷⁰:

Այլ կերպ ասած՝ ԵՄ դատարանի մոտեցումը հանգում է նրան, որ եթե ԵՄ ինստիտուտի վարչական ակտը ինչ-որ նյութական և ընթացակարգային խախտման հետևանքով ճանաչվել է ոչ իրավաչափ, ապա պատճառահետևանքային կապը պետք է քննարկել վնասի և հենց այդ նյութական և ընթացակարգային խախտման, այլ ոչ թե անվավեր ճանաչված վարչական ակտի միջև: Ընդ որում, եթե տվյալ նյութական և ընթացակարգային խախտման բացակայության դեպքում էլ վարչական մարմինը կայացնելու էր նույն որոշումը, ապա պատճառահետևանքային կապը բացակայում է:

Այսպես, **Compagnia Italiana Alcool** գործում ԵՄ դատարանը գտավ, որ Հանձնաժողովի կողմից իտալական ընկերության հետ մրցույթում պայմանագիր չկքնելու մասին որոշումը բավարար կերպով հիմնավորված չէր, սակայն մերժեց վնասների հատուցման պահանջը՝ այն հիմքով, որ եթե որոշումը պատշաճ կերպով պատճառաբանված լիներ, վերջնական արդյունքը նույնը կլիներ: Այսինքն՝ ընկերության կողմից շահավետ պայմանագրի կորուստը պայմանավորված էր պայմանագիրը չկնքելու վերաբերյալ Հանձնաժողովի իրավաչափ որոշմամբ, այլ ոչ թե հիմնավորվածության բացակայությամբ⁵⁷¹:

⁵⁷⁰ St'u Joined Cases T-252/07, T-271/07 and T-272/07 Sungro, SA, Eurosemillas, SA and Surcotton, SA v Council of the European Union and European Commission [2010]:

⁵⁷¹ St'u Case C-358/90 Compagnia Italiana Alcool v Commission [1992] ECR I-2457: St'u նաև՝ Case T-390/94 Schröder v Commission [1997] ECR II-501, պարագրաֆ 65-66:

Վերևում քննարկված **Farrugia** գործում Հանձնաժողովը մերժել էր կրթաթոշակի դիմումը՝ դիմողի քաղաքացիության վերաբերյալ սխալ գնահատականի հիմքով⁵⁷²: Առաջին ատյանի դատարանը պարզեց, որ դիմումը չէր բավարարում այլ իրավական պահանջներին, որոնք անհրաժեշտ էին այն ըստ էության քննելու համար: Հետևաբար չապացուցվեց, որ դիմողը ուներ նպաստ ստանալու «ուժեղ հավանականություն», և վնասը գնահատվեց որպես «անորոշ»:

Սակայն եթե կա հավանականություն, որ կոնկրետ խախտման բացակայության, այն է՝ իրավաչափ վարչարարության արդյունքում՝ հնարավոր է այլ՝ բարենպաստ որոշում կայացվեր, ԵՄ դատարանը հաստատում է պատճառահետևանքային կապի առկայությունը: Այստեղ կարելի է հղում կատարել **Moritz** գործին, որտեղ Հանձնաժողովի բարձրաստիճան ծառայողին շնորհվեց վնասների հատուցում՝ իրեն պաշտոնի բարձրացումից զրկող որոշման համար⁵⁷³: Թափուր պաշտոնի թեկնածուները գնահատվել էին պարբերական գործունեության հաշվետվությունների հիման վրա, սակայն պարոն Մորիցի ծառայության վերջին երկու տարիները ներառող հաշվետվությունը բացակայում էր, քանի որ նրա անմիջական ղեկավարը ուշացրել էր դրա կազմումը:

Հանձնաժողովը վիճարկում էր պատասխանատվությունը՝ պնդելով, որ հնարավոր չէ հաստատել՝ արդյոք պարոն Մորիցը փաստացի կստանար այդ պաշտոնը, եթե հաշվետվությունը հասանելի լիներ: Սակայն Առաջին ատյանի դատարանը գտավ, որ քանի որ Հանձնաժողովը անհերքելիորեն թույլ էր տվել ոչ պատ-

⁵⁷² St'u Case T-230/94 *Farrugia v Commission* [1996] ECR II-195, պարագրաֆ 43-45: St'u նաև՝ Case T-478/93 *Wafer Zoo v Commission* [1995] ECR II-482:

⁵⁷³ St'u Case T-20/89RV *Moritz v Commission* [1993] ECR II-1423:

շաճ վարչարարություն՝ հաշվետվությունը ուշացնելով, և քանի որ նշանակող հանձնաժողովը տեղյակ չէր հաշվետվության մեջ պարունակվող ամբողջական (և բարենպաստ) տեղեկություններին, ուշացումը իրականում պատճառել էր որոշակի վնաս:

Այնուամենայնիվ, ԵՄ առաջին ատյանի դատարանը չսահմանեց ամբողջական հատուցում, որը համարժեք կլիներ պարոն Մորիցի աշխատավարձի ստանալիք բարձրացմանը: Փոխարենը այն *ex aequo et bono* սկզբունքով շնորհեց 150,000 բելգիական ֆրանկ՝ հաշվի առնելով, որ դիմողի տարիքը գործնականում բացառում էր «ավելի ուշ կրկին փորձելու» հնարավորությունը: Այսպիսով, դատարանը դասական *but-for* հարցը տալու փոխարեն (արդյոք դիմողը կստանա՞ր նպաստը, եթե խախտումը չլիներ), իրականում փոխհատուցում սահմանեց դիմողի՝ որոշակի օգուտ ստանալու հնարավորության կորստի համար:

Ինչ վերաբերում է ներպետական վարչական իրավունքում պատճառահետևանքային կապին, ապա Վճռաբեկ դատարանը, նշում է, որ ոչ իրավաչափ վարչարարության արդյունքում պետության կամ համայնքի պատասխանատվության պայմաններն են վնասի առկայությունը և դրա վրա հասնելը (պատճառվելը) ոչ իրավաչափ վարչարարության հետևանքով: Այսինքն՝ վարչական մարմինների **պարտականությունների խախտման և վնասի պատճառման** միջև պետք է առկա լինի իրավական նշանակություն ունեցող պատճառահետևանքային կապ: **Այլ կերպ ասած՝ վարչարարության արդյունքը ոչ իրավաչափ ճանաչելը դեռևս չի նշանակում, որ անձը վնասը կրել է հենց այդ վարչարարության հետևանքով. անհրաժեշտ է, որ վարչարարության և պատճառված վնասի միջև առկա լինի անմիջական պատճառահետևանքային կապ:**

Պատճառահետևանքային կապի հարցը յուրաքանչյուր կոնկրետ դեպքում առանձին գնահատման առարկա պետք է դառնա, և դրա առկայությունը որոշելիս առանցքային պետք է համարվի այն գաղափարը, որ պատճառահետևանքային կապի առկայության մասին կարող է խոսք լինել միայն այն դեպքում, երբ վնասի առաջացումը ոչ իրավաչափ վարչարարության անխուսափելի և անմիջական արդյունքն է: Հետևաբար, ոչ իրավաչափ վարչարարության և առաջացած վնասների միջև պատճառահետևանքային կապ կարող է առկա լինել, եթե վնասի առաջացումը հանդիսանում է իրականացված վարչարարության օբյեկտիվորեն անհրաժեշտ և ուղղակի արդյունքը: **Եթե բացասական հետևանքները կարող էին առաջանալ նաև առանց ոչ իրավաչափ վարչարարության (իսկ օրենքով նախատեսված դեպքերում՝ նաև իրավաչափ վարչարարության), ուրեմն դրանց միջև պատճառահետևանքային կապը բացակայում է:** Վճռաբեկ դատարանը եզրակացրել է, որ նշված պայմաններից թեկուզ մեկի բացակայությունը բացառում է վնասի հատուցման պահանջի բավարարման հնարավորությունը⁵⁷⁴:

Վերահաստատելով վերը նշված դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանն իր մեկ այլ որոշմամբ հավելել է, որ պատճառական կապն արտացոլում է երևույթների անհրաժեշտ ծագումնաբանական կապը, երբ մի երևույթը՝ պատճառը, որոշակի պայմանների առկայության դեպքում անհրաժեշտաբար առաջացնում է մյուսը՝ հետևանքը: Ընդ որում, կոնկրետ ոչ իրավաչափ վարչարարությամբ վնաս պատճառելու իրավահարաբերությունում վնասի հատուցման նախապայմանների առկայության հարցը լուծելիս էական է իրավական նշանակություն ունեցող պատճա-

⁵⁷⁴ Տե՛ս թիվ ՎԴ/1761/05/14 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 26.12.2016 թվականի որոշումը:

ռական կապի առկայության հարցը պարզելը: Իսկ պատճառական կապն ունի իրավական նշանակություն, երբ վնաս պատճառողի վարքագիծը վնասակար հետևանքի հնարավորությունը դարձրել է իրականություն կամ պայմանավորել է այդ հետևանքի առաջացման կոնկրետ հնարավորությունը: Այսպիսով, Վճռաբեկ դատարանը գտել է, որ ոչ իրավաչափ վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման համար պատճառական կապի առկայության հարցում էական է այն հանգամանքը, թե վարչական մարմնի ոչ իրավաչափ վարչական ակտը, գործողությունը կամ անգործությունն արդյո՞ք **անմիջականորեն հանգեցրել են** ֆիզիկական կամ իրավաբանական անձին հասցված վնասի առաջացմանը, թե՞ ոչ⁵⁷⁵:

Այսպես, **թիվ ՎԴ/11507/05/17 վարչական գործով** Վճռաբեկ դատարանը գտել է, որ գործով բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզման հանգելու նպատակով դատարանը պետք է պարզեր՝ արդյո՞ք վարչական դատարանի վճռով ոչ իրավաչափ ճանաչված՝ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության կողմից դրսևորած անգործության (համապատասխան ճանապարհային նշանների կահավորված չլինելը) և հայցվորին պատճառված վնասի միջև առկա է պատճառահետևանքային կապ, մասնավորապես՝ արդյո՞ք վարչական մարմնի դրսևորած անգործությունն անմիջականորեն հանգեցրել է հայցվորին հասցված վնասի առաջացմանը, թե՞ ոչ: Այսինքն՝ արդյո՞ք հայցվորին պատճառված վնասի առաջացումը վարչական մարմնի ոչ իրավաչափ անգործության անխուսափելի և անմիջական արդյունք է, թե՞ հայցվորին պատճառված վնասը կարող էր հետևանք լի-

⁵⁷⁵ Տե՛ս թիվ ՎԴ/0832/05/16 վարչական գործով ՀՀ Վճռաբեկ դատարանի 30.11.2018 թ. որոշումը:

նել նաև այլ գործողությունների կամ անգործության: Մինչդեռ դատարանը նման պատճառահետևանքային կապի առկայությունը հիմնավորել էր միայն այն հանգամանքով, որ վարչական դատարանի վճռով ոչ իրավաչափ է ճանաչվել ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության կողմից դրսևորած անգործությունը՝ առանց ըստ էության բացահայտելու ոչ իրավաչափ ճանաչված անգործության և ենթադրյալ վնասի միջև պատճառահետևանքային կապի գոյությունը⁵⁷⁶:

Պետք է նշել, որ ՀՀ բարձրագույն դատական ատյանի դատական պրակտիկայում դեռևս չկա որոշում, որից հնարավոր կլիներ միանշանակորեն ենթադրել՝ ոչ իրավաչափ վարչական ակտով պատճառված վնասի հատուցման պահանջը քննելիս արդյո՞ք Վճռաբեկ դատարանը կանդրադառնար նաև այն հարցին, թե կոնկրետ նյութական և ընթացակարգային խախտման բացակայության դեպքում վարչական մարմինը կընդուներ նույն վարչական ակտը, թե՞ ոչ: Այլ կերպ ասած, եթե վարչական մարմինը գործեր իրավաչափորեն, միևնույն է իրադարձությունների ընթացքը լինելու էր նույնը, և վնասն առաջանալու էր:

Վճռաբեկ դատարանը փաստել է, որ պատճառահետևանքային կապը բացակայում է, եթե բացասական հետևանքները կարող էին առաջացնել նաև առանց ոչ իրավաչափ վարչարարության: Հիմքում ունենալով նաև վերը մեջբերված համեմատական փորձի ուսումնասիրությունը՝ պատճառահետևանքային կապի հաստատման թեստն ավելի ամբողջական դարձնելու նպատակով առաջարկում ենք այն լրացնել հետևյալ պնդմամբ. պատճառահետևանքային կապը բացակայում է, եթե իրավաչափ

⁵⁷⁶ Տե՛ս թիվ ՎԴ/8932/05/18 վարչական գործով Վճռաբեկ դատարանի որոշումը:

վարչարարություն իրականացնելու դեպքում ևս վնասն առաջանալու էր:

Ինչպես վերը նշվեց, ոչ իրավաչափ վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման մեխանիզմում հաջորդ պայմանը վնասն է: Եթե Վճռաբեկ դատարանն այս պայմանը բնութագրելու համար օգտագործում է պարզապես «վնաս» ձևակերպումը, ապա ֆրանսիական և ԵՄ իրավունքում վնասը պետք է լինի որոշակի:

Ֆրանսիական իրավունքում հայցվորը միշտ պետք է ապացուցի, որ իր կրած վնասը «որոշակի» է (*dommage certain*), այլ ոչ թե ենթադրական կամ պարզապես հնարավոր (*dommage incertain* կամ *éventuel*)⁵⁷⁷: Այսպես, անձը, որին տրամադրվել է ոչ իրավաչափ շինարարական թույլտվություն կամ լիցենզիա, որը հետագայում վերացվել կամ փոխարինվել է պակաս բարենպաստ թույլտվությամբ, որպես կանոն կարող է փոխհատուցում ստանալ այդ ակտին վստահելու արդյունքում կատարած ծախսերի, օրինակ՝ ճարտարապետին կատարված վճարումների և շինարարական աշխատանքների համար⁵⁷⁸: Օրինակ, **Italie-Vandrezane** գործում կառուցապատող ընկերությունը փոխհատուցում է ստացել ավելի քան 148 միլիոն ֆրանկի չափով այն ծախսերի համար, որոնք կրել էր Փարիզի կենտրոնում գրասենյակային աշտարակ կառուցելու թույլտվության վստահելով, որը տրամադրվել էր որոշ քաղաքաշինական դրույթների խախտմամբ⁵⁷⁹:

⁵⁷⁷ Տե՛ս **F. Sallet**, La perte de chance dans la jurisprudence administrative relative à la responsabilité de la puissance publique (Paris, 1994):

⁵⁷⁸ Տե՛ս CE 25/6-71 Bruchet Rec 488, CE 28/7-93 Roux no 87.047, CE 4/12-74 Corniche no 93.953:

⁵⁷⁹ Տե՛ս CE 17/6-83 SCI Italie-Vandrezane Rec 267: Տե՛ս նաև՝ CE 6/10-82 Crédit Lyonnais DA 1982 no 372, CE 9/12-88 SCI L'Ollivette no 77.247:

Սակայն ծրագրված կառուցապատումն ավարտելու անհնարինության պատճառով կորցրած շահույթի փոխհատուցումը հազվադեպ է տրամադրվում⁵⁷⁴: Սա վերաբերում է նաև այլ ոլորտների, օրինակ՝ լիցենզավորմանը: Այսպես, **Pernaud** գործում դեղատան լիցենզիայի շահառուն, որին լիցենզիան տրամադրվել էր ոչ իրավասու պաշտոնյայի կողմից և կարճ ժամանակ անց վերացվել էր՝ վաճառքի մեկնարկից անմիջապես հետո, փոխհատուցում ստացավ դեղորայքի ձեռքբերման և առևտրային տարածքի գնման համար: Լիցենզիան կարող էր իրավաչափորեն տրամադրվել քաղաքապետի կողմից, ուստի փաստացի պատճառահետևանքային կապի (*causalité matérielle*) պահանջը կատարված էր: Սակայն կորցրած շահույթի պահանջը մերժվեց, քանի որ խանութը բաց էր եղել ընդամենը մի քանի օր, և շահույթը չափազանց անորոշ էր համարվում⁵⁷⁵:

ԵՄ իրավունքում փոխհատուցման ենթակա վնասների տեսակների նկատմամբ խիստ սահմանափակումներ չկան: Փոխհատուցում կարող է սահմանվել ֆիզիկական վնասվածքի⁵⁸⁰, գույքային վնասի, մաքուր տնտեսական վնասի⁵⁸¹ և «բարոյական վնասի» համար՝ անհարմարության, անորոշության և հեղինակությանը հասցված վնասի ձևով⁵⁸²: Փոխհատուցման ենթակա վնասի այս լայն սահմանումը համահունչ է ֆրանսիական իրավունքին, և, հետևաբար, զարմանալի չէ, որ ԵՄ դատարանները պահանջում են «փաստացի և որոշակի» վնասի բավական խիստ ապացույց⁵⁸³:

⁵⁸⁰ St'u Case 9/69 Sayag v Leduc [1969] ECR 337:

⁵⁸¹ St'u Cases 54 60/74 Kampfmeyer v Commission and Council [1976] ECR 711:

⁵⁸² St'u Cases 7/56 and 3-7/57 Algera v Common Assembly [1957] ECR 39, 182/80 Gauff v Commission [1982] ECR 799, T-73/89 Barbi v Commission [1990] ECR II-619; T-203/96 Embassy Limousines v EP [1998] ECR II-4239:

⁵⁸³ St'u Cases C-104/89 and 37/90 Mulder (II) v Council and Commission [1992] ECR I-3061, 3132:

Հատկանշական է, որ փաստացի վնասը (*actual damage*) վերաբերում է այն հանգամանքին, որ վնասը պետք է ապացուցվի դիմողի կողմից և կարող է հատուցվել միայն այն դեպքում, եթե այն չի փոխանցվել որևէ այլ անձի կամ այլ կերպ չի փոխհատուցվել⁵⁸⁴: Պատասխանատվության հայցերը կմերժվեն, օրինակ, եթե ընկերությունը ոչ իրավաչափորեն պարտադրված է եղել կատարել հարկային վճարումներ, որոնք այն հետագայում փոխանցել է իր հաճախորդներին⁵⁸⁵: Նույնը վերաբերում է այն դեպքերին, երբ անձը, որը ԵՄ հաստատության ոչ իրավաչափ գործողությունների պատճառով զրկվել է մասնագիտությամբ զբաղվելու հնարավորությունից⁵⁸⁶ կամ աշխատանքի անցնելու հնարավորությունից⁵⁸⁷, ունեցել է այլ եկամտի աղբյուր:

Որոշակի վնասը (*certain damage*) վերաբերում է այն պահանջին, որ վնասը կամ պետք է արդեն պատճառված լինի, կամ լինի անխուսափելի և կանխատեսելի «բավարար աստիճանի որոշակիությամբ»⁵⁸⁸: Օրինակ, **Dorsch** գործում գերմանական ընկերությունը փորձել էր ԵՄ-ից հատուցում ստանալ, երբ Ծոցի պատերազմի ընթացքում Իրաքի իշխանությունները ՄԱԿ-ի և ԵՄ պատժամիջոցների պայմաններում կասեցրել էին օտարերկրյա ընկերությունների նկատմամբ պարտքերի վճարումները: Պատճառահետևանքային կապի վերաբերյալ իրական կասկած

⁵⁸⁴ St'u Cases 26/74 Roquette Frères v Commission [1976] ECR 677, պարագրաֆ 22, T-54/96 Oleifici Italiani v Commission [1998] ECR II-3377, պարագրաֆ 68-69, C-401/96P Somaco v Commission [1998] ECR I-2587, պարագրաֆ 71:

⁵⁸⁵ St'u Cases 241-242 and 245-250 /78 DGV Deutsche Getreideverweitung v Council and Commission [1979] ECR 3017, պարագրաֆ 14:

⁵⁸⁶ St'u Cases C-104/89 and 37/90 Mulder (II) v Council and Commission [1992] ECR I-3061, պարագրաֆ 33:

⁵⁸⁷ St'u Case 110/63 Willame v Commission [1965] ECR 649:

⁵⁸⁸ Cases 54 60/74 Kampfmeyer v Commission and Council [1976] ECR 711, պարագրաֆ 6:

չկար, քանի որ վճարումները կասեցնող իրաքյան օրենքը հղում էր կատարում պատժամիջոցներին, թեկուզ դիվանագիտական բարդ ձևակերպումներով: Սակայն Առաջին աստիճանի դատարանը գտավ, որ վնասը դեռևս որոշակի չէր: Քանի որ Դորշչը դիվանագիտական նկատառումներով պաշտոնապես չէր պահանջել վճարումը, պաշտոնական մերժում էլ չէր եղել, հետևաբար, դատարանի կարծիքով հնարավոր էր, որ գումարը հետագայում՝ պատժամիջոցների վերացումից հետո, վճարվեր⁵⁸⁹:

«Որոշակի վնասի» պահանջը զգալիորեն սահմանափակում է բաց թողնված օգուտի համար հատուցման հնարավորությունը: Դա պայմանավորված է նրանով, որ բաց թողնված օգուտը վերաբերում է ապագա իրադարձություններին, որոնք հաճախ դժվար է ապացուցել⁵⁹⁰:

Վարչական մարմնի պատասխանատվության վրա ազդող վերջին հանգամանքը անձի մեղքն է, որը բնորոշելու համար իրավաբանական գրականության մեջ հաճախ օգտագործվում է «համատեղ մեղք» ձևակերպումը: Այսպես, ֆրանսիական դատարանները, որպես կանոն, վարչական մարմինների հետ գործ ունեցող անձանցից ակնկալում են զգալի շրջահայացություն⁵⁹¹: Այս պահանջը չկատարելը հանգեցնում է հատուցման չափի նվազեցման՝ համատեղ մեղքի հիմքով: Հատուցումը հաճախ կրճատվում է 25-ից 75 տոկոսի սահմաններում⁵⁹², այն հիմքով,

⁵⁸⁹ St'u Case T-184/95 Dorsch Consult Ingenieurgesellschaft v Council and Commission [1998] ECR II-667. 327, Case T-13/96 TEAM v Commission [1998] ECR II-4073, պարագրաֆ 76:

⁵⁹⁰ St'u Case T-13/96 TEAM v Commission [1998] ECR II-4073, պարագրաֆ 76:

⁵⁹¹ St'u **J. Moreau**, L'influence de la situation et du comportement de la victime sur la responsabilité administrative (Paris, 1957), JC Fasc 700 no 164; 870 no 99ff, **J. P. Payre**, 'Faute et fait de la victime dans le contentieux de la responsabilité administrative extra-contractuelle', AJDA 1980, էջ 398:

⁵⁹² St'u **Harlow**, նշված աշխատ., էջ 242:

որ հայցվորը գիտեր⁵⁹³ կամ պետք է իմանար⁵⁹⁴, որ իր ստացած թույլտվությունն իրավաչափ չէր, կամ որ նա այլ կերպ մեղավոր վարքագիծ էր դրսևորել⁵⁹⁵:

Օրինակ, **Société European Homes գործում** դիմող ընկերությունը ստացել էր շինարարական թույլտվություն բազմաբնակարան շենք կառուցելու համար այն հողատարածքի վրա, որի վաճառքն առաջարկել էին տեղական իշխանությունները: Հետագայում թույլտվությունը վերացվել էր, քանի որ այն հակասում էր որոշ քաղաքաշինական դրույթներին, և ընկերությունը կրել էր մոտ 3 միլիոն ֆրանկի վնաս բանկային վարկի գծով, ինչպես նաև ավելի քան 10 միլիոն ֆրանկի ակնկալվող շահույթի կորուստ: Շահույթի կորստի պահանջը ամբողջությամբ մերժվեց՝ բավական անսպասելի այն հիմքով, որ ընկերությունը չի կարող պահանջել շահույթ, որը կստացվեր ոչ իրավաչափ շինարարությունից:

ԵՄ իրավունքում ևս հատուցման պահանջները հաճախ նվազեցնում են, երբ կա համատեղ մեղք վնասի առաջացման հարցում⁵⁹⁶: Հատուցումը սովորաբար նվազեցվում է, եթե հայցվորը չի գործել որպես «խոհեմ և փորձառու անձ»: Օրինակ՝ անհիմն ձգձգման համար պատասխանատվությունը կարող է կրճատվել, եթե դիմողը չի ներկայացրել ողջ անհրաժեշտ տեղե-

⁵⁹³ Տե՛ս CE 3/11-72 Maury D 1973, 761, CE 12/11-75 Résidence du pays d'Oc Rec 1263, CE 23/6-76 Société Construction immobilière Rhodanienne Rec 1111, CAA Paris 18/4-95 Bouley no 93PA00511:

⁵⁹⁴ Տե՛ս CE 21/9-90 SCI Hameau de Beauvoir no 67.776:

⁵⁹⁵ Տե՛ս CE 31/1-42 Bergs Rec 27:

⁵⁹⁶ Տե՛ս Cases 145/83 Adams v Commission [1985] ECR 3539, 222/84 Sommerlatte v Commission [1986] ECR 1805, T-36/89 Nijman v Commission [1991] ECR II-699; C-293/95P Odigitria v Council and Commission [1996] ECR I-6129 (confirming T-572/93 Odigitria v Council and Commission), Case C-308/87 Grifoni v Commission [1990] ECR I-1203:

կատվությունը⁵⁹⁷ կամ չի հիշեցրել հաստատությանը իր գործողությունը չկատարելու մասին⁵⁹⁸:

Kampfmeyer գործը ցույց է տալիս Եվրոպական դատարանի խիստ մոտեցումը: Դիմողը մի շարք առևտրականներից էր, որոնք փորձել էին Ֆրանսիայից Գերմանիա եգիպտացորեն ներմուծել և այդ կերպ օգտվել Գերմանիայում ժամանակավորապես կիրառվող զրոյական դրույքաչափով տուրքից: Գերմանական իշխանությունները, Համայնքի իրավունքին հակառակ, մերժել էին ներմուծման լիցենզիաների դիմումները, իսկ Հանձնաժողովը սկզբում հաստատել էր այս ոչ իրավաչափ մերժումը:

Թեև դատարանը սկզբունքորեն Հանձնաժողովին պատասխանատու ճանաչեց, այն զգալիորեն կրճատեց հատուցումը: Այն առևտրականներին, որոնք լիցենզիայի դիմելու պահին արդեն պայմանագրեր էին կնքել, հատկացվեց հատուցում՝ նրանց կորցրած շահույթի ընդամենը 10 տոկոսի չափով՝ գործարքների «սպեկուլյատիվ բնույթի» պատճառով: Այն առևտրականներին, որոնք պայմանագրեր չէին կնքել, ընդհանրապես հատուցում չտրվեց, քանի որ նրանց ակնկալվող շահույթի կորուստը գնահատվեց չափազանց անորոշ: Այս գործը ցույց է տալիս, թե ինչպես համատեղ մեղքը, «որոշակի վնասի» պահանջի հետ համակցված, կարող է զգալիորեն սահմանափակել Համայնքի պատասխանատվությունը տնտեսական վնասների համար⁵⁹⁹:

Ամփոփելով, կարող ենք նշել, որ որոշակի վնասը, համատեղ մեղքը, ինչպես նաև ուղղակի պատճառահետևանքային

⁵⁹⁷ St'u Case T-514/93 Cobrecaf v Commission [1995] ECR II-624:

⁵⁹⁸ St'u Case 58/75 Sergy v Commission [1976] ECR 1139, 1162:

⁵⁹⁹ St'u Cases 54 60/74 Kampfmeyer v Commission and Council [1976] ECR 711: St'u նաև՝ Cases 74/74 CNTA v Commission [1975] ECR 533, T-514/93 Cobrecaf v Commission [1995] ECR II-624:

կապը, լինելով վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման պայմաններ, նաև ճկուն հասկացություններ են, որոնք դատարաններին տալիս զգալի ազատություն քաղաքական նկատառումները հաշվի առնելու համար: Ըստ այդմ՝ այս երեք պայմանները հաճախ կարող են օգտագործվել դատարանների կողմից ոչ իրավաչափ վարչարարության դեպքում վարչական մարմինների պատասխանատվության չափը նվազեցնելու համար:

SUMMERY

The Protection of Legitimate Expectations in Administrative Law: Monograph

Kristine Aleksanyan

At the current stage of the development of administrative law, a fundamental requirement of a state governed by the rule of law is to ensure the predictability of public authority activities, legal certainty, and the trust of individuals. In this context, the protection of legitimate expectations acquires pivotal significance, acting as an independent and system-building principle of administrative law that limits the discretionary powers of administrative bodies and ensures the effective protection of individuals' rights.

Նորմատիվ իրավական ակտեր

ՀՀ Սահմանադրություն

«Անասնաբուժության մասին» օրենք

«Արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին» օրենք

«Լիցենզավորման մասին» օրենք

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենք

«Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին» օրենք

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենք

Տեսական աղբյուրներ

1. **Գևորգ Դանիելյան**, «Իրավական որոշակիության, իրավունքի անալոգիայի (համանմանության) և իրավական ակտի մեկնաբանության փոխհարաբերության արդի հիմնախնդիրները», Բանբեր Երևանի համալսարանի. Իրավագիտություն, 2016, էջեր 3–17:

2. **Կարեն Հակոբյան**, «Պատշաճ վարչարարության իրավունքի արժեքը», *ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի գիտաժողովի նյութերի ժողովածու*, 2019, էջեր 129–140:

3. **Ahmed F and Perry A**, 'The Coherence of the Doctrine of Legitimate Expectations' (2014) 73 *Cambridge Law Journal* 61.

4. **Aiken JH**, 'Ex Post Facto in the Civil Context: Unbridled Punishment' (1992) 81 *Kentucky Law Journal* 323.

5. **Akehurst M**, 'Revocation of Administrative Decisions' [1982] *Public Law* 613.

6. **Aldous G and Alder J**, *Applications for Judicial Review: Law and Practice of the Crown Office* (2nd edn, London 1993).

7. **Alessi M, Núñez Ferrer J and Egenhofer C**, 'Suspended in Legal Limbo: Protecting Investment in Renewable Energy in the EU' CEPS, 23 January 2018.

8. **Allan TRS**, *Law, Liberty, and Justice: The Legal Foundations of British Constitutionalism* (Oxford University Press 1993).

9. **Allan TRS**, 'Procedural Fairness and the Duty of Respect' (1998) *Oxford Journal of Legal Studies* 497.

10. **Arrowsmith S**, *Civil Liability and Public Authorities* (South Humberside 1992).
11. **Baldwin R and Hawkins K**, 'Discretionary Justice: Davis Reconsidered' [1984] *Public Law* 570.
12. **Barak-Erez D**, 'The Doctrine of Legitimate Expectations and the Distinction between the Reliance and Expectation Interests' (2005) 11(4) *European Public Law* 583.
13. **Beck U**, *Risk Society: Towards a New Modernity* (London 1992).
14. **Bell J**, 'Comparative Administrative Law' in Mathias Reimann and Reinhard Zimmermann (eds), *The Oxford Handbook of Comparative Law* (Oxford University Press 2012).
15. **Bell JS**, *French Constitutional Law* (Oxford University Press 1992).
16. **Bentham J**, 'Principles of the Civil Code' in CK Ogden (ed), *The Theory of Legislation* (Kegan Paul, Trench, Trubner & Co 1931).
17. **Bentham J**, 'Supply Without Burden' in J Bowring (ed), *The Works of Jeremy Bentham*, vol 2 (William Tait 1843).
18. **Berks P**, 'Social Change and Judicial Response: The Handbook Exception to Employment-At-Will' (2000) 4 *Employee Rights and Employment Policy Journal* 231.
19. **Bianku L, Trifunović P, Aras Kramar S and Martinović I**, *Right to Property in the Context of Article 1 Protocol 1 to the European Convention on Human Rights and Freedoms* (Council of Europe 2020).
20. **Bingham LJ**, 'Should Public Law Remedies Be Discretionary?' [1991] *Public Law* 64.
21. **Boulanger-Bonnelly J and Otis L**, 'The Protection of Legitimate Expectations in Global Administrative Law' in GP Politakis and others (eds), *ILO100: Law for Social Justice* (ILO 2019).
22. **Bradley AW**, 'Administrative Justice and the Binding Effect of Official Acts' (1981) *Current Legal Problems* 1.
23. **Broggini G**, 'Retroactivity of Laws in the Roman Perspective' (1996) 1 *Irish Jurist* 151.
24. **Bronkhorst HJ**, 'The Valid Legislative Act as a Cause of Liability of the Communities' in T Heukels and A McDonnell (eds), *The Action for Damages in Community Law* (The Hague 1997).

25. **Brown A**, *A Theory of Legitimate Expectations for Public Administration* (Oxford University Press 2017).
26. **Collins B**, 'When Are Public Bodies Functus Officio Law?' (2001) 6 *Judicial Review* 61.
27. **Craig P**, *Administrative Law* (Sweet & Maxwell).
28. **Craig P**, *EU Administrative Law* (3rd edn, Oxford University Press 2018).
29. **Craig P**, 'Substantive Legitimate Expectations and the Principles of Judicial Review' in M Andenas (ed), *English Public Law and the Common Law of Europe* (London 1998).
30. **Craig P and de Búrca G**, *EU Law: Text and Materials* (2nd edn, Oxford University Press 1998).
31. **Craig P and de Búrca G**, *EU Law: Text, Cases, and Materials* (4th edn, Oxford University Press 2008).
32. **Craig P, Hofmann HCH, Schneider J-P and Ziller J** (eds), *ReNEUAL Model Rules on EU Administrative Procedure* (Oxford University Press 2017).
33. **Cranston R**, 'Reviewing Judicial Review' in G Richardson and H Genn (eds), *Administrative Law and Government Action* (Oxford 1994).
34. **Crosskey WW**, 'The True Meaning of the Constitutional Prohibition of Ex-Post-Facto Laws' (1947) 14 *University of Chicago Law Review* 539.
35. **Daly P**, 'A Pluralist Account of Deference and Legitimate Expectations' in M Groves and G Weeks (eds), *Legitimate Expectations in the Common Law World* (Hart Publishing 2016).
36. **Djanogly C**, 'Retrospective Tax Legislation: A Clash of Two Moral Imperatives' (2012) Thomson Reuters Practical Law.
37. **Dicey AV**, *Introduction to the Study of the Law of the Constitution* (10th edn, London 1959).
38. **Dworkin RM**, *A Matter of Principle* (Oxford University Press 1985).
39. **Dworkin RM**, *Law's Empire* (London 1986).
40. **Elias P**, 'Legitimate Expectation and Judicial Review' in J Jowell and D Oliver (eds), *New Directions in Judicial Review* (Stevens 1988).
41. **Elliott M**, 'Legitimate Expectation, Consistency and Abuse of Power: The Rashid Case' (2005) 10(4) *Judicial Review* 281.
42. **Endicott T**, *Vagueness in the Law* (Oxford University Press 2000).

43. **Endicott T**, 'The Purpose of a State' (2021) 66(1) *American Journal of Jurisprudence* 71.
44. **Endicott TAO**, 'The Impossibility of the Rule of Law' (1999) *Oxford Journal of Legal Studies* 1.
45. **Engel I**, *The Philosophy of Tort Law* (Aldershot 1993).
46. **Farber D**, 'How Legal Systems Deal with Issues of Responsibility for Past Harmful Behaviour' in LH Meyer and P Sanklecha (eds), *Climate Justice and Historical Emissions* (Cambridge University Press 2017).
47. **Fazal MA**, 'Reliability of Official Acts and Advice' [1972] *Public Law* 43.
48. **Finnis J**, *Natural Law and Natural Rights* (2nd edn, Oxford University Press 2011).
49. **Forsyth CF**, 'The Provenance and Protection of Legitimate Expectations' (1988) *Cambridge Law Journal* 238.
50. **Fuller LL**, *The Morality of Law* (revised edn, Yale University Press 1969).
51. **Gallant KS**, *The Principle of Legality in International and Comparative Criminal Law* (Cambridge University Press 2010).
52. **Galligan DJ**, *Discretionary Powers: A Legal Study of Official Discretion* (Oxford 1986).
53. **Galligan DJ**, 'The Nature and Function of Policies Within Discretionary Power' [1976] *Public Law* 332.
54. **Galligan DJ**, *Due Process and Fair Procedures* (Oxford University Press 1996).
55. **Ganz G**, 'Estoppel and Res Judicata in Administrative Law' [1965] *Public Law* 237.
56. **Giddens A**, *The Third Way* (Cambridge 1998).
57. **Harlow C**, 'Fault Liability in French and English Law' (1976) *Modern Law Review* 516.
58. **Harlow C**, 'Remedies in French Law' [1977] *Public Law* 227.
59. **Harlow C**, *Compensation and Government Torts* (London 1982).
60. **Harlow C and Rawlings R**, *Law and Administration* (4th edn, Cambridge University Press 2021).
61. **Hartley T**, *The Foundations of European Community Law* (4th edn, Oxford 1998).

62. **Hawkins K**, 'The Use of Legal Discretion: Perspectives from Law and Social Science' in K Hawkins (ed), *The Uses of Discretion* (Oxford 1992).
63. **Heukels T and McDonnell A** (eds), *The Action for Damages in Community Law* (The Hague 1997).
64. **Heuston RFV and Buckley RA**, *Salmond and Heuston on the Law of Torts* (21st edn, London 1996).
65. **Hunt M**, *Using Human Rights Law in English Courts* (Oxford University Press 1997).
66. **Joseph PA**, 'Law of Legitimate Expectation in New Zealand' in M Groves and G Weeks (eds), *Legitimate Expectations in the Common Law World* (Bloomsbury 2017).
67. **Jowell JL**, 'The Rule of Law Today' in JL Jowell and D Oliver (eds), *The Changing Constitution* (3rd edn, London 1994).
68. **Kryvoi Y**, 'The Law Applied by International Administrative Tribunals: From Autonomy to Hierarchy' (2015) 47 *George Washington International Law Review* 267.
69. **Kryvoi Y and Matos S**, 'Non-Retroactivity as a General Principle of Law' (2021) 17(1) *Utrecht Law Review* 46.
70. **Künnecke M**, *Tradition and Change in Administrative Law: An Anglo-German Comparison* (Springer 2007).
71. **Laws J**, 'The Constitution: Morals and Rights' [1996] *Public Law* 622.
72. **Letelier JP**, 'The Normative Foundations of Retroactivity and Legitimate Expectation in the UK Administrative Law' (2023) 7 *Revista de Derecho Público: Teoría y Método* 83.
73. **MacCormick N**, 'Voluntary Obligations and Normative Powers' (1972) 46 *Proceedings of the Aristotelian Society Supplementary Volume*.
74. **Mackenzie Stuart A**, 'Legitimate Expectations and Estoppel in Community Law and English Administrative Law' (1983) *Legal Issues of European Integration* 53.
75. **Markesinis BS, Auby J-B, Coester-Waltjen DC and Deakin SF**, *Tortious Liability of Statutory Bodies: A Comparative and Economic Analysis of Five English Cases* (Oxford University Press 1999).
76. **Mashaw JL**, *Due Process in the Administrative State* (Yale University Press 1985).

77. **Mill JS**, *On Liberty* (1859, London 1993).
78. **Morrell J and Foster R**, *Local Authority Liability* (Bristol 1998).
79. **Otis L and Boulanger-Bonnelly J**, 'The Protection of Legitimate Expectations in Global Administrative Law' (2014).
80. **Pagone R**, 'Estoppel in Public Law: Theory, Fact and Fiction' (1984) *University of New South Wales Law Journal* 267.
81. **Portuese A, Gough O and Tanega J**, 'The Principle of Legal Certainty as a Principle of Economic Efficiency' (2017) 44 *European Journal of Law and Economics* 131.
82. **Rawls J**, *A Theory of Justice* (Cambridge, Mass 1971).
83. **Raz J**, *The Authority of Law* (Oxford 1979).
84. **Raz J**, *Ethics in the Public Domain* (Oxford 1995).
85. **Raz J**, *The Authority of Law: Essays on Law and Morality* (Oxford University Press 2009).
86. **Rennert K**, 'The Protection of Legitimate Expectations under German Administrative Law' (paper presented at the seminar on the protection of legitimate expectations of the Association of Councils of State and Supreme Administrative Jurisdictions of the European Union (ACA-Europe), Vilnius, Lithuania, 21 April 2016).
87. **Reynolds P**, 'Legitimate Expectations and the Protection of Trust in Public Officials' [2011] *Public Law* 330.
88. **Richardson G**, 'The Legal Regulation of Process' in G Richardson and H Genn (eds), *Administrative Law and Government Action* (Oxford University Press 1994).
89. **Rubinstein A**, *Jurisdiction and Illegality* (Oxford University Press 1965).
90. **Sarasa-Maestro CJ, Dufo-López R and Bernal-Agustín JL**, 'Photovoltaic Remuneration Policies in the European Union' (2013) 55 *Energy Policy* 317.
91. **Schermer HG and Waelbroeck D**, *Judicial Protection in the EC* (5th edn, Deventer 1992).
92. **Schermer HG and Waelbroeck DF**, *Judicial Protection in the European Union* (6th edn, Kluwer Law International 2001).
93. **Schermer HG, Heukels T and Mead P** (eds), *Non-Contractual Liability of the European Communities* (The Hague 1988).

94. **Schönberg SJ**, *Legitimate Expectations in Administrative Law* (Oxford University Press 2000).
95. **Schwarze J**, *European Administrative Law* (Sweet & Maxwell 1992).
96. **Schwarze J**, *European Administrative Law* (revised edn, Sweet & Maxwell 2006).
97. **Selinger S**, 'The Case Against Civil Ex Post Facto Laws' (1995) 15 *Cato Journal* 191.
98. **Sharpston E**, 'Legitimate Expectations and Economic Reality' (1990) *European Law Review* 103.
99. **Simmons AJ**, 'Associative Political Obligations' (1996) 106 *Ethics* 247.
100. **Skandalis I**, 'Balancing Employer and Employee Interests: Legitimate Expectations and Proportionality under the Acquired Rights Directive' (DPhil thesis, University of Oxford 2012).
101. **Stevens D**, 'The "Comfort Letter": Old Problems, New Developments' (1994) *European Competition Law Review* 81.
102. **Sunstein CR and Vermeule A**, *Law & Leviathan: Redeeming the Administrative State* (Belknap Press of Harvard University Press 2020).
103. **Thomas R**, *Legitimate Expectations and Proportionality in Administrative Law* (Hart Publishing 2000).
104. **Toth AG**, 'The Concepts of Damage and Causality as Elements of Non-Contractual Liability' in T Heukels and A McDonnell (eds), *The Action for Damages in Community Law* (The Hague 1997).
105. **Tridimas T**, *The General Principles of EC Law* (Oxford 1999).
106. **Verburg C and Waverijn J**, 'Liberalizing the Global Supply Chain of Renewable Energy Technology: The Role of International Investment Law in Facilitating Flows of Foreign Direct Investment and Trade' (2019) 2(1) *Brill Open Law* 101.
107. **Wade HWR**, 'The Concept of Legal Certainty: A Preliminary Skirmish' (1940–41) *Modern Law Review* 183.
108. **Wade W and Forsyth C**, *Administrative Law* (11th edn, Oxford University Press 2014).
109. **Waldron J**, *The Rule of Law and the Measure of Property* (Cambridge University Press 2012).
110. **Weeks G**, *Soft Law and Public Authorities: Remedies and Reform* (Hart Publishing 2016).

111. **Weeks G**, 'What Can We Legitimately Expect from the State?' in M Groves and G Weeks (eds), *Legitimate Expectations in the Common Law World* (Hart Publishing 2016).
112. **Woodhouse D**, *In Pursuit of Good Administration: Ministers, Civil Servants and Judges* (Oxford University Press 1997).
113. **Wright D**, 'Rethinking the Doctrine of Legitimate Expectations in Canadian Administrative Law' (1997) *Osgoode Hall Law Journal* 139.
114. **Wyatt D and Dashwood A**, *European Community Law* (3rd edn, London 1992).
115. **Yoon Y**, 'The Impacts and Implications of CERCLA on the Soil Environmental Conservation Act of the Republic of Korea' (2017) 6 *Transnational Environmental Law* 11.
116. **André J-M**, 'La responsabilité de la puissance publique du fait des diverses formes d'engagements non contractuels de l'administration' [1976] *AJDA* 20.
117. **Basset M**, 'Le principe dit de "l'acte contraire" en droit administratif français' (Doctoral thesis, Paris 1967).
118. **Carbonnier J**, *Flexible Droit* (7th edn, Paris 1992).
119. **Couzinet JF**, 'La notion de faute lourde administrative' [1977] *Revue du droit public* 283.
120. **Deguergue M**, *Jurisprudence et doctrine dans l'élaboration du droit de la responsabilité administrative* (Paris 1994).
121. **Fines F**, *Étude de la responsabilité extracontractuelle de la Communauté économique européenne* (Paris 1997).
122. **Gazier F and Drago R** (eds), *Encyclopédie Dalloz: Répertoire de la responsabilité de la puissance publique* (Paris 1996).
123. **Geuttier C**, *La responsabilité administrative* (Paris 1996).
124. **Girardot and Raynaud F**, 'Chronique générale de jurisprudence administrative française' [1997] *AJDA* 937.
125. **Girardot and Raynaud F**, 'Chronique générale de jurisprudence administrative française' [1997] *AJDA* 943.
126. **Hostiou R**, *Procédures et formes de l'acte administratif unilatéral en droit français* (Paris 1974).
127. **Hubeau F**, 'Le principe de la protection de la confiance légitime dans la jurisprudence de la Cour de Justice des Communautés Européennes' [1983] *Cahiers de droit européen* 143.

128. **Labetoulle D**, 'Principe de légalité et principe de sécurité' in *Mélanges Guy Braibant* (Paris 1996) 403.

129. **Latournerie M-A**, 'The Law of France' in JS Bell and AW Bradley (eds), *Governmental Liability: A Comparative Study*, UKCLS vol 13 (London 1991).

130. **Lefondre M**, 'Le retrait des aides financières publiques aux entreprises privées' (1993) *Revue administrative* 131.

131. **Lochak D**, 'Réflexion sur les fonctions sociales de la responsabilité administrative' in J Chevallier (ed), *Le droit administratif en mutation* (Paris 1993).

132. **Moreau J**, *L'influence de la situation et du comportement de la victime sur la responsabilité administrative* (Paris 1957).

133. **Moreau J**, 'Les conséquences des illégalités procédurales en droit administratif français' (1993) *European Review of Public Law*, special issue, 85.

134. **Naômé C**, 'La notion de sécurité juridique dans la jurisprudence de la Cour de Justice et du Tribunal de Première Instance des Communautés Européennes' [1993] *Revue de droit public européen* 223.

135. **Nauwelaers M and Fabius L**, 'Chronique générale de jurisprudence administrative française' [1976] *AJDA* 557.

136. **Paillet M**, *Juris-Classeur Administratif*, Fasc 818 and Fasc 870.

137. **Peyrical J-P**, *La substitution de motifs en droit administratif* (doctoral thesis, Université Paris II 1993).

138. **Planchon M-H**, 'Le principe de la confiance légitime devant la Cour de Justice des Communautés Européennes' [1994] *Revue de la Recherche Juridique — Droit Prospectif* 447.

139. **Puissochet J-P**, 'Vous avez dit confiance légitime?' in *Mélanges Guy Braibant* (Paris 1996) 581.

140. **Raynaud F and Fombeur P**, 'Chronique générale de jurisprudence administrative' [1998] *AJDA* 403.

141. **Sallet F**, *La perte de chance dans la jurisprudence administrative relative à la responsabilité de la puissance publique* (Paris 1994).

142. **Schockweiler F, Wivénes C and Godart J-M**, 'Le régime de la responsabilité extracontractuelle du fait d'actes juridiques dans la Communauté européenne' [1990] *Revue trimestrielle de droit européen* 27.

143. **Tagourdeau J-P**, 'Le caractère certain et direct du préjudice en matière de responsabilité extra-contractuelle de la puissance administrative' [1974] *AJDA* 508.
144. **Tallineau L**, 'Les tolérances administratives' [1978] *AJDA* 3.
145. **Troper M**, 'Le concept d'État de droit' in M Troper (ed), *L'État de droit* (Caen 1993).
146. **Vedel G and Delvolvé P**, *Droit administratif* (12th edn, Paris 1992).
147. **Vialle P**, 'Lien de causalité et dommage direct dans la responsabilité administrative' [1974] *Revue du droit public* 1243.
148. **Vincent P**, 'Chronique de jurisprudence' [1999] *AJDA* 880.
149. **Viney G**, 'Modération et limitation des responsabilité et des indemnisations' in J Spier (ed), *The Limit of Liability: Keeping the Floodgates Shut* (The Hague 1996).
150. **Weber M**, *Économie et société*, vol I (Paris 1971).
151. **Yannakopoulos C**, *La notion de droits acquis en droit administratif français* (Paris 1997).

Միջազգային և տարածաշրջանային ակտեր

1. Canadian Charter of Rights and Freedoms, Part I of the Constitution Act 1982.
2. Convention for the Protection of Human Rights and Fundamental Freedoms 1950, opened for signature 4 November 1950, ETS No 5.
3. Declaration of the Rights of Man and of the Citizen 1789.
4. International Covenant on Civil and Political Rights 1966.
5. Sustainable Development Goals 2015, GA Res 70/1, UN Doc A/RES/70/1, 25 September 2015.
6. Universal Declaration of Human Rights 1948.
7. Vienna Convention on the Law of Treaties 1969, 23 May 1969.

Սահմանադրություններ և ներպետական նորմատիվ ակտեր

1. Administrative Procedure Act 1976 / *Verwaltungsverfahrensgesetz* — German Federal Administrative Procedure Act 1976.
2. Canadian Charter of Rights and Freedoms 1982, Part I of the Constitution Act 1982.
3. Comprehensive Environmental Response, Compensation, and Liability Act 1980, 42 USC § 9606.

4. Constitution of Argentina 1853.
5. Constitution of Botswana 1966.
6. Constitution of Ecuador 2008.
7. Constitution of Spain 1978.
8. Constitution of Sweden 1974.
9. Constitution of the Islamic Republic of Pakistan 1973.
10. Constitution of the People's Democratic Republic of Algeria 2020.
11. Constitution of the Republic of Korea 1948.
12. Constitution of the Republic of Lithuania 1992.
13. Republic of Lithuania Code of Administrative Offences 1984.
14. Constitution of the Republic of Madagascar 2010.
15. Constitution of the Republic of Senegal 2001.
16. Constitution of Zambia 1991.
17. Criminal Law of the People's Republic of China 1979, arts 3 and 12.
18. Finance Act 2006.
19. Finance Act 2008.
20. Finance Act 2010.
21. Human Rights Act 1998.
22. Immigration Rules 1994, UK Visas and Immigration.
23. Law No 2019-759 of 24 July 2019, Journal officiel de la République française.
24. Nazis and Nazi Collaborators (Punishment) Law 5710-1950, 4 LSI 154.
25. New Zealand Bill of Rights Act 1990.
26. People's Republic of China Legislation Law 2000.
27. Spanish Law 91/2014.
28. Taxation (Unpaid Company Tax) Assessment Act 1982.
29. United States Constitution 1787.
30. War Crimes Act 1991.

Եվրոպական միության նորմատիվ և պաշտոնական աղբյուրներ

1. Council Regulation (EEC) No 2707/72 of 19 December 1972 laying down the conditions for applying protective measures for fruit and vegetables [1972] OJ L291/3.
2. Council Regulation (EEC) No 1697/79 of 24 July 1979 on the post-clearance recovery of import duties or export duties [1979] OJ L197/1.

3. European Commission, *Delivering the Internal Electricity Market and Making the Most of Public Intervention*, C(2013) 7243 final, 5 November 2013.

4. ReNEUAL Model Rules on EU Administrative Procedure.

5. ReNEUAL 2.0, *The Pan-European General Principles on Legal Certainty and Protection of Legitimate Expectations in Administrative Matters*.

6. Regulation No 17/62, First Regulation implementing Articles 85 and 86 of the Treaty.

7. Regulation No 99/63/EEC on hearings in competition proceedings.

8. Regulation (EEC) No 4064/89 on the control of concentrations between undertakings.

9. Regulation (EC) No 384/96 on protection against dumped imports from countries not members of the European Community.

10. Regulation (EC) No 40/94 on the Community trade mark.

11. Regulation (EC) No 2100/94 on Community plant variety rights.

12. Renewable Energy Directive 2009/28/EC.

Եվրոպայի խորհրդի փաստաթղթեր

1. Council of Europe, *The Administration and You: A Handbook: Principles of Administrative Law Concerning Relations between Individuals and Public Authorities* (3rd edn, Council of Europe 2024).

2. Council of Europe, Committee of Ministers, Recommendation CM/Rec(2007)7 to member states on good administration, 20 June 2007.

3. Venice Commission, *Report on the Rule of Law*, CDL-AD(2011)003rev-e, adopted at the 86th Plenary Session, Venice, 25–26 March 2011.

4. Venice Commission, *The Updated Rule of Law Checklist*, CDL-AD(2025)002-e, adopted at the 145th Plenary Session, Venice, 12–13 December 2025.

Դատական պրակտիկա

ՀՀ սահմանադրական դատարանի որոշումներ

ՀՀ սահմանադրական դատարան, ՍԴԴ-1529 որոշում, 12 մայիսի 2020 թ.:

ՀՀ սահմանադրական դատարան, ՍԴԴ-1458 որոշում, 30 ապրիլի 2019 թ.:

ՀՀ սահմանադրական դատարան, ՍԴՈ-1383 որոշում, 7 նոյեմբերի 2017 թ.:

ՀՀ սահմանադրական դատարան, ՍԴՈ-1061 որոշում, 14 դեկտեմբերի 2012 թ.:

ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումներ

ՀՀ վճռաբեկ դատարան, թիվ ՎԴ/8932/05/18 վարչական գործով որոշում, 10 մայիսի 2022 թ.:

ՀՀ վճռաբեկ դատարան, թիվ ՎԴ/0832/05/16 վարչական գործով որոշում, 30 նոյեմբերի 2018 թ.:

ՀՀ վճռաբեկ դատարան, թիվ ՎԴ/1761/05/14 վարչական գործով որոշում, 26 դեկտեմբերի 2016 թ.:

ՀՀ վճռաբեկ դատարան, թիվ ՎԴ/6781/05/12 վարչական գործով որոշում, 30 ապրիլի 2015 թ.:

ՀՀ վճռաբեկ դատարան, թիվ ՎԴ/11082/05/20 վարչական գործով որոշում, 17 դեկտեմբերի 2021 թ.:

ՀՀ վճռաբեկ դատարան, թիվ ՎԴ/8615/05/20 վարչական գործով որոշում, 25 սեպտեմբերի 2024 թ. :

Միջազգային և տարածաշրջանային ատյաններ

Մարդու իրավունքների եվրոպական դատարան (ՄԻԵԴ)

1. ECtHR, *Văleanu and Others v Romania* App no 59012/17 and 29 others, 8 November 2022.

2. ECtHR, *Eka Mikeladze and Others v Georgia* Apps nos 29385/11, 19372/12, 29533/13 and 73699/13, 25 November 2021.

3. ECtHR, *Romeva v North Macedonia* App no 32141/10, 12 December 2019.

4. ECtHR, *Beinarovič and Others v Lithuania* Apps nos 70520/10, 21920/10 and 41876/11, 12 June 2018.

5. ECtHR, *Béláné Nagy v Hungary* App no 53080/13, Grand Chamber, 13 December 2016.

6. ECtHR, *Vasiliauskas v Lithuania* App no 35343/05, Grand Chamber, 20 October 2015.

7. ECtHR, *Maktouf and Damjanović v Bosnia and Herzegovina* Apps nos 2312/08 and 34179/08, Grand Chamber, 18 July 2013.

8. ECtHR, *Kononov v Latvia* App no 36376/04, Grand Chamber, 17 May 2010.

9. ECtHR, *Lelas v Croatia* App no 55555/08, 20 May 2010.
10. ECtHR, *Moskal v Poland* App no 10373/05, 15 September 2009.
11. ECtHR, *Korbely v Hungary* App no 9174/02, Grand Chamber, 19 September 2008.
12. ECtHR, *OGIS-Institut Stanislas, OGEC Saint-Pie X and Blanche de Castille and Others v France* Apps nos 42219/98 and 54563/00, 27 May 2004.
13. ECtHR, *Forrer-Niedenthal v Germany* App no 47316/99, 20 February 2003.
14. ECtHR, *National & Provincial Building Society, Leeds Permanent Building Society and Yorkshire Building Society v United Kingdom* (1997) 25 EHRR 127.
15. ECtHR, *Stran Greek Refineries and Stratis Andreadis v Greece* App no 13427/87, 9 December 1994, Series A no 301-B.

Եվրոպական միության դատարաններ

Court of Justice / CJEU

1. CJEU, *Case C-427/23 Határ Diszkont Kft v Nemzeti Adó- és Vámhivatal Fellebbviteli Igazgatósága* EU:C:2025:596.
2. CJEU, *Case C-725/20 P Coppo Gavazzi and Others v Parliament* EU:C:2024:766.
3. CJEU, *Case C-846/19 Administration de l'Enregistrement, des Domaines et de la TVA* EU:C:2021:277.
4. CJEU, *Case C-584/17 P ADR Center v Commission* EU:C:2020:576.
5. CJEU, *Case C-611/17 Italy v Council* EU:C:2019:332.
6. CJEU, *Case C-516/16 Erzeugerorganisation Tiefkühlgemüse eGen v Agrarmarkt Austria* EU:C:2017:1011.
7. CJEU, *Case C-560/15 Europa Way Srl and Persidera SpA v Autorità per le Garanzie nelle Comunicazioni* EU:C:2017:593.
8. CJEU, *Case C-411/15 P CFPR v European Commission* EU:C:2017:11.
9. CJEU, *Case C-566/14 P Marchiani v European Parliament* EU:C:2016:437.
10. CJEU, *Case C-596/13 P European Commission v Moravia Gas Storage as* EU:C:2015:203.

11. CJEU, *Case C-144/14 Cabinet Medical Veterinar Dr Tomoiagă Andrei v Direcția Generală Regională a Finanțelor Publice Cluj Napoca* EU:C:2015:452.
12. CJEU, *Case C-183/14 Salomie and Oltean* EU:C:2015:454.
13. CJEU, *Case C-545/11 Agrargenossenschaft Neuzelle eG v Landrat des Landkreises Oder-Spree* EU:C:2013:169.
14. CJEU, *Case C-568/11 Agroferm A/S v Ministeriet for Fødevarer, Landbrug og Fiskeri* EU:C:2013:407.
15. CJEU, *Case C-410/09 Polska Telefonia Cyfrowa sp z o.o. v Prezes Urzędu Komunikacji Elektronicznej* EU:C:2011:294.
16. CJEU, *Case C-153/10 Staatssecretaris van Financiën v Sony Supply Chain Solutions (Europe) BV* EU:C:2011:224.
17. CJEU, *Case C-496/08 P Pilar Angé Serrano and Others v European Parliament* [2010] ECR I-1793.
18. CJEU, *Case C-537/08 P Kahla Thüringen Porzellan GmbH v Commission* EU:C:2010:769.
19. CJEU, *Case C-414/08 P Sviluppo Italia Basilicata SpA v European Commission* EU:C:2010:165.
20. CJEU, *Case C-256/07 Mitsui & Co Deutschland GmbH v Hauptzollamt Düsseldorf* [2009] ECR I-1951.
21. CJEU, *Case C-241/07 JK Otsa Talu OÜ v Põllumajanduse Registrite ja Informatsiooni Amet (PRIA)* [2009] ECR I-4323.
22. CJEU, *Case C-449/08 Elbertsen v Minister van Landbouw, Natuur en Voedselkwaliteit* [2009] ECR I-10241.
23. CJEU, *Case C-519/07 Commission v Koninklijke FrieslandCampina NV* [2009] ECR I-8495.
24. CJEU, *Case C-334/07 P Commission v Freistaat Sachsen* EU:C:2008:709.
25. CJEU, *Case C-161/06 Skoma-Lux sro v Celní ředitelství Olomouc* [2007] ECR I-10841.
26. CJEU, *Joined Cases C-182/03 and C-217/03 Belgium and Forum 187 ASBL v Commission* [2006] ECR I-5479.
27. CJEU, *Case C-310/04 Spain v Commission* [2006] ECR I-7285.
28. CJEU, *Case C-376/02 Stichting 'Goed Wonen' v Staatssecretaris van Financiën* [2005] ECR I-3445.

29. CJEU, *Case C-17/03 Vereniging voor Energie, Milieu en Water and Others v Directeur van de Dienst uitvoering en toezicht energie* [2005] ECR I-4983.
30. CJEU, *Case C-110/03 Belgium v Commission* [2005] ECR I-2801.
31. CJEU, *Joined Cases C-37/02 and C-38/02 Di Leonardo Adriano Srl and Dilexport Srl v Ministero del Commercio con l'Estero* [2004] ECR I-6911.
32. CJEU, *Case C-459/02 Willy Gerekens and Association agricole pour la promotion de la commercialisation laitière Procola v État du Grand-Duché de Luxembourg* [2004] ECR I-7315.
33. CJEU, *Case C-340/98 Italy v Council* [2002] ECR I-2663.
34. CJEU, *Joined Cases C-74/00 P and C-75/00 P Falck SpA and Acciaierie di Bolzano SpA v Commission* [2002] ECR I-7869.
35. CJEU, *Case C-110/97 Netherlands v Council* [2001] ECR I-8763.
36. CJEU, *Case C-400/98 Finanzamt Goslar v Brigitte Breitsohl* [2000] ECR I-4321.
37. CJEU, *Case C-396/98 Grundstücksgemeinschaft Schloßstraße GbR v Finanzamt Paderborn* [2000] ECR I-4279.
38. CJEU, *Case C-402/98 ATB and Others v Ministero per le Politiche Agricole* [2000] ECR I-5501.
39. CJEU, *Case C-104/97 P Atlanta AG v Commission and Council* [1999] ECR I-6983.
40. CJEU, *Case C-372/96 Pontillo v Donatab Srl* [1998] ECR I-5091.
41. CJEU, *Case C-90/95 P de Compte v Parliament* [1997] ECR I-1999, ECLI:EU:C:1997:198.
42. CJEU, *Case C-183/95 Affish BV v Rijksdienst voor de keuring van Vee en Vlees* [1997] ECR I-4315.
43. CJEU, *Case C-22/94 Irish Farmers Association and Others v Minister for Agriculture, Food and Forestry, Ireland and the Attorney General* [1997] ECR I-1809.
44. CJEU, *Case C-285/95 Kol v Land Berlin* [1997] ECR I-3069.
45. CJEU, *Case C-395/95 P Geotronics SA v Commission* [1997] ECR I-2271.
46. CJEU, *Case C-63/93 Duff and Others v Minister for Agriculture and Food, Ireland and the Attorney General* [1996] ECR I-569.

47. CJEU, *Case C-32/95 P Commission v Lisrestal and Others* [1996] ECR I-5373.
48. CJEU, *Case C-58/94 Netherlands v Council* [1996] ECR I-2169.
49. CJEU, *Joined Cases C-319/93, C-40/94 and C-224/94 Dijkstra and Others v Friesland (Frico Domo) Coöperatie BA and Others* [1995] ECR I-4471.
50. CJEU, *Joined Cases C-133/93, C-300/93 and C-362/93 Crispoltoni and Others v Fattoria Autonoma Tabacchi and Donatab* [1994] ECR I-4863.
51. CJEU, *Case C-135/92 Fiskano AB v Commission* [1994] ECR I-2885.
52. CJEU, *Case C-280/93 Germany v Council* [1994] ECR I-4973.
53. CJEU, *Case C-136/92 P Commission v Lualdi and Others* [1994] ECR I-1981.
54. CJEU, *Joined Cases C-260/91 and C-261/91 Diversinte SA and Iberlacta SA v Administración Principal de Aduanas e Impuestos Especiales de La Junquera* [1993] ECR I-1885.
55. CJEU, *Case C-34/92 GruSa Fleisch GmbH & Co KG v Hauptzollamt Hamburg-Jonas* [1993] ECR I-4147.
56. CJEU, *Case C-313/90 CIRFS and Others v Commission* [1993] ECR I-1125.
57. CJEU, *Joined Cases C-13/92 to C-16/92 Driessen and Others v Minister van Verkeer en Waterstaat* [1993] ECR I-4751.
58. CJEU, *Joined Cases C-31/91 to C-44/91 Alois Lageder SpA and Others v Amministrazione delle Finanze dello Stato* [1993] ECR I-1761.
59. CJEU, *Joined Cases 104/89 and C-37/90 Mulder and Others v Council and Commission* [1992] ECR I-3061.
60. CJEU, *Joined Cases C-258/90 and C-259/90 Pesqueras De Bermeo SA and Naviera Laida SA v Commission* [1992] ECR I-2901.
61. CJEU, *Joined Cases C-48/90 and C-60/90 Netherlands v Commission* [1992] ECR I-565.
62. CJEU, *Case C-55/90 Cato v Commission* [1992] ECR I-2533.
63. CJEU, *Joined Cases C-363/88 and C-364/88 Finsider and Others v Commission* [1992] ECR I-359.
64. CJEU, *Case C-358/90 Compagnia Italiana Alcool v Commission* [1992] ECR I-2457.
65. CJEU, *Case C-248/89 Cargill v Commission* [1991] ECR I-2987, ECLI:EU:C:1991:264.

66. CJEU, *Case C-365/89 Cargill BV v Produktschap voor Margarine, Vetten en Oliën* [1991] ECR I-3045.
67. CJEU, *Case C-49/88 Al-Jubail Fertilizer Co and Saudi Arabian Fertilizer Co v Council* [1991] ECR I-3187.
68. CJEU, *Case C-69/89 Nakajima All Precision Co Ltd v Council* [1991] ECR II-2069.
69. CJEU, *Case C-96/89 Commission v Netherlands* [1991] ECR I-2461.
70. CJEU, *Case C-170/89 BEUC v Commission* [1991] ECR I-5709.
71. CJEU, *Case C-22/90 France v Commission* [1991] ECR I-5285.
72. CJEU, *Case C-152/88 Sofrimport SARL v Commission* [1990] ECR I-2477.
73. CJEU, *Case C-350/88 Société française des Biscuits Delacre v Commission* [1990] ECR I-395.
74. CJEU, *Case C-80/89 Behn Verpackungsbedarf GmbH v Hauptzollamt Itzehoe* [1990] ECR I-2659.
75. CJEU, *Case C-142/87 Belgium v Commission* [1990] ECR I-959.
76. CJEU, *Case C-246/87 Continentale Produkten-Gesellschaft Erhardt-Renken GmbH & Co v Hauptzollamt München-West* [1989] ECR 1151.
77. CJEU, *Case C-216/87 R v Ministry of Agriculture, Fisheries and Food, ex parte Jaderow Ltd* [1989] ECR 4509.
78. CJEU, *Case C-249/87 Mulfinger and Others v Commission* [1989] ECR 4127.
79. CJEU, *Case 120/86 Mulder v Minister van Landbouw en Visserij* [1988] ECR 2321.
80. CJEU, *Case 316/86 Hauptzollamt Hamburg-Jonas v Firma P Krücken* [1988] ECR 2213.
81. CJEU, *Case 338/85 Pardini v Ministero del Commercio con l'Estero* [1988] ECR 2041.
82. CJEU, *Case 15/85 Consorzio Cooperative d'Abruzzo v Commission* [1987] ECR 1005, ECLI:EU:C:1987:111.
83. CJEU, *Case 81/86 De Boer Buizen BV v Council and Commission* [1987] ECR 3677.
84. CJEU, *Joined Cases 424/85 and 425/85 Frico v Voedselvoorzienings In- en Verkoopbureau* [1987] ECR 2755.

85. CJEU, *Case 265/85 Van den Bergh en Jurgens BV and Van Dijk Food Products v Commission* [1987] ECR 1155.
86. CJEU, *Joined Cases 181/86 to 184/86 Del Plato and Others v Commission* [1987] ECR 4991.
87. CJEU, *Case 7/86 Vincent v European Parliament* [1987] ECR 2473.
88. CJEU, *Case 267/82 Développement SA and Clemessy v Commission* [1986] ECR 1907.
89. CJEU, *Case 92/85 Hamai v Court of Justice* [1986] ECR 3157.
90. CJEU, *Case 222/84 Sommerlatte v Commission* [1986] ECR 1805.
91. CJEU, *Joined Cases 87/77, 130/77, 22/83, 9/84 and 10/84 Salerno and Others v Commission and Council* [1985] ECR 2523.
92. CJEU, *Case 124/83 Direktoratet for Markedsordningerne v Nicolas Corman et Fils SA* [1985] ECR 3777.
93. CJEU, *Case 3/83 Abrias and Others v Commission* [1985] ECR 1995.
94. CJEU, *Case 228/84 Pauvert v Court of Auditors* [1985] ECR 1969.
95. CJEU, *Case 121/83 Zuckerfabrik Franken GmbH v Hauptzollamt Würzburg* [1984] ECR 2039.
96. CJEU, *Case 59/83 Biovilac v European Economic Community* [1984] ECR 4057.
97. CJEU, *Case 224/82 Meiko-Konservenfabrik v Federal Republic of Germany* [1983] ECR 2539.
98. CJEU, *Case 159/82 Angélique Verli-Wallace v Commission of the European Communities* [1983] ECR 2711, ECLI:EU:C:1983:242.
99. CJEU, *Case 144/82 Detti v Court of Justice* [1983] ECR 2439.
100. CJEU, *Case 282/81 Ragusa v Commission* [1983] ECR 1245.
101. CJEU, *Case 289/81 Mavridis v European Parliament* [1983] ECR 1731.
102. CJEU, *Case 343/81 Michael v Commission* [1983] ECR 4023.
103. CJEU, *Case 235/82 Ferriere San Carlo v Commission* [1983] ECR 3949.
104. CJEU, *Case 108/81 Amylum v Council* [1982] ECR 3107.
105. CJEU, *Case 52/81 W Faust v Commission* [1982] ECR 3745.
106. CJEU, *Case 245/81 Edeka Zentrale AG v Federal Republic of Germany* [1982] ECR 2745.
107. CJEU, *Case 14/81 Alpha Steel Ltd v Commission* [1982] ECR 749.

108. CJEU, *Case 26/81 Oleifici Mediterranei v European Economic Community* [1982] ECR 3057.
109. CJEU, *Case 84/81 Staple Dairy Products Ltd v Intervention Board for Agricultural Produce* [1982] ECR 1763.
110. CJEU, *Case 182/80 Gauff v Commission* [1982] ECR 799.
111. CJEU, *Joined Cases 212–217/80 Amministrazione delle Finanze dello Stato v Srl Meridionale Industria Salumi* [1981] ECR 2735.
112. CJEU, *Case 98/78 Firma A Racke v Hauptzollamt Mainz* [1979] ECR 69.
113. CJEU, *Case 99/78 Weingut Gustav Decker KG v Hauptzollamt Landau* [1979] ECR 101.
114. CJEU, *Case 127/78 Spitta & Co v Hauptzollamt Frankfurt am Main-Ost* [1979] ECR 171.
115. CJEU, *Case 85/76 Hoffmann-La Roche v Commission* [1979] ECR 461.
116. CJEU, *Joined Cases 64/76, 113/76, 167/78, 239/78, 27/79, 28/79 and 45/79 Dumortier Frères and Others v Council* [1979] ECR 3091.
117. CJEU, *Joined Cases 241/78, 242/78 and 245/78 to 250/78 DGV Deutsche Getreideverwertung and Others v Council and Commission* [1979] ECR 3017.
118. CJEU, *Case 78/77 Johann Lühns v Hauptzollamt Hamburg-Jonas* [1978] ECR 169.
119. CJEU, *Case 54/77 Herpels v Commission* [1978] ECR 585.
120. CJEU, *Case 112/77 August Töpfer & Co GmbH v Commission* [1978] ECR 1019.
121. CJEU, *Case 27/76 United Brands Company and United Brands Continentaal BV v Commission* [1978] ECR 207.
122. CJEU, *Case 150/77 Bertrand v Ott* [1978] ECR 1431.
123. CJEU, *Case 90/77 Stimming v Commission* [1978] ECR 995.
124. CJEU, *Case 97/76 Merkur Außenhandel GmbH v Commission* [1977] ECR 1063.
125. CJEU, *Case 105/75 Giuffrida v Commission* [1976] ECR 1395.
126. CJEU, *Joined Cases 54/74 to 60/74 Kampffmeyer and Others v Commission and Council* [1976] ECR 711.

127. CJEU, *Case C-5/75 Deuka v Einfuhr- und Vorratsstelle Getreide* [1975] ECR 759.
128. CJEU, *Case 74/74 CNTA SA v Commission* [1975] ECR 533.
129. CJEU, *Joined Cases 95/74 to 98/74, 15/75 and 100/75 CAC v Commission and Council* [1975] ECR 1615.
130. CJEU, *Case 4/73 Nold KG v Commission* [1974] ECR 491.
131. CJEU, *Case 148/73 Louwage v Commission* [1974] ECR 81.
132. CJEU, *Case 17/74 Transocean Marine Paint Association v Commission* [1974] ECR 1063.
133. CJEU, *Case 81/72 Commission v Council* [1973] ECR 575.
134. CJEU, *Joined Cases 9/71 and 11/71 Compagnie d'approvisionnement, de transport et de crédit SA and Grands Moulins de Paris SA v Commission* [1972] ECR 391.
135. CJEU, *Case 4/69 Lütticke v Commission* [1971] ECR 325.
136. CJEU, *Case 9/69 Sayag and Others v Leduc and Others* [1969] ECR 337.
137. CJEU, *Case 54/65 Châtillon v High Authority* [1966] ECR 185.
138. CJEU, *Case 111/63 Lemmerz-Werke GmbH v High Authority of the ECSC* [1965] ECR 677.
139. CJEU, *Case 68/63 Luhleisch v Commission* [1965] ECR 727.
140. CJEU, *Case 110/63 Willame v Commission* [1965] ECR 649.
141. CJEU, *Joined Cases 64/63 and 67/63 Société Rhénane d'Exploitation Minière v High Authority* [1964] ECR 321.
142. CJEU, *Case 19/61 Mannesmann AG v High Authority* [1962] ECR 717.
143. CJEU, *Case 14/61 Koninklijke Nederlandsche Hoogovens en Staalfabrieken NV v High Authority* [1962] ECR 253.
144. CJEU, *Joined Cases 42/59 and 49/59 Société nouvelle des usines de Pontlieue — Aciéries du Temple (SNUPAT) v High Authority of the ECSC* [1961] ECR 53.
145. CJEU, *Case 15/60 Simon v High Authority* [1961] ECR 115.
146. CJEU, *Joined Cases 16/59 to 19/59 Geitling and Others v High Authority* [1960] ECR 45.
147. CJEU, *Joined Cases 7/56 and 3/57 to 7/57 Algera and Others v Common Assembly of the ECSC* [1957] ECR 39.

General Court / GC

148. GC, *Case T-365/24 LU v European Investment Bank*, Judgment of 28 January 2026.

149. GC, *Case T-218/24 DT v Eulex Kosovo*, Judgment of 21 January 2026.

150. GC, *Joined Cases T-620/23 to T-1023/23 Barón Crespo and Others v European Parliament*, Judgment of 17 December 2025.

151. GC, *Case T-605/18 ZF v Commission* EU:T:2020:51.

152. GC, *Case T-67/18 Probelte v Commission* EU:T:2019:873.

153. GC, *Case T-431/18 WN v Parliament* EU:T:2019:781.

154. GC, *Case T-233/16 P Ruiz Molina v EUIPO* EU:T:2017:435.

155. GC, *Joined Cases T-50/06 RENV II and T-69/06 RENV II Ireland and Aughinish Alumina Ltd v European Commission* EU:T:2016:227.

156. GC, *Case T-79/13 Accorinti and Others v European Central Bank* EU:T:2015:756.

157. GC, *Case T-471/11 Éditions Odile Jacob SAS v European Commission* EU:T:2014:739.

158. GC, *Joined Cases T-229/11 and T-276/11 Lord Inglewood and Others v European Parliament* EU:T:2013:127.

159. GC, *Joined Cases T-252/07, T-271/07 and T-272/07 Sungro SA, Eurosemillas SA and Surcotton SA v Council and Commission* [2010].

160. GC, *Case T-360/04 FG Marine v Commission*, Judgment of 19 July 2007.

161. GC, *Case T-500/04 IIC Informations-Industrie Consulting GmbH v Commission* [2007] ECR II-1443.

162. GC, *Case T-357/02 Freistaat Sachsen v Commission* [2007] ECR II-1261.

163. GC, *Case T-25/04 González y Díez SA v Commission* [2007] ECR II-3121.

164. GC, *Case T-283/02 EnBW Kernkraft GmbH v Commission* [2005] ECR II-913.

165. GC, *Case T-310/00 MCI Inc v Commission* [2004] ECR II-3253.

166. GC, *Joined Cases T-142/01 and T-283/01 Organización de Productores de Túnidos Congelados v Commission* [2004] ECR II-329.

167. GC, *Case T-107/02 GE Betz Inc v OHIM* [2004] ECR II-1845.
168. GC, *Case T-346/03 Krikorian and Others v Parliament and Others* [2003] ECR II-603.
169. GC, *Case T-137/01 Stadtsportverband Neuss eV v Commission* [2003] ECR II-3103.
170. GC, *Case T-273/01 Innova Privat-Akademie GmbH v Commission* [2003] ECR II-1093.
171. GC, *Case T-65/98 Van den Bergh Foods Ltd v Commission* [2003] ECR II-4653.
172. GC, *Case T-223/00 Kyowa Hakko Kogyo Co Ltd and Kyowa Hakko Europe GmbH v Commission* [2003] ECR II-2553.
173. GC, *Case T-23/99 LR AF 1998 A/S v Commission* [2002] ECR II-1705.
174. GC, *Case T-31/99 ABB Asea Brown Boveri Ltd v Commission* [2002] ECR II-1881.
175. GC, *Case T-251/00 Lagardère SCA and Canal+ SA v Commission* [2002] ECR II-4825.
176. GC, *Joined Cases T-141/99, T-142/99, T-150/99 and T-151/99 Vela Srl and Tecnagrind SL v Commission* [2002] ECR II-4547.
177. GC, *Case T-70/99 Alpharma Inc v Council* [2002] ECR II-3495.
178. GC, *Case T-220/96 EVO v Council and Commission* [2002] ECR II-2265.
179. GC, *Case T-18/99 Cordis Obst und Gemüse Großhandel GmbH v Commission* [2001] ECR II-913.
180. GC, *Case T-155/99 Dieckmann & Hansen GmbH v Commission* [2001] ECR II-3143.
181. GC, *Joined Cases T-222/99, T-327/99 and T-329/99 Martinez and Others v European Parliament* [2001] ECR II-2823.
182. GC, *Case T-7/99 Medici Grimm KG v Council* [2000] ECR II-2671.
183. GC, *Joined Cases T-194/97 and T-83/98 Eugénio Branco Lda v Commission* [2000] ECR II-69, ECLI:EU:T:2000:20.
184. GC, *Joined Cases T-46/98 and T-151/98 CEMR v Commission* [2000] ECR II-167.
185. GC, *Case T-126/97 Sonasa — Sociedade de Segurança Lda v Commission* [1999] ECR II-2793.

186. GC, *Case T-113/96 Dubois et Fils SA v Council and Commission* [1998] ECR II-125.
187. GC, *Case T-184/95 Dorsch Consult Ingenieurgesellschaft mbH v Council and Commission* [1998] ECR II-667.
188. GC, *Case T-203/96 Embassy Limousines & Services v European Parliament* [1998] ECR II-4239.
189. GC, *Joined Cases T-66/96 and T-221/97 Mellett v Court of Justice* [1998] ECR-SC II-1305.
190. GC, *Case T-107/96 Pantochim v Commission* [1998] ECR II-311.
191. GC, *Case T-54/96 Oleifici Italiani SpA and Fratelli Rubino Industrie Olearie SpA v Commission* [1998] ECR II-3377.
192. GC, *Case T-13/96 TEAM Srl v Commission* [1998] ECR II-4073.
193. GC, *Case T-336/94 Efisol SA v Commission* [1997] ECR II-1343.
194. GC, *Case T-227/95 Kraft v Commission* [1997] ECR II-1185.
195. GC, *Case T-73/95 Oliveira SA v Commission* [1997] ECR II-381.
196. GC, *Case T-331/94 IPK-München GmbH v Commission* [1997] ECR II-1665.
197. GC, *Case T-81/95 Interhotel-Sociedade Internacional de Hotéis SARL v Commission* [1997] ECR II-1265.
198. GC, *Case T-260/94 Air Inter v Commission* [1997] ECR II-997.
199. GC, *Case T-134/96 Smets v Commission* [1997] ECR II-2333.
200. GC, *Case T-243/94 British Steel v Commission* [1997] ECR II-1887.
201. GC, *Case T-229/94 Deutsche Bahn v Commission* [1997] ECR II-1689.
202. GC, *Case T-7/96 Perillo v Commission* [1997] ECR II-1061.
203. GC, *Joined Cases T-213/95 and T-18/96 Stichting Certificatie Kraanverhuurbedrijf and Federatie van Nederlandse Kraanverhuurbedrijven v Commission* [1997] ECR II-1739.
204. GC, *Case T-390/94 Schröder and Others v Commission* [1997] ECR II-501.
205. GC, *Case T-587/93 Ortega Urretavizcaya v Commission* [1996].
206. GC, *Case T-521/93 Atlanta v Council* [1996] ECR II-1707.
207. GC, *Case T-155/94 Climax Paper Converters v Council* [1996] ECR II-873.

208. GC, *Joined Cases T-466/93, T-469/93, T-473/93, T-474/93 and T-477/93 O'Dwyer and Others v Council* [1996] ECR II-2071.
209. GC, *Case T-108/94 Candiotte v Council* [1996] ECR II-87.
210. GC, *Case T-75/95 Günzler Aluminium v Commission* [1996] ECR II-497.
211. GC, *Case T-230/94 Farrugia v Commission* [1996] ECR II-195.
212. GC, *Case T-175/94 International Procurement Services v Commission* [1996] ECR II-729.
213. GC, *Case T-5/93 Tremblay and Others v Commission* [1995] ECR II-185.
214. GC, *Case T-44/93 Saby v Commission* [1995] ECR-SC II-541.
215. GC, *Case T-109/94 Windmillpark International v Commission* [1995] ECR II-3007.
216. GC, *Case T-493/93 Hansa-Fisch v Commission* [1995] ECR II-575.
217. GC, *Case T-7/93 Langnese-Iglo v Commission* [1995] ECR II-1533.
218. GC, *Case T-514/93 Cobrecaf and Others v Commission* [1995] ECR II-621.
219. GC, *Case T-168/94 Blackspur DIY and Others v Council and Commission* [1995] ECR II-2627.
220. GC, *Case T-478/93 Wafer Zoo v Commission* [1995] ECR II-482.
221. GC, *Case T-2/93 Air France v Commission* [1994] ECR II-323.
222. GC, *Case T-451/93 San Marco Impex Italiana Srl v Commission* [1994] ECR II-1061.
223. GC, *Case T-465/93 Consorzio Gruppo di Azione Locale Murgia Messapica v Commission* [1994] ECR II-361.
224. GC, *Case T-498/93 Dornonville de la Cour v Commission* [1994] ECR-SC II-813.
225. GC, *Case T-489/93 Unifruit Hellas EPE v Commission* [1994] ECR II-1201.
226. GC, *Case T-534/93 Grynberg and Hall v Commission* [1994] ECR II-595.
227. GC, *Joined Cases T-576/93 to T-582/93 Browet and Others v Commission* [1994] ECR II-677.

228. GC, *Case T-22/92 Weißenfels v European Parliament* [1993] ECR II-1095.
229. GC, *Case T-46/90 Devillez v European Parliament* [1993] ECR II-699.
230. GC, *Case T-20/89 RV Moritz v Commission* [1993] ECR II-1423.
231. GC, *Case T-9/89 Hüls v Commission* [1992] ECR II-499.
232. GC, *Case T-33/91 Williams v Court of Auditors* [1992] ECR II-2499.
233. GC, *Case T-45/90 Speybrouck v European Parliament* [1992] ECR II-33.
234. GC, *Case T-20/91 Holtbecker v Commission* [1992] ECR II-2599.
235. GC, *Case T-7/89 Hercules Chemicals v Commission* [1991] ECR II-1711.
236. GC, *Case T-63/89 Latham v Commission* [1991] ECR II-19.
237. GC, *Case T-163/89 Sebastiani v European Parliament* [1991] ECR II-715.
238. GC, *Case T-18/90 Jongen v Commission* [1991] ECR II-187.
239. GC, *Case T-23/90 Peugeot v Commission* [1991] ECR II-653.
240. GC, *Case T-30/90 Zoder v European Parliament* [1991] ECR II-207.
241. GC, *Case T-123/89 Chomel v Commission* [1990] ECR II-131.
242. GC, *Case T-73/89 Barbi v Commission* [1990] ECR II-619.

EU Civil Service Tribunal

EU Civil Service Tribunal, *Case F-51/07 Philippe Bui Van v Commission*
EU:F:2010:108.

Միջազգային վարչական տրիբունալներ

Աշխատանքի միջազգային կազմակերպության վարչական տրիբունալ / ILOAT

1. ILOAT, *Mrs S N v World Intellectual Property Organization (WIPO)*, Judgment No 3185, 6 February 2013.
2. ILOAT, *Gieser*, Judgment No 782, 12 December 1986.
3. ILOAT, *In re Agarwala*, Judgment No 121, 15 October 1968.

ՄԱԿ-ի բողոքարկման տրիբունալ / UNAT

4. UNAT, *Al-Abani v Secretary-General of the United Nations*, Judgment No 2016-UNAT-663, 30 June 2016.
5. UNAT, *Hunt-Matthes v Secretary-General of the United Nations*, Judgment No 2014-UNAT-444/Corr.2, 27 June 2014.

ՄԱԿ-ի վեճերի տրիբունալ / UNDT

6. UNDT, *Buckley v Secretary-General of the United Nations*, Judgment UNDT/2009/064, 29 October 2009.

Միջամերիկյան մարդու իրավունքների համակարգ

7. Inter-American Court of Human Rights, *Liakat Ali Alibux v Suriname*, Preliminary Objections, Merits, Reparations and Costs, Judgment of 30 January 2014, Series C No 276.

8. Inter-American Commission on Human Rights, *Liakat Ali Alibux v Suriname*, Report No 101/11, Case No 12.608, OEA/Ser.L/V/II.142, doc 32, 22 July 2011.

Արբիտրաժային և ներդրումային վեճերի պրակտիկա

9. PCA, *Cairn Energy PLC and Cairn UK Holdings Limited v Republic of India*, PCA Case No 2016-7, Award, 21 December 2020.

10. ICC, *ConocoPhillips Gulf of Paria B.V. v Corporación Venezolana de Petróleo S.A. and Petróleos de Venezuela S.A.*, ICC Case No 22527/ASM/JPA, Award, 29 July 2019.

11. ICSID, *RREEF Infrastructure (G.P.) Limited and RREEF Pan-European Infrastructure Two Lux S.à r.l. v Kingdom of Spain*, ICSID Case No ARB/13/30, Decision on Responsibility and on the Principles of Quantum, 30 November 2018.

12. ICSID, *Perenco Ecuador Limited v Republic of Ecuador and Empresa Estatal Petróleos del Ecuador (Petroecuador)*, ICSID Case No ARB/08/6, Interim Decision on the Environmental Counterclaim, 11 August 2015.

Ազգային դատական պրակտիկա

Ավստրալիա

1. *Rush v Commissioner of Police* (2006) 150 FCR 165.

2. *Re Minister for Immigration and Multicultural and Indigenous Affairs, ex parte Lam* (2003) 214 CLR 1.

Ամերիկայի Միացյալ Նահանգներ

3. *United States v Monsanto* 858 F 2d 160 (2d Cir 1988).

4. *United States v Shell Oil Co* 22 Env't Rep Cas (BNA) 1473 (D Colo 1985).

5. *Pension Benefit Guaranty Corporation v R A Gray & Co* 467 US 717 (1984).

6. *United States v Northeastern Pharmaceutical & Chemical Co Inc* 810 F 2d 726 (8th Cir 1983).

7. *United States v Security Industrial Bank* 459 US 70 (1982).

8. *Langdon v Saga Corporation* 569 P 2d 524, 1976 OK CIV APP 65 (Okla Civ App 1976).

9. *Burgess v Salmon* 97 US 381 (1878).

10. *Cummings v Missouri* 71 US 277 (1866).

Գերմանիա

11. German Federal Constitutional Court, *Nuclear Phase-Out*, Judgment of 6 December 2016, 1 BvR 2821/11, 1 BvR 321/12 and 1 BvR 1456/12.

Հարավային Կորեա

12. Constitutional Court of the Republic of Korea, Decision 2010 Hunba 167, 23 August 2012.

13. Constitutional Court of the Republic of Korea, Decision 2010 Hunba 28, 23 August 2012.

Հունգարիա

14. Constitutional Court of Hungary, Decision No 184/2010 (X.28.) AB, 26 October 2010.

Իռլանդիա

15. *Curran v Minister for Education and Science* [2009] 4 IR 300.

16. *Power v Minister for Social and Family Affairs* [2007] 1 IR 543.

17. *Agraira v Canada (Public Safety and Emergency Preparedness)* [2013] SCC 36.

Միացյալ Թագավորություն

18. *R (Huitson) v HM Revenue and Customs* [2011] EWCA Civ 893.

19. *R v HM Revenue and Customs, ex parte Huitson* [2010] EWHC 97.

20. *R (Bapio Action Ltd and another) v Secretary of State for the Home Department and another* [2008] UKHL 27.

21. *R (Bapio Action Ltd and another) v Secretary of State for the Home Department and another* [2007] EWCA Civ 1139.

22. *R (Bapio Action Ltd and another) v Secretary of State for the Home Department and another* [2007] EWHC 199 (QB).

23. *R (Rashid) v Secretary of State for the Home Department* [2005] EWCA Civ 744.

24. *R (Nadarajah) v Secretary of State for the Home Department* [2005] EWCA Civ 1363.
25. *R v Commissioners of Customs and Excise, ex parte F & I Services Ltd* [2001] EWCA Civ 762; [2001] STC 939.
26. *R v North and East Devon Health Authority, ex parte Coughlan* [1999] LGR 703; [2001] QB 213.
27. *Phelps v Hillingdon London Borough Council* [1999] 1 All ER 421.
28. *R v Bloody Sunday Inquiry, ex parte B*, The Times, 5 April 1999.
29. *R v Director of Public Prosecutions, ex parte Duckenfield* [1999] 2 All ER 873.
30. *R v Director of Public Prosecutions, ex parte Kebilene*, The Times, 31 March 1999.
31. *R v Newport County Borough Council, ex parte Avery* [1999] JPL 452.
32. *R v Bolton Metropolitan Borough Council, ex parte Kirkman* [1998] JPL 787.
33. *R v London Borough of Lambeth, ex parte Stockwell Law Centre*, 22 May 1998.
34. *R v North Derbyshire Health Authority, ex parte Fisher* (1998) 10 Admin LR 27.
35. *R v Secretary of State for the Home Department, ex parte Behluli* [1998] COD 328.
36. *R v Beatrix Potter School, ex parte Kanner* [1997] ELR 468.
37. *R v Director of Public Prosecutions, ex parte Burke* [1997] COD 169.
38. *R v Secretary of State for the Home Department, ex parte Hargreaves* [1997] 1 WLR 906.
39. *R v Shropshire County Council, ex parte Jones* (1997) 9 Admin LR 625.
40. *W v Home Office* [1997] Imm AR 302.
41. *Home Secretary v Abdi* [1996] Imm AR 148.
42. *R v Ealing London Borough Council, ex parte Parkinson* (1996) 8 Admin LR 281.
43. *R v Funding Agency for Schools, ex parte Bromley London Borough Council* [1996] COD 375.

44. *R v Gaming Board for Great Britain, ex parte Kingsley* [1996] COD 241.
45. *R v Secretary of State for the Home Department, ex parte Dey* [1996] Imm AR 521.
46. *R v Secretary of State for the Home Department, ex parte Hastrup* [1996] Imm AR 616.
47. *R v Secretary of State for the Home Department, ex parte Katoorah* [1996] Imm AR 595.
48. *Stovin v Wise* [1996] AC 923.
49. *Musah v Secretary of State for the Home Department* [1995] Imm AR 236.
50. *Pelham Homes Ltd v Secretary of State for the Environment* [1995] JPL 816.
51. *R v Devon County Council, ex parte Baker* [1995] 1 All ER 73.
52. *R v Ministry of Agriculture, Fisheries and Food, ex parte Hamble (Offshore) Fisheries Ltd* [1995] 2 All ER 714.
53. *R v Secretary of State for the Home Department, ex parte Shahed* [1995] Imm AR 303.
54. *X v Bedfordshire County Council* [1995] 2 AC 633.
55. *Matrix Securities Ltd v Inland Revenue Commissioners* [1994] 1 WLR 334.
56. *R v Secretary of State for the Home Department, ex parte Amankwah* [1994] Imm AR 240.
57. *R v Secretary of State for Transport, ex parte Richmond upon Thames London Borough Council* [1994] 1 All ER 577.
58. *Keung v Secretary of State for the Home Department* [1992] Imm AR 201.
59. *R v Department of Trade and Industry, ex parte Blenheim* [1992] COD 453.
60. *R v London Borough of Bexley, ex parte Barnehurst Golf Club Ltd* [1992] COD 382.
61. *R v Northamptonshire County Council, ex parte Commission for the New Towns* [1992] COD 123.

62. *R v Secretary of State for the Home Department, ex parte Sinclair* [1992] Imm AR 293.

63. *R v Bristol City Magistrates' Court, ex parte Willsman* [1991] RA 292.

64. *R v Secretary of State for the Home Department, ex parte Brind* [1991] 1 AC 696.

65. *Kuku v Secretary of State for the Home Department* [1990] Imm AR 27.

66. *Lambeth London Borough Council v Secretary of State for the Environment* [1990] JPL 196.

67. *R v Birmingham City Council, ex parte Sheptonhurst Ltd* [1990] 1 All ER 1026.

68. *R v Brent London Borough Council, ex parte MacDonagh* [1990] COD 3.

69. *R v Chief Constable of the Thames Valley Police, ex parte Cotton* [1990] IRLR 344.

70. *R v Inland Revenue Commissioners, ex parte MFK Underwriting Agencies Ltd* [1990] 1 WLR 1545.

71. *Hill v Chief Constable of West Yorkshire* [1989] AC 53.

72. *Nkiti v Immigration Officer, Gatwick* [1989] Imm AR 585.

73. *R v Inland Revenue Commissioners, ex parte Camacq Corporation* [1989] STC 785.

74. *R v Secretary of State for Foreign and Commonwealth Affairs, ex parte Samuel*, The Times, 17 August 1989.

75. *R v Secretary of State for the Home Department, ex parte Oloniluyi* [1989] COD 275.

76. *Chundawadra v Immigration Appeal Tribunal* [1988] Imm AR 161.

77. *Costain Homes Ltd v Secretary of State for the Environment* [1988] JPL 701.

78. *R v North East Thames Health Authority, ex parte de Groot* [1988] COD 25.

79. *Yakub v Chief Immigration Officer, Heathrow* [1988] Imm AR 177.

80. *Khan v Secretary of State for the Home Department* [1987] Imm AR 543.

81. *R v Secretary of State for the Home Department, ex parte Ruddock* [1987] 1 WLR 1482.

82. *R v Secretary of State for the Home Department, ex parte Bennett*, The Times, 18 August 1986.

83. *R v West Oxfordshire District Council, ex parte Pearce Homes Ltd* [1986] JPL 223.

84. *Council of Civil Service Unions v Minister for the Civil Service* [1985] AC 374.

85. *Hughes v Department of Health and Social Security* [1985] AC 776.

86. *R v Brent London Borough Council, ex parte Gunning* (1985) 84 LGR 168.

87. *Council of Civil Service Unions v Minister for the Civil Service* [1984] 3 All ER 935.

88. *R v Secretary of State for the Home Department, ex parte Kahn* [1984] 1 WLR 1337.

89. *R v Chief Constable of North Wales Police, ex parte Evans* [1982] 1 WLR 1155.

90. *Rootkin v Kent County Council* [1981] 1 WLR 1186.

91. *Black-Clawson International Ltd v Papierwerke Waldhof-Aschaffenburg AG* [1975] AC 591.

92. *Bristol District Council v Clark* [1975] 3 All ER 978.

93. *Knuller (Publishing, Printing and Promotions) Ltd v Director of Public Prosecutions* [1973] AC 435.

94. *Cassell & Co Ltd v Broome* [1972] AC 1027.

95. *Breen v Amalgamated Engineering Union* [1971] 2 QB 175.

96. *Dorset Yacht Co Ltd v Home Office* [1970] AC 1004.

97. *John v Rees* [1970] Ch 345.

98. *Schmidt v Secretary of State for Home Affairs* [1969] 2 Ch 149.

99. *Burmah Oil Co Ltd v Lord Advocate* [1965] AC 75.

100. *A-G for Ceylon v Silva* [1953] AC 461.

101. *Re 56 Denton Road, Twickenham, Middlesex* [1953].

102. *Minister of Agriculture and Fisheries v Mathews* [1950] 1 KB 148.

Նոր Զեւանդիւ

103. *New Zealand Association for Migration and Investments Inc v Attorney-General* [2006] NZAR 45.

Չեխիա

104. Constitutional Court of the Czech Republic, *Photovoltaic Power Plants*, Case No PI ÚS 17/11, Judgment, 15 May 2012.

Սինգապուր

105. *Chiu Teng @ Kallang Pte Ltd v Singapore Land Authority* [2014] 1 SLR 1047

Ֆրանսիա

106. TA Rouen, *Ait-Taleb*, 25 May 1999, DA 1999, No 211.

107. Conseil constitutionnel, Decision No 99-425 DC, 29 December 1999.

108. CE, *Hôpital Joseph-Imbert d'Arles*, 3 November 1997, Rec 412.

109. CE, *Laubier*, 24 October 1997, RFDA 1998, 528.

110. CE, *Majorel*, 17 October 1997, No 148660.

111. CE, *Société Lille-Tax*, 27 June 1997, No 161412.

112. CE, *Vuillecard*, 16 October 1996, No 116867.

113. CE, *Secrétaire d'État à la Mer*, 29 May 1996, *Petites Affiches* 1996, No 127.

114. CE, *Société Vortex*, 20 May 1996, No 171423.

115. CE, *Société NRJSA*, 22 March 1996, RDP 1996.

116. CE, *Hurey*, 29 December 1995, No 122188.

117. CAA Paris, *Graillet*, 29 September 1995, Rec 1032.

118. CAA Nancy, *Centre hospitalier de Roubaix*, 28 July 1995, No 44577.

119. CE, *Haguet*, 28 July 1995, DA 1995, No 556.

120. CE, *Achache*, 16 June 1995, D 1995, 179.

121. CE, *Auriol*, 10 May 1995, No 121113.

122. CAA Paris, *Boulley*, 18 April 1995, No 93PA00511.

123. CAA Nancy, *Steinmetz*, 23 February 1995, No 93NC00840.

124. CE, *Palern*, 25 November 1994, No 129381.

125. CE, *Pétillon*, 5 December 1994, Rec 774.

126. CE, *Tigrini*, 9 November 1994, Rec 1139.

127. CE, *Gentilhomme*, 29 July 1994, Rec 371.

128. CAA Paris, *SA Ballande*, 10 February 1994, Rec 1182.

129. CAA Nantes, *Prono*, 24 November 1993, No 92NT00504.

130. CE, *Roux*, 28 July 1993, No 87047.

131. CE, *Notin*, 19 May 1993, DA 1993, No 324.
132. CE, *Sabiani*, 22 January 1993, No 89078.
133. CE, *Société de Sannois-Ermont-Franconville*, 22 January 1993, D 1994, SC 66.
134. CE, *Siegel*, 8 January 1993, Rec 570.
135. CAA Lyon, *Torres*, 9 July 1992, No 91LY00241.
136. CE, *Hammi*, 10 January 1992, Rec 11.
137. CE, *Styx FM*, 11 December 1991, No 103881.
138. CE, *Coquide*, 8 November 1991, Rec 690.
139. CE, *Union nationale de la propriété immobilière*, 18 October 1991, Rec 338.
140. CE, *Auzolles*, 1 July 1991, No 81562.
141. CAA Bordeaux, *Arnal*, 15 January 1991, DF 1992, No 19, comm 990.
142. CE, *SCI Hameau de Beauvoir*, 21 September 1990, No 67776.
143. CE, *Figuereo*, 25 April 1990, AJDA 1990, 641.
144. CE, *Bore de Loisy*, 7 March 1990, Rec 983.
145. CE, *SARL Résidence Gambetta*, 22 December 1989, No 71097.
146. CE, *Castellani*, 31 May 1989, No 91681.
147. CE, *SA Gibert Marine*, 14 December 1988, AJDA 1989, 266.
148. CE, *Société L'Ollivette*, 9 December 1988, No 77247.
149. CE, *SARL La Flèche d'argent*, 25 November 1988, No 71513.
150. CE, *Ministre du redéploiement industriel*, 10 June 1988, Rec 571.
151. CE, *SA Bonnargent-Goyon*, 10 June 1988, Rec 238.
152. CE, *Edwige*, 7 November 1986, Rec 350.
153. CE, *Bonneau*, 29 October 1986, Rec 248.
154. CE, *Krier*, 18 June 1986, Rec 166.
155. CE, *Société Grandes Distilleries les fils d'Auguste Perreux*, 25 July 1986, RFDA 1987, 454.
156. CE, *Conseil régional Rhône-Alpes de l'Ordre des architectes*, 28 May 1986, Rec 385.
157. CE, *Gaz de France*, 6 December 1985, Rec 361.
158. CE, *Société des plastiques d'Alsace*, 25 October 1985, Rec 300.
159. CE, *Marana*, 8 February 1985, Rec 28.
160. CE, *Fons-Sicart*, 7 December 1984, No 20047.

161. CE, *Chapuis*, 26 October 1984, Rec 342.
162. CE, *Malvaux*, 6 June 1984, No 41365.
163. CE, *Corap*, 27 April 1984, No 40980.
164. CE, *Feng*, 11 January 1984, No 34617.
165. CE, *Noulard*, 4 November 1983, Rec 451.
166. CE, *Fogelgesang*, 28 October 1983.
167. CE, *SCI Italie-Vandrezane*, 17 June 1983, Rec 267.
168. CE, *Barbe*, 18 June 1982, RDP 1983, 520.
169. CE, *Cheriet*, 16 April 1982, No 29435.
170. CE, *Bardin*, 27 January 1982, RDP 1982, 1707.
171. CE, *Carliez*, 19 June 1981, AJDA 1981, 103.
172. CE, *Compagnie française de raffinage*, 6 February 1981, Rec 62.
173. CE, *Vipal*, 2 October 1981, Rec 347.
174. CE, *Domergue*, 28 November 1980, No 16618.
175. CE, *Syndicat intercommunal des eaux de Casserousse*, 16 May 1980,
No 7794.
176. CE, *Rigal*, 1 February 1980, AJDA 1981, 44.
177. CE, *Université de Bordeaux*, 30 March 1979, Rec 141.
178. CE, *Pignol*, 16 June 1978, Rec 687.
179. CE, *SA Marchand*, 18 November 1977, Rec 442.
180. CE, *Priolet*, 16 November 1977, Rec 435.
181. CE, *Dalbos*, 12 January 1977, Rec 19.
182. CE, *Aufaure*, 3 November 1976, No 00838.
183. CE, *Buissière*, 15 October 1976, Rec 428.
184. CE, *Société Construction immobilière Rhodanienne*, 23 June 1976,
Rec 1111.
185. CE, *SA du Château de Neuvecelle*, 19 May 1976, RDP 1976, 1385.
186. CE, *Résidence du pays d'Oc*, 12 November 1975, Rec 1263.
187. CE, *Canu*, 18 June 1975, Rec 362.
188. CE, *Abba Sidick*, 16 May 1975, Rec 835.
189. CE, *La Comédie de Bourges*, 16 April 1975, Rec 234.
190. CE, *Corniche*, 4 December 1974, No 93953.
191. CE, *Maury*, 3 November 1972, D 1973, 761.
192. CE, *Robinet*, 12 December 1972, D 1975, 216.

193. CE, *Texier*, 1 December 1972, Rec 1222.
194. CE, *Bruchet*, 25 June 1971, Rec 488.
195. CE, *Roze*, 26 February 1971, No 73120.
196. CE, *Chastang*, 2 October 1970, Rec 1198.
197. CE, *Crédit foncier de France*, 11 December 1970, Rec 750.
198. CE, *Minot*, 30 October 1970, No 75343.
199. CE, *Établissement Delannoy*, 19 December 1969, RDP 1970.
200. CE, *Forasetto*, 15 October 1969, Rec 437.
201. CE, *Deux*, 22 January 1969, Rec 956.
202. CE, *Perrot*, 12 January 1968, Rec 36.
203. CE, *Société Samat et Cie*, 10 March 1967, Rec 112.
204. CE, *Asope*, 7 October 1966, Rec 523.
205. CE, *Marais*, 14 October 1966, D 1966, 636.
206. CE, *Coudert*, 3 March 1965, AJDA 1965, 487.
207. CE, *Prat-Flottes*, 15 July 1964, Rec 438.
208. CE, *Société des huileries de Chauny*, 24 April 1964, Rec 249.
209. CE, *Société coopérative d'insémination artificielle*, 8 November 1963, Rec 532.
210. CE, *Massad*, 8 March 1963, Rec 143.
211. CE, *Société Paramount*, 27 February 1963, Rec 689.
212. CE, *Camarasa-Marsol*, 10 December 1962, Rec 672.
213. CE, *Clémant*, 11 October 1961, Rec 559.
214. CE, *Cazes*, 14 April 1961, Rec 232.
215. CE, *Ville d'Agen*, 22 November 1961, Rec 668.
216. TA Paris, *Établissement Millo-Frolich*, 24 May 1960, AJDA 1961, 218.
217. CE, *Rohmer*, 8 January 1960, Rec 12.
218. CE, *Prat Flottes*, 12 June 1959, Rec 361.
219. CE, *Dumas*, 9 January 1959, Rec 31.
220. CE, *Société Laboratoires Geigy*, 25 April 1958, Rec 236.
221. CE, *Speter*, 7 March 1958, Rec 152.
222. CE, *Bouveret*, 18 October 1957, Rec 542.
223. CE, *École de Commerce de Bastia*, 19 October 1956, Rec 657.
224. CE, *Pabion*, 1 June 1956, Rec 218.
225. CE, *Société Lesieur-Afrique*, 11 May 1956, Rec 184.

226. CE, *Garysas*, 9 December 1955, Rec 585.
227. CE, *Association Chaumière des Pastorelles*, 7 January 1955, Rec 11.
228. CE, *Notre-Dame du Kreisker*, 29 January 1954, Rec 64.
229. CE, *Ligue des mères abandonnées*, 31 October 1952, Rec 480.
230. CE, *Clemencelle*, 5 May 1950, Rec 265.
231. CE, *Fondation d'Henqueville*, 19 May 1950, Rec 293.
232. CE, *Nègre*, 24 June 1949, Rec 304.
233. CE, *Gamard*, 20 June 1947, Rec 276.
234. CE, *Société Duchet*, 27 June 1947, Rec 283.
235. CE, *Neveu*, 24 July 1946, Rec 211.
236. CE, *Brousser*, 27 April 1945, Rec 82.
237. CE, *Hoarau*, 8 July 1936, Rec 743.
238. CE, *Bouzy*, 31 January 1936, Rec 142.
239. CE, *Ribeyrolles*, 27 November 1930, Rec 76.
240. CE, *Labonne*, 8 August 1919, Rec 737.
241. CE, *Le Bigot*, 15 May 1907, Rec 460.
242. CE, *Tomaso Grecco*, 10 February 1905, Rec 139.
243. CE, *Compagnie franco-algérienne*, 20 January 1899, D 1899 III 41.
244. CE, *Le Loir*, 27 January 1893, Rec 136.

Քաղաքականության փաստաթղթեր և պաշտոնական զեկույցներ

1. Best Practices in Regulatory Reform: Minimising Potential Conflicts with Foreign Investors, Decision of the Energy Charter Conference, CCDEC 2017 4 INV, Brussels, 11 October 2017.
2. European Commission, Delivering the Internal Electricity Market and Making the Most of Public Intervention, C(2013) 7243 final, 5 November 2013.
3. International Chamber of Commerce Commission on Arbitration and ADR, Resolving Climate Change Related Disputes Through Arbitration and ADR (2019).
4. Renewable Energy Directive 2009/28/EC.
5. Comprehensive Environmental Response, Compensation, and Liability Act, 42 USC § 9606.

6. Council of Europe, *The Administration and You: A Handbook: Principles of Administrative Law Concerning Relations between Individuals and Public Authorities* (3rd edn, Council of Europe 2024).

7. ReNEUAL 2.0, *The Pan-European General Principles on Legal Certainty and Protection of Legitimate Expectations in Administrative Matters*.

8. Council of Europe, Committee of Ministers, Recommendation CM/Rec(2007)7 to member states on good administration, 20 June 2007.

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՔՐԻՍՏԻՆԵ ՍԱՐԳՍԻ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

**ԼԵԳԻՏԻՄ ԱԿՆԿԱԼԻՔՆԵՐԻ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՎԱՐՉԱԿԱՆ
ԻՐԱՎՈՒՆՔՈՒՄ**

(ՄԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ)

Համակարգչային ձևավորող՝ Կ. Չալաբյան
Կազմի ձևավորող՝ Ա. Պատվականյան
Հրատ. խմբագիր՝ Լ. Ավետիսյան

Հեղինակը հաստատում է, որ ծանոթ է «ԵՊՀ գրահրատարակչական քաղաքականությանը», և գրքում առկա փաստերը, դիրքորոշումները, կարծիքները շարադրված են հեղինակային իրավունքի և էթիկայի միջազգայնորեն ընդունված սկզբունքների պահպանմամբ:

Հրատարակվել է՝ 20.06.2026:
Չափսը՝ 60x84 1/16: Տպ. մամուլը՝ 19:
Տպաքանակը՝ 100:

ԵՊՀ հրատարակչություն
ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1
www.publishing.ysu.am



publishing.ysu.am